



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

Մանվել Զովալյան

ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԽԵՂԱՋՈՅԻՐՈՒՄԸ
ԱՐԴԻ ՇՈՒԻՐՔ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԵԶ

(Իին և միջին դարեր)

«Հայուստամ» հրատարակչություն
1965

Գրական պատմության ի գոկար Անդրեն Սահմակյան
և բագիր՝ պատմագիտության գոկար Պ. Մուրացյան

Զավայան Մ. Կ.

Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք
պատմագրության մեջ (իմք. Սուրագյան Պ. Մ.) հին և
միջին դարեր. Եր.—: Հայաստան, 1995.—

Այսատության մեջ վերշին տարիների հրատարակությունների
հիման վրա քննարկվում են ժամանակակից թուրք պատմագրու-
թյան ներկայացրության կողմից լուսաբանված հայոց հին և
միջին դարերի պատմության հարցերը, տրվում են այնտեղ լայն-
տեղ գուած բացահայտ աղավաղությունների ու կեղծիքների գի-
րեն տեղ գուած բացահայտ վերլուծությունները:

Աշխատությունը նախատեսվում է պատմության մասնագետների
և պատմությամբ զբաղվող լայն շրջանների համար:

2 701 (01) — 91 Հայտարարված ԳՄԴ 63.3 (22) 63.3 (5 Բա.)
0503020913

ISBN 5-540-01466-9

«Հայաստան» Հայտարարված
Զավայան Մ. Կ., 1995

ՆԵՐԱՑՈՒԹՅՈՒՆ

1970 թ. Երևանում լույս տեսավ «Հայ ժողովրդի հին և
միջին դարերի պատմության մի քանի հարցերի լուսաբա-
նումը արդի թուրք պատմագրության մեջ» մեր ոռուսերեն-
մենագրությունը:¹ Այդ օրվանից անցած քսան տարիների
ընթացքում թուրքիայում և թուրք հեղինակների շանքերով
ելլորպական մի շարք երկրներում լույս են տեսել բազմա-
թիվ աշխատություններ,² գրքույկներ, հոդվածներ և այլն,
որոնցում հիմնական շեշտը, հասկանալի պատճառներով,
նոր և նորագույն պատմության հարցերի վրա դրված լինե-
լով հանդերձ երթեմն ընդարձակ էշեր են նվիրվում նաև
հին և միջնադարյան պատմության խնդիրներին: Դրանք
բոլորը համարժեք չեն: Ուշադրության առնելիք աշխատու-
թյունների կողքին կան պարզապես այնպիսիք, որոնք գր-
ված մարտնչող տպիտության դիրքերից լոկ լուսանքներ են
հայ ժողովրդի հասցեին: Վերշին տիպի աշխատությունները
հար և նման են ֆաշիստին Կրպիօպուի «գիտական» մար-
զանքներին, և երթեմն էլ դրանց բառացի ու տառացի կըրկ-
նություններն են:

Մեր նախորդ աշխատության մեջ հատուկ շեշտել էինք,
թե ինչ շարժառիթներով ու նպատակով են գրել թուրք հեղի-
նակները Հայ պատմական անցյալին վերաբերող այս կամ
այն աշխատությունը ու նշել, որ դրանք գրված են պատ-
մական փաստերը կամ անտեսելու, կամ դրանք իրենց պան-
թուրքիստական կանխադրույթով ներկայացնելու միտու-
մով:

¹ Հուլայան Մ. Կ., Вопросы древней и средневековой истории
Армении в освещении современной турецкой историографии. Ере-
ван, изд. АН Арм. ССР, 1970.

² Այդ աշխատությունների մասին տես գրականության շանկը:

գային ինքնությունը։ Հետագայում, ինչպես հայտնի է, օսմանականության այս գաղափարախոսությունը որդեգրվեց երիտթուրքերի կողմից։ Այն արագորեն վերածվեց իսկական թուրքական նացիոնալ-շովինիզմի։ Եթե մինչ այդ օսմանականության կողմնակիցները քարոզում էին կայսրության հպատակների՝ հայերի, արաբների, բուզարների և մյուսների եղբայրության գաղափարը, ապա երիտթուրքերը փշխանություն ձեռք բերելուց հետո անհաջող դիրք գրավեցին հպատակ բոլոր ոչ-թուրք ժողովուրդների նկատմամբ։ Նրանք բացահայտորեն պահանջում էին իսլամացնել ու թրքացնել բոլոր ոչ թուրք հպատակներին։ Երիտթուրքերի «իրթիհատ վե թերակկը» («Միություն և առաջադիմություն») կուսակցության 1911 թվականի Կենտրոնի նիստի որոշման մեջ սեռվ սպիտակի վրա գրված էր. «Կայսրությունը պետք է մուսուլմանական գառնա... այլ ազգություններին շպիտի թույլ տալ յուրահատուկ ազգային կազմակերպություններ ունենալու իրավունք... Թուրքերն լեզվի տարածումը մուտքավոր գործիքանության հաստատման ու այլ ազգությունների ձուլման լավագույն միջոց է»։¹

Թուրքիայում պանմարմիզմի գաղափարախոսությունը համարյա միշտ զուգակցվել է պանթուրքիզմի հետ։ «Միայն քաղաքական նկատառումներով, — գրում է պանթուրքիզմի ականավոր տեսաբաններից Զիա Գյոկալպը, — որոշ գիտնականներ ձգտում են Միջին Ասիայի, Մերձվոլգյան, Սիրիի ու Փոքր Ասիայի թուրքերին արհեստականորեն անշատել իրարից, դիտելով նրանց որպես առանձին ազգություններ։ Մեր նպատակն է, — շարունակում է նա, — «հարյուր միլիոնառող թրքությունը միավորել մի ընդհանուր ազգության մեջ»։²

Ինչպես հայտնի է, պանխամիզմի ու պանթուրքիզմի գաղափարախոսությունը երիտթուրքերին նետեց գերմանական միլիտարիզմի գիրկը։ Օգտագործելով պատերազմական

դրությունը, իբրիհատականները 1915 թ. կատարեցին մարդկային պատմության մեջ ամենազարդելի ոճքագրծություններից մեկը։ Հայոց մեծ եղեռնը։ Թուրքերը այդ գայլին դիմեցին ենթելով իրենց պանթուրքիստական գաղափարախոսությունից, որը գտնում էր, որ Օսմանյան կայսրության ոչ մուսուլմանական տարրերը, տվյալ դեպքերում հայերը, արգելք են հանդիսանում իրենց առաջ դրված խընդիրների իրականացմանը։ Հայերի՝ ինքնավարության մասին ներկայացրած օրինական պահանջը կարող էր վարակիչ հանդիսանալ կայսրության կողմից ստրկացված մյուս ժողովուրդների համար, ուստի երիտթուրքերի ղեկավարությունը որոշեց մեկընդմիշտ լուժել հայկական հարցը, ովքելով ցեղասպանությանը։

Ահա այսպիսի գաղափարական ժառանգություն ստացան քեմալականները։ Վերջինները ձևականորեն դատապարտեցին պանթուրքիզմն ու պանխամիզմը։ Մ. Աթաթյուրքը 1921 թ. մեջիսում արտասանած իր ճառում հայտարարեց, որ Ազգային Մեծ ժողովի քաղաքականությունը «Ազգային որոշակի սահմաններում» ազգի անկախության պաշտպանությունն է¹, իսկ 1927 թ. ժողովրդահանրապետական կուսակցության երկրորդ համագումարում նաև ասում էր. «...մի պետության սահմանների մեջ բոլոր թուրքերի միավորումը անիրազորելի խնդիր է։ Պատմության փորձից հայտնի է, որ պանխամիզմի ու պանթուրքիզմի գաղափարախոսությունը հաջողություն չի կարող ունենալ։ Իրազործելի քաղաքական վարդապետությունը, մեր կարծիքով, դա ազգային քաղաքականությունն (milli siyaset) է»։²

Սակայն այդ դատապարտումը զուտ ձեականություն է։ Թրականության մեջ Քեմալի բարոզած ազգայնականությանց մինչև պանթուրքիզմն ու պանխամիզմը մի բայլ էր միայն, որոնք շարունակում էին սնել բուրքական ղեկավարությունը շրջանների ու մտավորականության, նախ և առաջ պատմարանների գաղափարական մտանորիզմը։

¹ M. Kemal, Путь новой Турции, том III, Москва, 1934, էջ 263.

² Kemal Atatürk tarafından nutuk, İstanbul, 1934, էջ 3; 1952, էջ 90.

¹ L'Asie française 1917. Խ. 171, էջ 174, հայտ., Դ. Ե. Եւգենև, Вопросы этногенеза турок в турецкой исторической литературе, в кн.: «Этнические процессы в странах Передней Азии», Москва—Ленинград, 1983, էջ 71.

² Ziya Gökalp, Türkçülüğün esasları, İstanbul, 1952, էջ 90;

ՀԱյապես, քեմալականները թուրք պատմաբանների առաջիննդիր դրեցին գիտականորեն հիմնավորել թուրքերի ուժեցած իրավունքը Փոքր Ասիայի սահմանների հանդեպ, ապացուցել, որ թուրքերը Փոքր Ասիայի հնագույն բնիկ ժողովուրդ են՝ Այս դրույթը քեմալականները դարձյալ որպես ժողուածություն ստացել էին իթթիհատականներից:¹

Մ. Աթաթյուրքին մնում էր զարգացնել իթթիհատականների այս թեղը և թուրք պատմաբաններից պահանջել գիտականորեն ապացուցել խեթերի թուրքական ժագում:²

Եվ ահա թուրքական պատմագրական ընկերության (Türk Tarih Kurumu) առաջին և երկրորդ համագումարներում ելույթ ունեցողների մեծ մասը, իրենց պարտքն էին համարում ամբիոնից հայտարարել, որ թուրքերն են վառել համաշխարհային մշակույթի առաջին շահերը³ և որ «սելչուկ, օսմանցի և վերջապես թուրք անուններով հանդես եկած մարդկանց նախնիները խեթերը, խուփիները, ուրարտացիներն են»⁴ և այլն, և այլն:

Հարց է ծագում, ինչ հիման վրա են արվում նման «եղբակացությունները»: Պարզվում է, նախ և առաջ, մարդաբանության «տվյալների» վրա: Ոտնահարելով գիտության մեջ ընդունված ու արմատավորված հետազոտական ձևերն ու մեթոդները, թուրք պատմաբաններն իրենց պետքերին են ծառայեցնում մարդաբանության խեղաթյուրված «տրվյալները», «թուրք ցեղը», — շեշտում է Աֆետ Խանը, — սպիտակամորթ ու կարճագլուխ (բրախիցեֆալ) է: Այսօրվա մեր երկիրը տնօրինողները միւնույն մողովով զավակներն են: Նրանց ստեղծած մշակույթի շահերը տարածվել են ամ-

բողջ աշխարհով մեկ... Եվրոպայի ու Խաղաղ օվկիանոսի վրայով Ամերիկա տեղափոխված հին մշակույթը մենայն արմատից ուժ ու ծիլ է ստացել... Թուրք ցեղը այս երկրի տերն է ամենահնագույն ժամանակներից: Դրա գլխավոր ապացույցը՝ նախախեթերն ու խեթերն են: Խեթերից հետո՝ ցեղային նոր տեղաշարժերի ալիքները թուրքական հողի վրա են բերել իրենց ցեղակից թուրք եղբայրներին: Տարբեր դարաշրջաններում երկրի քաղաքական կյանքում և անունների մեջ փոփոխություններ են նկատվել, սակայն բոլոր դեպքերում էլ թուրքական էոթյունը մնացել է անփոփոխ: Ի հաստատումն մեր այս դրույթի, — շարունակում է նա, — ահա ձեզ երկու ապացույց: մեկը՝ հազարավոր տարիներից մեզ հասած ու հողի տակ թաքնված մեր նախնիների կմախքները և այս երկրի օրինական տեր հանդիսացող թուրք ազգը՝ մենք...»:⁵

Համաձայն Շ. Գյումալթայի տեսության, Հին Արևելքի հնագույն ժողովուրդները Միջին Ասիայից մ. թ. ա. Վ հազարամյակում այստեղ գաղթած նախաթուրքերն են:⁶ Ո՞րն է իմաստը: Հայտնի է, որ արդի գիտությունը առայժմ դժվարանում է սպառիչ պատասխան տալ այն հարցին, թե լեզվաբանական տեսակետից ովքեր էին Հին Արևելքի հնագույն ժողովուրդներ՝ շումերները, էլամցիները, կասսիտները և այլն, բայց բազում խնդիրներ արդեն պարզաբանվել են: Այս ժողովուրդները շեն պատկանում ու սեմական, ոչ հնդեվրոպական, ոչ էլ որևէ այլ՝ մեր տեսադաշտում առկա ընտանիքի: Տարբեր հեղինակներ տարբեր անուններ են տակիս վերոհիշյալ էթնիկական խմբերին՝ ի թիվս այլոց օգտագործելով երբեմն՝ բարանցիներ տերմինը: Բոլոր այդօրինակ անվանումները պայմանական են: Սակայն Վ. Մինորսկու բառերով ասած, որտեղ կան գիտության կողմից դեռևս վերջնականապես շլուծված ու վիճելի հարցեր... թուրքերը իսկույն ներկայանում են ու գրչի մի հարվածով տիրանում Հին Արևելքի մշակույթին:

¹ Հ. ՏՏԿ, էջ 7:

² Թեևս ՅՈՒԿԱՆ թվականներին լույս տեսած պաշտամական «Քարիչ»-ում («Պատմություն») սեղմ սպիտակի վրա վրված է: «Փոքր Ասիայի բնակչությունը Հիթիթ և տարբեր անուններով հանդիս եկած Հատու թուրքերն են» («Տարի») հ. 2, էջ 127:

³ E. Akurgal, Tarih ilmi ve Atatürk, Belleten, c. XX.
1956, № 7, էջ 583.

⁴ İkinci Türk Tarih Kongresi (այսուհետև՝ ՏՏԿ) Istenbul, 1943, c. 4—5.

⁵ II TTK, c. 4—5.

Տվյալ դեպքում էլ ահա կառչելով գիտության կողմից դեռևս չուժված այս հարցերին, ռասիզմի մոլուցքով տարված թուրք պատմաբանները առաջ են քաշում այն «տեսությունը», թե Հին Արևելքի բնիկ (ավտոխթոն) ժողովուրդները ծագումով նախաթուրքեց են, նման պնդման համար, բացի մարդաբանության տվյալներից, նրանք վկայակոչում են եվրոպացի հեղինակներին, որոնք, ոչ սեմական և ոչ Հնդեվրոպական ցեղերին ու ժողովուրդներին, ինչպես նըշվեց, երբեմն անվանում են «թուրանցիներ», այդ տերմին տակ ամենեկին շնասկանալով քուրերին: Թուրանը նրանց համբ ամբողջական էթնիկական ու աշխարհագրական որևէ իմաստ չունի:¹ Սակայն թուրք պատմաբանները, այն ինչ որ ասված է այդ թուրանցիների մասին, ճարպկորեն շուռ են տալիս թուրքերի վերաբերմամբ:²

ԱՇ. Գյունալթայի առաջ քաշած տեսության բովանդակությունը հետեւյալն է. մեր մոլորակի վերջին սառցակալումից հետո մարդկության բազմացման համար կլիմայական ամենաբարենպաստ պայմանները Միջին Ասիայում էին: Այն ժամանակ այնտեղ դեռևս անապատներ չկային, ինչպես այժմ է, այլ դա ծաղկուն մի շրջան էր, որը... պատճառ էր դարձել Հնագույն ժամանակներում քաղաքակրթության առաջացմանը:³ Հենց այստեղ է, որ Հայտնաբերվում է մ.թ.ա. IX հազարամյակին վերաբերող Անաուի (Աշխաբադի մոտ) մշակութը:⁴ Այստեղ զարգացած էր անասնապահությունը, երկրագործությունը, երկիրն ապրում էր նեղլիթյան (Նոր քարի դարի) ժամանակաշրջանը: Սակայն հետագայում, Միջին Ասիայում կլիմայական պայմանները խիստ փոխ-

վում են: Չոր կլիման ոչնչացնում է հարուստ բուսականությունը, և բնակիչները ստիպված են լինում քոչել աշխարհի շորս ծագերը, իրենց հետ տանելով բարձր մշակույթը՝ և դրանով իսկ դառնում մարդկության ուսուցիչներ: Կլիմայական նման պայմաններում, — գրում է Ծ. Գյունալթայը, — հազարավոր տարիների ընթացքում ծովի ալիքների նման մարդկային հոսանքներ քոշեցին Զինաստան, Հնդկաստան, Առաջավոր Ասիա, Հյուսիսային Աֆրիկա և Եվրոպա:⁵ «Այսպիսով, — շարունակում է նա, — ամբողջ աշխարհ տարածված միջինասիացիները իրենց մշակույթը, ցորենի, գարու և այլ հացահատիկի կուլտուրաները, ոչխարը, այժը, ձին, ուղտը և այլ ընտանի կենդանիները իրենց հետ վերցնելով՝ ցրվեցին ի սփյուռք:»⁶ Արտագաղթը, ըստ Ծ. Գյունալթայի, տեսում է յոթ հարյուրամյակ:⁷ Լինելով մշակութային զարգացման տեսակետից բարձր աստիճանի վրա կանգնած մարդիկ, — գրում է նա, — միջինասիացի ենթադրյալ թուրքերը կամ տեղի բնակչությանը բռնի արտաքրում էին իրենց բնակավայրերից, և կամ թե նրանց հապատակեցնում՝ գառնալով նրանց ուսուցիչները:⁸

Գաղթականության մի ալիք, իրը, Միջին Ասիայից իրանի վրայով շարժվում ու հաստատվում է Միջագետքում: Հենց նրանք էլ, պնդում է Ծ. Գյունալթայը, նախաշումերները, շումերներն ու էլամցիներն էին. «Չումերները, սուրարիները կամ խուռիներ կոշված նախաշումերները ծագումով թուրքեստանի ալպյան տիպին պատկանող բրախիցեֆալներն էին, — գրում է նա: Նրանց միջև եղած տարրերությունն այն է, շարունակում է նա, որ նախաշումերները ավելի շուտ, քան շումերները եկել ու հաստատվել են Միջագետքում հնեղլիթի ժամանակաշրջանում»:⁹ Եվ քանի որ աքքաղացիները, ասորեստանցիները, արամեացիները, ամորեյները, բարելոնցիները սեմական ցեղեր էին, ուստի և Ծ. Գյունալթայը իր պահիուրիստական կոնցեպցիան այսպես է հարմարեցնում

¹ ՏՇՌ. J. de Morgan, Mission scientifique en Perse, tome I—IV. Paris, 1894—1905. E. Forrer, Stratification des langues et des peuples dans le Proche Orient préhistorique, Journal Asiatique, CCXVII, Paris, 1930, է 297—353 և G. Conteneau, La civilisation des Hittites et les Mitanniens, Paris, 1934, է 79:

² Թուրանը թուրքերի հետ նույնացնում է, օրինակ, թուրք պատմաբանները էնդինը (անս «Eti tarishi», է 20):

³ Semseddin Günaltay, Türk tarihinin ilk devirlerinden yakm Şark, Elam ve Mesopotamia, 1937, է 29: Նույն տեղում, է 86—90, Անտառ Ջակույթը հայտնաբերել է ամերիկացի հետախույս Ռումակիլին 1904 թ.:

⁴ ՏՇՌ. R. Pomeyly, Exploration in Turkistan. Prehistoric civilisation of Anau, vol. I—I. Washington, 1908.

¹ Semseddin Günaltay, Նույն տեղում, է 99—124:

² Նույն տեղում, է 107, 109, 113, 116—117, 129 և այլն:

³ Նույն տեղում, է 107:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, է 108:

⁶ Նույն տեղում:

իրականությանը. «Պատմության արշալուսին Առաջավոր Ասիայում մեր տեսած ժողովուրդներից՝ շումերները, սուրարիները, խուփիները, էլամցիները, կուտիները, կասիտները, միտանիները, խեթերը, եգիպտոսի երկրորդ նեռլիթյան մշակույթը հիմնադրողները այս ցեղին (իմա՝ նախաթուրքերին—Մ. Զ.) պատկանողներն են, իսկ աքքադացիները, ասորեստանցիները, հիբրուսները, արամեացիները և չրեաները շատ վաղ ժամանակաշրջանում բրախիցեֆալների (ենթադրյալ պրոտոթուրքերի—Մ. Զ.) և սեմիտների խառնուրդից առաջացած ժողովուրդներ են։ Առ այսօր Առաջավոր Ասիայում ապրող ժողովուրդներից թուրքերն ու հայերը բրախիցեֆալ ցեղի ամենակատարելագործված սերունդն են կազմում...»¹

Հեռու տանելով իր «եղրակացություններ», Շ. Գյունալթայը գտնում է, որ Փակ դը Մորդանի հայտնաբերած Շոշի, ինչպես և Մոհենջո-Դարոյի մշակույթի ստեղծողները դարձյալ նախաթուրքերն են, քանի որ Անառի մշակույթը նախորդում է վերոհիշյալ երկու մշակույթներին, նրանց միջև կան շատ ընդհանրություններ, և, վերջապես, բնակիչները բրախիցեֆալներ են։


Այդպես է արդյո՞ք Գիտությանը հայտնի է հակառակը, որ Միջին Ասիայի հնագույն բնակիչները, ի հեճուկս թուրք պատմագրության պնդումների, դոլիխոցեֆալներ (երկարագլուխներ) են։ Փոքր Ասիայի բնակչությունն էր բրախիցեֆալները և այստեղի դոլիխոցեֆալները՝ հիմնականում եղանակայի Փոքր Ասիա գաղթած հնդեվրոպացիներն էին։²

Այս առումով, զուր աշխատանք է կատարել Աֆետ Ինանը գրելով՝ «Թուրք ժողովրդի մարդաբանական բնութագրում» և թուրքիայի պատմությունը։ Թուրք ցեղի հայրենիքը Անատոլիան է, վերնագրված աշխատությունը³, որի բովանդակության մասին պատկերացում են տալիս հետևյալ մեջքերումները, ընախ և առաջ կուզենայի ընդգծել, — գրում է

¹ Նույն տեղում, էջ 116—117։

² A. Göetze, Kleinasiens, 2, Ausg, München, 1957., էջ 8, 1957., էջ 8. Բրախիցեֆալները հայկական բարձրավանդակում մեծամասնություն ունենալու մասին պատկերավակից (A. Göetze հովհանոսում),

³ Afet Inan, Türkiye halkının antropolojik karakterleri, Türk երկinin vatanı Anadolu. Ankara, 1947։



նա,—որ թուրքական հողերը, սկսած պղնձի դարից, բնակեցւ ված էին Միջին Ասիայից տարրեր զարաշրջաններում գաղթած ու նույն ցեղին պատկանող ժողովրդի կողմից։ Քաղաքական անունները փոխվել են, սակայն էթնոսի բնութագիրը, փոքր ինչ տարրերությամբ, մեծավ մասամբ մնացել է նույնը։¹

Այստեղից էլ Ա. Ինանը եղրակացնում է, թե «Հաճախ և հատկապես (Փոքր Ասիայի) որոշ շրջաններում կարելի է ենթադրել, որ համարյա միշտ նվաճողներն ու նվաճվողները մինչև օսմանցիները մարդարանական առումով կմախքները համարյա մինչև նույնագիրն ունեն»։²

Իր դրույթները պատշուցելու համար, Աֆ. Ինանը բերում է միայն ամերիկացի պատմաբան Ռոլանդ Դիկոնի այն ասույթը, թե «XV և XVI դարերում, Բալկանները նվաճող թուրքերը դարձյալ ալպյան ժողովուրդներից էին» և որ «թուրքերը ալպյան և պալեոալպյան բրախիցեֆալներին են պատկանում։ Կենտրոնական Անատոլիայի այսօրվա թուրք բնակիչները այս երկրամասի ամենահին բնակիչների թուներն են»։³

Ամենայն վճռականությամբ պետք է ասել, որ արդի թուրք պատմագրության այն դրույթը, թե Հին Արևելքի ժողովուրդները նախաթուրքեր են («կովան» ունենալով միայն ու միայն նրանց կարճագույն լինելը), հեմնված է

¹ Նույն տեղում, էջ 49։

² Նույն տեղում։

³ Նույն տեղում, էջ 56։ Թուրք հայտնի մարդարան և հնագետ Շեքետ Ազիր կանոնը, արձագանքելով Աֆրա Խանին ասում էր Թուրքական պատմագրության կոնքին կողմեցան մեջ հնակայար. «Զի կամագրության ունեցած իր զեկուցման մեջ հնակայար. «Զի կամագրության անդել, որ օղուզ-սեղով թուրքերի կողմից Անատոլիայի նվաճումով, բելի անդել, որ օղուզ-սեղով կերպարանափոխվեց, քանզի սեղով թուրքարիան ցեղային առում կերպարանափոխվեց, քանզի սեղով թուրքերի Անատոլիա զայտ ժամանակ այս հողերում սկսած Արևելյան Անատոլիայի կողմից մեծավ մասամբ բնակեցված էին ալպյանական ժամանակաշրջաններից մեծավ մասամբ բնակեցված էին ալպյան, — այսինքն՝ նախաթուրքական ցեղերի կողմից, որն ապացուցվում է էղողմից մարդարանական, իսկ մյուս կողմից հնագիտական ալպյան կողմից մարդարանական, Այդ մյուս կողմից հնագիտական ալպյան» (տես, Şevket Aziz Kansu, Selcuk Türkleri hakkında ներք) (տես, Şevket Aziz Kansu, Selcuk Türkleri hakkında 1923).

⁴ Roland Dixon, The social history of men, New York 1923, էջ 39, 90, 95 և այլն տեղում։

ավազի վրա և վաղուց մերժված՝ գիտության կողմից։ Գեհեն 40-ական թվականներին Ֆրանսիայի խոշորագույն մարդաբան և հնագետ Հ. Վալուան գրել է. «Ահա երեսուն տարի է, որ անվիճելի աքսիոմա էր համարվում այն, թե կարծաշղությունները մեզ մոտ (իմա՝ Եվրոպայում— Մ. Զ.) եկել են Ասիայից։ Սակայն այն հետազոտությունները, որ ես կատարում եմ Ֆրանսիայի կարծագությունների վրա, գնալով ավելի ու ավելի բերում են ինձ այն համոզման, որ դա արելքից եկած ներխուժման հետևանք չէ։ Նշանք (այսինքն կարեագլուխները) չեն եկել ոչ միայն Ասիայից, այլ անգամ Ռուսաստանից (ընդգծումը մերն է— Մ. Զ.)»։¹

Ահա, ուրեմն, տրամագծորեն հակառակ մի այլ տեսակետ, որին ծանոթանալով, չի կարելի շհամոզվել, որ այս կամ այն ցեղի կամ ժողովրդի, կամ ցեղախմբերի ու ժողովուրդների ծագման խնդիրը չի կարելի հիմնել սոսկ նրանց «կարծագլխության» կամ «երկարագլխության» հանգամանքի վրա և որ՝ թուրք պատմաբանների համապատասխան մարդանքները սոսկ մարդարանական տվյալների շարաշահումն է՝ ուսիստական դիրքերից։ Մարդարանությունը, որ ինքնին կարուր գիտություն է, կարող է ուսիստի ձեռքին դառնալ գաղափարական ամենասոսակալի գենքերից մեկը, ուղղված այլ ժողովուրդների գտավ գերմանական ֆաշիզմի նողկալի «տեսության» և քստմնելի պրակտիկայի մեջ։

Սակայն Հին Արևելքի ժողովուրդների, ի թիվս որոնց և հայ ժողովրդի հնագույն ու հին շրջանի պատմությունը կեղծելու ու նրանց թուրքեր դարձնելու ոտնձգություններ կատարելիս, պանթուրքիստ պատմաբաններից ոմանք հենքում են նաև «լեզվաբանական» տվյալների վրա։ Այսպես՝ թուրք պատմագրության երկրորդ համագումարում, թուրք լեզվաբարաններն առաջ քաշեցին գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող այսպես կոչված «արևելյան տեսությունը» լեզվի ծագման մասին։ Այդ տեսության էլությունը հետևական է. ենելով այն հանգամանքից, որ մարդու առաջին պաշտամունքը եղել է արեր, լույսը և որ մարդկության ամենահա-

¹ Տես Հ. Վալուանի Ա. եերամակի գրքի համար գրած առաջբանը, R. Khéroumian, Introduction à l'anthropologie du Caucase. Les Arméniens, Paris, 1943, էջ 6։

սարակ բառը «աճ-ն է, թուրք լեզվաբաններն այստեղից ա-րեցին հեռու տանող պիտական» եղրակացություններ։ Նը-րանք գտան, որ «ա» թուրքերն «ափ», «ազ» բառն է, որը նշանակում է սպիտակ։ Այդ բառը եղել է աշխարհի բոլոր ժողովուրդների սկզբնախոսոքը։ Հետագայում մյուս բոլոր հնչուններն ու հնչունների միակցությունները առաջացել են այս նախահնչունից։¹ Այստեղից էլ աշխարհի լեզուների հիմքում ընկած է թուրքերները։ Եվ թող չզարմանա ընթերցողը, եթե թուրք պատմաբանները հենվելով իրենց լեզվաբանների այս մեծ օբյուտիս վրա Հին Արևելքի լեզուների մեջ փնտրեն աղերսներ թուրքերների հետ, իսկ անձնանունների ու տեղա-նունների մեջ՝ թուրքերն արմատներ։ Այսպես՝ կամայակա-նորեն «Սուրբարը»² դառնում է Միջագետք, քանի որ «սու-բարը» ոչ այլ ինչ է, քան թուրքերն ՏԱ-ԱՐԱՏԻ այսինքն՝ Միջագետք։ Հետևաբար՝ Հին Միջագետքը բնակեցված է եղել թուրքերով։ Սա հայտնի կեղծ (կամ ժողովրդական) ստորաբանության մեթոդն է, որը հաճախ կիրառվում է կի-տուսյալ հեղինակների կողմից ու հաջողությամբ է ծառայում ընթերցողների անտեղյակ մասին թուրիմացության մեջ գցելու գործին։

Պանթուրքիստական պատմագրության՝ պատմությունը կեղծելու այս մեթոդին մենք գեռ բազմիցս առիթ կունենանք անդրաբանալու։ Նշենք միայն, որ այդ բոլորը կատարվում է Հին Արևելքի ժողովուրդներին ժագումով թուրքեր դարձ-նելու հատուկ նպատակագրումով, քանի որ համընդհանուր ճշմարտություն է, որ ժողովրդի ժագման հարցերը շոշա-փելիս մասնագիտ-պատմաբաններն հետաքրքրում է տվյալ ժողովորդի ծագումը բնորոշող երեք կարևոր գործոն՝ ֆիզի-կական ժառանգականությունը, որը հենվում է մարդարա-

նության տվյալների վրա, լեզվական ժառանգականությունն ու մշակութային ընդհանրության գործոնները։

Պանթուրքիստ պատմաբանները մեծ ուշագրություն են դարձնում մշակութային ընդհանրությանը, Հին Արևելքի ժո-ղովուրդներին, նախ և առաջ, շումերներին, էլամցիներին ու խուփիներին նախաթուրքեր հայտարարելով, և սրանց էլ գաղթեցնելով Միջին Ասիայից, նրանք որպես գլխավոր «ապացույցներից» մեկը, բերում են մշակութային, կենցա-զային ընդհանրության մասին եղած թեզը, որն իրոք, սկիզբ է առել Անառուում ու, տարածվել ամբողջ Ասիայում և եվրո-պայում։ «Էլամական ու շումերական մշակույթը, հայտա-րարում են նրանք, երկնքից իշած մի մշակույթ չէ»,³ որ «այդ մշակույթը, ինչպես նաև կրողները, թուրքեստանից են»։⁴ «Ճինաստանի հյուսիսում, ինդոսի հովտում, Միջագետքում, Անատոլիայում, Սև ծովի հյուսիսային մասում կատարված հնագիտական ուսումնասիրություններն ու պեղումների հե-տևանքով ձեռք բերված իրերը, առարկաները, գործիքները վկայում են, որ այդ մշակույթի ծագումը գալիս է Միջին Ասիայից»։⁵

* * *

Կարո՞ղ է արդյոք տարակույս մնալ, որ այս և նման «հե-տազոտությունները» ոչ մի առնչություն չունեն գիտության հետ և ամբողջությամբ ժառայում են քաղաքական նպա-տակների։

Որ դա իրոք այդպես է՝ երևույթ է արդի թուրք պատմա-գրության զարգացման ընթացքից։ Այդ պատմագրությունը սերտորեն պայմանավորված է երկրի քաղաքական վիճակով, կառավարող շրջանների որդեգրած քաղաքականությամբ։ Եթե մինչև երկրորդ համաշխարհայիշխան պատերազմը, թուր-քական պատմագրության մեջ գնդիշխողով ազգայնականու-թյունն էր, որի հիմնական նպատակն էր «ապացուցել» թուր-քերի Փոքր Ասիայում բնիկ լինելը հնագույն ժամանակներից,

¹ Այդ մասին մահրաման տես I. N. Dilmen, Türk tarihi tezinde շնորհած dil teorisinin yeri ve degeri. II TTK, էջ 86—90.

² Սուրբարիները, — առում էր պրոֆ. Յուսուֆ Զիյա Օզերը II կոնքինամա-ռենցաց զեկուցման մեջ, — թուրքերի առաջար սեղի մի բնն են կազմում։ Սու բառը թուրքերներմ սովում, սուր ձևով էլ է հանդիպում։ Սովուրը, սու-բարը նշեն բառից է առաջացել, որը պետք է նշանակի շրի մարդիկ, շրի բարը նշեն բառից է առաջացել, որը պետք է նշանակի շրի մարդիկ, շրի բարը...» Yusuf Ziya Ozer Son arkeolojik nazarîiyeler ve Subariler II TTK, էջ 181.

³ II TTK էջ 115.

⁴ Նույն տեղամաս։

⁵ Նույն տեղամաս։

ապա երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ թուրք պատմաբանների հիմնական գենքը դարձավ պանթուրք պատմաբանների համար զատագովները բացահայտողներն պահանջում թուրքիզմը։ Նրա զատագովները բացահայտողներն պահանջում էին կառավարությունից արտաքին քաղաքականության մեջ թեքվել դեպի ֆաշիստական Գերմանիա։ Նրանք պահանջում էին Անդրկովկասի, Միջին Ասիայի թյուրքախոս բնակչություն ունեցող շրջանների զավթումը։

1941 թվականին ստեղծվեց այսպես կոչված «Թուրքական մշակույթի լիգան», որի կազմի մեջ մտնում էին նորի փաշան (էնվեր փաշայի եղբայրը), գեներալ էրկիրետը, Զ. Տողայը և ուրիշներ։ Սկսվեցին լույս ընթայվել «Բոզկուրտ» ժեեյուկ դողու «Օթիսոն» «Զինար Ալիբը» պանթուրքիստական ամսագրեր, ինչպես նաև գերմաններեն լեզվով հրատարակվող «Թուրքիշ պոստ» թերթը։¹

1941 թ. Հունիսին «Թոզկուրտ» հանդեսը իր էջերում զետեղեց «Պանթուրքիզմը սպասում է» հոդվածը, որին կցված էր «Մեծ Թուրքիայի» քարտեզը։ Անդրկովկասն ու Միջին Ասիան տեղադրված էին «Մեծ Թուրքիայի» քարտեզում²։

1942 թ. օգոստոսին պրեմիեր-մինիստր Շյուքրյու Սարաջ-օղուն, Մեզլիսում հանդես գալիս, շեշտում էր՝ «Մենք՝ պանթուրքիստներս», որ բացահայտ թշնամական քայլ էր Խորհրդային Միության նկատմամբ³։ Նրանք երազում էին 1942—1943 թվականներին հարձակվել Խորհրդային Միության վրա և իրականացնել իրենց վաղուց փայփայած երազանքները՝ միավորել Խորհրդային Միության բոլոր մուսուլմաններին Թուրքիայի գերիշխանության ներքո։ Որ Թուրքիան պատերազմի տարիներին պատրաստվում էր հարձակվելու Խորհրդային Միության վրա ու սպասում էր մոսկովյան ճակատամարտի ելքին; նշեցին Խորհրդային Միության մի շարք զեկավարներ։ Մարշալ Ռոկոսովսկին գերմանա-ֆաշիստական զորքերի Մոսկվայի տակ զախշախվելու 20-րդ դարի առաջին առաջնորդին նվիրված իր «Մեծ ճակատամարտը» հոդվատարեդարձին նվիրված իր «Մեծ ճակատամարտը» հոդվա-

¹ Տես, Դ. Ե. Եվգենьев, Вопросы этногенеза турок...

նույն տեղում, էջ 82։

² Նույն տեղում։

³ Նույն տեղում։ Այդ մասին ավելի մանրամասն տես Վ. Կрымский, «Пантюркисты—фашистская агентура в Турции», «Большевик», 1944, № 10—11, էջ 79—85։

ժում հատուկ ընդգծում էր, որ հիտլերյան զորքերի Մոսկվայի պատերի տակ զախշախումը սիթափեցրեց ձապոնիայի և Թուրքիայի ղեկավար շրջաններին «...որոնք պատրաստում էին հարձակվելու մեր երկրի վրա»։¹

1941 թվականի մերջին թեոլինում կայացավ պանթուրքիստների խորհրդակցություն, ուր որոշվեց օգտագործել ամեն մի հարմար առիթ Խորհրդային Միության թուրքախոս ժողովուրդների «միավորման» համար։

Պատերազմի տարիներին լույս տեսած պատմագիտական մենագրություններում ուղղակի քարոզվում էր «մեկ ազգ ներկայացնող» թուրքախոս ժողովուրդներին «միավորելու անհրաժեշտությունը։ 1944 թվականի փետրվարին լույս տեսավ Հյուսեյին նամըկ Օրկունի «Ամբողջ աշխարհի թուրքերը» խորագիրը կրող գիրքը։ Գրքում շոշափված հարցերի մասին ընթերցողը կարող է անմիջապես գաղափար կազմել՝ կարդալով թեկուզ միայն վերնագրերը՝ Սիրիուսի թուրքեր, Միջինասիացի թուրքեր, Իթիլի (Վոլգայի) թուրքեր, Ղրիմի թուրքեր, Ադրբեյջանի թուրքեր և Արևմտյան թուրքեր։ Այս գրքում հեղինակը ուղղակի կող է անում թուրք ընթերցողին գիտակցելու իր «ազգային» պարտքը։ «Մի մոռացիք, — գիմելով իր ընթերցողին գրում է Հյուսեյին նամըկը, — որ գուկ կազմում ես ոչ միայն 18միլիոնանոց (մի ժողովուրդ)։ Քո բոլոր գիտելիքները, միտքն ու կարողությունը նվիրագործիր թուրքի բարձրացմանը, ոչ մի ակնթարթ հիշողությունից մի հեռացրու հետևյալ օրինակարգը՝ ամեն ինչ թուրքերի համար։

1944 թվականի հունվարին Ստամբուլում լույս է տեսնում Օզուլ Թուրքականի «Ալղայնականության ուղու վրա» գիրքը, ուր փորձեր են կատարվում տեսականորեն հիմնավորելու պանթուրքիզմը «թրքության յուրահատուկ» է ազնվությունը, նա գիտե թուրքի արյան արժեքը։ Թուրքերը հենց ծնոնդից տաղանդավոր, ուշիմ, խեղախ ու հերոս են։ Թուրքիզմը (իմա՝ պանթուրքիզմը — Մ. Զ.) թուրքական ցեղը համարում է ամենաբարձրը։ Ռասիզմը (ցեղապաշտությունը) հանդիսանում է թուրքիզմի սկզբունքներից մեկը։ Դա պայմանավորված է կենսաբանական և պատմական պատճառներով։ Թուր-

¹ Տես «Правда», 26.12. 1961։

քիզմը, ինչպես և ամեն մի ազգայնականություն, հետապես քում է ազգային միությունը: Թուրք ազգը կազմում են այն բոլոր 65 միլիոն թուրքերը, որոնք պարում են թուրքիայի սահմաններից դուրս՝ Բուլղարիայից մինչև Ալբայան լեռները: Ազգային միավորման այս սկզբունքը հնևում է ոչ միայն ցեղային տեսության վրա, այլև իր մեջ ընդգրկում է միայն ցեղային մասնաշխատության վրա, այլև իր մեջ ընդգրկում է ակրոնի, հավատալիքների, պատմության, մշակույթի և պահանջմանների միասնականությունը: Դժբախտ հանգամանքներն ու դեպքերը քաղաքական առումով մասնատել են թուրքերին: Սակայն այդ մասնատումը ոչ միայն չի կարող սահմանվել մեզ երածարվել մեր միասնական միության զաղափարից, այլ ընդհակառակը՝ կողենչի մեզ դրա (միասնության զաղափարի Մ. Զ.) իրականացմանը (ընդգծումը մերն է — Մ. Զ.):

Թե պատերազմի տարիներին պանթուրքիզմի մարտաշունչը գաղափարախոսությունը ինչպիսի արտահայտություն գտնվել թուրքական պատմագրության մեջ, կարելի է պատգտավ կազմել թուրքական պատմագրական ընկերության կերացում կազմել թուրքական պատմագրական նշանակությունը: Այն 1943 թ. կայացած երրորդ համագումարի նյութերից: Այստեղ ելույթ ունեցած պրոֆ. Շեմսեդդին Գյունալթայը նշում էր, «Կարելի է ասել, որ հերոսական դրվագներով հարուստ Ասիհայի պատմությունը թուրքիայի պատմություն է... աղջամուղչի մեջ թաղված անցյալում եղել են ժամանակներ, երբ հին աշխարհի չորս ծագերում լսվել են թուրք արշակուների ձիերի պայտերի դոփյունները, հուանխերից, ինդուսի և Գանգեսի ափերից, Եփրատի ու Դանուբի երկայնքից... սի և Գանգեսի ափերից, Եփրատի ու Դանուբի երկայնքից... մինչև նեղոս լսվել է միայն թուրքի իշխող ձայնը, թուրք այդ վայրերում էլ կանգնեցվել են թուրքական մշակույթի մեջ հուշարձանները (sic!)...»: «...Կար մի ժամանակ, մեծ համանակում է նա, — երբ մեր պատմությանը տալիս էին շարունակում է նա, — երբ մեր պատմությանը տալիս էին կամ թե մի քիչ հետ տավեց հարյուր տարվա մի կյանք և կամ թե մի քիչ հետ տավեց հասցնում էին մինչև սելջուկները: Մեր մայր արմատը, փառքով ու հաղթանակներով հարուստ մեր հին պատմությունը անգիտանում էին ու տեր չէին կանգնում: Մինչեռ թյունը անգիտանում էին ու տեր չէին կամ պատմությունը անհիշտ ապագան, մերթ բուռն ձևով ափերից դուրս է եկել, հավետ ապագան, մերթ բուռն ձևով ափերից դուրս է եկել, համար հանդարտ իշել է դեպի իր ափերը, սակայն ոչ մի ժամանակ կանգ չի առել, այլ հավերժ առաջընթաց է ապրել...»:

«...Դարերում կուտակված կանխակալ կարծիքների աղքա-ցության տակ թուրքի ոխերիմ թշնամի հանդիսացող և թուրք պատմության փառք ու պատվով հարուստ էջերը սկացնելուց հաճույք ստացող որոշ հեղինակների թափած կեղտերը մեր ճանապարհը փակել, նրանց փորած փոսերը յուրաքանչյուր քայլափոխում, որպես չհաղթահարվող խոշխնդոտներ մեր առջև կանգնած են եղել: «Ժամանակն է, — ասում է նա, — դուրս գալ այդ վիճակից: Այսօր, շարունակում է Շ. Գյումալթայը, մենք գտնվում ենք մի կացության մեջ, եղր հսկայական տարածության վրա գտնվող թուրքերին ստիպում են մոռանալ իրենց թուրքական ծագումը, տնտեսելով այն, որ թուրք ժողովուրդները առաջնոր մարդկությանը տվել են մշակույթ և ունեն փառավոր պատմություն: Պատմությունը մեր առաջ դրել է մեծ առաքելություն՝ ապացուցելու վերև շարադրված ճշմարտությունը», վերջացնում է նա իր խոսքը:

Դեմոկրատական կուսակցության իշխանության տարիներին (1950—1960 թթ.), երբ Թուրքիան դարձել էր ԱՄՆ-ի կիսագաղութը ու ՆԱՏՕ-ի անդամ, պանթուրքիստները նորից գլուխ բարձրացրին: Այս տարիներին հրատարակված պատմական գրականության զգալի մասը իր վրա է կրում պանթուրքիզմի բացահայտ կնիքը: Հիմնականում հենց այս տարիներին են լույս տեսնում նաև հայ ժողովրդի պատմական անցյալին նվիրված մի քանի աշխատություններ¹:

1959 թ. վերահրատարակվեց պանթուրքիզմի գաղափարակուներից մեկի Զիա Գյուկալփի «Թրքության հիմունքները» (Türkçülüğün esasları) գիրքը,² 1961 թ. այն ունեցավ իր երրորդ հրատարակությունը: Գյուկալփի մասին լույս տեսան բազմաթիվ հոդվածներ, գրքույկներ և այլն³ 1959 թ. նրա գիրքը հրատարակվեց ԱՄՆ-ում և Անգլիայում անգլե-

¹ Esat Uras, Tarihte Ermeniler ve ermeni meselesi, Ist. 1952. Cark Y. Türk devleti hizmetinde Ermeniler, Ist. 1953¹

² Ziya Gökalp, Türkçülüğün esasları, İstanbul, 1952 & 1961.

³ Հրատարակված գրքույկներից կարելի է նշել՝ Mettin Safet Urflı, Atatürk İnkıllabı, : Ziya Gökalp, Ali Nüzhet Göksel. Ziya Gökalp hayatı sanatı, eseri. İstanbul 1955, Cavid Orhan Tütengil, Ziya Gökalp üzerine notlar, İstanbul, 1956:

F. Kirzioğlu, Yazar vesikalere göre Ziya Gökalp. İstanbul, 1956
և այլն:

րեն թարգմանությամբ:¹ Պանթուրքիզմը որպես հակադաշուց հրդային դրոշ խիստ հետաքրքրություն առաջացրեց ԱՄՆ-ի և Անգլիայի քաղաքական շրջանակներում:

1957 թ. նյու Յորքում և Լոնդոնում լույս տեսավ ԱՄՆ-ի օդային ուժերի գնդապետ Հոստլերի «Պանթուրքիզմը և սովետները, աշխարհի թուրքերը ու նրանց քաղաքական նպատակները» վերնագրված գիրքը:² Հեղինակը խորհուրդ էր տալիս ԱՄՆ-ի քաղաքական գործիչներին օգտագործելու իշխանության դեմ իրենց պայքարում:³

1953 թ. Պոլսում լույս տեսավ Արին Էնգինի «Աթաթյուրքի գաղափարները և պայքարը Մոսկվայի ու թուրքական աշխարհի միջև» Աթաթյուրքը ոչ միայն Թուրքիայի թուրքերի, այլև ամբողջ թրքության հայրը է» վերնագրված գիրքը,⁴ որն ունի մոլի պանթյուրքիստական բովանդակություն:

1955 թվականի մարտին Ստամբուլում տեղի ունեցավ թուրք քաղաքական վտարանդիների առաջին համագումարը, ուր ծավալվեց պանթուրքիզմի ամենասանձարձակ պրոպագանդան: Այդ բոլորը նորից հիշեցնում էր երիտթուրքերի գերեշխանության տարիները: Համագումարի ամբիոնից կոչեր էին արվում ընդարձակել Թուրքիայի սահմանները, ազատագրել թուրք եղբայրներին, որոնք ապրում են Խորհրդային Միությունում:

1950—1960 թվականներին Թուրքիայում պանթուրքիզմի հետ միասին իրեն զգալ տվեց և պանխամիզմը: 1957 թվականին Ստամբուլում լույս տեսավ Հեքմեթ Իքբալի «Թուրքիան պիտի բարձրանա և օրինակելի մի ազգ է դառնալու» խորագիրը կրող գիրքը, իսկ 1958 թվականին Անկարայում էմին էրիշգիլի «Թուրքիզմի ժամանակը ազգայնական և մարդասիրության ժամանակն է»⁵ գիրքը: Այս

¹ Ziya Gökalp, Turkish nationalism and western civilisation, New-York, London, 1956 և այլն:

² W. Hostler, Turkism and Soviets. The Turks of the world and their political objectives, New-York, London, 1957.

³ Д. Е. Евгеньев, նույն տեղում:

⁴ A. Engin, Atatürkçülük ve Moskofflu Türkler savası Atatürk yalnız Türkiye Türklerinin degil, bütün Türklerin atasıdır, İstanbul, 1953.

⁵ Hikmet İkbal, Türkiye yükselecek ve Türkler örnek bir millet olacaktır, İstanbul, 1957:

⁶ Emin İrşigil, Türkçülük devri-millet yetçilik devri, İnsanlık devri, Ankara, 1948:

երկու գրքերն էլ գրված են մեծապետական շովինիզմի, պանթուրքիզմի ու պանխամիզմի դիրքերից և իրենց սույր սլաքով ուղղված են Խորհրդային Միության դեմ: Այսպես, Հեքմեթ Իքբալը կոչ է անում իր ընթերցողներին նորից կառշել ու ապավինել խլամին, սակայն միևնույն ժամանակ մնալ թուրք ազգայնական:

Ահա այս գաղափարախոսությամբ թունավորված թուրք երիտասարդությունն էր, որ 1955 թվականի սեպտեմբերի 6—7-ին վայրագորեն հարձակվեց Կ. Պոլսի հայ և հույն համայնքների վրա, կոտորելով բնակչության մի մասին, կողոպտելով նրանց հարստությունը և կատարելով բազմաթիվ խժեցները, նորից հիշեցնելով երիտթուրքերի գերիշխանության սև օրերը: Կիպրոսի հարցը լոկ մի պատըրվակ էր և ոչ թե գլխավոր պատճառը:

Դեմոկրատական կուսակցության հշխանության տապալումից հետո, վերջին տարիներին հրատարակված աշխատությունների մեջ համեմատաբար փոքր թիվ են կազմում բացահայտ պանթուրքիստական ոգով գրվածները: Այս տարիների պատմագիտական գրականության համար բնորոշը բուրգուական օբյեկտիվիզմն է: Այսպես, 1962 թ. լույս տեսավ Ֆյուրուզան Կընալի «Հին Անատոլիայի պատմություն» գիրքը,⁷ ուր ոչ մեր խոսք չկա այն մասին, թե ինեթերը նախաթուրքեր են: Սակայն, այնուամենայնիվ, այս տարիներին ևս մամուլում տարածվում էին պանթուրքիզմի գաղափարախոս Զիա Գյոկալպի աշխատությունները⁸ Բացի այդ, մայիսի 27-ի պետական հեղաշրջման հեղինակները նորից օրակարգի հարց դարձրեն ժողովրդական տների (halk evleri) բացումը, որոնք պիտի տարածեին պանթուրքիզմի գաղափարախոսությունը:⁹

1960 թ. պետական հեղաշրջումից հետո Թուրքիայի վարած ներքին ու արտաքին քաղաքականության մեջ որևէ

¹ Füruzan Kinal, Eski Anadolu tarihi, Ankara, 1962:

² Kudretli Z., Ziya Gökalp, Ankara,, 1963 և այլն:

³ Պանթուրքիզմի պրոպագանդման հարցում թե ինչ ինքնից ներկայացնում ժողովրդական տները քեծական թուրքիայի քաղաքական և հասարակական կյանքում մարզանին քննության է ներարկված ու վերերս հրատարակված Ա. Կոլեսնիկովայի գրքում (տես, Ա. А. Колесников, Народные дома в общественно-политической и культурной жизни Турецкой Республики, Москва, 1984).

Հական փոփոխություն չկատարվեց: Դաժան հաշվեհարդարը առաջավոր մտավորականության ներկայացուցիչների ու հասարակական գործիչների նկատմամբ դարձավ առօրյա գործ մասնավորապես 1980 թ. սեպտեմբերի զինվորական հեղաշրջումեց հետո, երբ երկրում բացահայտորեն հաստատվեց ուազմական դիկտատուրա: Թուրքիայի ազգային փոքրամասնությունների՝ հայերի և հույների ու մասնավորապես քրիստոնյաց դեմ հալածանքը հասավ անասելի աստիճանի: Տասնյակ հազարավոր հայրենասերներ նետվեցին բանտերը, ուր կալանավորներին ենթարկում էին ամենավայրագ խոշտանգումների:

Ահա այս քաղաքական իրավիճակն էլ պայմանավորելու պայմանավորվում է պատմագրության մեջ տիրոջ գաղափարական ուղղությունը:

Գլուխ առաջին

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԻՆ ԵՎ ՄԻԶԻՒ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանի հետ առնելիող Հարցերը շոշափված են Շ. Գյունալթայի¹, Զ. Տողանի², Ֆ. Կիրզիօղուփ³ Ա. Էնգինի⁴, Է. Ուրասի⁵, Զ. Օզկայալի⁶, Փ. Գյուրյոնի⁷, Հ. Կոշայի⁸, Ա. Կոշաշի⁹, Մ. Ռիզայի¹⁰, Զ. Անաղոլի¹¹, Է. Սֆիֆի¹² ու այլոց¹³ աշխատություններում: Բոլոր այս հեղինակները իրենց առաջ հատուկ նպատակ են դրել Հայկական լեռնաշխարհում ամենուր ու պատմական

¹ Semeddin Günday, Yakın Şark Anadolu, En eski çağ'la dan Aham enişler istilasına kadar, Ankara, 1937.

Yakın Şark, VI. Romalilar zamanında Kapadokya, Pont ve Artaksiad kırallıkları, Ankara, 1951:

² Zeki V. Togan, Ümmü'l Türk tarihine giriş (այսուհետք՝ Zeki V. Togan), Ankara, 1946:

³ F. Kirzioğlu, Kars tarihi (այսուհետք՝ Kars tarihi.), 1953:

⁴ Arin Engin, Eti tarihi (այսուհետք՝ Eti tarihi.), İst. 1958:

⁵ Es'at Uras, Tarihte Ermeniler ve ermeni meselesi (այսուհետք՝ Es'at Uras), İstanbul, 1950.

⁶ Inayetullah Cemal Özkaya, (այսուհետք՝ Cemal Özkaya) Le peuple arménien et les tentatives de rendre le peuple turc en servitude, Ankara, 1972:

⁷ Kâmurân Gürün, Le dossier arménien (այսուհետք՝ Kâmurân Gürün), Paris, 1983.

⁸ Hamit Zübeyir, K oşay, Erzurum ve çevresinin dört tarihi (այսուհետք՝ M. Z. Kosay), Ankara, 1984:

⁹ Sadi Koças, Tarih boyunca Ermeniler ve Türk-Ermeni ilişkileri (այսուհետք՝ Sadi Koças), Ankara, 1967:

¹⁰ M. Rıza, Benlik ve dirbirliginiz, Türk kültürü araştırma dol), İstanbul, 1979:

¹¹ Cemal Anadol, Tarihin ışığında ermeni dosyası, Cemal Anadol), İstanbul, 1982:

¹² Erzen Hafif, Eastern Anatolia and Urartians (այսուհետք՝ Erzen Hafif), İstanbul, 1979:

¹³ Տես Կոլեկտիվ աշխատանքի արդյունք հակիմացող Անկարայում 1982 թ. լույս տեսած „The Armenian issue in nine questions and answers”:

բոլոր ժամանակաշրջաններում թուրքեր փնտրելու Այս առողջով հատկապես պետք է առանձնացնել Ֆ. Կիրզիօղուին, Ա. Էնգինին, որոնց մոտ ըստ ամենայնի բացակայում է գիտական շափի զգացումը և նրանց բերած «փաստարկները» ոչ միայն գիտականորեն անհմն են, այլև հաճախ զավեշտական։ Նույնը չի կարելի ասել Շ. Գյունալթայի, Է. Ուրասի, Ս. Կոլաշի, Զ. Օզկայայի, Ք. Գյուրյոնի և այլոց մասին, ոակայն նրանց մոտ էլ տիրապետող պանթուրքիզմն է։

Հայ ժողովրդի կազմավորման ու նախնական զարգացման պատմության խնդիրներից թուրք պատմաբանների անառողջ հետաքրքրության առաջին նպատակներն են դառնում, հասկանալի պատճառներով, հայ-ուրարտական պատմական առնչությունները և դրա հետ կապված հայ ժողովրդի ծագումնաբանական հարցերն առհասարակ։

Տեսնենք, թե ինչ միջոցներով են գործում այս պատմաբանները, ինչ «հիմնավորումներ» են տալիս նրանք իրենց տեսություններին, որոնք արտաքնապես միայն տարրերվելով միմյանցից, ուղղված են նույն նպատակին՝ թուրքերի տարածքային հավակնությունների հաստատմանը։

Շ. Գյունալթայը շանում է մնալ գիտության սահմաններում, ուստի և հնարավորին շափ պահպանում է իր շարադրանքի կազմը հունական պատմիչների հաղորդած համապատասխան տեղեկությունների հետ։ Հայերի ծագումը նաև հիմնականում կապում է փոյուղիսիների հետ։ «Համաձայն աղբյուրների վկայության, — գրում է նա, — հայերը, ինչպես և փոյուղիսիները, ծագում են Թրակիայից և եկել են Փոքր Ասիա կամ փոյուղիսիներից առաջ, կամ նրանց հետ միասին, կամ նրանցից հետո»։¹ Բերելով Հերոդոտոսի (VII 73) ու Ելեփոսոսի (694) վկայություններն այն մասին, որ հայերեն լեզուն առնչություն ունի փոյուղերենի հետ, Շ. Գյունալթայը գրում է, թե համաձայն Ստրաբոնի մոտ պահպանված առասպելի, թեսալացի Արմենոսը թողնելով իր ծննդավայրը՝ Արմենիոն քաղաքը, հետեւով Ցասոնին, մտել է Պոնտոսի երկիրը,² «Այսպիսով, — գրում է նա, — հայերն այս ժամանակ (Թրակիայից գաղթվելուց հետո) ձուլվել են

տեղացի մուշկերի և տորալների հետ»։³ Կիմերների արշավանքի ժամանակ, — շարունակում է Շ. Գյունալթայը, — երբ կործանվում է փոքրասիական փոյուղիսական պետությունը «...հայերն այդ խառն իրադրության մեջ իրենց գոյությունը փրկելու նպատակով, քաշվել են արևելքի լեռնային մասերը», տեղավորվել հովիտներում ու ընդհարվել ուրարտացիների հետ։ Աստիճանաբար փոքրամասնություն կազմող նախահայերը ձուլում են իրենց մեջ տեղաբնիկներին ու պարտադրում նրանց իրենց լեզուն։⁴ Այստեղից հայ գիտնականների այն պնդումը, թե հայերը ծագել են եկվոր արմեններից ու տեղացի ուրարտացիներից, ճիշտ պիտի համարել, քանի որ հայերը ծագումնաբանական առումով բուն հայերից ավելի... հայացված հին ցեղերի (նկատի ունի խուսի-ուրարտացիները) սերունդներից առաջացած լինելը կասկած չի հարուցում»։⁵

Վերանալով աղբյուրների տվյալների մեջ թույլ տված որոշ անձտություններից, այստեղ ցանկանում ենք շեշտել Շ. Գյունալթայի այն եղանակացությունը, որ հայերի և ուրարտացիների կազմը «կասկած չի հարուցում»։

Առայժմ մի կողմ թողնենք այն խնդիրը, թե ինչ նպատակ է հետապնդում Շ. Գյունալթայը իր այս պնդմամբ և անցնենք մյուս, հակադարձ տեսակետին, «Եթեռում է, թե հայանուվ ժողովուրդ գոյություն չունի», — գրում է մի ուրիշ պատմաբան՝ Ա. Էնգինը, որը ի տարրերություն նախորդից, ամենակին մտահոգված չէ սկզբնաղբյուրներին գոնե մասմբ հարազատ մնալու խնդրով։ «Մրանք, — հեղինակի պընդմամբ, — հին մեղացի թուրքերի և պարսիկների Անատոլիա կատարած արշավանքի ժամանակ, Արևելքի լեռնային մասերում (իմա՝ Հայաստանում Մ. Զ.) Խեթ թուրքերի արանքում մնալով իրան շեն վերադարձել, և աստիճանաբար մեծամասնություն չեն կազմել և ամբողջությամբ ենթարկվել են տեղաբնիկներին։ Մրանք քաղաքական, տնտեսական, մշակութային առումով ինքնուրուցյունություն ու (տեղաբնիկ-

¹ Նույն տեղում։

² Նույն տեղում, էլ 562—563։

³ Նույն տեղում, էլ 564—565։

ների նկատմամբ) գերազանցություն շեն ունեցել: Սխալ ձևով «Արտեօնօդ» անվանված մշակույթ հուշարձանները, իրանցիների գալուց շատ առաջ, թուրանցիներն էին ստեղծել...»¹ Այսպիսով, Ա. Էնգինը, Շ. Գյունալթային հակառակ, հանքին բերում է արևելքից, իրանական աշխարհից, և կրկին տարրերվելով Շ. Գյունալթայից, կտրականապես ժխտում նրանց կապը տեղական (այսինքն՝ ուրարտական) տարրից նույն ոգով է գրված նրա՝ խեթերին նվիրած «աշխատությունը», ուր Ա. Էնգինը մի ամբողջ գլուխ նվիրել է հայերին և վերնագրել այն «Հին Վանի թագավորությունը և Մոսկովների (իմա՝ ԽՍՀՄ-ի) առաջ քաշած հայ-վրացա-քրդական հարթի ներքին կողմը», ինչպես տեսնում ենք, թունոտ այս վերնագրին արդեն կարող է հուշել ընթերցողին, թե ինչ բովանդակություն կարող է ունենալ այն:²

Արին էնգինը դեմ է բոլոր այն հեղինակներին, որոնք առնշություններ փնտրում են ուրարտերենի և հայերենի միջև նա, օրինակ, ուղղակի հայույում է գերմանացի գիտնական Մորդումանին լոկ այն բանի համար, որ վերջինս աղերսներ է փնտրել հայկական աշխարհագրական անունների և ուրարտականի միջև «Երանք ընդհանրություններ»³, — գրում է նա: «Կար մի ժամանակ, — գրում է «Կարսի պատմության» հեղինակ Ֆ. Կրգիոլլուն, — որ ուրարտական մշակույթը վերապրում էին հայերին, ու անվանում «Արտեօնակ»: Դա արվում էր որոշ քաղաքական նկատառումներով: Այդ գիտնականները, — ասում է նա, — ծառայում էին ուսուական ինպարիալիզմի շահերին: Այդ նույն նպատակներին է ծառայել ու ծառայում նաև Արևելյան Անատոլիային «Հայաստան» (Արտենյա, Արմենիա) աշխարհագրական անուն տալը»:⁴

Նախքան պարզելը, թե որոնք են թուրք պատմաբանների այս խմբի շահագրգոռության բուն ակոնքները, նկատենք, որ նրանք բաց դռներ են ծեծում: Իրոք, ուրարտագիտության զարգացման վաղ շրջանում արծարծվել են այնպիսի տեսակետներ, թե ուրարտերենը հենց հայերենն է, իսկ ուրար-

տացիներն էլ՝ հայերը: Ուրարտական սեպագրի թերի վերծանվածության պայմաններում նման մի տեսակետի ժապումը՝ միանգամայն իրավաչափ երկույթ էր, քանի որ պատմական Հայաստանը գտնվում է ճիշտ այն տարածքի վրա, որտեղ ժամանակին ծավալվել էր Ուրարտուն: Հետագայում, սակայն, սեպագիր արձանագրությունների վերծանումից պարզվեց, որ ուրարտերենը՝ հայերենը չէ, ուստի և ուրարտացիներն էլ ուղիղ իմաստով հայեր համարվել չեն կարող: Այդ տեսակետը վաղուց ի վեր հաղթանակել է գիտության մեջ, համենայն դեպս 50-ական թթ., երբ գրվում էին վերոհիշյալ թուրք պատմաբանների գործերը, այն արգեն Միկլ տիրապետող էր: Սակայն այդ պատմաբանները շարունակում էին նիզակ ճոճել:

Իրականում հայերը ժառանգել են ուրարտական մշակությի հարստագույն շերտեր, իսկ հայոց լեզվում պահպանվել է ուրարտերենի բառապաշարի մեծ զանգված, ուստի և հենց հայերն են հանդիսանում ուրարտացիների իսկական և օրինական ժառանգները: Բազմաթիվ օրինակներից, որոնց ցանկացողը կարող է ծանոթանալ նշանավոր ուրարտագետների երկերում, հիշատակենք Երևանի օրինակը, որն առաջացել է ուրարտական էրեբոնի բերդաքաղաքի հիմքի վրա, նույնիսկ ժառանգել նրա անունը (բայց հնչյունակիրխման օրենքը խստորեն պահպանվում է հայերենի՝ ուրարտերենից ժառանգած անուններում ու բառերում, օրինակ, Բիայնի-վան, խուրի-հովիտ և այլն): Հիշատակենք մի երկու այնպիսի բառ, որոնց ընկալումը հատուկ լեզվագիտական պատրաստություն շի պահանջում, ուրարտերեն ծառի («այգի») բառը հայերենում պահպանվել է ծառ իմաստով: Ծովածքը՝ նույն «ծովածք» իմաստով: Նման բառերի առատությունը հայերենում հիմք է տվել գիտնականներին եղրակացնելու, որ հայոց լեզվի արմատների մի զգալի մասը կազմված է ուրարտերենից ու սրան հարազատ խուրիերենից ժառանգած բառերից:⁵

Գիտությունը պարզել է մի այլ հանգամանք, այն է, թե

¹ «Eti tarihi», էջ 95.

² Նույն տեղում, էջ 92:

³ Նույն տեղում:

⁴ „Kars tarihi..., XIII.

⁵ Հ. Աճայան, Հայոց լեզվի պատմության, 1-ին մաս, Երևան, 1940, էջ 185 և հաջ. Տես նաև Ի. Դյակոնով, ենթերը, փայտագրեները և հայերը, Տեղեկագիրը ՀԱՀ 1956, Խ. 1, էջ 79.

Հայերը, Հայկական ցեղերը ապրել են Հայկական բարձրաշվանդակում ուրարտական պետության կազմավորումից դեռ շատ առաջ, եթե վերջինս առաջացել է մ.թ.ա. IX դարի կեսերին, ապա Հայկական ցեղերի Հայաստ պետությունը գոյություն է ունեցել դրանից դեռ վեց դար առաջ, իսկ արմենների առաջին ցեղային միավորումը ստեղծվել է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան կողմերում դեռևս մ.թ.ա. XII դարում:¹ Ուրեմն և Հայերի կողմից ուրարտական մշակույթի ժառանգմանը նախորդել են Հայ-ուրարտական բազմադարյան հարաբերությունները: Եվ դեռ գիտության առջև կանգնած է այն հարցը, թե Հայ ուրարտական լեզվական առնչությունների մի մասը ուրարտերենի՝ հայոց լեզվից փոխառված բառերը չե՞ն կազմում:

Այսպիսին են այսօրվա գիտության հարցադրումները, իսկ որոնք են վերհիշյալ թուրք պատմաբանների շահագործությունները:

Պարզվում է, որ վերոհիշյալ թուրք պատմաբանները, թե Ֆյունալիթայը (որը ավելի նրբորեն գործելով՝ չի բացառում Հայ-ուրարտական առնչությունները) և թե՝ մյուսները, որոնք լրիվ ժիտում են դրանք, նույն նպատակն են հետապնդում՝ մերժել Հայերի իրավունքը իրենց բնակման տարածքի հանդեպ: Այդ պարզվում է նրանից, որ բոլորն եւ Հայտարարում են, թե ուրարտացիները... թուրքեր են եղել, իսկ սրանից հետևուց է, սրանց կարծիքով, որ կամ Հայերը հենց թուրքերի սերունդ են և կամ՝ որ նրանք թուրքերից հետո են բնակվել Հայկական լեռնաշխարհում:

Դեռևս 1920 թ. նոյեմբերի 30-ին, երբ քեմալականները գրավել էին Հայաստանի մի զգալի մասը, թուրքական զորքերի հրամանատար և Ալեքսանդրապոլում հաշտության բանակցություններ վարող թուրքական պատվիրակության նախագահ Քյազիմ Կարաբերից փաշան իր մի զեկուցման մեջ առաջ էր քաշում թուրքերի՝ Հայկական հողերի նկատմամբ ունեցած «պատմական իրավունքները»: «Գալով պատմական դրությանը, Հաստատվել է, որ սույն Հայերի երկրամասը գոյությունը, Հաստատվել է, որ սույն Հայերի երկրամասը

¹ Ս. Երեմյան, Հայերի ցեղային միավունակ Արմե-Շուարքա երեսը՝ «Պատմաբանասիրական հանդես» թ 3, 1968, տեղ նաև Դյակոնօն նշվ. աշխ., էջ 75:

իշղաքակրթություն և Վանի վիմագրությունները վերաբերում են ոչ թե Հայերին, այլ միայն այս թուրանական ցեղերին... Ուրեմն Հնախոսությամբ ևս թուրքերի այս երկրամասում ունեցած իրավունքները ակներեւ են և ապացուցված»:²

Հայերը ոչ մի պատմական իրավունք չունեն տեր դառնալու ուրարտական մշակույթի գանձերին, ի լուր աշխարհի Հայտարարում է Ֆ. Կրգիողուն: Ուրարտերենը, ըստ նրա զարմացած կհարցնի ընթերցողը: Շատ պարզ՝ կպատասխանի թուրք հեղինակը, քանի որ ուրարտերենը Հայերն չեն, այլ ագլուտինատիվ մի լեզու, ինչպիսին թուրքերենն է: Պետք է վերանայել պատմությունը: գրում են Ֆ. Կրգիողուն, Ա. Էնգինը և այլք: «Արմենիակ կոշված մշակույթը,— գրում է վերջին հեղինակը,— արիացիների գալուց շատ առաջ, թուրանցիներն էին ստեղծելու»:³

Մի ուրիշ թուրք հեղինակ՝ Ալի Քեմալը դեռևս 30-ական թվականներին գրում էր, որ մինչև մ.թ.ա. VI դարը Արեւալյան Անատոլիայում չկար և ոչ մի Հայ և գոյություն չուներ «Հայաստան» անունը: Այսաեղ գյուրթյուն ուներ բարերի սաեղծած բուրանական-ուրարտական պետությունը (ընդգծումը մերն է—Մ. Զ.):⁴

Այսպես, ուրեմն, ուրարտացիները... թուրքեր են, ինչպես Այնպես, նրանց լեզուն,⁴ թուրքերենի նման, ագլուտինատիվ է, այսինքն՝ քերականական ձևերը կազմում է մաս-

¹ Հայկ. պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 800, ց. 1, գ. 866, թ. 117-118: Մեղրերմար արված է Յ. Սարգսյանի և Ա. Սահակյանի «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենագափոխումը թուրք պատմագրության մեջ», Երևան, 1963, էջ 7:

² «Eti tarihis», էջ 92:

³ Տես Ali Kemal, Erzincan, Istanbul, 1932, էջ 12:

⁴ Ուրարտերեն լեզվի մասին այժմ կա երկու տեսակետ: Ուրարտերեն լեզվի քերականական կառուցվածքի ու բառապաշտարի ուսումնասիրությունը մասնագետներին բերել է այն համոզման, որ ուրարտերենը՝ ազգին է խոսութերներին, քայլ և այնպես կազմում է առանձին լեզու: Երկու լեզուները և խոսութերենը, մի իննուրուուն լեզվախումբ են կազմում, և հետո են սեմական և հնդեպրապահան լեզուներից: Համաձայն նորագույն մի տեսության, ուրարտերեն լեզվի օրինաշափությունների ուսումնասիրությունը երեսն է բերում ցեղական որոշ կապեր հնդեմ:

Ներկների կցման միջոցով: Թայց շէ որ այդպիսի արտաքին
նմանությունը, առանց բառապաշարի ու քերականական
ձևերի բուն նմանության, ոչինչ չի ապացուցում, չէ որ ագ-
լունատիկ լեզուների թիվը աշխարհում շատ մեծ է, բայց
դրանց ներկայացուցիչները ամենափափառ հավակնություն չեն
հայտնում այդ հիման վրա միմյանց հարազատ ներկայա-
նալու. Թող այդ թիվը մեծ լինի, ասում են թուրք պատմա-
րանները, բոլորն էլ թուրքեր են:

Պարզ է, որ եթե թուրքեր են ուրարտացիները, ապա ինչ-
պես կարող են թուրք լինել նրանց հարազատ խուռիները,
հավատացնում է Զ. Տողանը, «Թուրքական ցեղերից մեկն են,
հավատացնում է Զ. Տողանը, «Թուրքական ցեղերից մեկն են,
քանի որ նրանց ազգագործության մեջ կան մի շարք բնորոշ
գծեր, որոնք բնդանուր են թուրքերին, այն է՝ սերը դեպի
ծիարութությունը, և որ նրանց լեզվի մեջ կան շատ «թուր-
քական» բառեր, և որ «խուռիտ» անունը կենտրոնական
Ասիայի խուռալի աղավաղված ձևն է, իսկ մի այլ տեղում,
նաև զրում է, թե «խուռի» բառը թուրքերին «օղուր» կամ «յա-
ղուր» բառից է, որը կեղծ ստուգարանության տիպիկ օրի-
նակ է: Հին Արևելքի մեծագույն «մասնագետ» Շ. Գյունալ-
յան էլ բազմից ընդգծում է, որ խուռիները, ինչպես և հին-
բայց նաև ի բազմագույն աշխատավայրում կատարում են:

Էլ ո՞վ է թուրք: Թուրք պատմաբանները կարծես սկսում
են աճուրդով զրաղվել... եեթերը, շումերները, էլամցիները
բացականչում են նրանք: Էլ ո՞վ: Ակյութները, մեղեցիները
էլ Պարթևները, քրդերը: Էլ: Հայերը:

բողոքական լեզվականի հետո:) Տե՛ս N. Adontz, *Histoire d'Arménie*, Paris 1946, էջ 267—269, 272—274, Ի. Մ. Դյակոն Սրբառություն գրականությունից, 1960, էջ 423, 369—429. Վ. Բ. Ջայակյան, *Արարական աշխատավայրեր*, Երևան, 1963.

1 Zeki V. Tog'an, էջ 73—74, նույնը՝ «Kars taridi» էջ 99, «Ենթա-
կաղությունների մաս խուռի կամ զրում է: — գրում է Յ. Կողօղունը, որ Շումերների մաս խուռի կամ
զրում է. Կողօղունը էլ Անատոլիական և Անատոլիայի հարավ-արևելյան մասերու
կուրի անունով հիշատակած է Անատոլիական անմիջական ազգացու-
րման հերթական պատուիչը է. Պ. աշ. 8000 թվին գնում ապրել է Փուրգիսահանա-
պարծ ժողովուրդը, մ. թ. աշ. 8. թվականում (ՏԸՀ) և միայն Վ. դ. (մ. թ. աշ.) եկել ու հաստատվել է Անդրկովկասում (ՏԸՀ): Խոսք
է Արևելքի Անատոլիայում (իմա՝ Հայաստանում) — Մ. Զ.»: Խոսք
է Արևելքի Անատոլիայում (իմա՝ Հայաստանում) — Մ. Զ.»: Խոսք
է Արևելքի Անատոլիայում (իմա՝ Հայաստանում) — Մ. Զ.»: Խոսք
է Արևելքի Անատոլիայում (իմա՝ Հայաստանում) — Մ. Զ.»:

Ահա այսպիսին է այն տեսությունը և այն մտայնությունը,
որոնց կոնկրետ դրսերումն էլ հանդիսանում են վերը հի-
շատակված փորձերը՝ թուրքեր հայտարարելու Ասիայի և
Արևելյան Եվրոպայի հին ժողովուրդների մեծամասնությանը:¹
Այդ փորձերի հետ մենք դեռ կրախվենք առաջիկա գլուխ-
ներում, սակայն այստեղ ցուցադրենք մի քանիւը, որոնցով
թուրք պատմաբանները, բացի ընդհանուր պանթուրքիստա-
կան նպատակներից, հետապնդում են նաև հատկապես հայ
ժողովրդին պատկանող տարածքները ի սկզբանե անտի թուր-
քական, իսկ ինքը հայ ժողովուրդը՝ պատմական ֆիկցիա
հայտարարելու նպատակը:

Ահա Արին էնգինի «ուսումնասիրությունից» որոշ տվյալ-
ներ խեթերի մասին: Որ խեթերը «թուրքեր» են, Արին էնգինը
«ապացուցում» է հետևյալ «փաստարկներով»՝ ա) մարդա-
բանական, այսինքն՝ նրանք կարճագույներ են, 2) լեզվա-
կան՝ խաթի, էթի բառն է (խեթերին առաջարկել է էթի ան-
վանել ինքը՝ Մ. Աթաթյուրքը, այսինքն՝ այդ հաղորդումը
պատկանում է միայն XX դ. 20-ական թ., և ոչ թե մ. թ. ա.
XX դ., որը ոչ այլ ինչ է, եթե ոչ թուրքերն «աթա» (նախա-
հայր) բառը և 3) ֆուկուրային, մշակութային ընդհանրու-
թյուններով: Այսպես խեթերի մոտ եղած երկգլխանի արծ-
վի խորհրդանշը եղել է նաև անատոլիական սելցուկների
մոտ: Խեթերն օգտագործել են երկար, մի բութմատնյա-
ձևոնց, որն «ապացուց» է այն բանի, որ նրանք եկել են
ալիայան երկրամասից,²

Արին էնգինը, ինչպես և մյուս թուրք պատմաբանները,
դիմելով կեղծիքի գոնում են, որ Փոքը Ասիայի վերածումը

1 Zeki V. Tog'an, նույն տեղում, էջ 13: Հեղինակն ալստեղ վկայա-
կում է E. Forrer-ին՝ „Strafication des langues et des peuples dans le Proche-Orient préhistorique, Journal Asiatique CCXVII, 1930», էջ 227—252 և G. Conteneau, La civilisation des Hittites et les Mittanniens, էջ 79: Թուրքական պատմագրության անմիջական ազգացու-
րման հերթու, ինչպես ստիպած է խոստպանել Զիս Բունիաթուրքը, արդի ազգու-
թյան հական պատմագրության մի ստիպ մասը նույնպես իրենց նախ-
ներուն վնարում է Հին Արևելքի բաղաբակրությունը կը ողովորի-
ներ մոտ (Տե՛ս Բունիաթ, О некоторых тенденциях в освещении
средневековой истории Азербайджана (по страницам журнала «Этн во ханьт»), «Известия» АН Азерб. ССР, 1987, էջ 124—127).

2 «Eti taridi» էջ 92:

Թիւրքական Հայրենիքի նկսնլ է դեռևս պաշտովիթի ժամանակաշրջանում ու շարունակվել ներլիթի և բրոնզ դարաշրջանում այնպես, որ, ըստ նրանց «մինչև եղուկյան ժամանակաշրջանում Փոքր Ասիան հիմնականում արդեն թուրքացված էր»¹

Իսկ ուրարտացիներ... Բայավատում գտնված բրոնզի վրա եղած... փորագրություններում (ուրարտացիները երկու են) խեթական տարազով, մազերի սանրվածքը և քիթը վեր ցցված կոշիկները նույնպես վկայում են խեթերի հետ ունեցած նրանց ընդհանրությունը:² Եվ քանի որ խեթերը նախաթուրքեր են, ապա ուրարտացիները՝ նույնպես, եզրակացնում էնա: Եվ վերջ:

Հին Արևելքի ժողովուրդների պատմությամբ զբաղվել են եվրոպացի,³ ուսւ, հայ աշխարհա՛ռչակ շատ գիտնականներ, սակայն նրանցից և ոչ մեկը ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ չեն ենթադրել, որ Արևելքի ժողովուրդներից որևէ մեկը ծագումով նախաթուրք է: Ավելորդ է խոսել խեթերի մասին, որոնց հնդեվրոպացի լինելը հանրահայտ է:⁴ Ուրարտացիների մասին արդեն խոսվել է վերը:

Անդրադառնալով սկյութների (սակերի) ունեցած դերին Անդրկասում և Հայաստանում, որին այդքան մեծ ուշադրություն է դարձնում արդի թուրք պատմագրությունը՝ համարելով նրանց նախաթուրքեր, ապա՝ նրանց ևս հնդեվրոպացի, մասնավորապես իրանական լեզվախմբին պատկանող ժողովորդ լինելու փաստը գիտնականների մոտ կասկած չի հարուցում: Մյուս կողմից՝ սկյութները ազդեցություն չեն ունեցել հայոց լեզվի կազմավորման վրա՝ կամ էլ անըշշան է եղել այն փաստը, որը վկայում է այն մասին, թե նը-

¹ III TTK, Ankara, 1943, էջ 444—456:

² «Eti tarihi, նույն տեղում:

³ G. Conteneau, La civilisation des Hittites et les Mitanniens. Paris 1936; O. R. Burney, The Hittites, London, 1952; Garstang J. O., R. Gurney, The geography of the Hittite empire, London, 1959. A. Goetze, Kleinasiens München, 1957, B. Hrozný, Die Sprache der Hethiter, ihr Bau und ihre Zugehörigkeit zum A com-indogerm. Sprachstamm. Leipzig, 1917; E. H. Sturtevant, Comparative grammar of the hittite language. New-Haven, 1951; E. Laroche, Recherches sur les noms des dieuz hittites, Paris, 1947 և այլք:

րանց ազդեցությունը Հայկական լեռնաշխարհում ընդհանրապես երկար ու ծանրակշիռ չի եղել:

Միանգամայն այլ տեսակետ է զարգացնում Շ. Գյումալիթայը:

Սասպերներ, տառիսներ, իբերներ, կարդուխներ և այլն զբաղեցրած տարածքների մեջ մեծ տեղ հատկացնելով սակերին (սկյութներին), Շ. Գյունալթայը հետապնդում է հատուկ նպատակ՝ ցույց տալու, որ ենթադրյալ նախաթուրքեր հանդիսացող սակերը, սկսած VIII դարից (մ. թ. ա.) վճռական դեր են խաղացել ուրարտական իրականության մեջ: Ավանա լճի հարավային մասը շրջապատող լեռներում, Արարատի և Քուրի արանքում, սակերը Սակասենե (Սակաստան) անոնվ մի շրջան էին զբաղեցրել (Strabo XI, Plinius I. VI և XI): Սեպագիր արձանագրությունները մ. թ. ա. դարից սկսած սրանց (այսինքն սակերին—Մ. Զ.) մեզ ներկայացնույց են Աշկուզա կամ Խզկուզա անունով: Աստվածաշնչում էլ երեմիայի մոտ այս երկրամասը (Սակասենը) հիշատակվում է որպես Աշկենազի թագավարություն:

Այս տեսակետը հետագայում զարգացրեց Ֆ. Կրպիօլլում: Արհամարհելով գիտության տվյալներն այն մասին, թե սկյութացիները հնդեվրոպացի, մասնավորապես իրանական ցեղախմբեր են, պանթուրքիստ պատմաբանները «թուրքեր» են դարձնույց և նրանց: Մ. թ. ակյութական արշավանքը, ըստ Ֆ. Կրպիօլլուի, ունենույց է այն հետևանքը, որ նրանք հաստատվում են այստեղ՝ Անդրկովկասում և թողնում իրենց անջնջելի հետքերը տեղանունների վրա: Այսպիս, «Գուգարքը» ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ մ. թ. ա. 665 թ. սակերի հրամանատար Գագայի կամ Գոգի անվան արտացըլումը: Ստրաբոնի հիշատակած Գոգարենների հիմքում պիտի ընկած մնի Գուգ-արքը, այսինքն՝ Գուգի ժողովուրդը՝ գուգեցիներ:

¹ S. Günalçay, նույն տեղում, էջ 557: Շ. Գյունալթայից ավելի առաջ գնալով Ֆ. Կրպիօլլուն գտնում է, որ Արաքս և Քառա գետերի անունները սկյութական բառեր են, այսինքն՝ հին թուրքական Արաքսը Հերոդոտի մոտ՝ գրում է նաև՝ Արաքսիս ձևով է հանդիպում, որը պետք է հասկանալ Ար-աքսիս՝ այսինքն՝ որ (արկա, ալա-հարավ)՝ աքսիս (օկուս) (էօկիս-գետ), այսինքն՝ հարավային գետ (Arakses ve Kyrus, (Kür) adları da sakalardan kalma ve Türkçedir, Կորը, համաձայն Ֆ. Կրպիօլլուի, հին սկյութերնեն՝ թուրքերն պետք է եղանակի «ապարդյուն» (տես «Կարտարի» էջ 106—107):

«Գուգ» արմատին ավելացրած «սար»-ը ինչպես ավարների, սուզարների, խազարների, թաթարների մոտ եղած «սար» վերջավորությունն է, նշանակում է «տղամարդիկ», ժողովուրդ»:
«Ձաշուու լեռը,— ասում է նա,— Գուգարքի աղավաղված ձևն է, իսկ Գուգ առաջնորդի անվան հետ պետք է կապել նաև «Կախիթ» տեղանունը, որ նշանակում է «Կախի»՝ «Գագի երկիր»:² Այսօր էլ կարսեցիները Ախալցխայի, Արդահանի և Ախալքալաքի տեղացիներին շարունակում են գագավանցիներ անվանել, սա մի կենդանի վկայություն է այն մասին, որ նրանք գուգարացիների թոռներ են,— գրում է Ֆ. Կրպիսլուն:

Այս բոլորից հետո մնում է ավելացնել, որ Կրպիօղլուն տեղակ չէ, թե իր ընտրյալ Գագան (իսկական անունն է Գուգգու), նրա վկայակուշած ասորեստանյան սեպագիր աղբյուրներում հանդես է գալիս ոչ թե որպես սկյութների (հեղինակի երևակայության մեջ՝ թուրքերի հրամանատար), այլ որպես փոքրասիական կիդիա (սեպագիր աղբյուրներում կուգգու) երկրի թագավոր, որը քաջ հայտնի էր հույներին՝ Գիգես անվան տակ»:³


Որ թուրքա-սակյան ցեղերը տարածված են եղել ամբողջ Արևելյան Անատոլիայում (այսինքն՝ Հայաստանում—Մ. Զ.) գրում է Ֆ. Կրպիօղլուն, — երևում է նաև Հայկական պատմական այն ավանդությունից, ըստ որի Հայերի նախահայրեր են համարվում ավանդական Ասքանազն ու Թորգոմը. Ասքանազը իշկանագ-իշկուզա-սկյութն է, իսկ Թորգոմը՝ թուրքն է,— գրում է նա: Ակյութացիների, հեղինակի երևակայությամբ, սակաթուրքերի (Saka Türkler) Հայաստանում և մասնավորապես Քուտ-Արաքսյան Հովտում տարածված լինելու, հետևաբար, որպես էթնիկական տարր գերիշխող դիրք գրավելու մասին ստահող պնդումներին, Ֆ. Կրպիօղլուն անդրադառնում է նաև 1964 թ. հրատարակած «Ամեն տեսանկունից թուրքեր հանդիսացող քրդերը» վերնագրով աշխատության մեջ:

¹ «Kars tarihi», էջ 83.

² Նույն աեղուն:

³ Տե՛ս И. М. Дьяконов, Ассирио-аввилонские источники по истории Урарту. «Вестник древней истории», Москва. 1961, № 3, էջ 286:

⁴ «Kars tarihi», էջ 93:



Կրպիօղյան «գիտական» այս «հայտնագործությունները» պաշտպանվում ու զարգացվում են վերջին տարիներին հրատարակված պատմական աշխատություններում։ Համաձայն Զ. Օզկայայի, այժմյան Հայաստանի տարածքը նույնպես բնակեցված էր սակա-թուրքերի կողմից։ «Ներկայիս Հայաստանի ու Կովկասի մի մասը, — կարդում ենք նրա մոտ, — կիխնիտ (Սևանա-լիճ-Գյոկչե-Գյոլ) լճի ավազանը որոշ ժամանակ նույնպես կոշկեց «Սակասեն» հին ժամանակներում ապրող «սակա» ժողովրդի անունով, որը Միջին Ասիայի ոչ արիական ցեղից (իմա՝ թուրքերից— Մ. Զ.) էր»։¹

Ֆ. Կրպիօղյուի մոտ Ուրարտական պետության մեջ ապրող բոլոր ցեղախմբերը սկյութական (իմա՝ թուրքական) ծագում ունեն։ Տարիները Տաքրում «հանդիսանում են թակա թուրքմենների նախահայրերը», — գրում է նա։ «Սիսականը թուրքական երկու ցեղերի (սի և սակ) անուններից է կազմը ված։ փայտանները, ըստ Ֆ. Կրպիօղյուի, «հանդիսանում են թուրքմեն» բեշենիների» կամ «պեշենեկների» նախահայրերը և այլն, և այլն։ (Տես «Kars tarishi» էջ 84—93):

Առաջ անցնենք թուրքեր են հայտարարվում նաև ուտիացիները։ «Ազրբեցան եկած ու հաստատված ու թուրքերի հետ ազգակցություն ունեցող մի ժողովուրդ էլ ուղիները կամ ուտիացիներն են, — գրում է Զ. Վ. Տոգանը, — սրանք, — շարունակում է նա, — ըստ երևույթին սակերի հետ միասին են եկել։ Ստրաբոնը նրանց հիշատակում է Ուիտի անվան տակ։ Սրանք պատմագրի (Ստրաբոնի— Մ. Զ.) օրոք, այժմյան Գանձակի արևմուտքում հին սակերի բնակված վայրում Գուգարքի (Գոգարենի) և Սակասենի արանքում են ապրել Արարերի ժամանակ այս ժողովրդի Ղարաբաղում բնակվող մի մասը Բաբեկի ապստամբության մասնակցելու առթիվ (արարական աղբյուրներում հիշատակվում են Ուգ և Ուտգին) կայ Ավագ կամ Ավադին անուններով։ Սրանց առաջնորդը կրել է թուրքերն «Թարխան» մականունը (վկայակոչվում է Strabo § 8 և XI, X § 14, որտեղ, սակայն ոչ մի նման բան չկա— Մ. Զ.), Սրանք իրենց անունը կրող նահանգում (այսինքն Գանձակի նահանգում) Խալխալ անունով մի բերդ են ունեցել։ Այս բառն էլ թուրքերն «Կալգան» բառից է առա-

շացել (վկայակոչվում է՝ տես V. Minorsky E. I.-ում՝ «Տարոն» և Բարտոլդի «Շերբենտա» հոդվածները)։ Ուտիները... Դաղստանի ավարների նման— թուրքերն կամ ընդհանրապես ալթայան լեզուներից մեկը հանդիսացող իրենց մայր լեզուն մոռացել են ու կորցրել իրենց ինքնուրույնությունը»։²

Որ այս ամենը լոկ քաղաքական նպատակ է հետապնդում և ոչ մի կապ ու առնչություն չունի գիտության հետ, երևում է մեզ նախածանոթ Ֆ. Կրպիօղյուի 1964 թ. Անկարայում լույս ընծայած «Ամեն տեսակետից թուրք հանդիսացող քրդեր»³ խորագիրը կրող գրքույկից։ Հայերին ծագումով «թուրքացնելուց» հետո, Ֆ. Կրպիօղյուն դոնկիխուտյան արշավանք է ձեռնարկում դեպի քրդերի պատմության անդամատանը։

Անտեսելով քրդերի իրանական-հնդեվրոպական ծագումը և նրանց լեզվի իրանական լեզվախմբին պատկանելը, Ֆ. Կրպիօղյուն գրում է, որ քրդերի ծագումով թուրք լինելը բացարձակ ճշմարտություն է, ինչպես երկու անգամ երկուաշ շրուն է։⁴ Եվ որպես «ապացույց» դարձյալ բերվում են շարարաստիկ սակա (սկյութ) «թուրքերը» և վկայակոչվում է Վ. Մինորսկին։⁵ Վերջինս, իրոք, 1938 թ. Բրյուսելի արևելագետների միջազգային համագումարում առաջ բաշեց քրդերի մեղա-սկյութական ծագման տեսությունը, բայց դրա տակ մեծանուն գիտնականը երբեք չէր ենթադրում թուրքերին, իմանալով, որ թե՛ մեղացիները և թե՛ սկյութները իրանական ժողովուրդն են։ Սակայն դա հոգ չէ։ Ֆ. Կրպիօղյուն իրեն թույլ է տալիս ցանկացած կամայականություն պատմության մեջ։ Այսպիսով, իր նոր այս գրքույկում Ֆ. Կրպիօղյուն գրում է, ինչպես որ անցյալում (նկատի ունի իր «գիտական» վաստակը «Կարսի պատմություն» և այլ աշխատությունների մեջ— Մ. Զ.) մենք ապացուցեցինք թուրքերի գոյությունը Արևելյան Անատոլիայում (իմա՝ Հայաստանում) Աղբբեզանում և Վրաստանում մինչև իսլամի առաջացումը, այնպես էլ այստեղ քրդերի՝ «թուրք» լինելը։⁶ Այսուհետև

¹ Zeki V. Togan, էջ 161.

² F. Kirzoglu, Her bakmdan Türk olan Kurtler, Ankara, 1964:

³ Նույն տեղում, էջ 5:

⁴ Նույն տեղում, էջ 8:

⁵ Նույն տեղում:

Թուրքիայի պատմությամբ զբաղվող թուրքակետները պարտավոր են գնալու այս ճշմարիտ ճանապարհով՝, — գրում է նա:

Ինչպես տեսնում ենք, Ֆ. Կրգիօղլուի «գիտական» այս նոր մարդանքները այժմյան թուրքիայի ազգային փոքրամասնություններից խոշորագույնը հանդիսացող քրդերից ու նրանց հնարավոր ազատագրական շարժումներից ունեցած վախի արդյունքն են: Ըստ երևույթին Ֆ. Կրգիօղլուն և նրա նմանները քաջ գիտակցում են, որ քրդերին հնարավոր չէ անպատճ ցեղասպանության ենթարկել, ինչպես այդ արեցին երիտթուրքերը և քեմալականները հայերին՝ 1915 և հետագա տարիններին: Ուստի միակ հանապարհը, ըստ նրանց, քրդերի համաձուլումն է թուրքերի հետ: Ֆ. Կրգիօղլուի այս գրքույկը կոչված է դրա «գիտական» հիմնավորմանը:

Այժմ անդրադառնանք այն թուրք հեղինակների աշխատություններին, որոնք լույս են տեսել վերջին տարիններին և ուր փորձ է արվում «գիտական» դիրքերից լուսաբանել հայ ժողովրդի ծագումնաբանական հարցերը:

Խնդրո առարկա այս հարցին այդ հեղինակներից քիչ թե շատ ընդարձակ էշեր են նվիրել Խնայեթովովահ Ձեմալ Օզկայան և Քյամուրան Գյուրյունը:

Հայերը, — գրում է Ձեմալ Օզկայան, — 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսին տարածքային պահանջներ ներկայացնելով, փորձում էին ոչնչացնել անհիշելի ժամանակներից Փոքր Ասիայում ապրող ու այս երկրի օրինական տերը հանդիսացող թուրք ժողովրդին:¹ Նրանք արեցին ամեն ինչ, — շարունակում է հեղինակը, — որպեսզի մոլորության մեջ դնեն միջազգային գիտական հասարակական կարծիքը՝ իրենց վերագրելով այն ողջ պատմությունը, որը սկզբնաղբյուրներում անվանվում է Արմենիա և արմեններ:² «Այս ժողովրդի իսկական անունը Հայքն է: Սիամամը է, որ երանց անվանում են արմեններ,» մի երկրի անունով, ուր նրանք զբաղեցրել էին այդ երկրամասի մի փոքրիկ հողակտորը ու ապրում էին տարբեր ցեղերի շրջանակում: Դարեհի ժամանակ Ար-

մենիա» կոչեցյալ երկիրը, որը Աքեմենյաններից առաջ ու հետո այլ կերպ էր անվանվում, երբեք այսօր սարմենիկներ (արտենիոն) կոչվող հայ մեծամասնության կողմից բնակեցված չի եղել: Այս երկիրը նախապես բնակեցված էր Թուրանական ծագում ունեցող ասիանիկների կողմից, որոնք խոսում էին շումերերեն, էլամերեն, թուրքերենին ազգակից լեզվով: Այս երկիրը պատկանում է այսօր ու հավերժ պատկանելու է այն ժողովրդին, որը բնակվում է ներկայումս ու բնակել է վաղնջական ժամանակներից՝ թուրք ժողովրդին, որը չնայած պատմության ընթացքում հանդես է եկել տարբեր անուններով, սակայն մնացել է նույն ժողովուրդը:³

Անգլերեն լեզվով հրատարակած ու հայ-թուրքական առյունականություններին վերաբերող աշխատության մեջ արդի թուրք պատմագրության մի այլ ներկայացուցիչ՝ Ահմեդ Վեհֆան, զարգացնելով Ձեմալ Օզկայայի այս դրույթները, էլ ավելի առաջ գնալով... հայերին մեղադրում է... առաջին ցեղասպանության մեջ: Ըստ նրա, բալկանյան թերակղուց գաղթած նախահայերը հրով ու սրով իրենց են ենթարկել տեղաբնիկներ ուրարտներին, խուռիներին, լուսվիցիներին ու այլոց, յուրացել նրանց մշակույթը ու ըստեղեկի իրենց սեփական պետությունը:

«Եթե այս երկիրը (իմա՝ Հայաստանը— Մ. Զ.) բացառապես բնակեցված լիներ այժմյան հայերի նախնիների կողմից, — շարունակում է Զ. Օզկայան, — և ավելի ճիշտ կլիներ ասել, եթե երկիրը իր անունն ստանար այս ժողովրդից (իմա՝ հայերից— Մ. Զ.) ու իրեն պատկաներ, ապա պատմության մեջ պիտի արձանագրվեր «Հայաստան» կամ «Հայկատան» բառը, քանզի արմենական ցեղի անունը «Հայ» կամ «Հայքն» է: Ոչ մի տեղ՝ ասսուրական, մեղական, պարսկական, պարեկական արձանագրություններում կամ թե դասական երկրում, ինչպիսիք են Քսենոփոնի «Անարասիսը» և Ստրատոնի պատմական աշխատությունները, չի հիշատակվում ո՛չ «Հայ» և ո՛չ էլ «Հայաստան» բառը:⁴

Հարունակելով իր այս «տեսության» հետագա զարգացումը, հեղինակը գրում է. «Երկիրն «Արմենիա» անվանումն ստացել էր «հայերի» գալուց շատ առաջ, սրանք մ. թ. ա.

¹ Նույն տեղում:

² Cemal Özkaya, էջ 6:

³ Նույն տեղում, էջ 8:

⁴ Հեղդումները մերն են— Մ. Զ.:

Մացարար տարածել այս երկրում ապրած բոլոր ժողովուրդների վրա:

Մենք գիտակցարար ընդարձակ ձևով կանգ առանք Զեմալ Օզկայայի վերոհիշյալ «պնդումների» վրա այն պարզ պատճառով, որ նրանից հետո թուրք հեղինակների հրատարակած աշխատություններում աննշան շեղումներով առաջ են քաշվում նույն անհերթիթումները հայերի ծագումնաբանական հարցերում, ինչ-որ ասել է այդ հեղինակը: Դրանում համոզվելու համար բերենք նորագույն հեղինակների «գիտական» մարզանքներից որոշ մեջբերումներ, որոնք ընթերցողին պատկերացում կտան հայերի ծագման հարցում «նոր տեսությունների» բովանդակության և քաղաքական նպատակասլացության մասին:

Գալերիթի ժամանակաշրջանից թուրքերի Փոքր Ասիայում բնակվելու մասին առասպելը պաշտպանվում է բոլոր այն հեղինակների կողմից, որոնք գրել են պատմական աշխատություններ այս երկրամասի հնագույն բնակիչների պատմության վերաբերյալ:² Բոլորի մասին այստեղ առանձին-առանձին կանգ առնելը որևէ իմաստ չունի: Կուտենայինք միայն առանձնացնել մի քանիսին, որոնք հատուկ զբաղվել են հայերի հնագույն պատմության, և նախ և առաջ ծագումնաբանական հարցերով: Նրանցից են էրզեն Աֆիֆը, Համիդ Կոշայը, Ջեմալ Անադոլը, Ահմետ Վեֆան և Քյամյուրան Գյուրյունը: Վերջինս 1984 թ. Փարիզում հրատարակել է մի ընդարձակ հետազոտություն «Հայկական թղթապանակի ընդհանուր վերնագրով»:³

Գյամուրան Գյուրյունը իր գրքի առաջարանում ուզում է հավաստիացնել իր ընթերցողներին, թե ինքը ճշմարտության կողմնակից է: Պատմությունն՝ ասում է նա, «...Դետը է լինի անաշառ և պետք է հենված լինի գիտական հոգի վրա»:⁴ Հենց սկզբից ասենք, որ նա իր իսկ առաջ քաշած անաշառության սկզբունքը ամենակոպիտ ու ամենաանխիզ:

¹ Նոյն տեղում, էջ 22:

² Այդ մասին տես, Sadı Koças, Genel kurmnay yayını: Tarih, boyunca ermeni meselesi, Ankara 1979; H. Riza Kadri Kop (Sevengil), Araşturma ve düşüncelerim, Ankara, 1982 և այլն:

³ See l. Պ. Մանաւերյան «Պատմական ճշմարտության մասին» գրականաց, «Սովորական Հայաստան» ամսագիր, 1985, հ. 2, էջ 20-35:

⁴ Kamuran Gürün, էջ 11:

Ճետվ ոտնատակ է արել՝ կեղծիքների մի ամբողջ շարան շաբարելով: Հենց նույն առաջարանում հիշատակվում են միշ-նադարյան հայ պատմիչների աշխատությունները, որոնք հեղինակի կողմից որակավորվում են որպես ոչ հավաստի և Ամեն կասկածից վեր է:— գրում է հեղինակը, — վերը մեր մատնանշած բոլոր աշխատությունները, որոնք ներկայացվում են, որպես հայ պատմագրության դասական երկեր, գիտական առումով հեռու են բավարարելուց»:⁵ Հետևաբար, հայկական աղբյուրներին հավատ ընծայած ժակ դե Մորգանի հայ ժողովրդի պատմությանը նվիրված աշխատությունը, որից նա հաճախ ընդհանուր բնագրի ոգուց կտրված միտումնավոր մեջբերումներ է կատարում, իբր, գիտական լինել մի կարող:⁶

Անդրադառնալով հայ ժողովրդի ծագումնաբանական հարցերին, հեղինակը նշում է, որ «Հայաստան» բառը լոկ աշխարհագրական հասկացություն է: «Հիրավի, — կարդում ենք հեղինակի մոտ, — արմեններն առաջ կոչվում էին «Հայք» և իրենց երկիրն անվանում էին «Հայաստան» կամ «Հայերի ընակավայր»: Որոշակիորեն հայտնի չէ, թե ինչու խնդրո առարկա տարածքը հետագայում ստացավ Արմենիա անվանակոչումը, — բացականչում է հեղինակը: — ըստ որոշ հին պատմիչների, օրինակ Մովսես Խորենացու, հայերը սերել են ուրարտացիներից և ուրարտական թագավոր Արամենի անունով երկիրը կոչել Արմենիա: Սակայն, այժմ պատմաբանները հրաժարվում են այս տեսությունից: Հստ նրանց, ոչ մի կապ գոյություն չափում հայերի և Ուրարտական մշակութիւնիցւաւ»:⁷

Որոշակիորեն օխտելով հայ-ուրարտական առնչությունները, հետագա շարադրանքի ընթացքում հակասելով ինքն իրեն, հեղինակը ուղղակիորեն դիմում է յուրատեսակ շաղակրատանքի, նշելով, որ Մովսես Խորենացին ինչ-որ տեղ կարող էր ճիշտ լինել: «Ետ հնարավոր է, — գրում է նա, — որ «Հայաստան» անունը առաջացած լինի Արամենի անդմից:

⁵ Նոյն տեղում, էջ 16:

⁶ Նոյն տեղում:

⁷ Նոյն տեղում, էջ 19:

Հետագայիւմ, այս ծագումը մոռացության է տրվել ու միաւէ իր գոյությունը պահպանել է աշխարհագրական հասկացությամբ։ Հասկանալի է, որ Հին հայերը լնդիանուր ոչինչ շունեն (ընդգծումը մերն է—Մ. Զ.) մեր այսօրվա ճանաչած հայ համայնքի հետո։¹

Կրկնելով իր նախորդ հեղինակներին, մասնավորապես Զեմալ Օզկայային, հայերը արմեններին հակադրելու հարցում, հեղինակը գրում է. «Հիրավի... ակնհայտ է դառնում, որ «Արմենիա» և «Հայաստան» հասկացությունները երկու տարրեր հասկացություններ են: Եթե բնական համարվի «արմեններ» կոչելու այն րոլոր համայնքների ներկայացուցիչներին, որոնք մի ժամանակ ապրում էին Հայաստանում, դրան հակառակ միանգամայն անբնական պետք է համարվի «արմեններ» «հայերի» հետ շփոթելը, այսինքն նրանց հետ, ովքեր կազմում են այսօրվա հայերը: Նույն ձևով, հստակորեն պետք է զանազանել «Արմենիա» աշխարհագրական հասկացությունը այն ոեգիոնից, ուր եկան ու հաստատվեցին և դարեր շարունակ ապրեցին «այսօրվա հայերի նախնիները»:² Մի խոսքով, հեղինակը ուզում է շեշտել, թե հայերն այստեղ «օտար տարր են» և Արմենիա եկել են դրսից: Միթե կարելի է մի ժողովրդի տարրեր ձևով անվանակոչումը հիմք ընդունել պնդելու, որ դրանք տարրեր ժողովրդներ են, Գերմանացիները իրենց կոչում են «գոյշ», (իրենց երկիրը «Դոյլանդ» քրանսիացիները՝ «Ալեմենիա», «Ռվեմանիա», անգլիացիները՝ «Ճերմենի»): Ֆինները իրենց երկիրը անվանում են «Սուումի», Ֆրանսիան, մի ժամանակ կոչվում էր «Գալիա»: Սակայն ու ոքի մտքից չի անցնում, «Դոյշ» գերմանացին չէ, «Դոյլանդ»՝ «Գերմանիա», «Սումին»՝ «Ֆինն» կամ «Ֆինլանդիա» և այլն:

Մի ուրիշ հեղինակ՝ էրգեն Աֆիֆը, Փոքր Ասիայում թուրքեր է հայտնաբերում քարայրների ժայռապատկերներում, Այսօր տեղական և արտասահմանյան բռլոր գիտնականների կողմից ընդունված է այն տեսակետը, կարդում ենք էրգեն Աֆիֆի մոտ, — թե շատ ընդարձակ տակարդում ենք էրգեն Աֆիֆի մոտ, — թե շատ ընդարձակ տակարդի վրա լայնորեն սփռված ժայռապատկերները կատար-

վել են հին քոչվոր ու կիսաքոչվոր թուրքական ցեղերի կողմէց։ Մի այլ տեղ խոսելով բրոնզե դարի հանրահայտ Քուռ-Արաքսյան մշակույթի մասին և խուփիներին դարձնելով թուրքեր, էրգեն Աֆիֆը գրում է. «Ենելով փաստերից, այս մշակույթն ստեղծող ժողովուրդները՝ խուփիները, ինչպես դա ընդունված է արտասահմանցի գիտնականների մոտ, ասիական ծագում ունեն, և նրանց լեզուն ուրալա-ալթայական լեզվաընտանիքին ազգակից է, ինչպես և թուրքերները»։

Հայերը հին պատմություն շունեն — հայտարարում է Ա. Էնգինը: Հայ պատմագիրների վկայությունների հիման վրա գրված հայոց պատմությունը առասպելական է, — գրում է նա, — որը հար և նման է հոմա-հոռմեական հին առասպելներին ու հետևաբար՝ մտացածին (նկատի ունի Հայկի և Բելի և մյուս առասպելները):² Այսպիսով, գրում է Էսատ Ուրասը, — հետևելով Ա. Էնգինին, «Հայկյան գերդաստանը ամբողջությամբ առասպելական է»: Գիտականը միայն Ուրարտուի՝ նախաթուրքերի պատմությունն է, — գրում է Ա. Էնգինը, և մանրամասն սկսում է շարադրել ուրարտագիտության զարգացման պատմությունը XIX դարում, ըստ որում կոպիտ հարձակումներ է թույլ տալիս այն գիտնականների (Սեն-Վարտեն, Մ. Լընորման, Մորդուման և այլոց) նկատմամբ, որոնք փորձեր են կատարել պարզելու ուրարտահայկական առնչողությունները:³


Վերևում նշված հեղինակները պատահական դեմքեր չեն, այլ եղել են և կան արդի քեմալական պատմագրության խոշորագույն ներկայացուցիչները: Որ հայերի ժագման հարցում եղած նման «կարծիքները» բաժանում է պետական-պաշտոնական պատմագրությունը, երևում է դեռևս 1930-ական թվականներին հրատարակված պաշտոնական-պետական «թարիխ» («պատմություն») շորս հատորանոց աշխատության որդեգրած «գիտական»,— քաղաքական գծից: Նշելով, որ բուրքերը Փաք Ասիայում ամենաիշը յոր հազար տարի

¹ Աֆիֆ Էրզեն, Վոստочная Анатолия и урарты, Научно-информационный бюллетень, «Арменоведение за рубежом», № 10 (64), Ереван, 1983. Перевод с английск. А. В. Косяна

² „Eti tarihi,, էջ 18:

³ Նույն տեղում, էջ 91—98:

¹ Նույն տեղում:
² Նույն տեղում, էջ 20:



է, որ գոյություն ունեն և որ այդ երկրամասը իրենց համար սրբություն է, և որ խեթերը, ինչպես և էլամցիներն ու շումերները քութեր են, ոչ մի խոսք, ոչ մի բառ չի ասվում այն մասին, որ պատմության մեջ գոյություն են ունեցել հայեր և Հայաստան եւկիր։¹ Պատահականություն է արդյոց դա: Ոչ բոլորովին: Արդի թուրք պատմագրության և ոչ մի ներկայացուցիչը Հայաստան անունը, որպես պատմական, աշխարհագրական հասկացություն չի օգտագործում (տես կցված քարտեզները): Էսատ Ուրասը, որը ի տարրերություն մյուսների, մի ամբողջ գլուխ է նվիրել պատմական Հայաստանի աշխարհագրությանը, վերաշարադրելով Սեն-Մարտենին,² արել է այդ, նպատակ ունենալով ի վերջո հայտարարելու, թե եվրոպական գիտության մեջ այդշափ մանրամասն լուսարանված Հայաստանի պատմական աշխարհագրությունը լոկ մի ֆիկցիա է, քանի որ հայերը ինքնուրույնությունից զուրկ և պատմական բոլոր հանգրվաններում էլ որոշակի պետական սահման շունեցող մի ժողովուրդ են եղել:


Զարաշար սիալվում են թուրք պատմաբանները, կարծելով, թե դեռ նետելով Հայաստան, Հայկական լեռնաշխարհ, Արարատ և նման շատ աշխարհագրական հասկացություններ, իրենց կհաջողվի մեկընդմիշտ պատմությունից ջնջել դրանք, և, ինչպես գրում է Էսատ Ուրասը, «Հայաստանը կմնա աշխարհագրությունից փոխանցված պարզ մի հիշություն»:³

«Ոչ Դարեհից առաջ, ոչ էլ նրանից հետո,— կարդում ենք Զ. Օզկայայի մոտ,— մինչև Ալեքսանդր Մակեդոնացու կողմից պարսկական (իմա՝ աքեմենյան— Մ. Զ.) կայսրության կործանումը, խոսք լինել չի կարող անկախ հայկական պետության մասին: Ճիշտ է, որ Հայոց պատմիչներն ու ժամանակակիցները տվել են այսպես կոչված հայ թագավորների ցանկը և նույնիսկ նրանց երևակայական կերպարները: Այս անձնավորություններից շատերը, եթե իրոք ապրել են, ապա կարող էին լինել ոչ այլ ինչ, քան մեծ մասամբ Մեծ

¹ Stein «Tarihi», t. 30, 31—198.

² St. Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris, 1818:

³ Es at Uras, t. 11.



Արքայի (իմա՝ աքեմենյան թագավորի Մ. Զ.) տարրեր, ու մեծավ մասամբ անզանիտ (իմա՝ թուրք— Մ. Զ.) ժագում ունեցող հպատակ վասալներ: Եվ նրանց մեջ կային ուրարտական թագավորներ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեին արմենների, ոչ էլ հայերի, հայքերի և հայկացյանների հետ»:¹

Հայոց հին պատմությունը,— կարուա ենք Սադի Կոշաշի մոտ,— հիմնված է ոչ թե վավերագրերի, այլ առասպելական պատմվածքների վրա: «XIX և XX դարերում մի շարք օտար պատմաբանների կողմից գրի առնված հայերի պատմության վերաբերյալ երկասիրությունների մեծ մասը,— այնուհետև գրում է սույն հեղինակը,— ոչ թե պատմություն է իր իսկական իմաստով, այլ ավելա պետության քաղաքականությանը հարմարեցված պրոպագանդայի գրքեր»:²

Կրկնելով Զ. Օզկայային, Ք. Գյուրյունը գրում է, թե մինչև Ալեքսանդր Մակեդոնացու կողմից աքեմենյան իրանի նվաճումը հայերի պատմության մասին խոսք լինել չի կարող, քանի որ հայերը չունենալով որևէ անկախություն «...որպես համայնք պարփակված էին իրանյան մի նահանգում»:³

Տիգրան Մեծի մասին արդի թուրք պատմագրությանը անդրադառնալիս հարկ է ժամանակագրական կարգով սկսել Շ. Գյունալթայից: Նա ընդարձակ էշեր է նվիրել Տիգրան II-ի ժամանակաշրջանին: Արտաշեսյան հարստության հզոր արքայի մասին խոսում է և Կապաղովկիայի, և Պոնտոսի ու Արտաշեսյան Հայաստանի պատմությունը գրելիս:⁴ Նշենք սկզբից՝ որ Տիգրանը հայ չի համարվում, այլ պարթև, այսինքն՝ ըստ հեղինակի թուրք: Հակառակ այն հանրահայտ և կասկած հարուցող փաստին, որ պարթևները իրանցիներ են, և նրանց լեզուն էլ տիպիկ իրանական լեզու է եղել՝ ներկայիս պարսից լեզվի զարգացման փուլերից մեկի՝ միջին պարսկերենի մի ճյուղը,⁵ թուրք պատմաբաններից ումանք պարթև-արշակունիներին էլ թուրք են հայտարարում:

«Անվիճելի ճշմարտություն է,— գրում է Շ. Գյունալթայը,—

¹ Cemal Özkan, էջ 22:

² Sadi Koças, էջ 14:

³ Kâmurân Gürün, էջ 37.

⁴ Şemseddin Günlataş, Romalılar zamanında Kapadokya, Pont ve Artaksiad kırallıkları էջ 498–522, 578–610 և այլն:

⁵ Տիգրան Բեկով, Оранский М., Введение в иранскую филологию, Москва, 1960, էջ 192–196.

որ Տիգրանը ծագումով հայ չէ,¹ Սակայն եթե այդպես է, Տիգրանը թուրք էր, ապա ինչում ալիքան հականին է Տիգրանը թուրք էր, ապա ինչում ալիքան հականին է խոսում Շ. Գյունալթայը Հայոց կրանքով ու ատելությամբ է խոսում Շ. Գյունալթայը Հայոց թագավորի մասին: Շատ պարզ է, նախ՝ հափշտակված ապա րանքը այն գինը չունի, ինչ-որ վաստակածը, և երկրորդ, մեր պատմաբանը համոզված չէ, որ իրեն Կհաջողվի կու տալ այդ պատառը:

Շ. Գյունալթայի մոտ Տիգրան Ա-ը ներկայացված է որպես դաժան մի բռնակալ, որը նվաճված ժողովուրդներին բերել է միայն ճնշում ու կողոպուտ, վայրագ ու տմարդի վերաբերմունք: Տիգրան Ա-ի վերաբերմունքը դեպի իր աները՝ Միհրդատի փախուստը Հայաստան—Մ. Զ.), հեղինակը որպես գույն է որպես մեծագույն դաշտանություն, բնութագրելով հայոց արքային՝ «գավաճան» (hayin), «ապուշ» (sersem), «բուլակամ» (iradesiz), «ստոր հոգու տեր» (alcak ruhlu) և այլ ածականներով: Շ. Գյունալթայը շեշտում է, որ Տիգրան Ա-ը իր կյանքի մեծ մասը անցկացրել է կանանցներում: Հելենիստական մշակույթը Հայաստանում հովանավորել է ոչ քապաշնորհ Տիգրանը, ինչպես կարծում են, — գրույ է նա, — այլ նրա կին կենապատրան: ² Հեղինակի ամրող համակրանքը հոռմեական զորավար լուկուլոսի կողմն է. «Անհրաժեշտ է Տիգրանին մի լավ դաս տալ, ³ որն անում էր լուկուլոսը, — գրում է նա: Տիգրանը և որպես ինքնակալ, և որպես զորագրամանատար անընդունակ ու խեղճ մի անձնավորություն էր»,— գրում է Շ. Գյունալթայը:

«Երբ Տիգրանն իմացավ, թե հոռմեական զորավար Պոմպեյուր մոտեցել է մայրաքաղաքին, փոխանակ նրա հեռուստաբար մարտնչելու, թեկուզ և ստորացված վիճակում նրա որոշ ժամանակ երկրում քարշ գալու նպատակ

կով, գլխից՝ թագը, ուսից՝ իշխանական թիկնոցը գետին է գցել ու ընկել հոռմեական զորավարի ոտքերը, երեսը գետինը քսած գութ է հայցել ու հայտնել նրան, որ նրա ամեն մի հրամանը խոնարհորեն կկատարի: Իր իշխանության ժամանակ իրեն աստված հորջորջած այս խղճուկ հոգին, գերազանց մի ուժի առաջ չի վարանել օձի նման գետինին սողալու ստորություն անելուաւ: ¹

Հատկանշականը այս բնութագրի մեջ այն է, որ դրա հեղինակը ամենայն չանասիրությամբ որսացել է Տիգրանը Ա-ի թշնամիների՝ հոռմեական ճամբարի շատագով հեղինակների բոլոր բացասական արտահայտությունները, որ նրանք թույլ են տվել այդ հոգը նվաճողի հասցեին, դրված թշնամությունից ու նախանձից, և տասնապատիկ խտացնելով ու ուժեղացնելով ներկայացնում է դրանք ընթերցողին: Հարց է ծագում, իսկ ինչու՞ Շ. Գյունալթայը չի անդրադարձել ուրիշ սկզբնադրյուրների, որոնք ավելի անաշառ են և միանգամյան այլ պատկեր են տալիս: Թե ինչու չի անդրադարձել, այդ, կարծում ենք, ընթերցողի համար միանգամյան պարզ է. և բացատրություն չի պահանջում, բայց ցանկանում ենք հիշեցնել Շ. Գյունալթային, որ եթե նա լուսիցան է մատնում այդ սկզբնադրյուրները, ապա նրանք դրա հետևանքով ամենին շեն դադարում գոյություն ունենալուց: Բավարարվենք Հուստինոսի աշխատանքից մի հատվածով, որը և արժանի պատասխան է և վերը մեջքերված հայոցյանքներին: Խոսքը այստեղ սելեկլյուանների երբեմնի հզոր թագավորության անկման մասին է. Ճեղքայրների փոխադարձ ատելությունը, գրում է Հուստինոսը, բերելով այդ տեղեկությունները մ. թ. ա. I դարի պատմի Պոմպեյու Տրոգոսի «Պատմությունից», — ապա և նրանց որդիներին ժառանգաբար անցած թշնամությունը անընդհատ պատերազմներ ծնեց, որոնք ծայրահեղ նվաստության հասցրին Ասորիքը ու նրա թագավորներին. ի վերջո ժողովուրդը դիմեց օտարի օգնությանը և սկսեց փնտրել օտարերկրացի թագավոր: Ոմանք կարծում էին, որ պետք է կանչել Միհրդատ Պոնտացուն, մյուսները՝ Եգիպտոսի Պտղոմեոսին: Սակայն իրերի բերմամբ Միհրդատը պատերազմների մեջ էր հոռմեացիների գեմ, իսկ Պտղոմեոսը Ասորիքի մըշ-

¹ Semseddin Günalçay, նույն տեղում, էջ 578: Ի հեճուկս Շ. Դյումարայի, Ստրաբոնի մոտ կարողութեան մերնիցից էր Տիգրանը՝ նա իշխում էր, այսպես կոչված բռն Արմենիայում, որը սահմանակից է Մեծեպալին, Աղվանքին, Իրերիալին մինչև կողմին և Սկ ծովի մոտ գտնվող Կապաղովկային (տե՛ս Հ. Սաննդուանի բննական տեսություն հայ ժողովրդ պատմության, հատ. ա., էջ 187):

² Նույն տեղում, էջ 607:

³ Նույն պեղում:

տական թշնամի էր եղել: Այսպիսով, բոլորը համաձայնության եկան Հայաստանի թագավոր Տիգրանի շուրջը, որը սեփական ուղմական ուժ ունենալուց բացի, պարթեների թագավորության դաշնակից ու Միհրդատի խնամին էր: Եվ այսպես հրավիրված լինելով Ասորիքի գահին բազմելու, նա 17 տարվա ընթացքուց կառավարում էր ամենայն անդորրությամբ. չչ խանգարում պատերազմներով ուրիշների հանգիստը և ոչ ոք նրան չէր անհանգստացնում, այնպես, որ պատերազմելու անհրաժեշտություն շկար» (Just, XL, I):

Հավատարիմ իրենց պանթուրքիստական տեսության, Զ. Վ. Տողանը, Ֆ. Կրգիօլլում, ինչպես մի քանի այլ հետադեմ թուղթ պատմաբաններ, պարթէ Արշակունիներին ևս, ինչպես ասվեց վերը, վերագրում են թուրքական ծագում: Եթե Զ. Վ. Տողանը պարթէ արշակունիներին թուրքեր է հայտարարում, նույնացնելով նրանց սակա-սկյութների հետ¹ (որոնք իրենց հերթին թուրքեր էին հայտարարվել տես վերը), ապա ծայրահեղ պանթուրքիստ Ֆ. Կրգիօլլուն նրանց նույնացնում է Օղուզ թուրքերի Բայրոնուր ցեղի հետ. նա պնդում է, թե Բայրոնուր նախնական ձևում տվել է Բայրն-պարն-պար-պարին ձևը:² Իսկապես որ մեծ գյուտ է:

Իսկ ինչ վերաբերում է հայ Արշակունիներին, ապա վերջինների իշխանության ժամանակաշրջանի հայոց պատմությունը Ֆ. Կրգիօլլուի մոտ շարադրված է հետևյալ ընդհանուր վերնագրի տակ՝ «Հին Օղուզները Արշակունիներից մինչև իսլամը» (մ. թ. ա. 120—մ. թ. 646 թ.)ս³: Ի՞նչ օղուզների մասին է խոսքը: Հեղինակը մեզ տալիս է հետևյալ բացատրությունը. «Հայ Արշակունիները... հին օղուզներից ու թուրքեն-թուրքերից էին»⁴:

Ֆ. Կրգիօլլուի կատարած այս բոլոր «գյուտերը» հիմնված են «Դեղե-Կորկուդ» էպոսի վրա: Քննարկենք, թե ինչ է իրենից ներկայացնում «Դեղե-Կորկուդ» էպոսը և տեսնենք, թե արդյո՞ք որևէ կապ գոյություն ունի էպոսի հերոսների և

¹ Zeki V. Togan, նույն տեղում, էջ 46, իսկ «Թարիխ»-ում էլ նըշը վում է, որ իրանը լոկ աշխարհագրական իմաստ ունի, քանի որ նրա թշնակությունը Միջին Ասիաից գաղթած թուրքերն են (տես «Tarihi» հատ, 1, էջ 164):

² «Kars tarikh», էջ 137:

³ Նույն տեղում, էջ 125—212:

⁴ Նույն տեղում, էջ 137:

հայ նախարարական տների միջն, ինչպես պնդում է Ֆ. Կրգիօլլուն:

«Դեղե-Կորկուդ» էպոսը (Kitab-i Dede Korkud) բաղկացած է մի առաջարանից և 12 հեքայեներից՝ պատմվածքներից»¹

Էպոսում աշխարհագրական միջավայրը Անդրկովկասն ու Հայաստանն է: Աշխարհահոչակ արևելագետ Վ. Վ. Բարտոլդը նշում է, որ էպոսի հերոսները սելջուկ ֆեոդալներն էին, որոնք Հայաստանի ալպյան մարգագետններում գոչվորական ու կիսաբռնչվորական կյանք էին վարում: Էպոսի դյուցազունները,— գրում է Վ. Վ. Բարտոլդը... «Հայկական լեռնաշխարհում իրենց ծիերի, ուղտերի և ուղարների հետ յայլաղներում... լրիվ կամ կիսաբռնչվորական կյանք էին վարում»² Վ. Ժիրմունսկին էլ, իր հերթին նշում է, որ էպոսի քոշվորներն ու կիսաբռնչվորներն էլ յայլաղներից հաճախակի հարձակումներ էին գործում տեղացի նստակյաց բնակչության վրա, որի ու սրի մատնելով նրանց բնակավայրերն ու քաղաքները,³ Հայտնի է, որ Վ. Վ. Բարտոլդը բազմիցս անդրադառել է Դեղե-Կորկուդ» էպոսին ու բոլոր դեպքերում էլ ընդգծել, որ էպոսը Անդրկովկասում ու Հայաստանում ձևագործել է XI դարից հետո, երբ սկսել է Փոքր Ասիայի թուրքացման պրոցեսը⁴:

Ճիշտ է, օղուզ դյուցազունների գովերգությանն ու փառաբանությանը նվիրված այս էպոսը նախքան Կովկասում իր վերջնական ձևավորում ստանալը, գեռնե առանձին զրուցներով տարածված էր Միջին Ասիայում և Ղազախստանում ավելի վաղ ժամանակաշրջանում, սակայն հայտնի է, որ առհասարակ ոչ միայն «Դեղե-Կորկուդ» էպոսը, այլև «Օղուզնամենները» ընդհանրապես XV դարի խմբագրություններ են:⁵

¹ Այս մասին տես Վ. Մ. Ժիրմունսկու «Հետաքրքիր հոդվածը՝ տպած թուրքերն թարմանությամբ» «Belleten»-ում: V. M. Jirmunskiy, Kitab-i Dede korkud og'uz destani, „Belleten”, CXCV, 1961:

² B. B. Бартольд, Турецкий эпос и Кавказ. «Язык и литература турка», Ленинград. 1930, էջ 11—12:

³ V. M. Jirmunskiy, նույն տեղում, էջ 610:

⁴ Տես V. Barthold, 12 Vorlesungen über die geschichte der Türken Mittelasiens, bearbeitet von Th. Menzel. „Die Welt des Islam,” Beiband:

⁵ J. M. Jirmunskiy, նույն տեղում, էջ 611:


Այսպես, նույն դարի թուրք հեղինակ Յաղըշիօղլին Ալին սովորաց Մուրադ II-ի համար գրեց նման «Օղուզնամեներ»:

Հենվելով «Դեղե-Կորկուդի» վրա, Ֆ. Կրզիօղլուն հայ Արշակունիներին և նախարարական տներին տալիս է թուրքական ծագում: Որպեսզի ընթերցողն այստեղ գաղափար կազմի, թե ինչպիսի պրիմիտիվ ու ծիծաղելի ձևով է թուրք հեղինակը նույնացնում էպոսի հերոսներին հայ նախարարների հետ, բերենք նրա կատարած մեջբերումը «Դեղե-Կորկուդ» էպոսից աննշան կրծատումով. «...Վերև հիշատակված Գյուկալպ խանը վախճանվում է ու այս աշխարհից հեռանում: Նրա որդիներից Կայդար խանը, Թուրմըշ խանը իրենց երկրը բաժանեցին իրար մեջ, յուրաքանչյուրը մեկ վիլայեթի տեր դարձավ: Մրա եղայրներ՝ ...Խորասանից դուրս գալով եկան Անի և Կարս, անհավատ վրացիների հետ մարտի բըռնվեցին ու գրավեցին Թիֆլիսը...

Նրանք կրոն, դավանանք զգիտեին, սակայն ճանաչում էին աստծուն, նրանց օղուզներ էին անվանում... նրանց մոտ հիշատակվում էին դրսի օղուզներ (Թաշ-օղուզ), ներսի օղուզներ (իշ-օղուզ):² Իշ-օղուզ բեգերին՝ Ղազան խան— («Մեծ» Հորդորշված Արշակունի Վաղարշակի որդի Խոսրով I-ը), Թուրքադ բեգ (Միանդակ Մանդակունի)... Շամ-Սորդին բեգ (Շամշուդեցի Օրբելյան), Բայարակ բեգ (Թագաղիր պաշտոն վարող Թագարատ-Թագրատունի), Կարա-Կոնակ բեգ (Զինաստանից եկած Կոնակ և Մամիկ անուներով երկու Հոնացի իշխաններ՝ Մամիկոնյաններ) էին ասում: Թաշ-օղուզ բեգերին օրավագ Կոչա (Սյունիքի իշխաններ), Դոնդար բեգ (Փայտակարանի իշխաններ), Աման բեգ (Մոկաց և Ամատունի իշխաններ), Ռուրդ իշխաններ), Ավշար բեգ (Արծրունի իշխաններ), Դոկար բեգ (Աղվանքի իշխաններ), Ռուստամ բեգ

¹ Տե՛ս Վ. А. Гордлевский, Государство сельджукидов Малой Азии. Москва — Ленинград.

² Թաշ-օղուզն ու իշ-օղուզը գենու Միջին Ասիայի օղուզների ցեղային կազմակերպության արտահայտություն էին, որի մասին արդի թուրք շատ պատմարանների մոտ կան վկայություններ (տես Հüseyin Namık Orkun, Türk tarihi, 1, էջ 65): Սակայն Ֆ. Կրզիօղլուն, ըստ երևույթին, համաձայն է նրանց հետ և «Դեղե-Կորկուդի» այս հատվածի հիման վրա գաղմել է IV—V դարերի Հայաստանի քարտեզը (տես Թարտեղ թ 4), բացահայտորեն կեղծելով պատմությունը: Ֆ. Կրզիօղլուն իր այս անհեթեթությունները շարունակում է պետքել 1964 թ. հրատարակած ըրուոր տեսանկյունից թուրք հագուստով բրդերը մեր մատնաշած գրքույթում (տես Թարտեղ թ 5):



(Սիսականներից՝ Ռշտունի) էին անվանում։ Ընդամենը 90 հազար զինվորականներ էին։ «Դեղե-Կորպուլը (Անակի որդի Գրիգոր Լուսավորիչ) սրանց հոգեոր առաջնորդն էր»¹։

Այս տողերը կարդալիս ընթերցողների մոտ բնականաբար հարց կառաջանա, արժե՞ր արդյոք կանգ առնել նման բացարձակ անհեթեթությունների վրա։ Չարժեր, անշուշտ, եթե նկատի շունենայինք այն հանգամանքը, որ այս բոլոր տեսակետները որոշ շափով բարձրացվել են պաշտոնական աստիճանի։

Թերված քաղվածքից կարելի է առանց դժվարության նըկատել, որ այստեղ խոսքը XI դարի սելջուկների մասին է և ոչ մի կապ ու առնչություն չունի հայ հին նախարարական տների պատմության հետ։ Նախ՝ տեքստում հիշատակվում են Անին ու Կարսը։ Անին կառուցվեց, ինչպես հայտնի է X դարի 60-ական թվականներին։ Այնուհետև՝ այստեղ օգտագործվել են արաբերեն բառեր՝ օրինակ կեֆե—անհավատ, asker—զինվոր, seyh—հոգեոր առաջնորդ և այլն, որը մի պարզ վկայություն է այն մասին, որ օղուզնամեն XI դարի բանավոր խմբագրություն է։ Իսկ եթե տեքստում գրված է «Նրանք կրոն, դավանանք շգիտեին...», որի վրա շեշտված կանգ է առնում հեղինակը, ցույց տալու համար, որ դա մինչ իսլամի ժամանակաշրջանի մասին է վկայում, ապա այդ նախադասությունը ասում է լոկ այն մասին, որ Միջին Ասիայի թուրքերը իսլամն ընդունելուց հետո էլ աշքի շէին ընկնում կրոնական մոլեռանդությամբ։ Արաբերը միշինասիացի թուրքերին «կրոնից թույլ» («Türkman Zayıf-ül-iman») մարդիկ էին համարում։²

Այս բոլորը անշուշտ Ֆ. Կրպիօլլուի «գյուտերն» են, ի՞նչ

¹ «Kars tarihi», էջ 143—144.

² Léon Cahun, Introduction a l'histoire de l'Asie, Paris, 1896, էջ 66. «Belleten»-ի 1986 թ. վերջին համարում Ֆ. Կրպիօլլուն ևս մի անգամ անդրամանում է անցյալի իր ժառայություններին և դարձյալ «Հենքիւզեր» և «Դեղե-Կորպուր» դրույգներգործիքան վրա պնդում, թե հայ նախարարական անհերթ թուրքական ժագում ունեն (տես F. Kirzioğlu, Mill destanlarımızdan Dede Korkut oguznamelerinin tarihî belgesi bakımdında degerleri (Armenya, yukari ellen tarihinini içýüzdü), Belleten c. L. sayı 198, aralik 1986, Ankara էջ 915—928). Բայտ որում, հեղինակը թույլ է տվել հարձակումներ տողերին հեղինակի վրա, նշելով, որ շուրջ տասնհինգ թուրք պատրաստների հետ առնահատման մեջ մտած Մ. Կ. Զուլայլանը ըստ էնթիան ուղարկել պատասխան մի կարողաբեկ տալ» Ֆ. Կրպիօլլուի առաջ քաշած դրույթներին։

կարծիք ունեն մյուս հեղինակները Հայոց հին շրջանի պատմության նկատմամբ, ինչպես են նրանք ներկայացնում այդ պատմությունը իրենց ընթերցողներին։ Նշենք հենց սկզբից, որ սովորաբար արդի թուրք պաշտոնական պատմագրության գլխավոր միտումը Հայոց հին պատմության շրջանցումն է (բացառությամբ անշուշտ Շ. Գյունալթայի և 70—80-ական թվականների հեղինակների, որոնց մասին խոսվեց արդեն)։ Լոել ու ոշինչ շատել, կարծեք այդպիսի ժողովուրդ գոյություն չունի, և նա ոչ մի գեր չի կատարել Արևելքի պատմության մեջ։ Այսպես, պաշտոնական թուրքական իսլամի հանրագիտարաններում Հայոց պատմությունը սկսվում է արաբական տիրապետության ժամանակաշրջանից, քանի որ արաբները ոչ միայն Հայաստանին, այլև Վիրքին ու Աղվանքին տալիս էին մի ընդհանուր անոնմ՝ էրմենիյե։

Միայն էսատ Ուրասն է, որ հայերին նվիրված իր հատուկ աշխատության մեջ, հայոց հին շրջանի պատմությունը ներկայացնում է հետևյալ ռեգրակացություններով։

ա) «Մինչև Ալեքսանդր Մեծի ժամանակաշրջանը՝ Հայաստանը Պարսկաստանի մի նահանգն էր...»։

բ) «Մակեդոնացիների տիրապետության ժամանակաշրջանում, նրանք (իմա՝ հայերը—Մ. Զ.) կառավարվում էին (մակեդոնացիների կողմից) նշանակած օտար կուսակալների կողմից։

գ) «Մելկյանների ժամանակ, սրանք դարձյալ մնացին օտար կուսակալների տիրապետության տակ»։

դ) «Պարթևների տիրապետության ժամանակ, նրանց (հայերի) վրա գերիշխում էին պարթևական հարստության պատկանող կուսակալներ։

ե) «Էինի Հարավային Հայաստան կոչված երկիրը, լինի այստեղ եղող արքաները (նկատի ունի Միջագետքն ու Օսրոյենը—Մ. Զ.) հայերի հետ ոչ մի առնչություն չունեն։

զ) «Մեր թվականությունից 50 տարի առաջ (Տ. Տ. Հայաստանը նվաճվեց լուկովուսի ու Պոմպեյոսի կողմից։ Այսպիսիսով, Հայաստանը երկար ժամանակ ընկավ Հռոմեական տիրապետության ներքո։ Հռոմեացիների նշանակած բոլոր կուսակալներն այստեղ ընդունվեցին։ Երկու դար էլ այստեղ տևեց։

է) «Մասանյան տիրապետության հաստատումից հետո,

Հայաստան կոշեցյալ երկիրը դարձավ խաղալիք Փարսկաստանի ու Արևելյան հռոմեական կայսրությունների միջև՝ 387 թվականին երկիրը բաժանվեց այս հիշյալ պետությունների միջև։ 391 թ. հայկական իշխանությունը վերացվեց բյուզանդական, իսկ 429 թ. պարսկական մասերում՝ և այլն։

Ինչպես դժվար չէ կուհել, էսատ Ուրասի հիմնական նըպատակն է ցույց տալ, որ հայերը իրենց պատմության ողջ ընթացքում ինքնուրույնությունից գորկ են եղել, և իր բառերով ասած՝ Հայաստան կոշեցյալ երկիրը լոկ մի աշխարհագրական հասկացություն է՝ հեռու կոնկրետ բովանդակությունից։

Հանրահայտ է, որ իրոք օտար նվաճողները ձգտում էին ամեն կերպ իրենց ենթարկել Հայաստանը, Հայկական լեռնաշխարհը ու վերացնել հայերի քաղաքական ինքնուրույնությունը, սակայն փաստ է միաժամանակ, որ հայ ժողովուրդը օտարերկրյա նվաճողների դեմ վարել է մահու և կենաց պայքար և շատ անգամ նրան հաջողվել է պահպանել իր երկրի քաղաքական անկախությունն ու տարածքային ամբողջականությունը, իսկ Արտաշեսյան հարստության և համակապես Հայոց արքա Տիգրան Մեծի ժամանակ էլ ստեղծել մի հզորագույն պետություն։ Հայտնի է հայերի՝ աքեմենյան Պարսկաստանի տիրակալ Դարեհ I-ի դեմ դեռևս մ. թ. ա. 521—520 թթ. բարձրացրած մեծ ապստամբությունը, որը մանրամասն նկարագրված է Դարեհ I-ի բանագիր արձանագրության մեջ թեհիստունի ժայռի վրա (Քերմանշահի մոտ)։ Հայերի այս հզոր ապստամբությունը, Դարեհ I-ի զորավարները կարողացան ճնշել միայն հինգ ճակատամարտից հետո։¹

Ալեքսանդր Մակեդոնացու և սելեկյանների ժամանակ Հայաստանը ամեննին չէր դարձել սելեկյան սատրապական մի նահանգ, այլ կառավարվում էր բնիկ Օրոնտեսների կամ Երվանդունիների կողմից² Սելեկյանների գերիշխանությունը մ. թ. ա. III դարի ընթացքում միայն մերթ ընդ մերթ էր

տարածվում և այն էլ ավելի անվանական էր լինում, քանի իրական։ Հենվելով սկզբնաղբյուրների վրա, Հ. Մանանդյանը այս մասին գրում է, «Փոքր Հայքը, Մեծ Հայքը և Ծոփքը, սելեկյանների ժամանակ պահպանել էին իրենց ներքին ինքնուրույնությունը գեռ երրորդ դարում (նախքան մեր թվ.)։ Նրանք չէին կազմում սելեկյան պետության երկրամասը, չէին բնակեցված հունական գաղթականներով և չէին դառնել բնականաբար, գաղութացման շրջան»։ Հատկապես տնտեսական մեծ վերելք է ապրում Ծոփքը։ Հայաստանի այս մասում III դարում (մ. թ. ա.) հիմնվում են Հայաստանի առաջին քաղաքներ՝ Արշամաշատն ու Կարկաթիսկերտը։ Հայոց Արշամ թագավորը կտրել է տալիս սեփական դրամների։³

Այնուհետև, օգտվելով 190 թ. (մ. թ. ա.) Մագնեսիայում սելեկյան արքա Անտիոքոս III-ի հռոմեացիններից կուտածությունից, Արտաշես (Արտաքսիաս) և Զարեհ (Զարիադրի) ստրատեգները (զորավարները) հայտարարեցին Հայաստանի լրիվ անկախությունը և դարձան համապատասխանորեն Մեծ Հայքի ու Ծոփքի թագավորներ։ Նրանց օրոք Մեծ Հայքը և Ծոփքը խիստ ընդարձակվեցին և հայշատ վայրերը միավորվեցին մի ընդհանուր հայկական պետության սահմանների մեջ։ Ստրաբոնի վկայությամբ Արտաշես I-ի ժամանակ Ալեքսանդրում բոլորը համալեզու էին, այսինքն՝ խոսում էին հայերեն։⁴ Արտաշես I-ի օրոք հայկական պետությունն արդեն «...համարյա ամփոփվել էր իր բնական սահմանների մեջ և տարածվում էր Հյուսիսային Միջագիտքից մինչև Քուռ գետը և Ատրպատականից մինչև Սոփքը և Փոքր Հայքը»։⁵

95—70 թթ. Հայաստանը Տիգրան Մեծի օրոք դարձավ Մերձավոր Արևելքի հզորագույն ու խոշորագույն պետությունը։ Հայաստանի հարեան թագավորությունները ճանաչեցին «արքայից արքա» Տիգրանի գերիշխանությունը և պարտավոր էին նրան հարկ վճարել, ու պատերազմի դեպքում օգնել նրան իրենց զորքով։

66 թ. (մ. թ. ա.) Տիգրանի և Պոմպեյոսի միջև պայմա-

¹ Esat Uras, էջ 86—89.

² Այդ մասին տես R. Khéroumian, Introduction à l'anthropologie du Caucase, էջ 243—245, Հ. Մանանդյան, Թնկական տեսություն Հայոցովորի պատմության, հ. 1, էջ 50—51։
³ Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 86—89։

¹ Նույն տեղում, էջ 110։

² Նույն տեղում, էջ 111—113։

³ Նույն տեղում, էջ 118։

⁴ Նույն տեղում, էջ 122։

նագրի կնքումից հետո էլ, Տիգրանը, Հրաժարվելով իր բոլոր արտաքին նվաճումներից, այն է՝ Ասորիքից, արևելյան Կիլիկիայից, Փյունիկյայից, Կապաղովկիայից և այլն, մնում էր իր հայրենի երկրի՝ Մեծ Հայաստանի թագավորը և շարունակում կրել «արքայից արքա» պատվանունը:¹

Արտավազդ II-ի (55—33 թթ. մ. թ. ա.) ու նրա հաջորդների ժամանակ էլ, Հայաստանը հերոսական պայքար մղելով հռոմեական զավիթչների դեմ պահպանեց իր քաղաքական անկախությունը, իր աննկուն պայքարով հռոմեացիների դեմ աշքի է ընկնում հատկապես Արտաշես II-ը (մ. թ. ա. 30—20):

Հանում իր երկրի ինքնուրույնության ու անկախության՝ հայ ժողովրդի համար ու ուժեղ ընդդիմությունը հպոր Հռոմին մ. թ. I դարում, ստիպեցին վերջինին համաձայնելու, որ Հայաստանում հաստատվի Արշակունյաց թագավորությունը: Սակայն Հայաստանի համար ստեղծված քաղաքական ծանր բուժերական կացությունը, Հայկական լեռնաշխարհի ունեցած ուազմական և ստրատեգիական մեծ նշանակությունը, հարկադրեցին հայ ժողովրդին, հակառակ իր կենսական շահերի, մասնակից լինել այն պատերազմներին, որ պարբերաբար մղում էին իրար մեջ հարեան հզոր պետությունները, սկզբում պարթևական իրանն ու Հռոմը, այնուհետև՝ Սասանյան իրանն ու Բյուզանդիան: Դարեր տևած այդ պայքարը խիստ թուլացրեց Հայաստանի քաղաքական հզորությունը, և 387 թ. երկիրը բաժանվեց Սասանյան իրանի և Բյուզանդիայի միջև, և 428 թ. միայն վերացավ Արշակունյաց հարստությունը Հայաստանում:

Այդ փաստերը հանրահայտ են: Պիտի ենթադրել, որ այդ բոլորին քաջ ծանոթ է և էսատ Ուրասը: Սակայն, ինչպես ասվեց, իրական պատմությունը նրան քիչ է հետաքրքրում:

Այժմ անդրադառնանք վերջին տասնամյակում հայ ժողովրդի հին պատմության վերաբերյալ արդի թուրք պատմագրության ներկայացուցիչների նորագույն հետազոտություններին, որոնց հեղինակները ինչպես արդեն նշվեց, հավակնում են լինել խիստ անաշառ ու գիտական դիրքերից շարպերել պատմությունը: Սկսենք Զեմալ Օզկայայից, որի մոտ

տվյալ հարցի շուրջ գրվել են ընդարձակ էջեր: Լսենք նրան: Ենքիմենյանների ժամանակ Արմենիա նահանգի վերջին կառավարիչը, — գրում է նա, — եղել է հավանաբար անզանիտ (իմա՝ թուրք Մ. Զ.) ծագում ունեցող մի մեղո-պարսիկ Օրունտես (Երվանդ) սատրապը: Մեղոպարսիկների անկումից հետո Արմենիա նահանգը ներգրավվեց Ալեքսանդր Մեծի կայսրության մեջ: Ոչ մեծ թվով զինական խմբերի հետ Ալեքսանդրի այստեղ (Արմենիա) ուղարկած առաջին կառավարիչը դարձյալ Միթրինսս անունով մի մեղո-պարսիկ է եղել: Նվաճողի (իմա՝ Ալեքսանդր Մեծի—Մ. Զ.) մահից հետո, Պերդիկասը, որպես նահանգի կառավարիչ նշանակեց նեղապետություն: Նեղապետությունը, որպես հաջորդ ունեցավ Օրոնտեսին, որը դարձյալ մեղոպարսիկ էր: Նրանից հետո, երկիրը կառավարվեց Եվմենի անունից Անտիգոնոսի, իսկ այնուհետև սելևկյանների կողմից որոնք հաջորդաբար իշխում էին Ալեքսանդրի կայսրության ասիական մասերում: Երկրամասում կառավարիչներ էին նշանակվում մեղոպարսիկներ կամ ուրարտացիներ, բայց երբեք հայեր, ինչպիսիք էին Օրոնտեսը, Արդուտեսը, Արշամիսը և այլն:՝²

Ինչ վերաբերում է Արտաշեսյան հարստության պատմությանը, ապա նույն Զ. Օզկայայի մոտ կարդում ենք: «Անտիգոն III Մեծի զորավարներից մեկը՝ Արտաքսիասը (իմա՝ Արտաշեսը), որը Քրիստոսից առաջ II դարի սկզբում Սևանա կղզու (Գյոկշ-գյոլ) շրջակայիքի (sic) կառավարիչ էր, օգտվեց իր տիրակալի Մագնեզիումի մոտ կրած պարտությունից (5 հոկ. 190 թ.) և հողակեց իր անկախությունը: Այնուհերձ դա Հայաստանի անկախությունը չէր, այլ մի հավասար մեղո-պարսկական կայ ուրարտական, բայց ոչ հայկական ծագում ունեցող մակեդոնական մի զորավարի անկախությունը, որովհետև Անտիգոնոսու III-ի պալատում երբեք հայ զորավարներ շեն եղել... Այս անկախությունը շատ քիչ ժամանակ տևեց, քանզի Անտիգոնոս III էպիֆանեսը շախազանակ էղել... Արտաքսիասին և Քրիստոսից առաջ 160 թվականին նրան գերեվարեց և այս Արաքսի և Քուրի միջև ընկած երկիրը շարունակեց մնալ սելևկյանների գերիշխանության ներքո»:

¹ Cemal Ozkaya, t2 23.
² նույն տեղամ:

Շարունակելով Արտաշեսյանների հարստության պատմության իր «անաշառու ու գգիտական» շարադրանքը, Զ. Օզկայան այնուհետև գրում է. «Անտիօքոսի մի այլ զորավար՝ Զարիադրեսը սելևկյանների բանակի պարտության հետևանքով նույնպես հռչակել էր իր անկախությունը Սոֆենում (Սոփրում— Մ. Զ.), սակայն այն հարստությունը, որ նա ստեղծեց, արժանացավ Արտաքսիասի ճակատագրին և կարճ ժամանակամիջոցում (սելևկյանների կողմից) հպատակեցվեց. Այս ինքնավար երկու նահանգները (sic), որի բնակչության հիմնական զանգվածը անզանիտ, ուրարտական, խեթական և մեղոպարսկական ծագում ուներ, գտնվելով սելևկյանների գերիշխանության ներքո, որպես գրավոր լեզու ընդունեց հունարենը: Ստույգ հայտնի չէ Զարիադրի ծագումը, բայց կարծում են, որ նա իրանական ցեղից է եղել Նրա հաջորդները, որոնք գտնվում էին սկզբում սելևկյանների գերիշխանության ներքո, մոտ մի դար իրենց գոյությունը պահպանելուց հետո խամրեցին ու անկում ապրեցին: Խել վերաբերում է անզանիտ (իմա՝ թուրք— Մ. Զ.) ծագում ունեցող Արտաշեսյաններին, նրանք ավելի երշանիկ ելք ունեցան, նրանցից մեկը՝ Օրտոպահդիոտեսը կամ Արտավազդը, որը երկրորդ դարի վերջերին: Կառավարում էր երկիրը, արևմտութքում: Որպես հարևան ունեցավ մի այլ անզանիտ ծագումով Պոնտոսի արքա՝ Միհրդատ V Մեծին, որն անվերջ պատերազմի մեջ էր հոռմեացինների հետ: Սրանք (իմա՝ հոռմեացինները՝ Մ. Զ.) որոշ տարիներե ի վեր հաստատվել էին Փոքր Ասիայում և ձգուում էին ընդարձակել իրենց կայսրությունը դեպի Արևելք: Արտավազդը, որպեսզի կարողանա պաշտպանել իր անկախությունը, թեքվեց դեպի իրանական սարահարթում թագավորություն ստեղծած պարթեների կողմը, քանի որ հոռմեացինների հարվածներից սելևկյանների իշխանությունը վերացվել էր այս երկրամասերում: Պարթենները թուրքեստանի Օքսուզի հովատից սերածներն էին... Արշակունինները ցանկանալով իրենց գերիշխանությունը հաստատել Աքեմենյանների նախկին բոլոր տիրույթների վրա, պարթենների թագավորը իր հովանավորության տակ վերցրեց Արտաշեսյաններին և որպեսզի վստահ լինի նրանց հավատարմության մասին, պահանջեց արքայական արյունով մի

իշխանի, որպես պատանդ, և այդպիսին հանդիսացավ Տիգրանը, որն ուղարկվեց իր հորեղբոր կողմից Պարթևստան: ¹ Այնուհետև կանգ առնելով Տիգրանի պատանդությունից փրկվելու, Արտաշեսյան պետությունը ուժեղացնելու, Պոնտոսի թագավոր Միհրդատ ծվագատորի հետ դաշինք կնքելուն, հեղինակը ոչինչ չասելով Հայկական պետության ընդարձակման և հայ ժողովրդի Հռոմի ծավալապաշտական քաղաքականության դեմ հերոսական պայքարի մասին, անմիջապես նշում է, որ «Տիգրանի անկախությունն ու հզորությունը կարծատե եղավ: Տիգրանակերտի պատերի տակ Տիգրան II-ի պարտությունը կուկովուից ուրախություն է պատճառում հեղինակին, ինչպես զա Ծ. Գյունալիթայի պարագայումն էր: Տիգրանակերտի մոտ կռվող հայկական բանակի միայն մի աննշան մասը,— գրում է հեղինակը, — բաղկացած էր հայերից ու բանակի մեծ մասն էին կազմում, — այնուհետև կարգում ենք նրա մոտ, — մեղացիները, ատրպատականցիները, սակերը, մոսկերը, խալիբները և այլն, այսինքն՝ հեղինակի երևակայությամբ՝ թուրքերը: ²

Ճեմալ Օզկայան, ամփոփելով արտաշեսյան հարստության պատմությունը գալիս է հետևյալ «գգիտական» եզրակացությունների՝ «Անտիօքոս III-ի զորավար Արտաքսիասը, որն այն ժամանակ Աքեմենիայի մեղու-պարսկական մի նահանգը հանդիսացող Արարատյան երկրում էր պաշտոնավարում, ապստամբեց իր տիրակալի դեմ և Արաքսի ճախատին հիմնելով մի քաղաք, ստացավ Հայաստանի կամ Արտաքսիադայի թագավորի տիտղոսը: Այստեղի բնակիչների մեջ հայ ժողովուրդը մեծամասնություն էր կազմում և ոչ էլ ինքնավարության իրավունք ուներ: Այսպիսով, հիմնադրված հարստությունը ընդհանուր ոչինչ չուներ ո՛չ արմենների և ո՛չ էլ առավել ևս հայերի հետ: Իր հիմնադրումից կարճ ժամանակ անց, այդ հարստությունը ընկավ նախ սելևկյանների, ապա և պարթենների գերիշխանության ներքո: Մի պահ դառնալով անկախ, այս պետությունը նպաստավոր հանգամանքների պայմաններում, ներխուժեց սահմա-

¹ Cemal Ozkaya, էջ 24:
² Նույն տեղում, էջ 25:

նակից մի շարք երկրներ, ուր տեղաբնիկների մեջ շկար և ոչ մի հայ, իսկ այնուհետև այս երկրները Տիգրանի հնագանդեցումից ու մահից հետո, ընդունեցին օտարների տիրապետության տակ գտնվող նախակին նահանգների տեսքը»:¹

Այս բոլորից հետո, լցված թունոտ ատելությամբ դեպի Արտաշեսյանների հայկական պետությունը, հեղինակը նշում է, որ «...իրականության մեջ դա փոքրիկ մի իշխանություն էր (ընդգծումը մերն է — Մ. Զ.): Առաջավոր Ասիայի երկրամասերում, ինչպես և աշխարհի այլ մասերում, հաճախ թագավորներ էին անվանում նրանց, ինչ մեր օրերում ասվում է ավազակապետերին, կուսակալներին ու նրանց տեղակալին: Հիրավի, ասորեստանցիները միայն Վանի գավառում թրիստոսից ութ դար առաջ գերեվարել էին քառասուն թագալըրված արքաներ, որոնց իրենց հետ միասին տարել էին նինվե: Սրանք, բնականաբար, իրենց գահի գերիշխանության ներքո ընդարձակ տարածք չունեին: Ուստի վերեք մատնանշված Արտաքսիադայի գահի գերիշխանությունը նույնպես հեռուներ չէր տարածվում»:²

Ինչ վերաբերում է Արշակունիների թագավորության պատմությանը, ապա Զ. Օգկայան այստեղ էլ ոչ մի նոր խոսք չի ասում, այլ կրկնում է իր նախորդներին: Դրանում համոզվելու համար դիմենք հեղինակի մի շարք ասույթներին՝ «Հայտնի է, որ Արշակունյաց հարստությունը, որի մի ճյուղը շորս հարյուրամյակ իշխեց Արտաքսիադայում, սերել էր Միջին Ասիայից և նրանց հայրենիքը՝ Օքսուզի հովիտն էր: Հետեւաբար հայկացյանների հետ ոչ մի ընդհանրություն ունենալ նա չէր կարող: Արտաքսիադա մայրաքաղաք ունեցող պարթևական այս պետությունը, որը Արաքսի հովտի կողմից, տարածվում էր դեպի Արևմտաք, կախում ուներ մի կողմից՝ Մեծ Արքայից, որը տիրակալն էր Աքեմենյան հին թոլոր նահանգներին, մյուս կողմից՝ Հռոմեական կայսրությունից, քանզի Արտաքսիադայի Արշակունյաց հարստության հիմնադիր Տրդատ I-ը, ընտանիքի ղեկավար իր եղբոր՝ Վոլոգեզի խորհրդով ու լուելայն համաձայնությամբ, ինդրել էր

Ներոնից իր արքայական իշխանության հաստատումը»:¹

Այսուհետև, դառնալով քրիստոնեության, որպես պետական կրոնի Հայաստանում հողակվելու հարցին, Զ. Օգկայան, ինչպես և իր նախորդները Գրիգոր Լուսավորիչին, Սահակ Պարթևին և այլոց նույնպես դարձնում է թուրքեր:² «Եյսպիսով հայ ժողովուրդը III դարում,— գրում է Զ. Օգկայան,— ապրում էր տարբեր ծագում ունեցող ժողովուրդների մեջ, զեկավարվելով Միջին Ասիայից սերած մի հարստության կողմից, որը վասալական կախման մեջ էր մերթ Հռոմից, մերթ Իրանից և մեծավ մասամբ քրիստոնյա դարձավ Օքսուզի հովտից սերած նույն արշակունի ծագում ունեցող մի մարդու կողմից, որը հիրավի դարձավ նրանց հոգեսոր առաջնորդը ու նրա ընտանիքից սերեցին բազմաթիվ կաթողիկոսներ»: «Եթե այսօր հայ ժողովուրդի եկեղեցին, հավատամքը կրում են Սուրբ Գրիգորի անունը, որը շնայած ոչինչ հայկական չունեթ նրա համար է, որ այս (հայ) ժողովուրդը գտնվում էր այն ժողովուրդների արանքում, որոնք կառավարվում էին այս (իմա՝ Արշակունյաց — Մ. Զ.) հարստության կողմից, որից սերել էր այս մեծ մարդը: Եթե Արշակունիները գրաված վիներին Արտաքսիադայի գահը, ապա անկասկած, այս ոուրը անձնավորությունը նպատակադրված չէր մինի քրիստոնեությունը քարոզել Արաքսի այն կողմում:

Հայոց լեզվի համար այլուրենի ստեղծումը դարձյալ հանդիսացավ այս պարթևի հետնորդներից մեկի, կըմիածնի կաթողիկոս Սուրբ Սահակ I-ի (387—428 և 432—439) գործը, որը հանձնարարեց Մեսրոպին կազմելու հատուկ այլուրեն այս լեզվի համար»:³

Դիմելով բացահայտ կեղծիքի, Զ. Օգկայան հայտարարում է, թե իբր քրիստոնեությունը Հայաստանում ընդունել են միայն հայերը, իսկ ոչ հայ բնակչության մեծ մասը դարձել է մազդեական: «Մինչ հայերի մի զգալի մասը ընդունում էր քրիստոնեական հավատքը, Հին Հարմինիա նահանգի բնակչության մեծամասնությունը հավատարիմ մնացին իրենց հին աստվածություններին և հետագայում նրանցից շատերը ան-

¹ Նույն տեղում, էջ 27:

² Նույն տեղում, էջ 28:

¹ Նույն տեղում, էջ 28:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 29:

շան մաղդեականների շարքերը:¹ Ինչպես տեսանք, մեր պանթուրքիստի համար շափի զգացմունք գոյություն չունի:

Ժամանակակից թուրք հեղինակներից նեղեղ Սևինշը ավելի հեռուն գնալով, Գրիգոր Լուսավորիչին հայտարարելով պարթև-թուրք, թուրքեր է հայտարարում թուրքական տիրաւ պետության հաստատումից հետո բռնությամբ թրքախոս դարձած հայերին: «Համենայն դեպս, — գրում է նա, — մենք զգուշություն ցուցաբերենք և հետո միայն ասենք, որ եթե լուսավորական եկեղեցու հիմնադիրը թուրք է, ապա թուրք պետք է լինեն նաև վերոհիշյալ թրքախոս լուսավորչականները»: Այնուհետև շարունակելով իր այդ միտքը, հեղինակը պնդում է, թե հայերը և հույները էթնիկապես գոյություն չեն ունեցել, այլ եկեղեցիների շուրջ համախմբված համայնքներ են եղել»:²

Արդ, անդրադառնանք արդի թուրք պատմագրության հայերի հին պատմության մասին ընթերցողներին մատուցված ամենավերջին «գիտական» մարզանքներին: Այստեղ, նախ և առաջ, խոսքը տանք Ք. Գյուրյունին: Վերջինս, ի տարրերություն Զ. Օզկայայի, Արտաշեսյան հարստության հրմնադիր Արտաշեսին, ինչպես և Սոփիի թագավոր Զարեհին տալիս է իրանական ծագում:³ Նպատակը միևնույն է՝ ցույց տալ, որ հայերը ինքնուրույն պետություն չեն ունեցել: Խոսելով Տիգրան II-ի ստեղծած պետության մասին ու շարադրելով նրա իշխանության տարիների կարեռագույն քաղաքական դեպքերը, հեղինակը հատուկ լուգագում է, որ դա մի պետություն էր, որ իր գոյությունը կարողացավ պահպանել շնորհիվ Հռոմում ծավալված այսպես կոչված «սոցիալական պատերազմի», «...որն այս ժամանակներում երկիրեղում էր հռոմեացիներին և թուլացնում նրանց գերիշխանությունը (ՏԸՇ)»: Հայստանում:⁴ Հեղինակի ողջ համակրանքը, ինչպես դա Զ. Գյունալթայի պարագայումն էր, Հայաստան արշավորդ հոգած կառավագայության լուսավորչական միտումը, ինչպես դա ժամանակին անում էին կսատ Ուրասն ու Սադի Կոչաշը, Հայաստանի աշխարհագրական հասկացություն լինելը ցույց տալն է:⁵ Նրա մոտ սովորական է «Հայաստան կոչեցյալ երկրամաս», տերմին օգտագործումը: Դեռևս 60-ական թվականներին, հայերին անշատելով իրենց երկրից՝ հայրենիքից, Սադի Կոչաշը գրում էր. «Հայություն հասկացությունը» առաջացել է ոչ թե ցեղային, այլ կրոնական ընդհանրությունից»⁶ Այս նույն հեղինակը կանգ առնելով հայ Արշակունիների պատմության վրա, զարգացնելով իր այս միտքը, գրում է. «Այս պետությունը, թեկուզ և կոչվել է հայկական, սակայն ունեցել է խառնիճաղանց բնակչություն, իսկ Արշակունիներն էլ ունեն ասիական (իմա՝ թուրքական—Մ. Զ.) ծագում»:⁷

Մինչև 66 թ. Արտաշատի պայմանագրի կնքումը հռոմեական որևէ մի տիրապետության տակ չի գտնվել, իսկ 66 թ. պայմանագրով դառնում էր միայն Հռոմի դաշնակիցը: Հայաստանը Արտաշեսյանների ժամանակ ոչ թե «ավատատիրական մի իշխանություն էր», ինչպես ուզում է հավաստիացնել իր ընթերցողներին Ք. Գյուրյունը, այլ ընդարձակ մի թագավորություն: Նույն էր նաև պարագան Սոփիի թագավորության հետ:

Հայաստանի հին նախարարների մի մասը, հայտարարում է Ք. Գյուրյունը, ծագումով հայեր չէին. «Կամսարականները, — գրում է նա, — պարթևներ էին, Մամիկոնյանները եկել էին Միջին Ասիայից, Բագրատունիները հրեական ծագում ունեին, Արծրունիները ասորիներ էին, միայն Սյունեցիներն էին իսկական հայերը»:⁸

Հայերի հնագույն ու հին պատմության հարցերը համառոտակի շոշափվում են նաև Համիդ Կոչաշը մոտ: Հեղինակի հիմնական միտումը, ինչպես դա ժամանակին անում էին կսատ Ուրասն ու Սադի Կոչաշը, Հայաստանի աշխարհագրական հասկացություն լինելը ցույց տալն է:⁹ Նրա մոտ սովորական է «Հայաստան կոչեցյալ երկրամաս», տերմին օգտագործումը: Դեռևս 60-ական թվականներին, հայերին անշատելով իրենց երկրից՝ հայրենիքից, Սադի Կոչաշը գրում էր. «Հայություն հասկացությունը» առաջացել է ոչ թե ցեղային, այլ կրոնական ընդհանրությունից»¹⁰ Այս նույն հեղինակը կանգ առնելով հայ Արշակունիների պատմության վրա, զարգացնելով իր այս միտքը, գրում է. «Այս պետությունը, թեկուզ և կոչվել է հայկական, սակայն ունեցել է խառնիճաղանց բնակչություն, իսկ Արշակունիներն էլ ունեն ասիական (իմա՝ թուրքական—Մ. Զ.) ծագում»:¹¹

Նորագույն հեղինակներից մեկն էլ «Հայկական հարցը պատմության լույսի ներքո» աշխատության մեջ Պարթև Արշակունիներին նույնպես թուրքեր է համարում «Սակերը (իմա՝ սկյութացիները)», պարթևները... մաքուր թուրքեր են: Եվ թե ինչ զավեշտական ձևով է հեղինակն ապացուցում

¹ Նույն տեղում:

² Necdet Sevinc, Gaziantep te yer adları ve türk boyları, türk işaretleri Türk dünyası , 26, Ankara 1989,էջ 4:

³ Kâm ıuran Gürün, էջ 27:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 30:

⁶ Hamit Z. Koçayi, էջ 25-27:

⁷ Sadi Koças, էջ 28:

⁸ Նույն տեղում, էջ 28:

պարթևների թուրք լինելը, թող ընթերցողը ինքը դատի կարդալով հեղինակի հետևյալ բացատրությունը՝ պարքե բառն առաջացել է թուրքերեն պարտ (part) բառից... «որո՞նշանակում է փորը դուրս ցցված»:¹ Այնուհետև հեղինակը, հաշվի չնստելով պատմական որևէ սկզբնալրայուրի հետ, պարթևներին նույնացնում է թաթարների հետ:²

* * *

Հայ ժողովրդի վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության հարցերը շոշափելիս պանթուրքիստ պատմաբանները մեծ տեղ են հատկացնում հյուսիսային Կովկասից և հարավից՝ Իրանի վրայով սելջուկների արշավանքներից շատ առաջ այլևայլ թուրքական ցեղերի Անդրկովկաս ու Հայաստան ներթափանցմանը ու երկրի քաղաքական կյանքում իրեւ թե նրանց ունեցած հարաձուն դերին:

Հենց սկզբից քննարկենք այն հարցը, թե արդյո՞ք մինչև սելջուկների հանդես գալը, այսինքն՝ մինչև XI դարը, թուրքական ցեղերը զանգվածային ձևով մուտք են գործել Փոքր Ասիա և Անդրկովկաս ու, հետևաբար, թուրքացման ընթացքն այս երկրամասում սկսվել է դեռևս հին ժամանակներից, ասենք, սկսած մեր թվականության առաջին դարերից (ինչպես պնդում են մի շարք թուրք հեղինակներ), թե՝ այդ բոլոր լոկ անհիմն պնդումներ են:

Ընդունված է ասել, որ թուրքական ցեղերը Փոքր Ասիա և Բալկանյան թերակղու հյուսիս-արևելյան շրջաններն սկսեցին թափանցել սկսած IV դարից: IV-V դարերի բյուզանդական ժամանակագիրները խոսում են հոների թրակիայուց ու Փոքր Ասիայում երևալու մասին:³ VI դարի կեսերից նրանք խոսում են ավարների ու խաղարների մասին և այլն:⁴

Հետագայում, երբ արաբական թուրքացած խալիֆայությունը գործիք էր դարձել Միջին Ասիայից եկած թուրքական զինվորականության ձեռքին (VII դարից Միջին Ասիան

իաստորեն նվաճված էր արաբների կողմից), ապա վերջիններին խալիֆաթի կողմից իշտայի (ավատի) իրավունքով շնորհվեցին որոշ հողակտորներ Տարսոնի, Աղանայի, Մարաշի, Մալաթիայի, Խլաթի, Մանազկերտի և Էրզրումի շրջաններում:⁵ Նրանք իրենց ընտանիքներով տեղափոխված վարձկան զինվորականներ էին: Այս վայրերում երբեկցից զանգվածային թուրքական տարր չէր բնակեցվել: Այս հանգամանքը ստիպված է ընդունել նույնիսկ այնպիսի մոլեուանդ պանթուրքիստ, ինչպիսին Զ. Տոգանն է: Այսպես, նա գրում է. «Եթե հանրահայտ է հենց զինվորների գլուխն անցած որոշ թուրք էմիրների Աղրբեշան ու Անատոլիա գալը, ապա այս վայրերում թուրքերի հաստատվելու մասին եղած վկայությունները շափից դուրս քիչ են»,⁶ իսկ այնուհետև նույն Վ. Տոգանի բառերով ասած՝ «Միայն և միայն սելջուկների ժամանակ թուրքերը առաջին անգամ տեսվ-տեղով աղվորվեցին Անատոլիայում (ընդգծումը մերն է—Մ. Զ.)»:⁷

Զնայած այս հանրահայտ ճշմարտությանը, խորհրդային թուրքագետ Դ. Երեմեանը, ըստ երևոյթին գերազնահատելով խալիֆների մոտ ծառայության մտած թուրք զինվորական տարրի դերը Փոքր Ասիայում, IX դարն արդեն համարում է Փոքր Ասիայի թուրքացման սկիզբը: «IV—VII դարերի թուրքական տարրի թափանցումը Ասիա,— գրում է նա, — էականորեն տարրերվում է ավելի ուշ՝ VIII—X դարերի ներթափանցումից, որն անտարակույս, կրում էր ավելի զանգվածային բնույթ», որ իր այն ժամանակ «Անատոլիա են տեղափոխվել ամբողջ թուրքական ցեղերը»:⁸

¹ Léon Cahun, Introduction à l'histoire de l'Asie, էջ 152,
M. Yıldız, Türkiye tarihi, selçuklular devri, İstanbul, 1944, էջ 27:

² Zekî V. Togan, նույն տեղում, էջ 168.

³ Նույն տեղում, էջ 186—187: Մի փոքր ներքեւ Զ. Վ. Տոգանը այս նույն միտքը ընդգծում է հետևյալ կերպ. «Եթե հայտնի է մոտսուման թուրքերի բարսան նվաճումներին մասնակցելը Անատոլիայում, ապա ու մի վկայություն չկա այն մասին, որ նրանք այս տեղերում հաստատված լինեն: Արասան խալիֆայության ծառայությանը մտած Թարսոսի ու Ֆունդուկի (Կիլիկիա) որոշ թուրք էմիրների գործունեության մասին վերելու հիշատակեցի: Այս քաղաքները և զավաներում թուրք էմիրների հետ միասին թուրք բնակչության զայն ու տեղավորվելը հնարավոր է, սակայն նա շնանդիպեցի: այդ հանգամանքը վկայություն ունեցած պատմական մի փաստարքի (ընդգծումը մերն է—Մ. Զ.) Զekî V. Tog'an, նույն տեղում»:

⁴ Դ. Երեմեև, Էթնոգենез տորոկ, Մոսկվա, 1971 էջ 63.

¹ Cemal Anadol, էջ 17:

² Նույն տեղում:

³ Gy Moravcsik, Byzantino-turcica, Berlin.

⁴ Նույն տեղում, էջ 44, 105, //, 122, 355 և այլն:

Թուրքական զինվորական ուժը ծգտագործում էին ոչ միայն արարական խալիֆները, այլև բյուզանդական կայսրերը: Սակայն նահմանապահի (ակրիտ) դեր կատարող վարձկան այդ զորքերը մինչև Կոստանդին Սոնոմախ (1042—1054 թթ.) և Ալեքսեյ Կոմնենոս (1081—1118 թթ.) կայսրերը էական դեր շեն կատարել բյուզանդական բանակում: Միայն այս երկու կայսրերը պեղենեգներին տեղափոխում են արևմտյան Անտոլիա թուրք սելջուկների դեմ մղված պայքարում նրանց օգտագործելու նպատակով:¹ Բայց այստեղ խոսքը վերաբերում է XI դարին և ոչ թե IX դարին: Մեր կարծիքով, Պ. Երեմեկը գտնվում է արդի թուրք պատմաբան Մ. Ցընանիի (որի մասին առանձին կիսումի) ազդեցության տակ, և նրա դրույթը, թե փոքր Ասիայի թուրքացման պրոցեսը սկսել է VIII—IX դարերից, օրիեկտիվորեն չուր է լցնում պանթուրքիստ պատմաբանների շրադացին:

Թուրքերի նախապատմության հարցերով գրաղված ֆրանսիացի խոշոր արևելագետ Լեոն Կահունի մոտ ոչ մի խոսք չկա այն մասին, որ մինչև սելջուկները Փոքր Ասիայում ինչոր թուրքացման պրոցես ընթանար Խոսելով Բաղդատի խալիֆայության զինվորական կյանքում թուրք տարրի գնալով աճող դերի մասին, նա միայն նշում է, թե նման վիճակը հող էր նախապատրաստում սելջուկների արշավանքին: Այդքան միայն և դրանից ոչ ավելի:²

Թուրքերը կենտրոնական Ասիայից ու Հարավային Սիրիա էին: «Այն ավանդությունը, — գրում է նա, — թե թուրքերը նոյնից են սերում, մի շինծու առասպել է, առուց է լ. Կառհունը, որը խմբագրվել է ոչ հեռու անցյալում: Այդ հորինված առասպելը նպատակ է ունեցել ցույց տալու թուրքերի ազգակցությունը. Մերձավոր-Արևելքի երկրների ժողովուրդների հետ»:

Հնագույն ժամանակներից թուրքերի նախնիները ապրել են Զինաստանից հյուսիս ընկած շրջաններում: Զինացիները նրանց անվանել են «Հիոննուա» («ըմբոստ ստրուկներ»): Որպես ուազմատենչ ցեղեր, նրանք հաճախակի են հարձակվել Զինաստանի վրա: Զինաստանը ստիպված է եղել տարեկան

որոշ գումար տուրք վճարել իր հյուսիսի ուազմատենչ հարկաններին: Սակայն II դարի 30-ական թվականներից, շինական դիվանագիտության կաշառքի միջոցով հաջողվել է ճեղք առաջացնել «Հիոննուա» ցեղային միավորման մեջ ու հերթականությամբ զարդել նրանց:³ Այսպես է, որ առաջացել են ույղուրներ, որը նշանակելիս է եղել «Հապատակ», իսկ այլոք, որոնք փախչելով արևմուտք, «Հապատակված պավակեներ» անուն են ստացել: V դարի սկզբից կազմավորվում է արևմուտք մղված կենտրոնական Ասիայի ցեղերի մի նոր միավորում, որը պատմության մեջ հայտնի է հոներ անունով: Հոների միավորման մեջ մտնող ոչ բոլոր ցեղերն էին ծագումով թուրք: Ինչպես ընդգծում է լ. Կահունը, նրանց մեջ «...Կային էթնիկական այլ տարրեր, ինչպիսիք են՝ ուգրոֆինները, մեշերները (մաշար-Հունգարացիները) և այլն»:⁴ Համաձայն լ. Կահունի, իսկական թուրքեր էին էֆթալիտները (հիթաղները) շինացիների անվանած Թի-կեն:⁵ լ. Կահունի այս հայտնած կարծիքը գիտության զարգացման ներկա էտապում վերանայման կարիք ունի: Պարզվել է, որ էֆթալիտները (հիթաղները) նույնպես հնդեվրոպական իրանական ցեղեր էին: VI դարի վերջում, հոնական ցեղերը տեր էին դարձել ամբողջ Հյուսիսային Ասիային շինական մեծ պարսպից մինչև Դանուբը (Եվրոպա): Եթե այդպիսին էր Ասիայի հյուսիսում, ապա նրա հարավում՝ էֆտալիտներին երբեք էլ շհաջողվեց փշրել Սասանյանների համար դիմադրությունը, չնայած նրանց ունեցած առանձին հաջողություններին: Միայն արարական արշավանքները և մուսուլման արաբ միսիոներների շուրջ երկու հարյուր տարվա եռանդուն գործունեությունը բաց արեց Միջին Ասիայի արդեն համարյա ամբողջովին թյուրքացած տարրերի առաջ մուսուլմանական աշխարհի դռները՝ Խալիֆաթի զինվորական ծառայությանը մտած միջին ասիացի թուրքերը ընդունեցին իսլամի «ուղղափառ» ուղղությունը՝ սյունիզմը լոկ այն բանի համար, որ նա ուղղված էր շիա հրանի դեմ:⁶

IX—XI դարերում ամբողջ Միջին Ասիայի թյուրքախոս

¹ Նույն տեղում, էջ 88.

² Նույն տեղում, էջ 87:

³ Նույն տեղում, էջ 99:

⁴ Նույն տեղում, էջ 185 և շար.:

¹ Տես Léon Cahun, Խշած աշխա, էջ 167.
² Նույն տեղում, էջ 155:

ցեղերը ընկան արաբական մշակույթի ազդեցության տակ ու իսլամացան, իսկ Միջին Ասիայից դեպի Արևելք ընկած շրջաններում այդ ցեղերը շարունակեցին իրենց վրա կրել շինական մշակույթի ազդեցությունը և որոշ առումով խոր-թանալ Միջին Ասիայի իրենց արյունակից ցեղերից:

Մինչև այդ նրանք, Լ. Կահունի խոսքերով ասած՝ «...շրս-տեղեցին ո՞չ փիլիսոփայական մի վարդապետություն, ո՞չ էլ թողեցին արվեստի ու գրականության որևէ աշխի ընկ-նող մի կոթող»:¹ Այսօր էլ նրանց պատմությունը գրվում է շինական, պարսկական, հայկական ու բյուզանդական աղ-բյուրների հիման վրա: «Նրանք պատերազմից էին ծնվել ու նվաճումների համար էին կազմակերպված միայն», — ասում է Լ. Կահունը: Արդի թուրք պատմաբաններից՝ Նամիկ Օր-կունը իր հերթին գրում է, որ թուրքերը գրական որևէ մի խո-շոր հուշարձան չեն թողել. «Թուրքը կերտել է պատմությունը, սակայն չի գրել: Այդ իսկ պատմառով թուրքերի պատմու-թյան աղբյուրներն ստիպված ենք ամբողջությամբ փնտրել օտարների մոտ»:² Հիրավի, վերջին տարիներին թուրք պատ-մագրությունը հայերենից թուրքերեն է թարգմանել մի շարք հայկական սկզբնաղբյուրներ, դրանց թվում՝ Կիրակոս Գան-դակեցի, Մատթեոս Ուռհայեցի, Թովմա Սեծուիցեցի, Մ. Կաղանկատվացի, Սամվել Անեցի, Մաղաքիա արեղա, Կաղանկատվացի, Սամվել Անեցի, Մաղաքիա արեղա, Սիրայի Չամ-Մբատ Գունդըստարլ, Արրահամ երևանցի, Միքայել Չամ- շյան և այլն: Սրանց մի մասը հրատարակվել են արդեն, իսկ մյուսը՝ հրատարակվելու են:³

Թե այս բոլորից հետո ի՞նչ արժեք կարող են ունենալ արդի թուրք պատմագրության ներկայացուցիչները Փոքր Ասիայի, Հայաստանի ու Անդրկովկասի սելչուկներից առաջ թուրքացման մասին առաջ քաշված անհիմն պնդումները, ընթերցողն ինքը կդատի: Սակայն, այնուամենայնիվ, լսենք նրանց:

Մ. թ. III դարում, ինչպես դա նախորդ դարերում էր, նորանոր «Թուրքական» ցեղերը, ըստ Ֆ. Կրգիողուսի երև-

կայության, շարունակում են թափանցել Անդրկովկաս ու Հայաստան:⁴ Այս դարում, գրում է նա, կուտափի ու Մուշի շրջակայքն ամբողջությամբ թուրքացվում է: Զմոռանանք, որ մի ժամանակ հեղինակն Ալբանիան այստեղ էր տեղադրում: Այս շրջանը դառնում է արևելյան թուրքեստանից՝ Զինաս-տանից եկած Մամիկ ու Կոնակ կոչված երկու թուրք (sic!) իշխանազունների կալվածքը: Այստեղ նա վկայակողում է Մ. Խորենացու «Եթե ուստի և զիարդ ազգ Մամիկոնէից» վեր-նագրի տակ եղած այն վկայությունը, թե իշխանազուն երկու եղբայրներ՝ Բղդոի և Մամգուն, եկել են ոհ ճենացնա:⁵ Սերե-սուից (ուստեղին թարգմանություն) մեջ է բերվում այն տե-ղեկությունը, թե Զինաստանից եկած երկու եղբայրները ան-վանվում են Մամիկ և Կոնակ:⁶ «Դա ավելի ճիշտ պետք է համարել, — գրում է Ֆ. Կրգիողուսի: Այս երկու եղբայրները «Թեղե-Կորկուդ»-ում անվանվում են «Կոնակ բեգ» կամ «Կա-րակոնա»: Ֆ. Կրգիողուսի ավելացնում է ևս մի «կ» և դարձ-նում Կարա Կոնակ: Նրանց երկիրն Արևելյան Անատոլիայում կոչվում էր Տարոն-Տուրուքերան, որը պետք է հասկանալ՝ Տարոն Դուրուքերան կամ Բարան-յուրգու, Բարանի երկիր և կամ ուղղակի Բարանլու՝ Կարակոյունլու: Ահա այսպես, հեղինակը կատարելով նորանոր «գյուտեր», Տարոնի հայ-բնակչության մեջ տեսնում է XV դարում այստեղ հաստատ-ված կարա-կոյունլու թուրքմենների նախահայրերին:⁷

Պանթուրքիզմը այն աստիճան համակում է Ֆ. Կրգիող- լուին, որ նա հայոց լեզուն նույնպես թուրքերեն է համարում՝ Սակայն ի՞նչպես բացարել հայոց լեզվի հնդեվրոպական լինելը: Ֆ. Կրգիողուսի գտնում է «Ելքը»: Հայոց լեզվի մեջ հնդեվրոպական արմատների գոյության պատճառն այն է, ասում է նա, որ տառերի գյուտը տեղի ունեցավ Արշակուն-յաց պետության քաղաքական անկախության վերացման ու Պարսկաստանի գերիշխանության հաստատման պայմաննե-րում: Այլ կերպ ասած, պարսիկները բռնի միջոցներով լեզ- վափուն են արել օղուզ թուրքերին:⁸ Մեսրոպ Մաշտոցը ինքը մի

¹ Նույն տեղում, էջ 6:

² Hüseyin Namik Orkun, Türk tarihi, Ankara, 1946, էջ 5:

³ Այս տվյալները մենք վերցրել ենք Թուրքական պատմագրության

/// համագումարում (1943 թ.) կոնգրեսում ընկերության գլխավոր քար- տուղար պրոֆ. Մուզաֆիք Գյոկերի ունեցած զեկուցչից (տես III ՏՏ էջ 20):

¹ «Kars tarihi», էջ 163—168:

² Մ. Խորենացի, էջ 221—223:

³ «История епископа Себеоса» пер. Ст. Малхасяна. Ереван, 1979, էջ 19:

⁴ «Kars tarihi», էջ 169:

⁵ Նույն տեղում, էջ 848:

Թուրք գիտնական էր, առանց ամաշելու գրում է նա, քանի որ ծնվել էր Տարոն գավառի Հացեկաց գյուղում (չէ՞ որ Մուշի-Խելաթի շրջակայքը, ինչպես տեսանք, ըստ Ֆ. Կըրզիողլուի, ամբողջությամբ բնակեցված էր կարա-կոյունլու թուրքմեններով):¹ Ընթե աշխի առաջ ունենանք Արշակունիների և III դարուց վանա լճի հյուսիս-արևմուտքում գտնվող Տարոն (Մուշ-Խելաթ) գավառում հաստատված Մամիկոնյանների թուրք լինելը, ապա լինի գրաբարում, լինի ևմեսրոպյան այրութենում թրբության հետքեր փնտրելը միանգամայն տեղին էս:² Ական շատ հանգամանքներ ենթադրելու,— շարունակում է նա, — որ այս տառերը կարակոյունլուների հետ բերվել են Տարոն և Հոների շեղագիր տառերից են ստեղծվելու:³ Ապա նաև՝ հայերեն տառերի «ծագման» հարցում հաշվի պիտի առնել այն,— բերում է նա մի ապշեցուցիչ փաստարկ ևս,— որ սուրբ Մեսրոպին այրութենի դասավորման ժամանակ օգնել է սուրբ Սահակը, որի պապը՝ կարա-կոյունլուների ցեղից՝ 250 թ. Զինաստանից (Կաշկարյան երկիր) այստեղ գաղթած Անակն էրու:⁴

Այսպես ձյունագունդը գլորվելով ավելի ու ավելի է աճում: Ամբողջ IV-V դարերում հայ ժողովրդի հերոսական պայքարը Սասանյան իրանի դեմ Ֆ. Կըրզիողլուի մոտ փոխարինվում է «Հին օգուզների մղած պայքարով»:⁵

Վարդան Մամիկոնյանը, տեսեք, ոչ թե հայերի, այլ թուրքերի ժողովրդական հերոսն է: Կարա-կոյունլու դյուցազն Վարդանը հենց ինքը առասպելական Քյոռողլին է,— գրում է նա: V դարի Սասանյան Պարսկաստանի դիմ ուղղված ժողովրդապարագական շարժումները «... ըստ երեսութիւնի պատճառ են դարձել օգուզների կողմից Քյոռողլու վիպերքի ժնունդին», — եզրակացնում է նա: Ավելորդ է այստեղ կանգ առնել նման անհեթեթությունների հերքման վրա: Կարելի է միայն հիշեցնել նրան, որ նույնիսկ թուրք պատմագրու-

թյան III համագումարում Պ. Հ. Բորատավը իր «Քյոռողլին որպես պատմական դեմք» զեկուցման մեջ շեշտում էր, որ Քյոռողլին հանդես է եկել XVI դարի վերջին և եղել է շալալիների ականավոր զեկավարներից մեկը:¹

Ֆ. Կըրզիողլուն դրանով էլ չի բավարարվում: Նա առհասարակ չի ուզում ընդունել «Հայաստան» երկիրը, իսկ եթե ստիպված գործ է ածում «Էրմենիկ» («Հայաստան») անունը, ապա անմիշապես կողքին դնում է հավասարության նշանը՝ «Օղուզների երկիր» Երտերուցուցիչը ուղարկում է այս պատմարիմ ինքն իրեն, նա գրում է, թե 604 թ. բյուզանդացիները Հայաստանը վարչականորեն բաժանել էին Վերին և Ստորին Հայքի, որը պետք է հասկանալ «իշողուց» (արևմուտքում) և «թաշ» (դըշ)-օղուց» (արևելքում):² Թե այդ բոլորը ինչ «գիտական» արժեք ունեն, խոսեցինք արդեն: Այս փաստը ևս անհրաժեշտ համարեցինք բերել, որպեսի ընթերցողը ավելի լավ հասկանա Ֆ. Կըրզիողլուն: Այս բոլորը, կնկատի ընթերցողը, ծայրահեղ պանթուրքիստ Ֆ. Կըրզիողլուի «տեկակետներն» են: Ինչպես են մեկնարանված վերոհիշյալ հարցերը իրենց ռանաշառու անվանող «գիտության» անունից հանդես եկող արդի թուրք պատմագրության մյուս ներկայացուցիչների մոտ: Լսենք նրանց: «Այսուհանդերձ պետք է խստորեն նկատի ունենալ այն— գրում է Զ. Օզկայան,— որ Գրիգորյան եկեղեցուն հետևողներից ոչ բոլորն էին հայեր առհասարակ: Սակայն քանի որ նրա (Հայեկեղեցու— Մ. Զ.) աթոռը գտնվում էր էջմիածնում, ուր այս ժամանակ խոսում էին «հայերեն», իսկ այնուհետև արմենական» կոչված մի լեզու, որն առաջացել էր ասիանիկ մեդական, ուրարտական» սկյութական լեզուների խառնութղից, պարսկերեն լեզվից, այս եկեղեցին նույնպես անվանեցին հայկական կամ արմենական, չնայած նրա հիմնադիրը և առաջին հովվապետերը եղել են՝ ոչ էլ նույնիսկ՝

¹ Նույն տեղում, էջ 187—188.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում: Զեքի Վ. Տողանը, հակառակ Ֆ. Կըրզիողլու կարծիքի, գտնում է, որ Հոների (հեթաքրյալ թորաքիր — Մ. Զ.) այսպես կոչված Թոթանյան այրութենքը Առաջից է բրգի Մերքին Ասիք (առել Զեքի Վ. Տօղան, նույն տեղում, էջ 49):

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 190—198:

¹ *Sab Pertev Nallı Boratav*, Körüğün tarihi şahsiyeti, III, TTK, էջ 124—130.

² «Kars tarihi» էջ 202—203: Այս նույն դրույթները ևս մի անգամ Ֆ. Կըրզիողլու զարգացնում է «Belleten»-ի 1986 թ. վերջին համարում մեր արդեն մատնաշած հոգվածում: Հետեւող Ֆ. Կըրզիողլուն և այլ պահպաժիստ պատմարանների, նման անհեթեթ պնդումները հանդես է գալիս նաև առքեցանի պատմարան Ա. Ակիյարովը (առել *Dag'lik Karabag'*, Ankara, 1989, ss. 33—42).

արժեններ: Ուստի Վանի, Թիթլիսի բնակիչները, որոնք ասիանիկ, ուրարտացի և նրանց հետ միախառնված մեղացիներ, սակեր, խաթեր էին, ընդունելով քրիստոնեությունը և ենթարկվելով Գրիգորյան եկեղեցոն, պաշտամունքի անհրաժեշտությամբ, ստիպված եղան սովորել այն լեզուն, որով խոսում էին էջմիածնում, և նրանց մեջ գտնվեցին այնպիսիները, որոնք ժամանակի ընթացքում մոռացան իրենց նախնիների (Հեղինակի երևակայությամբ, թուրքերի) լեզուն:¹ Այս հարցերում ավելի հեռուն է գնում Ք. Գյուրյունը: «Մեր օրերում,— գրում է նա,— հայերը, որպեսզի ապացուցեն, թե իրենք գոյություն ունեն որպես ազգ, առաջ են քաշում երկու կովան՝ կրոնն ու լեզուն: Սակայն հայտնի է, որ կրոնը մի ազգի որոշիչ կովանը չի կարող հանդիսանալ: Տարբեր ազգություններ կարող են միևնույն կրոնը դավանել և հակառակ՝ տարբեր կրոններ որոշ ժողովուրդների մոտ կարող են համագոյացել: Ինչ վերաբերում է լեզվին, այստեղ հարթը վերաբերում է մի խնդրի, որը ժամանակի ընթացքում զարգանում է: Կարելի՞ է պնդել, որ փոյութիւնը կարող է աստատվելու Հայաստանում, խոսում էին ժամանակից հայերենով: Ավելի ճիշտ չէր լինի ենթադրել, որ այսօրվա հայերենը դարերի ընթացքում այս երկրուահամատեղ ապրած տարբեր համայնքների բարբառների խառնուրդն է: Այսպես՝ Բուլղարիայում այսօր խոսվող լեզուն ընդհանուր ոչինչ չունի այն բուլղարերենի հետ, որ բուլղարները խոսում էին, երբ նրանք եկան հաստատվելու Դանութի հարավում»:²

Այս բոլոր անհիմն պնդումների բուն նպատակը. Հեղինակը բացահայտում է հետևյալ տողերում. «Կարձ՝ անկասկած սխալված շնչնք լինի, եթե ասենք, որ շատ գրքեր, որոնք հավակնում են ուրվագծելու հայոց պատմությունը, իրականության մեջ առանձին ավատական իշխանությունների պատմություն է, որի մասին որոշակի ոչինչ չգիտենք»,³ այլ կերպ ասած հայոց պատմությունը գոյություն չունի, քանի որ առանձին իշխանություններ ծագումով... թուրքեր են:

¹ Cemal Ozkaya, էջ 30:

² Kâmitan Gûrün, էջ 33:

³ Նույն տեղում, էջ 33—34:

Արարական տիրապետության ժամանակաշրջանի պատմության հարցերը շոշափելիս արդի թուրք պատմագուրության ներկայացուցիչների բացատրությունների համար բնորոշ են պանթուրքիզմը, պանխւալմիզմը, շաղախված կեղծիքով և հակասական դրույթներով:

Բագրատունիները ևս թուրքեր էին՝ և շատ մոտ կանգնած սելջուկներին, նրանց և սելջուկների թողած ճարտարապետական հուշարձանների միջև կան շատ ընդհանուր կողմեր, — գրում է Ֆ. Կրգիովուն, — «մոռանալով», որ գոյություն ունի այնպիսի երևույթ, ինչպիսին է մշակույթների փոխազդեցությունը և որ նշված ընդհանուրությունը բխում էր նաև նրանից, որ փոքրասիական սելջուկների թողած ճարտարապետական հուշարձանների հեղինակները իրենք հայերն էին:² Այս ուղղությամբ հայտնի է գիտական աշխարհին ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ուսումնասիրությունը այսպես կոչված սելջուկյան արքստի խնդրի լուսաբանման հարցի շուրջը: Այդ փոքրածավալ, սակայն խիստ արծեքավոր հողվածում, Հ. Օրբելին որպես խոշոր արվեստագետ ու պատմաբան ցույց է տալիս, որ փոքրասիական սելջուկյան սուլթանության մայրաքաղաքը հանդիսացող հկոնիայի ճարտարապետական հոյակապ հուշարձանները հայ ճարտարապետների ու վարպետների ստեղծագործություններ էին:³ Այդ հուշարձանների պատերի վրա արաբատառ փորագրված են հայ մարդկանց անունները: «Սելջուկյան արքստի համար բնորոշ ճարտարապետական կոթողները իրենց վրա կրում են ոչ միայն հայկական և վրացական եկեղեցական ճարտարապետական կառույցների ձևերը, այլ նրանց ուղղակի փոխադրումն են»՝, — գրում է Հ. Օրբելին: Այնուհետև, «...Որևէ մի հիմք չկա Կովկասի և Փոքր Ասիայի հին հայկական մարզերի սելջուկյան հուշարձանները գիտել որևէ տեղից եկած և արվեստի նոր ձևեր բերած վարպետների ստեղծագործության արդյունք: Ունենալով քոչվորական մշակույթ, եկվորները

¹ «Ապացուցներից» մեկն էլ այն է, որ Բագրատունի Հայոց Գագիկ թագավորը ներկայացված է մուսուլմանական շալմայով, (« Kars farisi էլ 296»):

² Յ. Ա. Գործևսկի, Գосударство сельджуков Малой Азии, էջ 103:

³ Ի. Ա. Օրբели, Проблема сельджукского искусства, И. Ա. Орбели, ибр. труды, Ереван, 1963, էջ 364:

չեին կարող իրենց հետ բերել ճարտարապետություն քարի վրա, ոչ ուժերի ստեղծագործական լարում, որպեսզի կարողանային քարի վրա մշակել շինարարական արվեստի ու զարդարվեստի նոր ձևեր»:¹

Թագրատունիներին հայտարարելով թուրքեր, Ֆ. Կրպիօղուն ինքն էլ չի հավատում իր գրածին: Դա պարզ նկատվում է, երբ նա շարադրում է հայերի պայքարի դրվագները Աստրափականի (Աղրբեշանի) արար էմիրների դեմ: Հեղինակի ամբողջ համակրանքը էմիրներ Աֆշինի, Յուսուֆի և այլոց կողմն է, հայերի կրուծ ամեն մի պարտություն ուրախություն է պատճառում նրան: Նա ամեն կերպ ձգտում է նսեմացնել թագրատունյաց թագավորության ունեցած քաղաքական նշանակությունը, ինչպես դա տեսանք նաև Տիգրան II-ի դեպքում: Պատճառներն էլ նույնն են: «Որ դա թույլ ու ինքնուրույնությունից զուրկ մի պետություն էր, — գրում է նա: — երեսում է այն փաստերից, որ հայ և վրաց թագավորները չեին կտրել սեփական դրամներ»:² 1982 թ. հրատարակած «Անի քաղաքի պատմությունը» վերնագրով աշխատության մեջ Ֆ. Կրպիօղուն այլևս կարծեք չի համարձակվում թագրատունիներին թուրքեր հայտարարել, սակայն այդ գըրքում էլ, որը հիմնականում նվիրված է սելջուկ նվաճողներ Զաքըր բեգի, Տուրքի բեգի, Ալփ Արսլանի ու այլոց գործունեության փառաբանմանը, նա դիմում է այլ բնույթի կեղծիքների: Մեղադրելով հայերին XIX դարի վերջին Անիի մուսուլմանական բազմաթիվ հուշարձանների ողնչացման մեջ,³ հնդինակը փորձում է ընթերցողներին հավաստիացնել, որ այդ հուշարձանները թվով գերազանցում էին հայկական հուշարձաններին: Հասկանալի պատճառներով, հեղինակի մոտ ոչ մի խոսք չկա սելջուկ: Թուրքերի Հայաստանում կատարած ավերածությունների ու հայ ողղովդի ճակատագրի համար նրանց արշավանքների աղետարեր հետևանքների մասին:

Զհանդգնելով հանդերձ թագրատունիներին հայտարարելու «թուրքեր», ինչպես դա անում է Ֆ. Կրպիօղուն, արդի թուրք

պատմագրության մյուս ներկայացուցիչները դիմում են այլ բնույթի կեղծիքների: Լսենք դարձլաւ Զ. Օզկայային: Նրա համար արարները հայերին բերել են «գրկություն» բյուզանդական և սասանյան լծից, և հայերը բոլոր դեպքերում հանգես են եկել որպես ապերախտ դավաճաններ, «մուսուլմանները բոլոր բրիստոնյանների նկատմամբ ավելի լավ վերաբերմունք ունեին, քան մազղեականները (իմա՝ սասանյանները — Մ. Զ.), քանզի նրանց դիտում էին որպես դաշնակիցներ ամեն տեսակի հեթանոսության ու կոապաշտության դեմ, սակայն երբ ամենափոքր առիթ էր ներկայանում, հարձակվում էին մուսուլմանների վրա ու սպանում նրանց: Նըրանք չեին դադարում իրենց նախկին հալածողներ՝ բյուզանդացիներին օգնության դիմելու»: Այսպիսով, արարները, — շարունակում է հեղինակը, — իրենց վեհանձն վերաբերմունքի փոխարեն, որպես պատասխան տեսան միայն գավաճառություն»:⁴

Թագրատունյաց թագավորությունը սոսկ մի իշխանություն էր: — գործ է մեր օրերում Ք. Գյուրյունը, — որը բոլորովին չէր վկայում, որ արարական տիրապետությունը վերացել էր: Թագրատունյաց թագավորության հաստատումը, կարդում ենք նրա մոտ «...բոլորովին էլ վերջ չէր դնում երկրում արարական գերիշխանությանը: Սակայն 83 թվականից հետո, առաջին անգամ նա Հայաստանի ղեկավարությունում աեսնում էր մի հայ իշխանի»:⁵

Զ. Օզկայան: և Գ. Գյուրյունը ձգտում են իրենց ընթերցողներին հավաստիացնել, որ թագրատունյաց հարստության գրաված տարածքը սահմանափակվում էր միայն երևանի և Անիի շրջակայքով: «Աշոտը թաղդատի Խալիֆի շնորհիվ ստանալով Երևանի և Անիի ինքնավարությունը՝ իր բարեգործի ու տիրակալի նկատմամբ երախտագիտությունը հատուցեց մեկնելով Կոստանդինոպոլիս ու համաձայնվելով կայսեր հետ իրեն և հայ ժողովրդին բազմաթիվ անգամ նույն այս բյուզանդացիների բռնապետությունից ազատագրած խալիֆաթի ու Խալամի դեմ դավաճանության միջոցների

¹ Cemal Özkaya, էջ 30:

² Առաջնական տեղում, էջ 31:

³ Kâmurân Gûrûn, էջ 31:

¹ Ա. Օրբելի, նույն տեղում, էջ 307:

² «Kars tarihi», էջ 296:

³ F. Kirzioğlu, Anı şehri tarihi, Ankara, 1982, էջ 5 և այլն:

չուրջը»:¹ Զ. Օղկայան և Գ. Գյուրյունը ընդգծված ձեռվ շեշտում են, որ թագրատունիների ժամանակ ավատատիրական երկպառակությունները իր վկայում են այն մասին, թե Հայերը պատրաստ ու ունակ չէին ինքնուրույն պետություն ունենալու,² «մոռանալով», որ ավատատիրական մասնատվածությունը և կենտրոնախույս ուժերի առկայությունը միշտադարի ցանկացած ավատատիրական հասարակության բնորոշ կողմն է, և որ ալդախի օրինակներ շատ կարելի է բերել հենց Օսմանյան կայսրության պատմությունից»:

Արդ՝ անդրադառնանք մի կարևոր հարցի, որն առաջ են քաշում ոչ միայն Ֆ. Կրգիողուն, այլև շատ ուրիշ թուրք պատմաբաններ: Դա խազարների, զփշաղների մուտքն է Անդրկովկաս ու Հայաստան, սրանց մի մասի հաստատվելն է այս երկրամասում ու երկրի էթնիկական կերպարանափոխման մեջ էական դեր խաղալու հարցը:

Ինչպես հայտնի է, VIII դարի սկզբից խազարների և Անդրկովկասը նվաճած արաբների միջև սկսվեց երկարատև զատերազմների մի ժամանակաշրջան: Այդ պատերազմները հաճախ տեղի էին ունենում բյուզանդական կայսրերի դրուժամբ: Իր գլխավոր թշնամու՝ արաբների դեմ պայքարուած Յուլանդիային խիստ անհրաժեշտ էր ունենալ նման դաշնակիցներ՝ ինչպիսիք էին վաշկատուն, ուզմատենչ խազարները:

Առաջին անգամ, դեռևս խալիֆ Օմարի (717—790) ժամանակ, խազարները կազմակերպեցին խոշոր արշավանք դեպի Աղվանք և Ատրպատական,² 722—723 թվականներին խազարները, զփշաղների հետ միասին նորից մուտք գործեցին Անդրկովկաս և Հայաստան, սակայն 40000-ոց նրանեցորդը Խականի որդի Բարչիկի գլխավորությամբ գլխովին շախչախվեց արաբների կողմից ու հետ շպրտվեց:³ 730/731 թվականներին խազարների 300.000-ոց (sic!) բանակը նույն Բարչիկի գլխավորությամբ հրով ու սրով կրկին արշավեց արաբների վրա:⁴ Վանա լճի մոտ արաբները արյունահեղ

հակատամարտում շարդեցին խազարներին ու հետ շպրտեցին նրանց:⁵ Վերջին անգամ խազարա-արաբական պատերազմներ Անդրկովկասում տեղի ունեցան 796—797 թվականներին:⁶ Ի վերջո՝ Խալիֆ Հարուն-ալ-Ռաշիդի և խազարների միջև կնքվեց խաղաղություն և դաշինք:

Զկա սակայն պատմական որևէ մի փաստ, որը վկայեր այն մասին, թե խազարները այս արշավանքների ընթացքում հաստատվել են այս երկրում: Այդ արշավանքները խազարների կողմից կատարվում էին մեծ մասամբ ավարառության ու կողոպուտի նպատակով:

Սակայն Ֆ. Կրգիողուն և մի շարք այլ պատմաբաններ այս փաստերից իրենց պանթուրքիստական տեսությունների համար անույն են հեռու գնացող եղանակացություններ: Խազարները «Տեր դառնալով Քուր գետի ամբողջ երկայնքին, — գրում է Ֆ. Կրգիողուն, — ...Բագրատունիների երկրում մեծ փոփոխությունների ճանապարհ հարթեցին»:⁷

Ահա և Ֆ. Կրգիողույան մի ուրիշ «գյուտ»: Ըստ նրա VII դարի սկզբում Հյուսիսային Կովկասից Անդրկովկաս են ներխուժում թուրքական սարիր ցեղերը, որոնք հաստատվում են հատկապես Աղվանքում, ու երկրամասի վրա թողնում իրենց էթնոնիմը, այսինքն սարիր նախնական ձևը տվել է Սարիրան կամ Շարիրան — Շարեվան — Շերվան — Շիրվան:⁸ Թուրք պատմաբան Հյուսեյին Համբկ Օկունը հատուկ ընդգծում է, որ Աղրբեզանը ի սկզբանե բնակեցված է եղել թուրքերով. «Աղրբեզանը հին մի թուրքական երկիր է, — գրում է նա, — սկսած հոներից այստեղ եկել են տարբեր թուրք ժողովուրդներ և վերջապես սելջուկները, այսինքն՝ օղուզներն են հաստատվելու»:⁹

Այս մտանությանը տուրք է տալիս և հայատյաց պատմաբան Զիյա Բունիաթովը: Նրա կարծիքով սխալվում են այն հեղինակները, որոնք կարծում են, թե Աղրբեզանի թուրքացումը սկսվել է միայն XI դարից, այսինքն սելջուկների

¹ Cemal Özkaya, էջ 33:

² M. Kmosko, Araplar ve Hazarlılar. Türkîyet mecmuası, III. İstanbul, 1935, էջ 135—136.

³ Зия Буняятов, Азербайджан в VII—IX в. в., էջ 110:

⁴ Նույն տեղում,

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 115:

³ «Kars tarili», էջ 348:

⁴ Նույն տեղում, էջ 127:

⁵ Տես Hüseyin Namik Orkun, Türk tarihi, III, Ankara, 1946, էջ 94:

արշավանքից հետո, «Քանի որ ավալ դեպքում առածավանք են տեղական բարեկամ ցեղերի սպար զանգվածները» (ընդգծումը մերն է — Մ. Զ.),¹

* * *

Առաջ անցնենք. Ահա և XI դարը՝ թուրք-սեղուկների Փոքր Ասիա ներթափանցման ժամանակաշրջանը: Համաձայն Ֆ. Կողօղովի և մի շարք այլ պանթուրքիստ պատմաբանների, թուրք-սեղուկները եկան Փոքր Ասիա ու գրկախառնվեցին այստեղ իրենց «Թուրք» եզրայրների հետ: Դարձյալ պարզունակ կեղծիք: «Եթե արշավող թուրք-սեղուկ հորդաների ու քրիստոնյա օղուզների» (իմա՝ Հայերի՝ Մ. Զ.) միշտ ուժական ընդհարումներ տեղի են ունեցել, ապա դա եղել է անգիտակցաբար, չիմանալով, որ երկու կողմն էլ նոյն թուրք ցեղից ենք:²— գրում է Ֆ. Կողօղովուն:

Ահա և մի ուրիշը: Եթե Մամիկոնյանները կարա-կոյուն-լուների նախանձներն են, ապա Պահլավունիները՝ ակ-կոյուն-լուների: «Թուրք» մեծ գիտնական Գրիգոր Մագիստրոս բեկը (sic) և Դիարրեքիրում հաստատված Պահլավունիները, հետագայում ընդունելով մուսուլմանությունը, հիմք գրեցին ակ-կոյունլու թուրքմենական պետությանը:³ Սա մի այլանդակ կեղծիք է, որի հերքումն իսկ վիրավորական կլիներ գիտության համար:

Այժմ տեսնենք, թե ինչպես են լուսաբանվում սեղուկների ժամանակաշրջանի Հայոց պատմությունը մյուս Հեղինակների մոտ: Այդ հարցին, ինչպես ասվեց, մի ստվարածավալ մենագրություն է Նվիրել Մ. Ցընանը: Ճշմարտությունը պահանջում է ասել, որ Մ. Ցընանը, ինչպես և Զ. Վ. Տողանը Համամիտ են այն հարցում, որ թուրքերը Փոքր Ասիայում հիմնվին տեղավորվում են միայն XI դարից հետո, շմոռանմք, սակայն, որ երկուսն էլ խեթերին նախաթուրքեր են համարում: Մի ուրիշ հեղինակ՝ Հյուսեյին Նամրկ Օրկունը⁴ նույնպես գրում է, թե «Անատոլիայի թուրքերի

ձեռքն անցնելը սկսվում է 1071 թվականի Մանազկերտի հակատամարտով: Թուրքերի այս նաղրանակից հետո Անատոլիան բացվեց թուրք հորդաների առաջ: Այսքանը լավ: Մասնագետի համբավ վայելող Մ. Ցընանը մոտ կան էական, սկզբունքային նշանակություն ունեցող այլ բնույթի կեղծիքներ, որոնց հարկ է այստեղ անդրադառնալ: Իր աշխատության մեջ Մ. Ցընանը առաջ է քաշում այն «տեսությունը», թե Հայկական աղբյուրների վկայությունները սեղուկ հորդաների կատարած վայրագությունների, զանգվածային կոտորածների, քաղաքների ու գյուղերի ավերման մասին չեն համապատասխանում, իբր, պատմական իրականությանը:⁵

Նա փառաբանում է սուլթան Ալփ-Արսլանին, համարելով նրանց Հայոց «փրկիչ», «Անատոլիայում թուրքական պետության հիմնադրումից քիչ հետո,— գրում է Մ. Ցընանը,— տեղացի ժողովուրդը (իմա՝ Հայերը) եկվոր նվաճողներին ու նրանց նոր հիմնադրած պետականությանը ապավինել են ու երբեք չեն ապստամքել: Դրա գլխավոր պատճառներից մեկը պիտի փնտրել բյուզանդացիների վարած հալածողական քաղաքականության մեջ»:⁶ Մի քիչ ներքեւ, դարձյալ անդրադառնալով սեղուկ-թուրքերի հայերի հանդեպ ունեցած «փրկարար» գերին Մ. Ցընանը գրում է. «Ահա այս պատճառների հետևանքով (նկատի ունի Հայ-Բյուզանդական դավանաբանական վեճերը — Մ. Զ.), Հայերը, ճիշտ է, սկզբում փախչում էին նվաճողներից, սակայն կենտրոնական Անատոլիայի նվաճումից հետո, նրանք թուրքերին նայում էին ուղղակի: որպես փրկարարներ և ոչ միայն չեին դիմադրում նրանց, այս առիթի դեպքում չեին խուսափում նրանց օգնելուց»:⁷

1. M. Yıldancı, Խոյին տեղում, էջ 178—181:

2. Նոյն տեղում, էջ 165:

3. Նոյն տեղում, էջ 180: Մի այլ տեղ, սակայն, Մ. Ցընանը հերթում է իրեն իրեն, սաելով. Սուլթանն Ալփ-Արսլանը ոչ միայն Թուրքիայի, այլև Համաշխարհային պատմության ամենամեծ մարդկանցից մեկն էր: Կարծեատե իր իշխանության տարիներին նա գրել է մեր ազգային պատմության ամենակարենը էշերը: Նրա դեպի Կովկաս և Արևելյան Անատոլիա թան ամենակարենը էշերը: Նրա դեպի Կովկաս և Արևելյան Անատոլիայի զաղթերի հարավային Անատոլիա (նկատի ունի Միջազգետքը — Մ. Զ.): և յից զեպի հարավային Անատոլիա (նկատի ունի Միջազգետքը — Մ. Զ.): և հատկապես Կիլիկիա (նոյն տեղում, էջ 84):

¹ Յան Բոնյատօն, Խ. աշխ., էջ 179.

² Kars tarımı, էջ 400:

³ Նոյն տեղում, էջ 218:

⁴ Nüseyîn Namîk Orkun, Târikîye tarîhi, III, էջ 5.

Այս բոլորից հետո սելջուկների մասին հայ աղբյուրների վկալությունները, և դրանց հիման վրա եվրոպական լեզուներով գրված աշխատությունները միանգամայն արժեքագրկում են, հայտարարում է Մ. Ցընանչը: «XVIII դարից մինչև մեր օրերը բյուզանդական կայսրության ու հայ ժողովրդի պատմությամբ զբաղվող մի շարք եվրոպացի պատմաբաններ պնդել են, թե իր թուրքական նվաճումների հետևանքով Անատոլիայի տեղական բնակչության մի մասը վայրագորեն ոշնչացվել է: Հին հայ պատմագիրների շափականցված և կողմնակալ վկայությունների ազդեցության տակ և իր հաղորդած տեղեկություններում հաճախ աղբյուրները մատնացուց շանող, թուրքերի հասցեին սարսափելի լեզու օգտագործող և հետին նպատակներով հերյուրանքների դիմող XVIII դարի հայ պատմաբան Զամշյանի առասպելներին հավատացող այս պատմաբանների տված տեղեկությունները չի կարելի որպես իրականություն ընդունել: Այս առասպելների աղբյուրը հանդիսացող հին հայ պատմագիրների տեղեկությունները թե՛ հայկական իրենց տեքստերը ուսումնասիրելու տեսակետից, թե՛ նվաճման ժամանակ VII դարի իսլամական հասարակության հոգեկան և հասարակական վիճակն ու գաղափարախոսությունը նկատի ունենալու տեսակետից, ամբողջովին հերքվում են: Դեպի Անատոլիա կատարված առաջին արշավանքների ժամանակ, իրոք, տեղի են ունեցել մի շարք ահել մարտեր, որոնց հետևանքով ուղմական նշանակություն ունեցող Բյուզանդիայի ռազմական բազաներն ու մեծ մայրությունների վրա գտնվող մի շարք քաղաքներ ավերվել են: Սակայն այս ամենը պատահում է յուրաքանչյուր ժողովրդի նվաճողական պատմության մեջ առանց քացառության և դրանք ժամանակավոր երևութներ են: Մանազկերտի ճակատամարտի և թուրքերի նոր վայրերում տեղափոխվելուց հետո, մեկընդմիշտ վերջ է տրվել քաղաքների ավերման ու բնակչության ահաբեկման քաղաքանությանը և ոչ միայն վերջ է տրվել, այլև ավերված վայրերը նորից կառուցելու ու շնչացնելու աշխատանքներ են ձեռնարկվել: Նվաճման պատճառով անմատչելի վայրերում ապաստան գտած ժողովուրդները ի վերջո նորից վերադարձել են իրենց քաղաքներն ու գյուղերը և պահպանելով հանդերձ իրենց կրոնն ու սովորությունները երկրի վրա գերիշխա-

նություն հաստատած թուրք էմիրների հպատակներ են դարձել և մուսուլմանական իրավունքի համաձայն՝ վճարելով շիգիե և խարաց՝ սկսել են նվաճող զանգվածի հետ միասին համատեղ ապրելու:²

Հակառակ սկզբնաղյուրների ուղղակի վկայությունների, Մ. Ցընանչը իր ընթերցողներին ուզում է համոզել, որ իր Ալփ-Արսլանը ոչ մի ավերածություն չի կատարել Անիում, քաղաքի նվաճման ժամանակ: «Հայ պատմագիրների սովորականցված Ալփ-Արսլանի մասին գրած վկայությունները նույնպես շափազանցություններ են,— գրում է Մ. Ցընանչը:— Մուսուլման պատմագիրների կողմից «Արդար» մականունով հիշատակված և հույն ու ասորի պատմագիրների կողմից էլ խիստ փառաբանված այս մեծ տիրակալի Անի քաղաքը գրավելու ընթացքում ամբողջ բնակչությանը սրի անցկացնելու մասին հայ պատմագիրների վկայությունները ամբողջովին կեղծիք են,— գրում է նա,— քաղաքը գրավվելուց հետո այն լրիվ վերակառուցվել, վերաբնակեցվել ու հանձնվել է Շեղդարյան իշխանական տոհմին: Բնակչության մեծամասնությունը հայերն են եղել: Լինելով նշանավոր քաղաք, այն շարունակել է իր գոյությունը ամբողջ XII և XIII դարերում: XIII դարում մուսուլման ճանապարհորդներից ոմանց հաղորդած այն վկայությունները, թե Արևելյան Անատոլիայի (իմա՝ Հայաստանի— Մ. Զ.) որոշ քաղաքներում քրիստոնյաները մեծամասնություն են կազմել մի կովան է հերքելու հայ պատմագիրների վկայությունները»:³

Մ. Ցընանչը օրինակը ցույց է տալիս, որ մեր մատնանշած բուրժուական-օրիեկտիվիստական դիրքերի վրա կանգնած թուրք պատմաբանների մոտ նույնպես կեղծվում է հայոց պատմությունը: Մ. Ցընանչի ամբողջ նպատակն է արդարացնել սելջուկ հորդաների կատարած ավերածությունները Հայաստանում, և ոչ միայն արդարացնել, այլև... նրանց համարել հայերի «Փրկարարներ»:

Սելջուկ-թուրքերի արշավանքները, իրականության մեջ, ահավոր ու ավերիլ հետևանքներ ունեցան ինչպես Հայաստանում ապահոված աղավաղին է:

¹ Զիգիեն գլխահարկն է, իսկ խարացը՝ հողօքտագործման համար ուժառում անենքից զանձնվող հարկի անունն է:

² Նույն տեղում, էլ 178—179:

³ Նույն տեղում, էլ 180:

տանի, այնպես էլ Առաջավոր Ասիայի երկրների համար Փոչվոր ու խաշնարած այս ցեղերի տիրապետությունը դաժան ու աղետալի եղավ հայ ժողովրդի համար: Այդ տիրապետությունը մեծ հարված հասցրեց նրա տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմանը:

Անշուշտ ահ ու դողի, սարսափի և հալածանքի պայմաններում, որ ստեղծեցին Հայաստանում սելջուկյան հորդաները, չի բացառված, որ հայկական աղբյուրներում տեղատեղ լինեն շափազանցություններ, բայց անկարելի է նրանց հաղորդած տեղեկությունների ստուգությունը առհասարակ կասկածի տակ վերցնել, ինչպես դա անում է Մ. Ցընանը:

Սելջուկ հորդաների Հայաստանուց կատարած արշավանքների մասին համարյա նույն բանն են գրում ժամանակակից թուրք պատմաբաններ՝ Ֆ. Սումերը, Հ. Քաֆեսօղուն, Օ. Թուրանը և ուրիշներ: Այսպես Ֆ. Սումերը, խոսելով Տուղրիլ բեգի արշավանքների մասին, կեղծելով փաստերը, ցանկանում է ապացուցել, որ «Այս արշավանքներում ավերումն ու շարդը հազվագեպ էին և սելջուկ-թուրքերը դիմում էին դրան միայն (թշնամու) լուրջ դիմադրության դեպքում»:¹

Ինչպես են ընթերցողին ներկայացվում սելջուկ-թուրքերի արշավանքները Հայաստան ու նրանց աղետաբեր հետեւնքները հայ ժողովրդի համար հայոց պատմության հարցերին նվիրված թուրք պատմաբանների վերջին աշխատություններում:

Շարունակելով հայերի՝ արաբների նկատմամբ «դավաճանության» (համագործակցությունը Բյուզանդիայի հետ) մասին առասպելը, Զ. Օզկայան գրում է. «Անրաբներից վասալական կախման մեջ գտնվող քրիստոնյա փոքր թագավորների մեջ գտնվեցին շատերը, որոնք ականջ դրեցին (բյուզանդական) կայսրերի հորդորանքներին և, դավաճանելով իրենց տիրակալներին, սկսեցին ապստամբել, կողոպտել ու կոտորել մուսուլմաններին»:

Վանա լճի արևելքում կար Անիի թագավորությունից սերած Հայկական մի իշխանություն, որը անվերջ անկախություն ձեռք բերելու և իր արևելքում ու հարավում գրտ-

նըվող մուսուլմանական պետությունները նվաճելու համար բյուզանդացիներից օգնություն էր խնդրում, սակայն այս երկրի թագավորը, որը կոչվում էր Սենեքերիմ, այնքան թույլ էր, այնքան աննշան, նրա վասպարականի պետությունը այնքան փոքր, այնքան խոցելի, որ չկարողացավ դիմաց գրավել Դավուդ Զաղրի բեգի առաջնորդությամբ արշավող թուրքենական մի փոքրիկ չոկատի: Հուսահատված թագավորը (իմա՝ Սենեքերիմը)... զիշեց իր թագավորությունը Այսպիսով, իրենց տիրակալի կամքով բյուզանդացիների անտառնելի գերիշխանուրյան տակ անցած վասպուրականի բնակիչները շուտով ազատագրվեցին քուրթմինական (իմա՝ սելջուկյան) նվաճման հետևանքով (ընդգծումը մերն է՝ Մ. Զ.)»:¹

Այնուհետև սելջուկների «փրկարար» գերին ավելի մանրամասն անդրադառնալով, հեղինակը գրում է. «Հին իրանյան Արմենիակ, հին ուրարտական և նախրի երկրները կազմող շրջանները... ինչպես և Կովկասի ու Իրանի ընդարձակ տարածքները XI դարի վերջերից նվաճված էին սելջուկների կողմից, Այն մեծ հաղթանակը, որ տարավ 1071 թ. Մանազկերտում Ալփ Արտավազ բյուզանդացիների նկատմամբ, և որն ավարտվեց Ռոմանոս Դիոգենես կայսեր բանակի լրիվ ոչնչացմամբ ու վերջինիս գերեվարմամբ, մեկ ընդ միշտ վերջակետ դրեց այս երկրներում կայսրության և ուղափառ եկեղեցու ազգեցությանը»:

Սելջուկների նվաճումների ժամանակ այս շրջանի բնակիչները նոսրացել էին: Մոտ մի հարյուրամյակի ընթացքում հեղափոխությունները, քաղաքացիական կոփները, ամեն տեսակի խռովությունները տևականորեն ցնցել էին այս երկրամասը: Հատկապես մուսուլմանական հովանավորության հաստատումից հետո բյուզանդացիների աղետաբեր միջամտությունների հետևանքով, բնակչության նոսրացումը ընդունել էր աշակոր շափեր: Տարբեր առիթներով կայսրերը հրամայեցին տեղահան անել Գրիգորյան դավանանքին պատ-

¹ F. Sumer, The Turks in Eastern Asia Minor in the eleventh century, 13th International congress of byzantine studies, Oxford 1966, էջ 141—142.

կանող հազարավոր ընտանիքների և նրանց հեռավոր երկրությունների...
Եթե Անիի ու Վասպուրականի թագավորները փոխանակեցին իրենց թագավորությունը Կապաղովկիայում մի քանի գավառների հետ, ապա իրենց հետ նոր բնակավայրեր տեղափոխեցին Հազարավոր ընտանիքներ: Միայն այս վերջինը (իմա՝ Վասպուրականի թագավորը — Մ. Զ.) իր հետ տեղափոխել է իր Համատակներից 400.000 հոգի տարագրյալները Չնայած այս թիվը թվում է խիստ շահազանցված, իսկ եթե ընդունենք, որ միայն քառորդն է տեղահանվել, Վասպուրականի երկիրն, այսպիսով, պիտի կորցրած լիներ իր բնակչության մի մեծ հատվածը:

Մանազկերտից հետո, — այսուհետև շարունակում է Զ. Օզկայան, — թողնելով այս շրջանները այլևս հավետ վերադառնալու համար, բյուզանդացիները առիթը բաց շրողեցին իրենց հետ տանելու նաև ժողովրդական զանգվածների մի մասը: Իրենց հողերում ու օջախներում մնացածների մեջ կային վաղուց ի վեր քրիստոնյա դարձածներ, որոնք չէին մոռացել իրենց ուրարտական ու անգանիտ (իմա՝ թուրքական — Մ. Զ.) ժագումը: Եվ նույնիսկ որոշ հեռավոր լեռների կածաններում կարելի էր հանդիպել տեղաբնիկ քոչվորների, որոնք սրտի խորքում պահում էին իրենց նախնիների հեթանոսությունը: Այս բոլոր մարդիկ դժոհն էին նրանից, ովքեր լքել էին երկիրը և շատ արագ ու շատ հեշտությամբ դաշն կնքեցին թուրքմենների և այլ ցեղերի հետ, որոնք զանգվածորեն եկել էին Միջին Ասիայից փախստականների և վտարանդինների լըված հողերին տիրանալու համար: Նրանք (իմա՝ տեղաբնիկ հայերը — Մ. Զ.) սիրով ընդունեցին իսլամը, որը բերել էին իրենց մոտ մի զգի ներկայացուցիչներ, որոնք բոլորովին էլ իրենց խորթ չէին: Ահա թե ինչու, Հարավային Կովկասի, Արարատի շրջանների ու Արաքսի հովտի այս փոքրիկ թագավորությունների նվաճումից անմիջապես հետո, այս երկրամասերում ձեւավրվեց թուրքական ու մուսուլմանական ճնշող մեծամասնությունը:¹

Զ. Օզկայայի պատմական այս բոլոր մարզանքներին ժանոթանալուց հետո, ընթերցողի մոտ, մեզ թվում է, որ

կասկած չի մնա այն հարցում, թե հեղինակը, կեղծելով ու անտեսելով ամեն տեսակի սկզբնաղբյուրները, փաստորեն կրկնում է մոլեռանդ պանթուրքիստ Ֆ. Կրզիօղլուին:

Այսպիսով, սելջուկ-թուրքերը, եթե հավատանք արդի թուրք պատմագրության ներկայացուցիչներին, ոչ միայն անասելի աղետ չեն բերել հայ ժողովրդին, ինչպես վկայում են հայ և օտար աղբյուրները, այլ ճիշտ հակառակը. բերել են «փրկություն», «ազգային ինքնագիտակցության», այսինքն այս «ճշմարտության» ըմբռնումը, թե իրենց նախնիները ծագումով եղել են թուրքեր:

Եթե մեկը նույնիսկ փորձի համաձայնվել Մ. Յընանչի, Զ. Օզկայայի ու այլոց այս պնդումների հետ և հայկական աղբյուրների համապատասխան հաղորդումները կեղծիք համարի, ապա ի՞նչ անի նա մի օտար հեղինակի տեղեկությունների հետ, որոնք ծայրենիծայր հաստատում են հայկական աղբյուրների տվյալները:

Խոսելով 1064 թ. Ալփ-Արսլանի կողմից Անիի գրավման մասին, արար պատմագիր Իրեն-ալ-Ասիրը գրում է. սելջուկ-թուրքերը ... մտան քաղաք և կոտորեցին անթիվ քանակությամբ բնակչություն, այնքան շատ, որ մուսուլմաններից շատերը չկարողացան ներս խուժել քաղաք սպանվածների բազմության պատճառով: Եվ նրանք գերի կորցրին գրեթե նույնքան, ինչքան որ սպանել էին:²

Անիի կործանման ու նրա բնակչության սարսափելի կոտորածների մասին բերենք նաև արար պատմիչ Սիրտ-Իրեն-ալ-Զաուզիի վկայությունը ու սրանով էլ բավարարվենք: (Սելջուկյան) բանակը մտավ քաղաք, շարդեց և սրի մատնեց բնակիչներին, հրդեհեց և ավերակի վերածեց քաղաքը: Այնքան շատ էին դիակները, որ նրանց վրայով անցնելը հնարավոր չէր: Ովքեր փախել էին ջարդից, գերի վերցվեցին: Գերիների թիվը պակաս չէր հիսուն հազար հոգուց:³

Խոսելով 1048 թ. սելջուկ-թուրքերի Հայաստան կատա-

¹ Իրեն-ալ-Ասիր, ոռուս, թարգմանություն Ժուլիետ, էջ 190 (Հ. Մանանչյան, ընական տեսություն հայ ժողովրդի պատմություն, հատ. 4., էջ 60):

² M. Canard, La campagne arménienne du sultan seldjoukide Alp Arslan et la prise d'Ani en 1064. Nouvelle série, II. Paris, 1965, էջ 244:

րած արշավանքների ու ավերածությունների մասին, Արևատիկերտցին գրում է. «Գնալով Վասպուրականի գավառը, նրանք (իմաստ սեղուակները), ինչպես քաղցած գայլեր, ու չեն կշտանում ուտելուց, հարձակվեցին քրիստոնյաների վրա: Նրանք եկան մինչև Բասեան գավառը ու մինչև մեծ դաստակերտը, որ կոչվում էր Վաղարշավան, և քանդեցին ու ավերեցին սրով, հրով ու գերությամբ քսանչորս գավառը («Եւ եկալ ի գաւառն Վասպուրականի, յարձակեցին ի վերայ Քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս անյագեալս ի կերակրոյ. և եկեալ մինչև ի գաւառն Բասեան, և մինչև ի դաստակերտն մեծ՝ որ կոչի Վաղարշաւան, քանդեալ ապականեցին գաւառն քսան և շորս սրով ու հրով և գերությամբ»):¹

Այնուհետև՝ նույն 1048 թ. շարունակելով իրենց հարձակումները, սեղուակները ավերեցին ու ավարեցին Հայաստանի բազմաթիվ գավառները, կոտորեցին խաղաղ բնակչությանը, շխնայելով անգամ կանանց ու երեխաներին, և ոչ միայն կողոպտում էին երկրի հարստությունը, այլև ամեն ինչ հըրդեհում էին ու ոչնչացնում: Սեղուակները հիմնահատակ կործանեցին միջնադարյան Հայաստանի վաճառաշահ կենտրոն՝ Արծն քաղաքը, սրի անցկացնելով նրա ամբողջ բնակչությանը: Մատթեոս Ուռհայեցին վկայում է, թե ինչպես և...այլազգիները սրերով հարձակվեցին քաղաքի վրա և սաստիկ կոտորած արին ու սրի անցկացրին Հավասարապես ամբողջ քաղաքը՝ մոտ 150.000 մարդ: Այլ ոսկու, արծաթի ու դիպակների մասին ավելորդ է խոսել, որովհետև անկարելի է այդ սրի անցկացնելու: (Եւ այլազգիքն որով յարձակեցան ի վերայ քաղաքին և սաստիկ կոտորածով առհասարակ ի ներքոյ սրոյ անցուցին զամենայն քաղաքն իբրև զբիւրս հնգետասան: Այլ զոսկուց և զարծաթոյ և զդիպակաց աւելորդ է ասել, վասն զի ոչ արկանի ընդ սրովս):²

Ահա նման պայմաններն էին, և ոչ բյուզանդասիրությունը, որ ստիպույ էին հայ բնակչությանը զանգվածորեն գաղթել Փոքր Ասիա, գլխավորապես Կապաղովկիա ու Կիլիկիա, որը և հիմք ծառայեց այստեղ Կիլիկիայի լեռներում հայկական

նոր իշխանության ծագման: Այդ իշխանությունը հետագա յում հաղորացավ, դարձավ թագավորություն, որը, ինչպես հայտնի է, գոյություն ունեցավ ավելի քան երեք դար:

Արդ՝ խոսենք Մ. Ցընանչի մոտ առաջ քաշված ևս մի կեզ-ծիքի մասին ու դրանով էլ բավարարվենք սեղուական ժամանակաշրջանի պատմության հարցեր քննարկել: Ցընանչը պը դում է, թե իբր և...առ այսօր անարդարացիորեն հույներ և հայեր անուններով հանդես եկողուած բնակչության մի զգական ժագումով քրիստոնեությունը ընդունած թուրք-ղիշաղների սերունդներն են, որոնց «...մայրենի լեզուն թուրքերին է»:³ Ըստ երևույթին, Մ. Ցընանչը գրչի մի հարվածով, «Թուրքերը է ուզում դարձնել թուրքախոսությունը հետևանք էր թուրք-օսմանյան բռնատիրության վարած դաժան ձեվարական քաղաքականության և որ թուրքախոսությունը հայերի համար պատմական ամենամեծ ողբերգություններից մեկն է: 1915 թվականի եղեռնի ժամանակ, թուրք շարդարանները տարրերություն չեին դնում թուրքախոս և հայախոս հայերի միջև և գազանարար հոշոտում, կոտորում էին իրենց անմեղ զոհերին: Ի դեպ նշենք նաև, որ արդի թուրք պատմաբաններից Մ. Էրոզը «քրիստոնեացած թուրքեր» վերնագրով հատուկ աշխատություն է հրատարակել, ուր մասնավորապես Հեղինակը գրում է, թե իբր, հայ և հույն եկեղեցիների գործանարար ազգեցության ներքո հույն կամ հայ համարվող բազմաթիվ թուրքեր հետզհետե մահմեդական թուրքերից հեռացել, քայլ առ քայլ մոտեցել են դեպի շար ճակատագրերը»:⁴

Գալով Կիլիկիան Հայաստանի հայոց թագավորության պատմության հարցերին, պիտի ասել, որ արդի թուրք պատմաբանների մոտ այս, ինչպես և մյուս հարցերում, միասնական տեսակետ գոյություն չունի: Ոմանք ընդունում են կիլիկիան հայկական պետականության գոյությունը և նրա գերը XI—XIV դարերի միջազգային հարաբերությունների մեջ, իսկ ոմանք էլ ամեն կերպ փորձում են նսեմացնել այդ պետության ունեցած դերն ու կշիռը Մերձավոր Արևելքի

¹ Արհաստակես Հաստիկերտցի, գլ. ՓԱ, էջ 65 (տես Հ. Մանաղյան, Քենակեան տեսչության հայ ժողովրդի պատմության, հատ. Գ., Օրենս, 1952, էջ 40):

² Մատթեոս Ուռհայեցի, էջ 102—103:

³ M. Yıldız, նույն տեղում, էջ 176:

⁴ Նույն տեղում:

⁵ M. Eröz, Hıristiyanlaşan Türkler, Ankara, 1983, էջ 14:

պատմության մեջ: Այսպես, օրինակ, Էսատ Ուրասը, խոսելով Կիլիկիայի Հայկական թագավորության մասին, գրում է, թե «Կիլիկիայում մի ավատական իշխանությունից (dere beyliek— դերեբեյություն) զատ ուեէ քան տեսնել ննարավոր չ» (ընդգծումը մերն է— Մ. Զ.),¹ այլ կերպ ասած՝ Էսատ Ուրասը ժխտում է հայ ինքնուրույն պետականության գոյությունը Կիլիկիայում: Եվ դա հասկանալի է: Զէ՞ որ Էսատ Ուրասի հիմնական նպատակն է ցույց տալ, որ հայերը ոչ մի ժամանակ պետականություն չեն ունեցել: Պաշտոնական «Թարիխ»-ում էլ ոչ մի խոսք չկա Կիլիկյան Հայկական պետականության մասին. անգամ այդ մասին չի հիշատակվում, երբ խոսվում է խաչակրաց արշավանքների մասին:² Ֆ. Կրգիոլուն չի ժխտում Կիլիկիայի Հայկական թագավորության գոյությունը, սակայն համաձայն իր կոնցեպցիայի գրում է. «Գագիկ II-ի մոտիկ ազգականներից հանդիսացող Ռուբեն բեգը (sic!), Աղանայի Հյուսիս-արևելքում գտնվող Սիս (Կողան) քաղաքում նոր մի (իշխանական) գերդաստանի հիմքը դրեց, միաժամանակ հիմքը դնելով Կիլիկիայի օղուզ-լոռ սավորչական քաղաքարության» (ընդգծումը մերն է— Մ. Զ.):³

Այսպիսով, արդի թուրք հետադիմական պատմագրությունը անտեսում է Կիլիկիայի Հայկական պետականության հարցերին նվիրված գիտական գրականությունը⁴ և անում է գմահաճ եղրակացություններ:

Կիլիկիայի Հայկական պետականության պատմությունը գրավում է իր որոշակի և ուրույն տեղը համաշխարհային պատմության մեջ: Նրա պատմությունը սերտորեն առըն-

¹ Esat Urus, էջ 89:

² *Situ Tarihi*, հատ. 3, էջ 227—231:

³ *Kars tarihi*, էջ 317: Երբ այս աշխատությունը հանձնված էր Հրատարակության ծանոթացանը 1990 թ. Անկարայում լույս տեսած Մ. Ա. Կաշկարիլ («Կիլիկիայի ներակա հայոց իշխանության պատմություն» (M. A. Kaşkarlı: Kılıçyanın tâbi ermeni baronlug' u tarifi), Ankara 1990 խորագիրը կրող մենագրությունը: Այդ աշխատությունը մեր կողմից թարգմանված է գրեն է ընդարձակ գրախոսական:

⁴ Աշխատական միանք մի քանի աշխատություններ եվրոպական լեզուներով՝ Langlois V., Le trésor des chartes d'Arménie; Նույնի՝ Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie, Paris 1860; Tournebize F., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris 1860, Lane-Pool Stanley, History of Egypt in the middle ages, London 1900, Morgan J. de, Histoire du peuple arménien Paris 1919. Recueil des historiens des croisades. Documents arméniens, T-II, Paris, 1906 և այլն:

ված է Եվրոպայի և Ասիայի և գլխավորապես Միջերկրականի ու Սև ծովի ավագանների երկրների հետ:

Խոսելով Կիլիկիայի Հայկական պետականության ունեցած միջազգային դերի մասին, Կիլիկիայի Հայկական պետության պատմությանը նվիրված մեծարժեք մենագրության մեջ Գր. Միքայելյանը գրում է. «Գտնվելով Միջերկրական ծովի ափին, Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի հանգուցակետում XI—XIV դարերում, երբ գնում էր սուր պայքար Միջերկրական ծովի արևելյան ափերի տիրապետման համար, Կիլիկյան Հայաստանը մասնակցեց Արևելքում տեղի ունեցած կարեռագույն պատմական իրադրություններին և աշխարհի այս երեք մայրցամաքամասերի մի շարք ժողովուրդների քաղաքական, առևտրական և մշակութային փոխհարաբերություններին:

Գտնվելով Արևելքի և Արևմուտքի սահմանագծում, ուղարկան և առևտրական ուղիների հանգուցակետում, Կիլիկյան Հայկական թագավորությունը, անշուշտ, պատմության մեջ խաղաց որոշակի դեր: Այս պետության գոյությունը միջնադարյան քաղաքների զարգացման, Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական հարաբերությունների ուժեղացման, Արևելքում միջազգային խոշոր ընդհարումների և քաղաքական փոփոխությունների ժամանակ, մեծապես կանխորշեցին նրա տնտեսական և քաղաքական զարգացումը և միջազգային հարաբերությունները»:⁵

Կարծում ենք, որ այս բոլորը քաջ ծանոթ են Էսատ Ուրասին: Նա ուղղակի գիտակցաբար կեղծում է պատմությունը Կիլիկյան Հայկական պետականությունը համարելով տեղական նշանակություն ունեցող ավատական մի իշխանություն: Էսատ Ուրասը միաժամանակ գիտե, թե մշակութային ինչպիսի գանձեր ստեղծեց հայ ժողովուրդը Կիլիկյան Հայաստանում, ինչպիսի ճարտարապետական հուշարձաններ, կոթողներ որպես կենդանի վկաներ մնում են առ այսօր նրա տարածքում, որը պատմության բերումով կազմում է Թուրքիայի մի մասը: Եվ այնուամենայնիվ Կիլիկիայի Հայկական թագավորության պատմությունը կեղծվում է Թուրքական նո-

⁵ Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, էջ 424:

բագույն աշխատովթյուններում։ Առաջին հերթին դարձյալ խոսքը տանք Ձ. Օգկայային։ «XI դարի վերջերին,— ի լուր աշխարհի հայտարարում է նա, — ոչ մի նահանգ, ոչ մի հայկական թագավորություն (Հայկազյան իմաստով) գոյություն չուներ Առաջավոր Ասիայում։ Այս բոլոր երկրները դարձել էին սեղուկյան և թուրքմենական, այսինքն՝ քաղաքական և էթնիկական առումով թուրք և մուսուլման, որովհետև նրանք, ովքեր նվաճել ու հպատակեցրել էին տեղաբնիկներին, պատկանում էին Ուրարտուի, Նախրիի, Մեղիայի, Էլամի, Սումերի ոչ արիական՝ ասիանիկ և անգանիտ ցեղին»¹։

Խսկ ովքե՞ր էին սեղուկյան հորդաների առաջ դեպի Կապաղովկիա ու Կիլիկիա փախուստ տվողները՝ Հայե՞րը, թե Հեղինակի երևակայության արդյունք հանդիսացող թուրքեր։ Մի շտապեք։ Ահա և պատասխանը, ոնախ և առաջ, այս բոլոր արտագաղթողները հայկազյան ծագում չունեին։ Նրանց մեջ կային բազմաթիվ ընտանիքներ, որոնք սերում էին անգանիաներից (իմա՝ թուրքերից— Մ. Զ.): Հատկապես Սենեգերիմ թագավորի հետ եկածների մեջ, հայկազյանները կամ Հայերը կազմում էին աննշան փոքրամասնություն։ (Հայոց) թագավորներն ու կաթողիկոսները տգետ ժողովրդին հավատացնելով, թե Հովկալների համար կրոնական պաշտամունքից թելադրված իրենց հայ քրիստոնյաներ ճանաշելը ու ոչ արիացի պարթևական ծագում ունեցող մի սուրբ մարդու կողմից հիմնված Գրիգորյան եկեղեցուն ենթարկվելը անհրաժեշտություն է, մոռացան իրենց նախնիների ծագումը ու ձուկվեցին հայ ժողովրդի հետ»²։

Կապաղովկիայում ու Կիլիկիայում հաստատված հայերը «...իրենց ընական հակման համաձայն, սկսեցին դավադրություններ կազմակերպել բյուզանդացիների դեմ, որոնք, ի միջն այլոց, իրենցից լավը չեին»³։

Ռուբինյան իշխանության հիմնադիր՝ Ռուբենը, — այնուհետև հայտարարում է հեղինակը, — պարզապես մի ավագակապետ էր, «մոռանալով» թե մի քիչ առաջ Կիլիկիա տեղափոխված հայերին նա տամի էր թուրքական ծագում⁴։

«Եատ դժվար է, որպես ազգային հերոսներ ներկայացված Ռուբենի և նրա հաջորդների մեջ, շտխնել, պարզապես ավազակապետերի», — կարդում ենք Ձ. Օգկայայի մոտ։

Որպեսզի ընթերցողը որոշակի գաղափար կազմի, թե ինչ վերաբերմունք ունի Ձ. Օգկայան XII դարի վերջում հիմնադրված Կիլիկիայի Հայկական թագավորության նկատմամբ, թե ինչպիսի կեղծիքների, պատմական փաստերի անտեսման է դիմում հեղինակը, կարող է ծանոթանալ ներքոհիշյալ մեջքերումներին։ «Կիլիկիայի բարոնները (իմա՝ թագավորները— Մ. Զ.), — գրում է նա, — բացառությամբ կարճատև ժամանակահատվածների, չեն վայելել լրիվ անկախություն։ Նրանք իրավական առումով ենթարկվում էին Կոստանդնուպոլսի կայսրությանը, և միայն բարենպաստ հանգամանքների կամ խաչակիրների աշակեցության պայմաններում ձեռք էին բերում խիստ ձեւական ինքնավարություն։ Նման դեպքերում (բյուզանդական) կայսերը զիտելով նրանց որպես խոռվարանների անմիջապես ճնշում կամ փորձում էին ճնշել (այդ անկախությունը), Ընդունին կիլիկյան տարածքն ամբողջությամբ երբեք չի պատկանել հայերին՝ քաղաքները, նավահանգիստները գավառները բյուզանդացիների, հայերի, խաչակիրների և մուսուլմանների կողմից անցնում էին ձեռքից ձեռք... նման տեսական իրավիճակը ամենուր առաջ էր բերել ամայացում, ավերակ և թշվառություն։ Բնակչության նոսրացումը հասել էր ահռեցի աստիճանի։ Այս երկրում այլևս գյուղատնտեսությամբ բզբաղվող հողամշակներ չեին մնացել, որի պատճառով այլևս հնարավոր չէր կերակրել դեռևս կանգուն մնացած մի քանի քաղաքները և ավանները, թեև այս երկիրը մի ժամանակ համարվում էր աշխարհի շտեմարանը»⁵։ Օհ, ինչ անշնորհք ու ողորմելի են եղել այս հայերը, անընդունակ պետական զեկավարմանը, — ահա հեղինակի ասույթների բուն ոգին։ Եվ ամենազարմանալին այն է, որ հեղինակի խոսքը վերաբերում է Առողջ II թագավորի ժամանակաշրջանին, երբ հայ և օտար աղբյուրների վկայությամբ երկիրը թևակոխիւն էր բռնտնտեսական զարգացման ուղին։ Հանրահայտ է, որ արտաքին թշնամիների դեմ տարած հաղթանակների հետևանքով

¹ Cemal Ozkaya, էջ 87

² Նույն տեղում։

³ Նույն տեղում, էջ 88.

⁴ Նույն տեղում, էջ 41.

ինդարձակվեցին Հայկական պետության սահմանները, խիսճ
բարձրացավ կեռն Ա-ի միջազգային հեղինակությունը: Նա
երկրում անցկացրեց քաղաքական, վարչական և տնտեսական
բարեփոխություններ և այդ պատճառով էլ պատմության
մեջ մտավ կեռն Ա Մեծագործ անոննով: Նրա օրոք Կիլիկիան
գարձավ միջնադարյան Հայաստանի խոշոր կրթական գի-
տական ու մշակութային կենտրոն:

Ամփոփելով կիլիկյան հայկական պետության պատմու-
թյունը, Զ. Օզկայան անում է հետևյալ «գիտական» եզրա-
կացությունները, որոնց հետ ընթերցողներին ծանոթացնելը
ավելորդ չենք համարում. «Կիլիկիան երրեք հայկական չի
եղել: Եղել են այնտեղ արմեններ, նույնիսկ Հայկացյաններ,
սակայն նրանք եղել են այնպես, ինչպես թուրքերը՝ Եգիպ-
տոսում, արաբները՝ Սիցիլիայում և Աքվիտանիայում (Ֆրան-
սիայում). Հույնները՝ Բակտրիանայում և այս ժողովուրդները
այս երկրներում հիմնել են ավելի հզոր ու ավելի լուրջ պե-
տություններ: Եթե կարելի է պնդել, որ Կիլիկիան դարձավ
Հայկական, որովհետև սրանից ութ դար առաջ այստեղ գաղ-
թեցին մի քանի հազար հայ ընտանիքներ և այնտեղ կազ-
մեցին մի համայնք, և որ բարենպաստ հանգամանքների
բերումով և հատկապես խաչակիրների արշավանքի շնորհիվ,
լատինների օգոստիամբ, այնտեղ հիմնեցին մի պետություն,
որը գոյատես հերթականությամբ գերմանական կայսեր, Ֆրանսիայի, Երուսաղեմի և Կիպրոսի թագավորների, Ան-
տիոքի, Եղեսիայի իշխանների, բյուզանդական կայսրերի,
Ծփառականի և կոնսիստուտությամբ գերմանական կայսեր,
գերիշխանության ու Հովանավորության ներքո, և որը բա-
ցառությամբ միայն կարճատև ժամանակաշրջանների, երրեք
էլ լրիվ անկախություն շվայելեց, ապա այդ դեպքում պետք
է ընդունել, որ Սիցիլիան, Խոպանիան, Պորտուգալիան, Ար-
ևլիտանիան եղել են արաբական, Անգլիան՝ Դանիական,
Հնդկաստանը՝ մոնղոլական և այնու Կիլիկիայում հայերը,
բոլոր ժամանակաշրջաններում կազմել են բնակչության շնչին
մասը և ոչ ավելին, այն էլ ոչ բոլորն էին Հայկացյաններ
(բուն Հայեր) քանզի նրանց մեջ գտնվում էին հին ուրար-
տացիների, նաիրցիների, սակերի, մեղացիների, խալիքերի,
միդիացիների, խուռիների և այլոց հետնորդներ (իմա՝ թուր-
քեր— Ա. Զ.):

Եվ որպեսզի փակենք այս գլուխը, նշենք, որ Կիլիկիայում
երրեք հայեր չեն եղել և Սիլիկիան երրեք հայոց երկիր մի
եղել։ Այսպես և վերջ։

Արդ՝ մի քանի խոսքով ընթերցողներին ծանոթացնենք
նաև պատմության հարցերին «իսկատ գիտական» մոտեցում
պահանջող՝ Ք. Գյուրյունի Կիլիկիայի հայոց պատմության
վերաբերյալ տեսակետին, ու դրանով բավարարվենք։ Ք.
Գյուրյունը փաստերի ճնշման ներքո և նկատի ունենալով
այն հանգամանքը, որ աշխատությունը լույս էր տեսնելու
Փարիզում, ստիպված էր ընդունելու Կիլիկիայի հայկական
պետության գոյությունը։ «Բազմաթիվ աղբյուրներից մենք
տեղեկանում ենք այս թագավորության պատմության մա-
սին,— գրում է նա: Սա մի խսկական պետություն էր, որը
սերտ հարաբերությունների մեջ էր Անատոլիայի սելջուկների,
ինչպես նաև Բյուզանդիայի, Սիրիայի, Իրաքի, խաչակիր-
ների, այուրյանների և մամլուքների հետո։¹

Այնուհետև հենվելով ամերիկահայ պատմաբան Ավետիս
Սանջյանի մի աշխատության² վրա, հեղինակն ամեն կերպ
փորձույց է անցյալի պատմական փաստերը ծառայեցնել
ներկայիս թուրքական պետական շրջանների քաղաքական
շահներին, սեպ խոնկով հայ և հույն ժողովուրդների միջև
Ա. Սանջյանից բերված փաստերն ընտրված են Հայ-Հու-
նական դավանաբանական վեճերը, բյուզանդական որոշ
կայսրերի հալածանքի քաղաքականությունը հայադավան-
ների նկատմամբ։³

Այնուհետև նշելով, որ Կիլիկիայի հայկական պետությունը
1875 թվականին անկում ապրեց, հեղինակը բացականչում
է. թե հայ հեղինակները բարոյական ոչ մի իրավունք չունեն
հականություններ ունենալու մեր նկատմամբ, քանի որ
օսմանցիները Կիլիկիան գրավել են 1516 թ. ակար, երբ
օսմանցիները գրավեցին այս շրջանները անցել է 470 տա-
րի, երբ Անատոլիայի Արևելքում այլևս հայկական ոչ մի
իշխանություն գոյություն չուներ և կիլիկյան թագավորու-

¹ Cemal Özkaya, t. 45-46.

² Kâmurân Gürün, t. 34.

³ Avedis Sandjian, The Armenian communities in Syria under the ottoman domination. Cambridge, 1963.

թյան անկումից անցել էր 150 տարի», — գրում է նա: Իմ ամբողջ գրքի բուն նպատակը, — այնուհետև գրում է Հեղինակը, — այն է՝ ցուց տալ, որ չկա մի ճշմարիտ բառ ամբողջովին ձրի այն պնդման մեջ, համաձայն որի օսմանցիները զավթելով հայկական հողերը վերջ տվեցին մի անկախ պետության գոյությանը և նրա բնակչությունը ստրկության մատնեցին: ¹ Ինչ վերաբերում է հայերին, ապա «օսմանյան նվաճումների ժամանակ այլևս չկար մեկը, ով նրանց (հայերին) էթնիկական տեսակետից ազգ համարեր»: ² Այսպիսով թուրքական նվաճումների շրջանում Ք. Գյուրյունը ժխտում է հայերի գոյությունն առհասարակ: Եվ այս բոլորից հետո հեղինակը դեռ իրավունք է վերապահում խոսելու ռանաշառ դատողություններից մասին:

Եթե թուրքերը Կիլիկիան գրավել են ոչ թե հայերից, այլ Եգիպտոսի մամլուքներից, ապա հայերը Կիլիկիայի տարածքի նկատմամբ որևէ հավակնություն չպետք է ունենան: Հարց է առաջացնում նման հայտարարության բարոյական ինչ իրավունք ունի հեղինակը: XVIII դարի վերջին Ավստրիան և Սրբազն դաշինքի պետությունները ազատագրեցին Հռոմեական թուրքական լծից: Եթե առաջնորդվենք Ք. Գյուրյունի տրամաբանությամբ, ապա հունգարական ժողովուրդը երրեք իրավունք չուներ գանգատվելու թուրքական լծից, առավել ևս երրեք չպետք է համարձակվեր ունենալու իր սեփական պետությունը: Օսմանյան կայսրության փլուզումից հետո, արաբական երկրները անկախություն շտացան, այլ ընկան Ֆրանսիայի և Անգլիայի տիրապետության տակ: Ինչ է, դուրս է գալիս, որ արաբական երկրները իրավունք չունեն իրենց պատմության մեջ թուրքերի վայրագություններն արձանագրելու ու օտարերկրյա նոր տիրակալներից ազատվելու:

XVI դարում օսմանցի թուրքերը զավթեցին ոչ թե Սեֆյան իրանի կամ եգիպտական մամլուքների, այլ Հայաստանի տարածքը, որի լիիրավ տերը հայ ժողովուրդն է:

Մոնղոլական և շաղաթայա-թուրքմենական տիրապետության ժամանակաշրջանի հայոց պատմությունը նույնպես

աղավաղված է ու խեղաթյուրված Ֆ. Կրզիօղլուկի, Զ. Օզկայի ու ալլոց մոտ:

Խոսելով մոնղոլների մասին, Ֆ. Կրզիօղլուն առանձնակի համակրանքով գրում է իլխանների և Հատկապես Ղազան խանի մասին, որն ընդունում է իսլամը՝ մարդկության և...ամենամեծ ու ամենամարդկային կրոնը¹: Ընդունելով իսլամը, — գրում է նա, — իլխանները մեր ազգային թուրքական (sic!) պատմության տեսանկյունից կատարեցին խոշոր ու վճռական դեր: Խսկ ո՞րն է այդ դերը. պարզվում է հետեւյալը.

«Իլխանները բռնությամբ հեթանոսական տները, եկեղեցիները և այլ պաշտամունքի վայրերը ավերեցին և ավերել տվեցին, հպատակներին բռնությամբ մուսուլման դարձրին: Այս իրադրությունը մեծ նշանակություն ունեցավ մեր ազգային պատմության ու մեր գոյության համար: Կարակոյունլունների (Մամիկոնյան) և ակ-կոյունլունների (Պահլավոնի) նման մյուս օղուղ-ավատատերերը իրենց բնակչությամբ... միիննավոր թուրք ու մոնղոլների (վինգիզյանների) հետ մեկտեղ ընդունեցին մուսուլմանական կրոնը: Միայն լեռնային Ղարաբաղում, Ճորոխի հովտում, Քուռ-Քութայիսիի կիրճերում, Տունչելի (Դերսիմ) և Հակկարիի նման դժվարանցանելի և սաղարթախիտ անտառներով հարուստ վայրերում, ինչպես նաև Տրապիզոն-Միկոնում² և ծովի ափին և Սիսում³ Միջերկրականի մոտ շարունակեցին գոյություն ունենալ հայ և հույն իշխանություններ և Անատոլիայի այս մասերի հին բնակիչները պահպանեցին իրենց կրոնն ու դավանանքը»:²

Գալով XV դարում թուրքմենական Կարա-կոյունլու և Ակ-կոյունլու պետությունների գերիշխանության հաստատման պատմությանը Հայաստանում, Ֆ. Կրզիօղլուն թուրքմեն այս ցեղերին տեղափոխում է ոչ թե Միջին Ասիայից, այլ, ինչպես արդեն տեսանք, համարում է նրանց տեղացիներ՝ Մամիկոնյանների և Պահլավոնների սերունդներ: «Ղազան խանի (1295—1304 թթ.) ժամանակ, երբ մեծ մասշտարքի մուսուլմանական հեղափոխություն» էր գրում, Մամիկոնյանները Ակ-կոյունլու քոլվոր ցեղերի հետ միասին, թողնելով լուսավորչական քրիստոնեությունը, ամրողովին մու-

¹ Kâmûrân Gûrûn, էջ 37:
² Նույն տեղում:

¹ «Kars tarîhi», էջ 434:
² Նույն տեղում, էջ 434:

սուլմաններ դարձան և XV դարի կեսերի սկզբում ստեղծեցին իրենց իշխանությունը Արճեշի շրջակայքում։¹ Հենց նույն Ղազան խանի ժամանակ էլ «...Արշակունիների «Սուրեն Պահլավ» ճյուղից սերած բայընդրլու իշխանները... իսլամացվելու մեծ հեղափոխության ժամանակ, հրաժարվելով լուսավորչական քրիստոնեությունից, ընդունեցին սուննի մուսուլմանությունը»², — գրում է Ֆ. Կրգիօղլուն։

Զեմալ Օզկայան այս ժամանակաշրջանի հայոց պատմությունը կեղծելու մեջ ավելի առաջ է զնում, քան Ֆ. Կրգիօղլուն։ Նրա «Պատողությունները» ևս գիտականորեն հիմնագուրիկ են, հաշվի չեն առնված նույնիսկ մուսուլմանական աղբյուրները ու գրված են, ինչպես միշտ, խիստ թշնամական դիրքերից։ Լսենք նրան «...որոշ ինքնուրույնություն վայելող և որոշակի տարածքի վրա հաստատված հայկական քաղաքական ինքնուրույնությունից հետք անգամ շմենց 1045 թվականին, երբ Անիի թագավորությունը անցավ Կոնստանդնուպոլիսի գերիշխանության ներքո, և վերջապես՝ 1375 թվականին վերացավ Սիսի թագավորությունը։ Ինչպես վերը նշեցինք, այս պետություններից և ոչ մեկը իրոք ազգային չէր, քանզի նախ և առաջ դրանք միշտ էլ հրապարակ հանվեցին օտարերկրացիների կողմից և հաճախ նրանց օգտին... Նըրանց պատմությունը իրենից ներկայացնում է անվերջ նենգության, դավաճանության, սպանությունների մի շարան։ Նրանք միշտ էլ եղել են առավել ուժեղի տրամադրության ներքո։

Ամբողջ հին աշխարհում և միջնադարում մարդկային գործունեության որևէ մի ճյուղում հայ ժողովուրդը ինքնուրույնություն հանդիս չի բերել։

...Այն պահին, երբ Առաջավոր Ասիայում շքանում էր իրենց անունով ամեն մի իշխանություն, նրանց թվաքանակը խիստ նվազել էր։ Ամեն տեսակի հիվանդությունները, սովորը, խոռովությունները ավերել էին իրենց ապրած երկը ները...։

Ինչ վերաբերում է արաբների և ավելի ուշ՝ թուրքերի կողմից նվաճված Կիաքսարի և Դարեհի հին Արմենիապ նահանգին, ապա այդ երկիրը կարճ ժամանակվա ընթացքում

¹ Նույն տեղում, էջ 465։
² Նույն տեղում։

դարձավ բացառապես թուրքական, իսկ իրենց հավատքին հավատարիմ մնացած քրիստոնյաների մի մասը պատմարանների, հնագետների, մարդաբանների և բանասերների հավաստիացմամբ հանդիսանում էին նույն ցեղից, ինչոր նորեկները...։

XIV դարի սկզբին համարյա ամբողջ Փոքր Ասիան և Փոյլգիայի, Կապաղովկիայի, Ուրարտուի, Նաիրիի, Խաթայի, Իրաքի, Իրանի, Կովկասյան Աղբքեցանի երկրները բաժանված էին մի խումբ փոքր պետությունների, որոնք համարյա բոլորն էլ ղեկավարվում էին թուրքերի կամ թուրքացած մոնղոլների կողմից»։¹

Հայերին Հայաստանի ու Փոքր Ասիայի տարածքում XIII—XIV դարերում գրի մի հարվածով վերացնելուց հետո, Զ. Օզկայան, հասկանալի պատճառով, սուրն այս անգամ ճոճում է Փոքր Ասիայի հույնների վրա, հայտարարելով նրանց քրիստոնյա թուրքեր, պեշենեկներ և այլն... «որոնք դեռևս չին մոռացել իրենց թուրքական ծագումը»։

Նման պայմաններում «...թուրքական կայի ցեղի մի հատվածի կողմից XIV դարի սկզբներին հիմնադրված (օսմանյան) պետությունը շատ արագ զարգացավ ու դարձավ Օսմանյան կայսրություն, համարյա ամբողջությամբ թուրքացած Փոքր Ասիայում, փոխարինելով թուրքական մյուս փոքր իշխանություններին»։²

Որ XIII—XIV դարերում ոչ միայն Փոքր Ասիայում համատարած թուրքացման պրցես տեղի չի ունեցել, վկայում են ոչ միայն սկզբնադրյուրները, այլ այնպիսի մոլեունդ պանթուրքիստ պատմաբան, ինչպիսին է Զ. Վ. Տոգանը։ Նրա մոտ մենք կարդում ենք. «Պատմական աղբյուրները զանգվածութեն քաղաքի, զավանի և զյուղերի բնակիչների իսլամն ընդունելու կամ բութանալու մասին... ոչ մի վկայություն չեն հաղորդվում։ Ըստ երևոյթին նման մի իրադարձություն երբեք տեղի չի ունեցել (ընդգծում մերն է—Մ. Զ.)»։³

Խորհրդային պատմաբաններից՝ Դ. Երեմեկը, որը հատուկ

¹ Cemal Özskaya, էջ 46—47։

² Նույն տեղում։

³ Zeki V. Tog'an, էջ 197, 250 և այլն։

զբաղվել է այս հարցով, գրում է, թե *XI—XIII* դարերում Փոքր Ասիայում «...գեռես պահպանվում էր ստվար թիվ կազմող ու իր նախկին կրոնին հետևող տեղական բնակչությունը։ Այդ մասին է վկայում այն փաստը, որ անգամ *XIII* դարում շիզիեն (*ոչ մուսուլմաններից գանձվող գիշահարկը*) կազմում էր, ինչպես այդ մասին նշում է հենվելով Աքսարայի վրա 0. Տուրանը, «Ռումիի (*իկոնիայի սուլթանության եկամտի կարևորագույն հոդվածներից մեկը»):¹ Նույն վերոհիշյալ Զ. Վ. Տոգանը իր «Ներածություն թուրքերի պատմության» վերնագրով աշխատության մեջ անդրադառնալով սույն հարցին, գրում է, թե «Մեծ Հայք կոչված Արևելյան Անատոլիայում, հայերը *XIII—XIV* դարերում կազմում էին բնակչության մեծամասնությունը (բնդումը մերեն է— Ս. Զ.)»։²*

XIV դարի 30-ական թվականներին Փոքր Ասիայում ճանապարհորդած արար ուղեգիր՝ իրն Բատուտան գրում է, թե երկրում «...շատ են մուսուլման թուրքենների գերիշխանության տակ գտնվող քրիստոնյաները», որ Երզնկայում բնակչության մեծամասնությունը՝ հայերն են։³ Իրն Բատուտան վկայություններից երեսում է, որ Փոքր Ասիայում թուրքերը կազմում էին փոքրամասնությունը, բացառությամբ, իհարկե, հայկական լեռնաշխարհի Հարավային և հարավ-արևմտյան շրջանների, ուր բնակչության մի զգալի մասը արդեն կազմում էին քրդեր։

Այս, հայերը Հայկական լեռնաշխարհում բացարձակ մեծամասնություն էին կազմում ոչ միայն *XIII—XIV* դարերում, այլև հետագա դարերում։ Հանրահայտ է ֆրանսիացի Հայտնի Ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեի վկայությունն այն մասին, որ Թուրքից մինչև Թավրիզ բնակեցված է հայերով։ Կուսակցությունը կուսակցություն է մի մուսուլման։⁴

¹ Դ. Ե. Երեմես, Ետիոգենեզ տյորք, էջ 101։

² Zeki V. Togan, նոյն տեղում։

³ (Ibn Battuta). The travels of Ibn Battuta. Cambridge, 1961, էջ 415։

⁴ Նույն տեղում, էջ 437։

⁵ Les six voyages de Jean Baptiste Tavernier, vol. I, Paris, 1718, էջ 89։

Գլուխ երկրուգ

ՕՄՊԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՐՑԵՐ (XVI—XVIII դար)

Հակառակ սկզբնաղբյուրների ուղղակի վկայությունների, թե օսմանյան տիրապետությունը նվաճված երկրներին, ի թիվս որոնց և Հայաստանին, բերեց դաժան շահագործում և ժողովրդական զանգվածների բացահայտ կողոպուտ, կամայականություն ու բռնության ռեժիմ, կրոնական անլուգ հաւածանք և այլն, արդի թուրք պատմագրության բոլոր ուղղությունների պատմաբանների մոտ տարակարծություն չկամի հարցում՝ այն է, իրը օսմանյան տիրապետությունը փրկել է Փոքր Ասիայի և Բալկանյան թերակղզու ժողովրդներին X թուրքական «ղածան բռնակալությունից» և բերել է նըրյուղանդական աղածան բարակարգ պատմագրության՝ «Թարիխ»-ի մեջ պարզորոշ շեշտվում է, որ կառավարման օսմանյան սիստեմն իրը ապահովում էր լուրացանշուր հապատակի պատիվը, ունեցվածքն ու անծը,¹ այն ժամանակ, երբ նախկին՝ բյուզանդական իրավակարգի ժամանակ «Անատոլիայի նահանգների ավատատերերի (թագվորների) անարդար կառավարումը, ապօրինի տուգանքները, կամայական ու ծանր հարկերը զզվեցրել էին գյուղական բնակչությանը»։ Այնուհետև՝ («բյուզանդական») ավատատերերի միջև տեղի ունեցող միջավատական մշտական ընդհարումներ խափանել էին առևտուրը և ժողովրդին հասցրել տնտեսական ծանր կացության։ Օսմանյան տիրապետությունը վերացնում է ճանապարհում անապահովությունը, զյուղերում և ջականերում օրենքին շնամապատասխանող կամային հարկերը և ապահովում օրենքի սահմաններում յուրաքանչյուրի անձը, պա-

¹ «Tarihi», համ. 3, էջ 2։

տիվն ու ունեցվածքը «լնդգծումը մերն է— Մ. Զ.»: Եկ որպես «ապացույց» օսմանցիների բերած արդարության, «Թարիխ»-ում մեջ է բերվում XV դարի թուրք պատմագիր Աշըկփաշաղաղեից մի վկայություն այն մասին, թե ինչպես օսմանյան կայսրության հիմնադիր կիսապատկելական Օսման բեյը վերացրեց առևտորից գանձվող «բազա հարկը»՝ իրականության մեջ Աշըկփաշաղաղեին ուշադիր ընթերցելիս դժվար չէ նկատել, թե Օսման բեյը նման հրաման արձակում էր այն պարզ պատճառով, որ օսմանցի նվաճողների համար զեռևս խորթ էր զարգացած առևտորի ու այդ բնագավառից գանձվող հարկերի գաղափարը, քանի որ նրանք գրտնըվում էին հասարակության զարգացման ամենացածր աստիճանի վրա՝ տոհմական-նահապետական սովորույթների անմիջական ազդեցության տակ:

Օսմանցիների բերած «արդարության», «կարգ ու կանոնի», «ժամանակայնության» մասին առաջ քաշված այս կեղծ դրույթը պաշտպանվում են այնպիսի հեղինակավոր ու պատկառելի թուրք գիտնականների կողմից, ինչպիսիք են Օ. Լ. Բարկանը, Ի. Լ. Ուզունշարշըլին և ուրիշները: Այսպես, Օ. Լ. Բարկանը միջնադարյան թուրքական օրենսգրքերի (կանոննամեների) այդ խոշորագույն մասնագետը, գրում է, թե, իբր, օսմանցիների հպատակ ոչ թուրքերը, միանգամայն արդար գտնելով թուրքական օրենքները պահանջում էին, որ իրենց մոտ նույնպես կիրառվեն դրանք ու վերացվեն նախկին տիրակալների սահմանած կեղեքից օրենքները: Ե հաստատումն իր այս մեջ ասած ոչ ճիշտ դրույթի, Լ. Բարկանը բերում է իրզումի 1540 թվականի Կանոննամերի առաջին հոդվածը, ուր ասված է, «Բայրուրտի և Էրզրումի սանցակները գրանցելիս (բնակիչները) կայսերական հրամանի համաձայն՝ հին դավթարում նախապես արձանագրվել էին: Ռայաքները, առևտրականները և օսմանյան երկրի մյուս բնակիչները շեկարողացան տոկալ Հասան փաղիշահի կանոնի համաձայն կիրառվող օրենքներին և դիմելով բարձր արքայական գահին, խնդրեցին, որ Ռումի (իմա՝ օսմանյան) օրենքը (գործադրովի) նաև նրանց նկատմամբ: Արդարադատ և գիտառտ նորին վսեմություն (սովորական) համաձայնվեց և հրամայեց,

որ Ռումի կանոննամեն գործադրովի նաև հիշյալ վիլայեթի քաղաքների նկատմամբ»:¹

Հայտնի է, որ սկսած XV դարի երկրորդ կեսից Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի այլ հայաբնակ շրջաններում առանձնապես կիրառության մեջ են եղել ակ կոյունլու թուրքմենների ականավոր տիրակալ վերոհիշյալ Հասան Փաղիշահի կամ Ուզուն Հասանի օրենքները՝ կանոննամենները: Վերջինս այդ կանոննամենները հրատարակեց գյուղացիների հարկերի ու պարհակների ճիշտ հաշվառման, տեղական պատառական պաշտոնյանների հարկահավաքաման ժամանականությունների ու շարաշահումների վերացման նպատակով: Հայտնի է նաև, որ XV դարի երկրորդ կեսի հայ գրիշների մի զգալի մասը համակրանքով են քնությագրում Ուզուն Հասանին, և ընդգծում նրա բարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ: Անշուշտ այդ բարյացակամությունը բխում էր այն քաղաքականությունից, որ որդեգրել էր այդ տիրակալը. այն է՝ դաշինք կնքել եվրոպական պետությունների հետ օսմանյան թուրքիայի գեմ ընդհանուր ճակատ կազմելու նպատակով: Հայերին, որպես քրիստոնյա տարրերի, նա վերապահում էր միջնորդի գերը:

Հենց իր՝ Օ. Լ. Բարկանի կողմից հրատարակված կանոննամենները² գալիս են հերթելու իր և ուրիշների կողմից պատմական փաստերն ու իրողությունները գունազարդելու ապարդյուն փորձերը: Նախ՝ մատնանշված թուրքական օրենքները միշտ չեն, որ կիրառվել են պրակտիկայում, այլ հայկական նահանգներում ու գավառներում տիրապետողը հանդիսացել են թուրք փաշաների ու քուրդ բեգերի սանձարձակ կամայականությունները: և երկրորդ՝ այդ նույն օրենքներում համարյա միշտ նշվում է հարկային համակարգի և հարկահանության ձևերի գրեթե համատարած և մշտական աղավաղումների և դրանց հետ կապված ապօքինությունների և բնությունների անարգել տարածման մասին: Խսամական շարիաթի և թուրքական իրավաբանական բառացանկում

¹ Shu O. L. Barkan, Osmanlı İmperatorlugunda çittç i sınıfların hukuki statüsü, ülkü, 1937, tə 39—41.

² O. L. Barkan, XV ve XVIinci asırlarda Osmanlı İmperatorlugu zirafe ekonomisinin hukuki ve mali esasları I, cilt, Kanuniar, İstanbul, 1945.

բիգ'ար (բառացի՝ նորաձևություն, նորամուծություն, այսինքն՝ շարիաթին շհամապատասխանող և նրան հակասող) անուններով հայտնի ապօրինության բազմաթիվ ու բազմատեսակ օրինակներ կան գրեթե բոլոր կանոննամեներում, որոնք հիշատակվում են մանրամասնորեն և փադիշահական հատուկ հրովարտակներով (ֆերման) հայտարարվում են «վերացված»:¹

Իսկ եթե լսելու լինենք Ֆ. Կրգիօղուին, ապա ստացվում է, որ օսմանյան իրականությունը այնքան արդար էր, որ «...1534 թվականին կամավոր ձևով» Կարսը, Վանը և Արևմտյան Հայաստանի այլ գավառները... խառնվելով Անատոլիայի միասնության մեջ մտան Օսմանյան դրոշի տակութեք դա հասկանալի է, բացականչում է Ֆ. Կրգիօղուին, քանի որ այդ հողերը ի սկզբանն անտի «Թուրքական» են:

Արդ՝ նորից անդրադառնանք օսմանցի թուրքերի Փոքր Ասիայի և Բալկանյան ժողովուրդների Բյուզանդիայի լծից ռազմատագրելու թուրքական պատմության առաջ քաշած դրույթին: Նման «տեսությունը» գիտնականների բացարձակ մեծամասնությունը, հենվելով անմիշական փաստերի վերլուծության վրա, վաղուց է մերժել: Բացառություն են կազմում մի քանի գիտնականներ, որոնք մասամբ միայն բաժանում են թուրքական պատմագրության այս կեղծ թեղը: Այսպիսիների «աշխատությունները» մեծ սիրով արտատպվում են թուրքական պատմագրության էջերում: Այլապես, ինչպես բացարել Անտուան Դարինովիչի աշխատության ամբողջական գետեղումը (շուրջ 200 էշ) 1960 թվականին լույս տեսած թուրքական պատմագրության համագումարին նվիրված հատորում:²

Որ Ա. Դարինովիչը համարյա բառացի կրկնում է այն, ինչ գոված է «Թարիխ»-ում. ընթերցողը կարող է համոզվել

¹Տես O. L. Barkan, Նույն աշխատությունը, Տես նաև Արևմտյան Հայաստանին և Փոքր Ասիայի հայրանակ այլ շրջաններին վերաբերող XVI—XVII դարերի օսմանյան օրենքների ժողովածուն, որը քաղաքած է Օ. Լ. Բարկանի հիշատակված գրքից («Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում» (XVI—XVII դդ. կանոննամեները). Բարգմանությունը, առաջանանք և ծանրագրությունները Ս. և. Սաֆրաստյանի և Ս. Գ. Զուլալյանի, Երևան, 1964):

²Antoine Dablinovitch, Les pactes d'assistance entre les gouverneurs ottomans et les grands seigneurs de Bosnie et de Croatie depuis le XVI^e au XVII^e siècle. V TTK Ankara, 1960.

էջ 478—674:

կարդալով այդ աշխատությունից բերված հետեւյալ մեջբերումները. «Թուրքական աղբյուրները վկայում են,— գրում է նա, — որ քրիստոնյա ժողովուրդները ամբողջությամբ իրենց խոշոր ավատատերերի հետ միասին միանում էին արշավողների (իմա՝ թուրքերի) հետ, նախքան վերջինների օգտին ճակատամարտի ելքը որոշվելը: Նման կողմնորոշումը բացատրելու համար, — շարունակում է նա, — մի շարք շատ կարևոր պատճառներ պետք է ալքի առաջ ունենալ»¹: Իսկ որո՞նք են այդ պատճառները: Այս Ա. Դարինովիչի բացարությունը: «Ալբանատավորները, գյուղացիները քարավանային առևտորվ գրավող վաճառականները շահագրգոված էին իրենց տնտեսական շահերը պաշտպանելու, շահեր, որոնք վտանգված ե ոտնահարված էին (Բյուզանդիայի) ներքին քաղաքականության և միջազգային կյանքում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով: Ապրանքների իրացման համար անհրաժեշտ շուկան գնալով սահմանափակվում էր: Ազգային տարածքի պաշտպանությունը հասցնում էր հարկերի անվերջ անման: Հարկերին ավելանում էին պարհակները, Տիրապետողը սովոր, աղքատությունն ու համաճարկներն էին: Նման պայմաններում մի պահ թվում էր, որ այս դժվարություններից դուրս գալու միակ ճանապարհը, մնում է մի պետության գերիշխանության ընդունումը, որը կիսուտանար ստեղծել որոշ աստիճանի կայուն պետականությունը»²: Նման պետությունը, անշուշտ, եղրակացնում է նա, պիտի «թուրքականը լիներ»:³

Այսուհետև՝ «Այն վեհանձնությունը (sic!), որ օսմանցիները ցուցաբերում էին իրենց գերիշխանությունը ճանաշած բնակչության նկատմամբ, չէր կարող շապահովել նրանց (Քրիստոնյա ժողովուրդների) նվիրվածությունը իրենց (թուրքերի) հանդեպ»:⁴

Նման բացարությունները, ըստ էության պատմության բացահայտ կեղծումն են: Իրականում, թուրք հրոսակախըմբերը հրով ու սրով նվաճում էին Փոքր Ասիան և Բալկանները հրով ու քրիստոնյա ժողովուրդներին ուրիշ ելք չէր մնում, ները, ու քրիստոնյա ժողովուրդներին ուրիշ ելք չէր մնում,

¹ Նույն տեղում, էջ 487:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 490:

քան ընկունելու նվաճողների բռնատիրությունը ու սրտի խորը կոկիծով, արցունքով ողբալ իրենց պետությունների անկումը: Իսկ նվաճում էին օսմանցիները, որովհետև ստեղծել էին կարգապահն, ուժեղ բարբարոս մի բանակ, որը, անշուշտ, ուզմական առավելություն ուներ զարգացած ավանդատիրության պայմաններում տնտեսապես մասնատված ու քաղաքականապես թուլացած: Թյուզանդիայի նկատմամբ: Հենց իրենք թուրքերն իրենց պետության մասին ասում էին, որ նա «սրով է ծնվել և սրով միայն կարող է պահպանվել»:

Կոստանդնուպոլիսի գրավումը սուլթան Մեհմեդ Ֆերդիչի կողմից 1453 թ. ուղղակի շանթահարեց քրիստոնյա աշխարհին, այդ թվում հայերին: Ժամանակի երկու հայ հեղինակներ՝ Արքահամ Անկյուրացին և Առաքել Բաղիշեցին երկարաշունչ քերթվածներով ողբացին Կ. Պոլսի անկումը, արտահայտելով հայ ժողովրդի խորը ցասումը, ցավն ու վիշտը քաղաքակրթության այդ խոշոր կենտրոնի նվաճման ու պարման առթիվ:

Կոստանդնուպոլիս գովեալ,
Քափաւորաց գահոյք կազմեալ,
Այժմ էր եղեր դու աւերեալ,
Անօրինաց կոխան եղեալ, —

Կարդում ենք մենք Արքահամ Անկյուրացու մոտ:

Հանրահայտ է, թե ինչ ավերածություններ գործեցին, ինչ թալան ու կողոպուտ կազմակերպեցին, ինչպիսի վայրագությանու մուտքանուններ կատարեցին թուրքերը Կ. Պոլսի գրավումից հետո՝

Զայտերազմովսըն զոր գըտին,
Զամենենուն կոտորեցին,
Այլ և բզայը և ըզկանայս
ի գերութիւն իսկ վարեցին:
Եւ զնորահաս սրդաւ նոցին
Ի մօր գրրկացըն խըլէին,
Առեալ զքարի հարկանէին
Զժերսըն սրբով խողիուէին: ³

¹Տես Վ. Դ. Смирнов, Кошибей Гемюрджинский и другие османские писатели 17 века о причинах упадка Турции, СПб, 1878, էջ 120—121.

²Տես Հ. Անսայան, Հայկական աղբյուրները Թյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957, էջ 50:

³Նույն տեղում, էջ 43:

Այս թղթորից հետո դժվար չէ հանկանալ թուրք օսմանչ ցիների «փրկարար» դերը: Իսկ եթե ահ ու գողից, թալանից ու սպանությունից հետո, սուլթան Ֆերդիչը հրամայեց գաղաքացներ բռնությունները ու թուզ տալ մազապուրծ խաղաղ քանակությանը վերադառնալ մայրաքաղաք, իսկ հետագայում հայ արհեստավորներին թրուսայի շրջակայթից կարգադրվեց տեղափոխվել Կ. Պոլսի, ապա այդ թուրքը ոչ թե սուլթանի ու սուլթանական կառավարության մտահոգությունն էր բռնատիրված հպատակների նկատմամբ, ինչպես դա ուզում է ցույց տալ թուրքական արդի պատմագրությունը, այլ թուրքական պետության պետական շահերի թելադրանք՝ հրամայական պահանջը: Եվ անշուշտ կեղծում է պատմական իրողությունը ի. թ. Զարկը, երբ իր «Հայերի ծառայությունը թուրքական պետությանը» աշխատության մեջ հայ արհեստավորների Արևմտյան Հայաստանից և Փոքր Ասիայի հայաշատ վայրերից բռնի կերպով դեպի Կ. Պոլսի տեղահանման մեջ տեսնում է «գթառաւ» և «ողորմած» սուլթանների՝ հայերի հանդեպ բարյացակամ վերաբերմունքի և հովանավորության արտահայտությունն՝¹

Կարդալով XV—XVII դարերի օսմանյան կայսրության քաղաքական պատմությանը նվիրված թուրք պատմաբանների աշխատությունները, ընթերցողները այստեղ էլ շն հանդիպի Հայաստան երկրի և հայերի մասին ոչ մի խոսքի: Կարծեք նման երկիր ու ժողովուրդ գոյություն չունեն: Անգամ այնպիսի մի պատմաբան, ինչպես ի. Ուզունշարշըլին է իր

¹Տես I. B. Çark, Türk devleti hizmetinde Ermeniler, İstanbul, 1953: Հայտնի է, որ 1473 թ. Գերցունուս Ռեզուն Հասանի նկատմամբ տարած հաղթանակեց հետո, Մեհմեդ Ֆերդիչը էրզրումի, երզնակի Բարերար, Դիվրիկի, Սերաստիայի, Դիարբերիքիրի և այլ վայրերի հայ արհեստավորներին հավաքագրեց ու բռնի կերպով տեղափոխեց Կ. Պոլսի (տես I. B. Çark, նոյն տեղում, էջ 10): Արշակ Ալպյանձյանը իր «Պատմութիւն հայ կեսարիուս աշխատանքները» մեջ հայերն ձևուագրեց մի շաբթ հիշատակարաններ Ֆերդիչի ժամանակ հայ արհեստավորների հավաքագրուման ու բռնի Կ. Պոլսի, առաքման մասին (տես Արշակ Ալպյանձյան, «Պատմութիւն հայ կեսարիուս», Կահիրե, 1937 թ. էջ 454—547): Հետազոտմանը բարեկաններին տեղի ունեցան հայ արհեստավորների նոր բռնի տեղահանումներն ու առաքումը Կ. Պոլսի (տես I. B. Çark, նոյն տեղում, էջ 11): XVII դարի թուրք ճամապահորդ էվլիա Զելիքին մինչև իսկ նշում է Կ. Պոլսի այն թաղամասերի անոնները, ուր բնակվել էին Արևմտյան Հայաստանից ու Փոքր Ասիայից բռնագաղթած հայ արհեստավորները (տես Eviyya Celebi seynhetna-mesi, seriyi hazırlayan Reşat Koçcu İst. 1938, էջ 27):

«Օսմանյան պատմության» քառահատոր աշխատության մեջ մի անգամ չի հիշատակում, որ Մեհմեդ Ֆերհիջի ժամանակ սկսվել է և սովորականի ժամանակ փաստորեն անակ պարտվել է Հայաստանի մեծ մասի նվաճումը թուրքերի կողմից: Մեկ դարից ավելի Հայաստանի հողի վրա տեղի ուղղված թուրք-պարսկական պատերազմները. ըստ թուրք պատմաբանների տեղի են ունենում Արևելյան Անատոլիայի և Պարսկական Ռևանի (այսինքն՝ Երևանի) ու Նախիջևանի Հողի վրա: Եվ դա այն ժամանակ, երբ անգամ XVII դարի թուրք ականավոր պատմագիր Գյաթիր Զելերին իր «Զի՞հան-Քուրք» (Ալշիարհի Հայելի) աշխատության մեջ պարզուած է, թե «Ներկայումս (իմա՝ XVII դարում—Ս. Զ.) բոշ գրում է, թե «Ներկայումս (իմա՝ XVII դարում—Ս. Զ.) Սեծ Արմենիան բաղկացած է Վանի և Էրզրումի վիլայեթներից, իսկ Փոքր Արմենիան՝ Աղանայի և Մարաշի Էյալեթներից», և որ էրզրումը Արմենիայի մի մասն է Համարվում, Սահմաններն են, արևելքում՝ Երևանի, Կարսի վիլայեթները, Հյուսիսում՝ Տրավիդոնի վիլայեթը, Հարավում՝ Դիարբեքիրը և Վանը: Էյալեթն ունի 11 սանչակ. Էրզրում (փաշայի սանչակն է), Խոփիր, Բասեն, Թարթում, Խնուս, Կարահիսարի Շարքի, Կրգուջան, Մամրվան, Հրղի, Միջինկերտ, Ներքսա, Ալաշկերտ և Բայազիտ»:¹

Ի վերջո՝ Հայաստանի զգալի մասը արդեն XVI դարում նվաճվեց թուրքերի կողմից: Եվ ահա, եթե հավատանք թուրք պատմաբաններին, Հայերի համար ստեղծվեցին «Դրախտային» պայմաններ: Էսատ Ուրասը այսպես է ներկայացնում իր ընթերցողներին Հայերի վիճակը Օսմանյան կայսրության մեջ. «Օսմանյան Հայերը հանգիստ կյանք էին վարում, ըզբաղվում էին առևտուվ ու արհեստներով և շատ գուշ էին բաղվում էին առևտուվ ու արհեստներով և շատ գուշ էին հրենց վիճակից: Զինվորական ծառայությունից ազատված լինելու հետևանքով, բազմապատկվեց նրանց ընտանիքների քանակը և աճեց նրանց նյութական բարեկեցությունը»:² Եվ, քանակը և աճեց նրանց նյութական բարեկեցությունը, որ կայսեր բոլորն անշուշտ, շնորհիվ այն հանգամանքի, որ կայս-

թուրքյան մեջ տիրում էր «օրինականությունն» ու «արդարությունը»: Այդ մասին թուրք պատմագրության III համագումարում իր զեկուցման մեջ դ-ը Շինասի Ալթընդազը ասում էր. «...Որևէ մի քրիստոնյայի ձեռքից բռնությամբ մի հավաքրժները կամ նրա հողակտորում ձի արածացնելը երբեմն մինչև իսկ մահապատճի էր հասցնում: Կարճ՝ թուրքական երկրում միայն արդարությունն էր գերիշխում: Այդ պատճառով, թուրքական գերիշխանության տակ մտած այլ ազգությունները շուտով համակերպվում էին այդ գերիշխանությանն ու հոգով կապվում նրա հետ: Վկայություն կա այն մասին, թե ինչպես անարդարությամբ սպանված մի քրիստոնյայի համար տասնմեկ էնիշերիներ մահապատճիծ ըստացանք:

Արդ՝ ինչպես է ներկայացվում օսմանյան տիրապետության հաստատումը այն թուրք հեղինակների մոտ, որոնք հատուկ աշխատություններ են նվիրել Հայ-թուրքական պատմական առնչություններին (նկատի ունենք նախ և առաջ գարձյալ Ձեմալ Օզկայային, Գյամուդան Դյուրլունին և այլոց): Դիմենք վկայակուղությունների: «Այն ժամանակ երրմուսում թուրքերը վերջնականապես փոխարինեցին Առաջապետ Ասիայի քաղաքական ուժը ներկայացնող բյուզանդացիներին,— կարդում ենք Զ. Օզկայայի մոտ,— Հայերը, որոնք ցրված էին երկրով մեկ ու իրենց գոյությունը քարշ էին տալիս ուրիշ ժողովուրդների արանքում, գտնվում էին ոչնչանալու ճանապարհին»:

Նրանք հունադավան եկեղեցու և բյուզանդական վերջին կայսերի կողմից ենթարկվում էին սարսափելի ճնշման: Նրանցից շատերը, և ամենաերկելիները, լքել էին իրենց բնակավայրերը ու հաստատվել օտար երկնակամարների տակ, հույս ունենալով այնտեղ գտնել անդորր, գոյության միջոցներ և մասնավորապես ազատ միջավայր շարունակելու համար իրենց սովորական նենգություններն ու հանցագործությունները, սակայն հանդիպեցին միայն անախորժությունների և մեծ մասը ուրիշ ուժնել շգտավ անելու, քանի ծովագելու այն ժողովուրդների մեջ, որտեղ և նրանք ապրում էին:

¹ Sivas H. H. Uzunçarsılık, Osmanlı tarihi, c. II, Ankara 1949, t̄ 243—399 և այլն:

² Տես թուրքական ազրյուրերը Հայաստանի, Հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Հատ. թ. էջ 39:

³ Es'at Uras, t̄ 152:

Սիայն այն հայերը կարողացան մի քիշ շունչ քաշել, որոնք (դա առաջին հայացքից պարագոկսալ կարող է թվայ) փրկվել էին հունադավան և կեղեցու, տեղական իշխանական տների և Կոստանդնուպոլսի քրիստոնյա կայսրերից թուրք և մուսուլման տիրակալների միջոցով:

Հիրակի, շնորհիվ նրանց, նրանք պահպանեցին իրենց ինքնուրուցնությունը, ազատված լինելով զինվորական ծառայությունից՝ հնարավորություն ունեցան ամբողջապես նըմիրվելու գյուղատնտեսության, առևտրին, արհեստներին, և եթե դեռևս հակա հարստություններ չէին հավաքում, այնուամենամիշտ նրանք լավ էին ապրում և նրանց թիվը մուսուլմանների ու հատկապես թուրքերի համեմատությամբ, որոնց արյունը, ուժն ու կորուզը, ունեցվածքը հոսում էին գետի գես, ավելանում էին»:¹

Այսպիսով, թուրքերը հայերին քերում են «փրկություն», և ազատություն» բյուզանդական դաժան լծից: Հաստատվելով Հայաստանում «փրկութերը քրիստոնյաներին թողեցին կրոնական» և մշակութային ազատության կատարյալ տնօրինումը:² «Եատ էական հարց է, — այնուհետև կարդում ենք Զ. Օգկայայի մոտ, — որ թուրքերը մեծ հաղթանակի պայմաններում՝ անգամ անմիշականորեն ու վեհանձնարար պարտվածներին տվեցին իրենց սեփական օրենքներով ու պովորություններով ինքնակառավարվելու իրավունք»:³

Այսպես իբր վարկեցին թուրքերը իրենց գեց գարեր շարունակ մաքառած բյուզանդացիների նկատմամբ: Եթե դա այդպես է, բացականշում է հեղինակը, ինչպես կարող էր պատճեն, որ «...այս նույն թուրք ժողովուրդը այլ կերպ վարին հայերի կամ հայկազյանների հետ, որոնք ի վիճակի լին եղել երրկից որևէ մարտի բռնվել թուրքերի հետ, որևէ մի պատճեն ստեղծել նրանց ճանապարհին թուրքերի կողմից Առաջարոր Ասիայի վերջնական նվաճման ժամանակ»:

Ովքե՞ր ամենից շատ օգտվեցին 1453 թ. թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավումով: Հայերը, — պատասխանում է մեր հեղինակը, իսկ թե դա ինչ «օգուտ» էր, մենք տեսանք հեղինակը, իսկ թե դա ինչ «օգուտ» էր, մենք տեսանք

Արդահամ Անկյուրացու և Առաքել Թաշիշեցու «Ոզբե-կրից մեջբերված առանձին հատվածներից: Այն աստիճան մեծ էին հայերին տրված արտօնությունները Կոստանդնուպոլսում, ուզում է հավաստիացնել իր ընթերցողներին Զ. Օգկայան, որ նրանք արդեն կազմույտ էին մի տեսակ պահություն՝ պետության մեջու՝ թուրքերը, այնուհետև գրում է Զ. Օգկայան, ոչ մի ժամանակ չեն ստիպել իրենց հավատակներին ընդունելու մահմեդականությունը: «Ճշմարտությունն այն է, — այնուհետև կարդում ենք մեր հեղինակի մոտ, — որ նրանք ոչ միայն շանձագերծեցին որևէ հալածանք իրենց օրենքներով ղեկավարվող քրիստոնյաների և հրեաների նըկատմամբ, այլև նրանց տվեցին կատարյալ ազատություն իրենց կրոնական բոլոր ծիսակատարությունները կատարելու համար, բացարձակ անկախություն յուրաքանչյուր դավանանքին և երբեք շմիջամտեցին նրանց կրոնական գործերին»:⁴ Եվ նույնիսկ այն դեպքում, երբ կամավոր սկզբունքով մի քրիստոնյա հավատակ, տվյալ դեպքում հայր, մահմեդականություն ընդուներ, ապա «թուրքերի հանդուրժողականությունը այն աստիճանի էր համում, որ նորաթուի մահմեդականություններին թույլ էր տրվում ազատորեն շարունակել խոսել իր մայրենի լեզուն և պահպանել իր նախնիների կենցաղն»:⁵

Պատմական փաստերը, ինչպես մենք կտեսնենք հետագա շարադրանքի ժամանակ, ճիշտ հակառակն են վկայում ու հեղինակի այս «փաստարկումները» չեն կարող համոզել նույնիսկ թուրք ընթերցողին: Քաջ իմանալով այդ մասին, հեղինակն ստիպված է անել հետեւյալ վերապահումները: Ճիշտ է, — գրում է նա, — (Օսմանյան) երկրում, մուսուլմանները ինչպիսի ազգության էլ նրանք պատկանելիս լինեին դիտվում էին իրավահավասարության միևնույն հողի վրա, քանի որ պետությունը, որը խարսխված էր կրոնի վրա, մի տեսակ իրենց մուսուլմանների — Մ. Զ.) մասնավոր հաստատությունն էր հանդիսանում:

Սակայն ոչ մուսուլմանները հեռու լինելով ճնշումից, հալածանքից, կոտորածից, իրենց հերթին այն, ինչ վերաբեր-

¹ Cemal Özkaya, էջ 60:

² Նույն տեղում, էջ 49:

³ Նույն տեղում, էջ 51:

⁴ Նույն տեղում, էջ 53:

⁵ Նույն տեղում, էջ 58:

⁶ Նույն տեղում, էջ 59:

վեց էր իրենց ներքին գործեղին, այս պետությունից կատարելապես անկախ էին (sic!)»:¹

Այսպիսով, ըստ Զ. Օզկայակի, քրիստոնյա հպատակների, ավագը դեպքում հայերի համար թուրքական տիրապետությունը բերում էր միայն արդար իրավակարգ ու երշանիկ չեղանք, որը մասսամբ, հեղինակի հավաստիացումով, խախտեց միայն XVIII դարում: Այդ մասին մի թիւ հետո:

XVI դարում թուրքերը Հայաստանի տարածքի վրա վերջնականապես հաստատվեցին հրով ու սրով: Հայ և օտար աղբյուրների վկայությամբ թուրքական տիրապետությունն իր հետ բերում էր արյուն ու ավեր, կոտորած ու արտագաղթ, վիշտ ու արցունք, երկրի համբնդանուր ավերում ու ամացում:

XVI դարի արշալույսին, ինչպես հայտնի է, Անդրկովկանում ու Սերծավոր Արևելքում իրենց տնտեսական ու քաղաքական գերիշխանությունը հաստատելու համար, սկսվեցին երկարատև պատերազմական գործողություններ Ծամանդաւն թուրքիայի և Սեֆյան իրանի միջև: Հայաստանն իր ուսելան թուրքիայի միջև ամսական գործողությունների ամրի վրա էր կրում պատերազմական գործողությունների ամբողջ ժամանությունը: Այդ պատերազմները, որոնք տևեցին մինչև 1639 թիվը, ավերում ու ամայեցնում էին երկիրը, հայ ժողովրդին պատճառում անլուր տառապանքներ:

XVI դարի հայ, ինչպես և արևելյան աղբյուրներում հաճախակի կարելի է կարդալ «ամեն ինչ ոչնչացված էր», «...երկրում ոչինչ չէր մնացել, անգամ խոտը» և որ նվաճողները գործադրությունները և զշենս», XVI—XVII դարանդեմ քաղաքն ու զերկիրը և զշենս: XVI—XVII դարերի թուրք պատմագիրները, նկարագրելով Հայաստանի հողի վրա տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմները, բացահայտում են մեր առաջ կողոպուտի, ամեն տեսակի կամայականությունների, հպատակած գողովուրդների զանգվածային ոչնչացման, գերեվարման մի ահավոր պատկեր: Պատմագիրների նկարագրությունները լի են հետեւյալ հայտարարություններով՝ «նվաճեցին», «բնակչության մի մասին գերեվարեցին, մյուսին՝ ոչնչացրին», «ավերեցին քաղաքները հողին հավասարեցնելով»: Հայաստանը

նում ստեղծված ծանր արտակարգ դրությունը դարի առաջին քառորդին կարծ, սակայն վերին աստիճանի արտահայտի ձևով ներկայացնում է մեզ նույն դարի բանաստեղծ, Աղթամարի հայոց կաթողիկոս Գրիգորիս Աղթամարցին.

«Հագարացիք օրինօք թիւր

Զազգս խանձեն, որպէս զհուր»:²— կարդում ենք նրա մոտ:

Նվաճողների կատարած ավերածությունների անմիջական հետևանքը տարածամ մահը, համաճարակն ու սովն է: 1549 թ. Բարկիս գյուղում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք հետևյալը. «...Եղե մահտարաժամ և մեռան անթիւ տղայք, հենց որ կալոյ ժամանակին տղայ չկայր որ զկամսն քշեր...»:³

Եղ 1533—1535, և 1544—1549, և 1551—1555 թվականների պատերազմական տարիներին նվաճողները այրում, ավերում, կողոպտում էին ամեն ինչ: 1533 թ. պատերազմների ժամանակ, Հովհ. Արծիշեցի տարեգրի վկայությամբ, թուրքական զորքերը «...ցրութալ ի շարս դիմաց ամերեցին և անմարդաբնակ արարին, զկանայ երկիրն, զնուանայ և ԶԱՄԿՈՒ (ընդգծումը մերն է— Մ. Զ.)»:⁴

1548—49 թթ. պատերազմական գործողությունների ժամանակ Ֆրանսիական թագավորին ուղարկած հատուկ գրության մեջ սուկթան Սուլեյմանը այս արշավանքի ընթացքում հանդես է գալիս որպես հպատակների (հայերի) շահերի արտահայտիչ. «Արդ՝ երկրի ույաներն ու հպատակները, մեր հովանավորության ներքո, արժանանալով թագավորածը գովանավորության և աշխարհապարփակ ողորմության, զերծ մնացին կողոպուտից ու թալանից և վայելեցին իմ փառիշտիքական գթությունն ու ողորմությունը շնորհիվ ստեղծված ապահովությանն ու անդորրությանը»:⁵ Գուցե նման «փաստեր» նկատի ունեն արդի թուրք պատմագրության ներ-

¹ Կ. Կոստանյանց, Գրիգորիս Աղթամարցին և իւր առաջեր, Թիֆլիս,

1898, էջ 18:

² Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագրի № 9223, հիշատակարան ժամ:

³ «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 229:

⁴ Թուրքական աղբյուրները Հայաստանի, նախիր և Անդրկովկասի մյուս ժողովորդների մասին հազար Ա. Խ. Սաֆրանյան, հ. թ., Երևան, 1904, էջ 204:

կայացուցիչները XVI—XVII դարերի Օսմանյան կայսրության մեջ իրաղի իրավիճակը ներկայացնելով կդեռական։ Թե գա ինչ ապահովություն ու անդորրություն էր, երեւում է գրի ներսես Վարագեցու 1548 թ. հետևյալ հաղորդագրություններից։ Օսմանցիները, — գրում է նա, — «...քակեցին առաջա սարակ զգիւղս և զբաղաքս՝ զծու և զտունկս առ ի յայրել զփայոս ի խանութ և յայլ ինչ պետս իրեանց»։ Հաջորդ՝ 1549 թվականին, — այնուհետև շարունակում է ներսես Վարագեցին, — սուլթանը «...հրամայեաց տանել եօթ բեռն կարմիր (սուկի) ի Վան և պարսպել զբաղաքն, և սկսան ի շինելն, քակեցին զգերեզմանս՝ զխաչքար և զտապանաքարն և արկին ի հիմն պարսպին և եօթն ամիսն կանգնեցաւ երեք կողմն քաղաքին ի յարաց ամսոյ մինչ ի նաւասարդի։ Դարձեալ հրամայեաց մեծ արքայն՝ հունքար յամենայն աշխարհաց՝ որք ընդ ձեռամբ իւր էին, ցորեան, գարի (ժողովել) և տանել ի Վան»¹.

Ի պատասխան 1551 թ. սեֆյանների Արևմտյան Հայաստանում կատարած ավերիչ ավագատակության, թուրքերը 1553—54 թթ. փաստորեն ավերակի վերածեցին Արևելյան Հայաստանը։ Թուրք պատմագիր ի. Փեշեւու բառերով ասած, 1554 թ. շարժվելով Շորագյալ, «Հաղթական բանակը մինչև հիմքը կործանեց ու ավերեց բարեշեն գյուղերը»։ Շորագյալից շարժվելով դեպի Երևան, թուրքերն այրեցին «շահէրի և խանների պալատները, այգիներն ու ամեն ինչ... ֆետնին հավասարեցրին»։ Թուրքական բանակը ամենուրեք զբաղվում էր կողոպուտով և այն «Հարստությունները, որոնք ըսնարավոր չեն տանել, բոլորն այրեցին, — գոռում է ի. Փեշեվին, Երևանից թուրքական բանակը շարժվեց դեպի Խախիցիսն, Այստեղ՝ նույնպես թուրքերը ոչինչ շնողեցին «քարը քարի վրա», այնպես, որ «Հազթական բանակի» մուտքից առաջ «քաղաքներն ու գյուղերը, տներն ու կառուցները այն աստիճան ավերվել էին, որ բուի ու ագուավի բույն էին դարձել»².

Թե ինչպիսի «գրկարարներ»՝ էին թուրք զավթիչները, դարձյալ մեզ բացահայտում է ի. Փեշենին Նկարագրելով նրա վաճողների վերաբերմունքը տեղացի հայերին, նա գրում է,

¹ Մատեկադարան, ձեռ. № 6273, էլ. 438—440.

² «Տարի-ի Պেչևի հատ. 1, էլ. 313».

թե հափշտակված հարուստ ավարի մեջ էին և ռարծաթի նըման մարմին ունեցող մանկամարդ սիրելիներ, վարդանման երես ունեցող մատղաշ ու քնքուզ աղջիկներ, աննման և հրաշալի հարսներ», որոնց թիվը ի. Փեշենի գրիշը «լի կարող նկար քագրելու»։ Ոչ մի արշավանքի ժամանակ, — շարունակած է նա, — բանակն այնքան հարստություն ձեռք շրերեց, ինչքան այստեղ», և որ «չկար մի վրան, ուր սիրեկանների ու սիրուհիների թիվը երեքից պակաս լիներ»։ Հինգից-տասից ավել ունեցողներին հաշիվ չկար»¹.

XVI դարի 70—80-ական թվականներին տեղի ունեցած թուրք-պարսկական հերթական պատերազմները նոր արհապետք ու աղետ բերեցին հայ ժողովրդին, որոնք այնքան վառ կենդանի լեզվով նկարագրված են այդ տարիներին արտագրված հայերներ ձեռագրերի մի շարք հիշատակարաններում² Խլաթում գրված մի ճառընտիրում գրիշներ Սարգսի, Ներսեսի, Վարդանի և Հովհաննեսի թողած հիշատակարանը ընթերցողներին ցնցում է նվաճողների կատարած լվաված ու շտեմված վայրկագությունների նկարագրությամբ, երկորի ընդհանուր ավերմամբ ու խաղաղ բնակչության զանգվածային գերեվարության մասին հազրողած մանրամասնություններով։ Այն աստիճանի ողբալի են նկարագրված պատկերները, որ գրիշներն իրավամբ գրում են, «...ոչ կարեմք լեզուաւ պատմել, և ոչ զագիրն նոցա (իմա՝ թուրք նվաճողների—Մ. Զ.) ընդ գրով արկանել»։ Թուրքերը, — գրում են նրանք, — «...զբաղում քաղաքս՝ և զգեղս՝ և զգաւառ աւելալ քանդեցին, զարսն սրով սպանին, և զկանայսն և բանական զերեվարեցին; և այնլավ անողորմ բան արարին, զտղայսն գերեվարեցին; և այնլավ անողորմ բան արարին, զի տղայն՝ որ որովայնաւ կալան և ընկեցին ի վառեալ թօնիրն ի մէջ կրակին, և այլ ևս զտղայքն ի զիրկս մարցն շամբէին, ի մէջ կրակին, և այլ ևս զտղայքն ի վերայ նոցա, զմարս զստինսն, և յանկարծ հասունէին ի վերայ նոցա, զմարս սպանանէին և արին և կաթն իրար խառնէին և շամբէին և մանկտեաց, ոչ գիտէին զվայս իրեանց»³.

1584 թ. թուրքերը ավերեցին Երևանը, կողոպտեցին նրա հարստությունները ու գերեվարեցին. նրա բնակչությունը՝ նոսելով քաղաքի բնակչության և ամենից առաջ հայերի զանգ-

¹ Նույն տեղամ.

² Մատեկադարան ձեռ. № 6273, էլ. 502—503.

³ Նույն նեղում:

վաժային գերեվարության մասին, ի. Փեշկին նշում է, որ գերի վերցվածները բարձրացրին այն հարցը, թե արդյո՞ք խաղաղ բնակլության գերեվարումը օրինական է, հարց, որ մուժիքի թեմալ փաշա Զադեն իր Ֆեթվաներով (մեկնություններով) հաստատեց «օրինականությունը»։ Մուժիքին մինչև իսկ գտավ, որ «...շարժաթով թույլատրվում է գերի վերցված խանանց հետ միասին գերի վերցնել նաև նրանց փոքրահասկ երեխաներին»։¹

1585 թ. Արճեղում արտագրված ավետարանի հիշատակարանում Կարապետ եպիսկոպոսը գրում է... ի դասն և ի նեղ ժամանակի... Եւ եկեալ ի յիստմազօլայ վեզիր փաշայ մի Աւսման անուն ի վերայ Արզուումայ գնաց երելով ու աւերելով, և զհայոց ազգս կողոպտելով՝ գնաց ի Շահաստան ի Թաւրեզ և ի տեղն բերդ պատրաստեաց և ինքն (անդ) սատակեցաւ և հեծելազօրեն անգլուի ի յետ դարձան և եկեալ զծովու բոլորս (Վանայ) երելով և աւերելով՝ և զհայոց ազգս կողոպտելով և զորն բռնէին իսկանչչին (տանջեին) և զօրապահաց թէ թագուցած կեր, թէ ի հացէ, թէ ի փարթալէ (ի շորեղենէ) թե ինչ որ գումանք (կասկած) ունէին զամէն ի ձեռներն տային, դեռ չէին ազատեր, և զորն ֆար ու ֆասատ (զրպարտանք) ունէին և զհայոց ազգս խիստ դառն ու դիժար նեղէին, միթե Աստուած զվերջն բարի առնէ և զհայոց ազգս ազատէ։²

Պատերազմական գործողությունների անմիշական հետեւանքը սովուն ու համաձարակն էր։

XVII դարի վերջին հայ ժողովրդի գլխին Արևմտյան Հայաստանում պայտթեց նոր է՛լ ավելի ահավոր մի աղետ՝ Զալալի հրոսակախմբերի շարժումը, որը հիմնահատակ ավերեց երկիրը և պատճառ դարձավ հայերի և հատկապես արհեստավորական տարրի երկրից զանգվածային արտագաղթին։³ Հայ ժողովրդի համար ստեղծված ժանրագույն դրությունը

¹ Որ գերի վերցվածների մեծ մասը հայեր էին, երեսում է ինչպես իրենց թուրք աղյուսների տվյալներից, այնպես էլ XVII դարի անգիտաց առաջարական ճանապարհորդ Ժոն Նյուքերի հետեւալ վկայություննից. «Պարսկական ճանապարհորդ» անգամ պատրազմներում (իմա՝ 1578—1584 թթ.— Ս. Զ.) շատ տարեկան վերջին պատրազմներում (իմա՝ 1578—1584 թթ.— Ս. Զ.) շատ դրիմունյա գերիներ էին վերցրել երեսում և ուրիշ տեղերում» (Հովհ. Ջակոբուս Պատրիարքություններ, մասն Ա., էջ 544):

² Մատենագրան, ձեռ. № 8939, էջ 274 ա—274 բ։
զօնքի վեճակը օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966 թ։
«Այդ ժաման տես Մ. Զալալային, «Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վեճակը Օսմանյան կայության մեջ»։

պատկերավոր ձեռվ մեզ ներկայացրել է Երեմիա Զելեբի թյումյունյանց։ Ահա և առանձին հատվածներ այդ մասին խառնիճաղանճ գունդը խուժադութք (խոսքը Զալալիների մասին է— Ս. Զ.):

Զոր տեսանողը էին սարսեալ,
Զկանայս մանկամբ քարշին գերի
ծ լըն ծ լըն իրեան շրջեցուցեալ։⁴

Ավելի մոայլ գծերով է ներկայացնում ստեղծված ժանր վիճակը Հայաստանում շալալիների շարժումների հետեւանքով Ագարիտ Սասնեցին՝

Այս ամենայն շարս որ գրեալ,
ի մեր մեղացըն գործիցեալ
Հայաստանս— հիմն քակեալ
Մինչև ի սպառ զնա կործանեալ,
Հազար քառասուն թուին սկսեալ
Մինչև զաթսունըն ժամանեալ,
Եւս առաւել շարիթ ցուցեալ,

Զաշխարհս հայոց բընաւ շնչեալ
Այնուհետև՝

«Ի թագրիմոյ մինչ ի Ստամպու
Քար վերայ քարի ոչ մընացեալ.
Այլ ամենայիշըն վախուցեալ,
Երկրոց երկիր սփռեալ ցրուեալ»։⁵

Թուրք-պարսկական պատերազմներն ու շալալիների շարժումը մի կողմից, գյուղացիների զանգվածային փախուստը իրենց տեղերից՝ մյուս կողմից, այլ խոսքով՝ հասարակական արտադրության և վերարտադրության պրոցեսի տևական խանգարման պատճառով, երկրում համատարած սովոր սկսվեց, որը կլանեց հարյուր հազարավոր մարդկանց կյանքը, «...Հողագործք և երկրագործք՝ որք յիւրաքանչիւր տեղիս գոյին,— գրում է Առ. Դավթիմիեցին, — յերկիւլէ և յահէ սոցա (իմա՝ շալալիների) փախուցեալ ի բերդս և ի դղեակս և ի փապարս լերանց ամրանային և ոչ կարէին առնել զերկրա-

¹ Մատենագրան, ձեռ. № 8939, էջ 274 ա—274 բ։

² Առ. Սասնեցի, Ողբ ի վերայ հարուածաց արեկեան գաւառցն և աշ-խարհի հայոց ի հեռաց ճալալեանց, «Ճանդէս ամսորեայ», 1938, էջ 324։

կործութիւն, վասն որոյ սերմանել և հնձել և կալ և կարկռւա բարձաւ ամենեին և սկսաւ ինել ողութիւն հացի և ամենայն ուտելի իրաց և ոչ գտանիւր, և այն և ծանր գնոյթ:

Սովն այն աստիճան է սաստկանում, որ սկսան ուտել զմեռեալս և ոչ թաղէին՝ այլ ուտէին. քանզի զորացեալ էր ի վերայ աշխարհի սովն: Եւ բազումք ի բազում տեղիս զկենդանի մարդս ըմբռնէին և ուտէին²:

Սարգս քահանա Հիգանցին Վանից 1606 թ. խոսելով երկրի ընդհանուր ավերածության ու սովի մասին գրում է. «...Եւ քանզի եղև աւարտումն սր. գրիս ի դառն և ի նեղ ժամանակիս յորում նեղիմք ի բռնութենէ և ի սաստկութենէ այլազգեաց և յանօրինաց՝ զի կայ. ի մէջ աշխարհիս բազում նեղութիւն և պատուհաս սով սաստիկ, սուր անխնայ, գերութիւն անողորմ, աւերումն աշխարհաց և քանդումն գեղօրէից, կործանումն տանց և շարփումն յերկրէ յերկր և ոչ գտանէին բնաւ հանգիստ: Զի ի մայրաքաղաքէն Ստամպուլայ մինչև յայս աշխարհս ուրեք շինութիւն ոչ գտանիւր, ոչ ի քաղաք և ոչ ի գիւղ, ոչ ի լերինս և ոչ ի դաշտս: Եւ ի բազումք ի սովոյ և ի ցրտոյ մեռանէին ի տունս և ի դուրս, ի փողոցը և ի հրապարակս:³

Սովն ու սուրը, ինչպես ասվեց, ստիպում էին հայ բնակչությանը արտագաղթել երկրից և օտար երկնքի տակ փնտրել ապրուստի միջոց ու ապահով կյանք: «Եւ յայսմ ժամանակի, — գրում է Առ. Դավրիթեցին, — եղև ցիր ու ցան ազգն հայոց և գնացին իրաքանչիւր ոք հանդէպ երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ և ապրելոյ: Ոմանք յնումելի, ոմանք ի թուղդան, ոմանք ի լեհ, ոմանք ի Կաֆայ, ոմանք ի ծովերսն Պոնտոսի, ոմանք ի Թարքիզ և յԱրտակէլ՝ և ի գաւառս սոցա: Զի յազգին հայոց որքան զարիպականք կան յասացեալ գաւառս, յայս ժամանակիս և յայս պատճառէս են գնացեալ»:⁴ Ինչ բերեց թուրքական տիրապետությունը 1639 թ. մայսի 17-ի (17 մուհարեմ 1049 թ.) Կասր-ե Շիրինում իրանի հետ կնքված պայմանագրից հետո, երբ ամբողջ Արևմտյան Հայաստանը զալթվեց նրանց կողմից: Գուցե՝ «խաղաղ»,

¹ Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիթեցոյ, սակա դիպուածց Հայաստանաց և գաւառին Արարատյա, Վաղարշապատ, 1896, էջ 83:

² Նույն տեղում:

³ Մ. Մաշտոցի անվան Մատենագրաք, ձեռ. 4721, թ. 655 թ.

⁴ Առաքել Դավրիթեցի, էջ 22:

«Հանգիստ», «երջանիկ» կյա՞նք, ինչպես պնդում են արդի թուրք պատմագրության ներկայացուցիչները: Դարձաւ լինենք փաստերի լեզվին:

Որ 1639 թ. խաղաղության հաստատումից հետո էլ էական փոփոխություն չկատարվեց հայ աշխատավոր լայն զանգվածների ծանր վիճակի մեջ, երեսում է, ինչպես մեր ժամանագիրներ՝ Առ. Դավրիթեցու ու Գր. Դարանաղցու, այնպես էլ այդ տարիների գրիչների հաղորդած տեղեկություններից, արևելյան ու օտար աղբյուրների վկայություններից:

Աշխատավոր զանգվածների և հատկապես հպատակ քըթիստոնյաների համար անտանելի վիճակ ստեղծվեց հատկապես XVI դարի վերջբերից, երբ կայսրությունն սկսեց անկման առաջին հայտանիշները ցուցաբերել: Սկսած այդ ժամանակվանից, հենց իրենց թուրքական աղբյուրների վկայությամբ «Թեքյալիփ-ի դիվանիյե»-ն (պետական հարկերը) կամ «Թեքյալիփ-ի շակկան» (արտակարգ հարկերը) ավելանում են մոտ 25 անգամ: Այդպիսի իրավիճակ շարունակվում է նաև XVII դարում, երբ որոշակիորեն ակնարկելով քրիստոնյա հպատակներին, նույն դարի թուրք հասարակական գործիշ և պատմագիր Կոչիբեյը թուրք ղեկավարող շրջանների հասցեին գրում է Հետևյալ մեղադրական տողերը. «Մի խոսքով, այն ճնշումներն ու բռնությունները, որոնց ենթակա խեղճ ու այաթները (քրիստոնյա հպատակները — Մ. Զ.), ոչ մի ժամանակ, աշխարհի ոչ մի երկրում, ոչ մի պետության մեջ չեն եղել: Եթե որևէ իսլամական պետության մեջ որևէ մեկին ամենափոքր նեղություն պատճառվի, ապա ահեղ դատաստանի ժամանակ դրա պատասխանավությունը կընկնի տիրակալի և ոչ թե նրա պաշտոնյաների վրա և տիրակալը չի կարող արդարանալ տիեզերքի տիրոջ առջև ասելով «Ես իմ հպատակներին հանձնել էի այս մարդկանց»: Ցըտից սարսուած ճնշվածների հոգոցները խորտակում են տները, իսկ կեղերվողների արտասուրները խեղդում են կայսրությունը կորստյան ալիքների մեջ: Անհավատությունից աշխարհը չի կործանվի, այլ կանգուն կմնա, իսկ բռնությունից նա չի կանգնի»:⁵

Թուրքական կառավարության ներկայացուցիչների գեմ

սովորական պալատին բողոքել իմաստ չուներ: Թուրք պատմագիր Կարա-Չելիքի աղքան, շարադրելով 1654—1655 թթ. դեպքերը, այդ մասին գրում է: «Եթե բողոքողների ճայնը ի վերջո լսվի Ստամբուլում, նրանց անմիջապես նետում են բանտերը ու հարվածույթ փայտով: Թախտավոր կլինեն երանք, եթե այնտեղից դուրս գան ողջ ու առողջ»:¹

XVII դարում պետական-վարչական մարմինների կողմից գյուղացիության ու մասնավորապես քրիստոնյա հպատակների նկատմամբ կատարվող կամայականությունները անառելի շափերի էին հասել: Ահա թե այդ մասին ինչ է գրում երկար տարիներ թուրքիայույ ապրած ու թուրքիայի ներքին իրավիճակի քաջատեղյակ ֆրանսիացի Հեղինակ՝ Միշել Ֆերուրը. «Նահանգներում փաշաները դարձել են փոքրիկ թագավորներ և վարչում են իրենց հպատակների հետ համարյա նույնպես, ինչպես Մեծ Տիրակալը (սովորականը—Մ. Զ.) ու իշխում են հպատակների ինչպես ունեցվածքի, այնպես էլ, մասնավորապես, կյանքի նկատմամբ, որոնց, երբեմն, զայրույթի պահին առանց դատի ու դատաստանի մահվան են դատապարտում: Նրանք հազար ու մի խժդություններ են կատարում՝ գալով իրենց կառավարման ենթակա շրջանները: Նրանց գործակալները ավերում են գյուղերը, գողանում, կողոպտում ու ամայի են զարձնում այն գյուղերը, որտեղից որ նրանք անցնում են... Նրանց վայրագությունների մասին ամբողջ հատորներ կարելի է գրել, սակայն այդ մասին են լուսում եմ...»² Այնուհետև նույն հեղինակը գրում է, թե փաշաները, քաջ գիտենալով իրենց պաշտոնի կարճատև լինելը, «...գործադրում են սարսափելի գաղանություններ և կամայականություններ այն աստիճան, որ խեղճ ծողովուրդը հոսահատության է մատնված և ստիպված թողնում է իր հո-

¹ M. Belin, Essais sur l'histoire économique de la Turquie d'après les écrivains originaux, Journal Asiatique vol. III, V. Paris, 1864, t. 329—330.

² M. Febvre, Théâtre de la Turquie, Paris, 1678.

(«Les Bachas sont des petits rois dans les provinces, et agissent presque le : même pouvoir que le grand seigneur, tant sur les biens que sur, la vie des particuliers qu'ils condamnent quelques fois à la mort la colère sans aucune forme de procès. Ils font wille désordres en se rendant au lieu de leur gouvernement. Leurs gens ruinent la campagne, volent, pillent et désolent les villages par ou' ils passent. On ferait des volumes entiers de leurs tyrannies que je passe ici sous silence....»)

ղակտորը ու թափառում երկրե երկիր, փոխանակ աշխատելու ու մշակելու հողը, քաջ իմանալով, որ իր արտադրաժարիքը գնալու է բռնակալների քսակը»:¹

Օսմանյան տիրապետությունը հայ ժողովրդին բերում էր անլուր զժբախտություններ թե՛ պատերազմի և թե՛ այսպես կոչված «խաղաղ» տարիներին: Պատերազմները, կենտրոնական կառավարության դեմ ուղղված առանձին ավատատերի ապստամբ ելույթները սովորաբար ուղեկցվում էին շտեսնված ավերումներով ու գագանություններով: Նրանց հորդաները գործում էին հրով ու սրով, զարհութելի մոլեգանությամբ ու գաֆանությամբ: 1642 թ. մի սաղմոսարանի հիշատակարանում Կողոնիայից (Ղարահիսար) գրիշ Մանուկ Ղարահիսարցին գրում է, որ սաղմոսարանն արտագրված է և նեղ և ի դառն ժամանակին, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ընդ բռամբ ածեալ եղև աշխարհս ընդ շարաշուք և ընդ մարդախողող և ընդ գագանադեմ ազգին նետողաց (իմանթուրքերի), զոր ազգի նեղությամբ և շարշարանաւք և հարկապահանջութեամբ կեղեքն և աւերեն զաշխարհս, և ոչ ու (ս) տեք հասանի աւգնութիմ, ոչ յերկնէ և ոչ յերկրէ, և ոչ այլ ուստեքք»:²

Մի անանուն հեղինակ 1664 թվականին գրում է թուրքական փաշաների կեղեքումների մասին: «Ամենայն ապրանք թուրքացն բռնութեամբ է և անիրաւութեամբ. ուստի փաշայքն պարարտանան կար զօրութեամբ քրիստոնէից և հրէից, իսկ թագաւորն գիրանայ ընշիւք փաշայիցն, զորօրինակ առուրքն լուն և առատացուցանեն զգեստ, իսկ գետքն հուսկ յետոյ իշանեն ի ծովն և կորուսանեն զգալն ևս բարեաւք և զհամբաւ զրոյն ևս»:³

1584 թ. իր հիշատակարանում Միքայել Ամթեցին. նշում է, որ սր. Գրիշ արտադրությունն ավարտել է. «...ի ժամանակս թագաւորութեանն տաճկաց սովորական Մահմետի..., որն ...հարկապահանջութիւնս յոլովս պահանջէր», — որի հետևանք քով, — «...ոմանք գլխովին իսկ անկեալ յաղբատութիւն և բնակութեանց իւրեանց փախուցեալ»:⁴

¹ Նույն տեղում, էջ 233—234:

² Մայր ցացակ Հայերէն ձեռագրաց մատենադարանի Միքարեանց Ք Վենետիկ, հ. Ա. Վենետիկ, 1914, էջ 321:

³ Մատենադարան, ձեռ., 1496, թ. 309 թ.:

⁴ Մատենադարան, Մ. Մագմարոսի գործերը, թղթական, թ. 50, էջ 55—56:

XVII գարի հեղինակ Հակոբ Կարնեցին իր «Տեղագիր վերին Հայոց» աշխատության մեջ նկարագրելով Հայրենի հողի հարստությունը՝ գյուղատնտեսական մթերքների առատությունը, հակադրում է գրան, մյուս կողմից, իր հարազատ ժողովրդի ծանր վիճակը, մի վիճակ, որը հետևանք էր թուրքական հարկացին սիստեմի անտանելիության և թուրք պատական պաշտոնյաների կամայականության: Նա գրում է: «Եղի ու ցեղ և ազգի ազգի սուստ պատճառ հարկապահանցովինն և կեղեցի անասելի է և անպատմելի, անողորմ առնուլն ի քրիստոնէից: Զի ինձ այնպես թուի, թէ Դանիել վասն սոցա մարգարէացաւ վասն չորորդ գազանին, թէ ահեղ էր և զարմանալի, ուտէր և զմնացեալսն առ ոտն կոխէր»:¹

Թուրքական կառավարությունը բռնատիրական է, վայրենի և խղճի թելադրած օրենքներից դուրս,— գրում է Մ. Ֆերուրը:² «Սուլթանը,— մի ուրիշ տեղում ասում է նա,— ավերում է կայսրության սահմանում գտնվող նվաճված նահանգները, և նրա բնակիչներին թողնում այնպիսի վիճակում, որ նրանք հնարավորություն շունենան ապստամբելու Դա արվում է բնակչության մի մասը տեղափոխելով մի շրջանից մյուսը, իսկ մնացած խեղճերին թողնելով կատաղած մի փաշայի տիրապետության տակ, որը վերջնականապես քայլայում է գյուղի, գավառի բնակիչներին»:³ Եվ նման պայմաններում անգամ հայ ժողովուրդը շարունակում էր տոկալ ստեղծել և ստեղծագործել: Դա մինչև իսկ զարմացնում էր թուրքերին: Միշել Ֆերուրը բերում է հետևյալ հետաքրքիր վկայությունը, թե ինչպես թուրք մի ֆեռդալ զարմացած հարցնում է մի հայի՝ ինչպես հայերը նման թշվառ պայմաններում բազմանում են, իսկ իրենք թուրքերը գնալով պակասում, երբ տրամաբանորեն պետք է լինի հակառակը Շինչից է, — մի թուրք զարմացած մի օր ասում է իրեն ծանոթ մի հայի, որ գուք քրիստոնյաներդ աճում եք, իսկ մենք ընդհակառակը՝ քշանում, փոխանակ բազմանալու: Այնինչ թվում է, թե մենք ձեզ հետ համեմատած մրջումի նման

պիտի բազմանայինք հետևյալ երկու պատճառով: Նախ շատ կանաչք ունենալու իրավունքի պատճառով, որը մեզ թույլ է տրված, և երկրորդ այն պատճառով, որ մենք ամեն օր մեր կողմն ենք ընդունում ձերոնցից զգալի թվով մարդկանց բռնությամբ կամ շահագրգուելու միջոցով: Նրանք թուրք են դառնում կամ գլխահարկը շվճարելու և կամ թե իրենց կատարած հանցանքի համար մահապատժից խուսափելու նպատակով»⁴:

Թուրքիայում, գրում է Ֆերուրը, — արդարություն գոյություն չունի, «ինչպիսի հանցագործություն կամ զանցանք կատարած էլ լինի մեղավորը երբեք չի դատապարտվում, — գրում է նա, — քանի որ հնարավոր է՝ բավարարել դատավորի ընչափաղությունը: Սա այնքան հայտնի հանգամանք է կոստանդնուպոլսում, որ մերթ ընդ մերթ Բարձրագույն դուռը բոլոր նահանգներն է ուղարկում թեֆթիշի (ուղիղոր— Մ. Զ.): Կոշված դատավորների արտակարգ լիազորությամբ՝ անպատիծ մնացած հանցագործությունները ի հայտ բերելու Մակայն սրանք նույնպես անաշառ չեն, ինչպես մյուսները, և այս պաշտոնը գնում են իրենց քսակը լցնելու համար»:⁵ Այս դատավորները «...հուսահատության գիրկն են նետում Մեծ Տիրակալի հպատակներին», — այնուհետև գրում է Ֆրանսիացի Հեղինակը: «Կադին (դատավորը), — մի այլ տեղ կարդում ենք նույն հեղինակի մոտ, — կաշառք է վերցնում, ինչպես մեղադրողից, այնպես էլ մեղադրյալից: Եվ այս պատճառով նա հաճախ առաջին վճիռը բացառող երկրորդ վճիռն է արձակում, և դատապարտում է մեղադրողին, պատրվակ բռնելով, թե իրը գեպքի մասին նրան ճիշտ չեն հաղորդել, և որ հետագայում ինքը գործի նկատմամբ՝ ամբողջական տեղեկություն է ձեռք բերել»:⁶ «Ոչ ոք չի հանդրգնի բողոքել փաշային կամ դատավորին, որ իրեն կողոպտել են, քանի որ նրան կստիպեն գտնել գողին և նրան բերել հակառակ գեպքում բողոքողը տուպանցի կենթարկվի»:⁷ — գրում է դարձյալ նույն հեղինակը:

¹ Նույն տեղում, էջ 100:

² Նույն տեղում, էջ 68:

³ Նույն տեղում, էջ 71:

⁴ Նույն տեղում, էջ 120:

⁵ Հակոբ Կարնեցի, Տեղագիր վերին Հայոց («Մակր ժամանակագրություններ», հ. Բ., էջ 56):

⁶ Michel Febure, էջ 2:

Արդի թուրք պատմագրության կողմից թմբկահարված Օսմանյան կայսրության մեջ իր անկախ ազգային ու կրոնական պատկանելությունից, հպատակների միջև գոյություն ունեցող այդքան «ժրավահավասարության» մասին դրույթը հերքվում է նաև նոր եկեղեցիներ կառուցելու փրավունքով։ Քրիստոնյաներին արգելված էր կառուցել նոր եկեղեցի կամ նորոգել ջները, իսկ կառուցվածներն էր գրավում էին մզկիթների վերածելու համար։ Միայն երբեմն մեծ կաշառքի ուժով կառավարությունից թույլտվություն էր ձեռք բերվում վերանորոգել։ «(Թուրքիայում),— կարդում ենք բերվում վերանորոգել։» (Թուրքիայում),— կարդում ենք բերվում վերանորոգել։

Եթե եկեղեցին մի փոքր բարձր լիներ, քան շրջակայի տեսքը, ապա համաձայն 1565 թ. Հոկտեմբերի 3-ի (973 թ. սեպտեմբերի էվկվել) սուլթան Սուլեյմանի հրովարտակի, ենթակա էր քանդման։² Պատահում էին դեպքեր, երբ կառավարության ներկայացուցիչներից թույլտվություն ստանալուց ու եկեղեցին վերանորոգելուց հետո, այն վերածում էին մըզկիթի, 1647 թ. մեծահարուստ Սանս Զելեբուն հաջողված է թույլտվություն ստանալ էրզրումի սր. Ստեփանոս եկեղեցու վերանորոգման համար։ Սակայն մի քանի տարի անց, եկեղեցին վեր է ածվում մզկիթի։³ 1659 թ. գրիշներից մեկը հայտնում է, որ հայրենի քաղաքում ու շրջակա գավառներում եկեղեցիներից շատերը վեր են ածվել մզկիթների ու բաղնիքների։ Նա գրում է.

«Կարեն քաղաքն պատուական
Որ աւր Ցիստիք է կառուցման
Եկեղեցիք բազում որ զան
Մէջ քաղաքն թիւ յօրեկեան
Տաճկունք առին զամեննեան,
Արին մզկիթ և զորի համամա։»

¹ Pietro della Vallé, էջ 22.
² Ahmed Refik. On altinci asırda İstanbul hayatı, İstanbul, 1935, էջ 34.
³ Սատենադարձն, Սագիստրոսի թղթապ. № 34, էջ 93.

Հակառակ Զ. Օզկայայի ու այլոց այն պնդումների, թե կրոնափությունը կատարվում է հազվադեպ և այն էլ կամավոր սկզբունքով, Գր. Դարանաղցու մոտ կարդում ենք. «Տաճիքը մեծ վարձք համարելով զբրիստոնէից ուրանալ զբրիստոս և ի Մահմեդի օրէնս և ի կրօնս դառնալ զիաւ և զեկեղեցի բեկանել և խորտակել և հաւատացեալք որ ու հաւատքն Մահմեդն և շար կրօնից նորին ազգի-ազգի տանջանօք շարշարեն և հրով այրեն և համարեն պաշտօն Աստուծոյ մատուցանել։»¹ Թուրքերը հայերին հավատափոխ էին դարձնում կամ բռնությամբ և կամ թե նրանց գայթակղղելով՝ տնտեսական ու քաղաքական արտոնություններով։

Թուրքերի տիրապետության տակ գտնվող արևմտահայերի համար ամենաանտանելին կրօնական հալածանքներն էին, որոնք երբեմն հասնում էին այնպիսի ծայրահեղությունների, երբ կեղծ ու շինծու մեղադրանքների հիման վրա սպանվում էին հարյուրավոր ու հազարավոր մարդիկ։ Այդ մասին են վկայում բազմաթիվ ձեռագիր հիշատակարաններ, ժամանակիրների և նահատակվածների մասին գրված վարքերը։²

Հայ ժողովրդի իրավագուրկ վիճակի պերճախոս արտահայտություններից մեկն էլ «Պեշիրմե»-ն (մանկահավաք) էր, որը միաժամանակ թուրք զեկավար շրջանների համաձուման քաղաքականության արդյունք էր, մի հանգամանք, որը ժընտվում է, ինչպես տեսանք, արդի թուրք պատմագրության ներկայացուցիչների կողմից։ «Պեշիրմե»-ն մի օրինականացված բռնություն էր, որը ակնառու կերպով ցույց է տալիս թուրքիայում ոչ մուսուլման հպատակների ստրկական վիճակը։³

Որ «Պեշիրմե»-ն հետապնդում էր հպատակ ժողովուրդների միաձումում, վկայում են թուրքական աղբյուրների տվյալները։ Ալա-էդգինը, սուլթան Օրխանի եղբայրը, որին

¹ Գր. Դարանաղցի, էջ 152։

² Այլ մասին տես Հ. Մաննդյան, Հ. Աճառյան, Հայոց նոր վկաները, հ. 2, Վենետիկ 1912, էջ 353, 373, 517, և այլն։

³ Այլ մասին տես մեր Հորվածք՝ «Պեշիրմե»-ն օսմանլան կայսրության մեջ ըստ թուրքական և հայերական աղբյուրների, ՊԲՀ, 1859, Խ 2-5, էջ 247-256։

թուրքական աղբյուրները վերագրում են «դեշիրմե»-ի հղացման գաղափարը, խորհուրդ էր տալիս իր սուլթան եղրորը, ասելով՝ «պարտվածները հաղթողների գերիներն են, իրենց (հաղթողներին—Մ. Զ.) են պատկանում նրանց (պարտվածների—Մ. Զ.) ինչքերը, կանայք ու զավակները, իրք օրինավոր ստացվածք: Եթե երեխաները բռնի մահմեղականացվեն ու իբրև մարտիկներ պետական ծառայութան մեջ առնըլին, ապա կշահի իրենց թե՛ ժամանակավոր և թե՛ համարենական փրկությունը»:¹

Հակառակ աղբյուրների ուղղակի վկայությունների, թուրք պատմաբաններից ոմանք ձգտում են ցույց տալ, որ իբր թե մանկահավաքը կատարվում էր կամավոր սկզբունքներով՝ Այսպես, պատմաբան Ջեվադ բեյը գրում է. «Սկզբում քահանաների դրույմների հետևանքով դժգոհություններ էին լինում քրիստոնյաների մեջ, որոնք մտնում էին զինվորական ծառայության, բայց հետագայում, երբ իմացվեց, որ զինվորական ծառայության մեջ մտնողները առաջ էին քաշվում բարձր պաշտոնների և երբ համոզվեցին, որ կառավարությունը ոչ մի տարբերություն չէր զնում քրիստոնյայի և մուսուլմանի միջև, յուրաքանչյուրն շտապեց իր որդուն հանձնել զինվորական ծառայության՝ առանց սպասելու մանկահավաքին»:² Մի ուրիշ թուրք պատմաբան՝ Մ. Հիլմին ուղղակի հայտարարում է, որ իբր «մշտական բանակը կամավոր լինելով (ցօնվում ունենալով) քրիստոնյա երեխաներից մանկահավաքի ձևով էր վերցվում»:³

Ի հերքում այս դրույթի, Անանուն Սեբաստացու ժամանակագրության մեջ կարդում ենք հետևյալը. «Ի թուին Աջ (1531) տղայ ժողովեցին ի քրիստոնէից ահ և զախ, լաց և աղաղակ և խեղճ բաներ շատ եղեւ»:⁴ Մ. Օրմանյանը իր «Աղջապատում» աշխատության մեջ մանկահավաքի բռնի լինելու մասին գրում է. «Իսկ տղաք բռնի կառնվէին, ուր որ կգտնվէին, տուներ ալ փոխելով դուրս կհանվէին, և ուր ընդդիմութիւն տեղի ունենար, զինու զորությամբ, կոտորածով

և ավերածով կընկնուեինս Մանկաժողովը աւելի ասիական գավառներու մեջ կկատարուէր և քրիստոնեայ տարրերուն մէջ ավելի հարստահարուղը հայ կըլլարու»⁵

Բոնություններով ու կռպիտ կամայականություններով յի էր 1543 թվականին հայկական գավառներում կատարված մանկահավաքը, որի մասին Մ. Զամշյանը իր «Հայոց պատմության» մեջ գրում է. «Յետ քանի մի ամաց դարձեալ եղեւ այսպիսի մանկաժողով, և որք վերակացուք էին այսոր գործոյ բազում աղետալի գործս գործէին ընդդեմ կամաց թագաւորին, խորտակէին զտունս և կողոպտէին, ուրեք այրէին և զեկեղեցիս, որպէս և յեւողիկա (թոխաթ) ետուն այրել և քակել զութն եկեղեցիս միանգամայն ի միում աւուր, յապրիլի Զ. Ի. Թուին հայոց ԶՀԲ (1543):»⁶

Եվ ահա այս դժոխային դրույթյունն է պատճառը, որ Մաղթիա Դերջանցին երկրորդ անգամ (առաջին անգամ 1531 թթ.) 1543 թվականին մեկնում է Պոլիս՝ Կամախի, Դերջանի և Բաբերդի (Բայրութի) գավառներում մանկահավաքը խափանելու նպատակով:

Հանձն առնելով սուլթանին յուրաքանչյուր տարի վճարել հատուկ հարկ «Օղանջի ստակ» անվան տակ, Մ. Դերջանցուն հաջողվում է ժամանակավորապես խափանել մանկահավաքը հայկական գավառներում: Այդ մասին XVII դարի հայ ժամանակագիր Գր. Դարանաղցին գրում է. «Եւ այլ ասեն՝ թէ ժղայ ժողովն, որ եղեւ ի սուլթան Սելիմի աւուրան, նա գնաց վարդապետն ի յլստամբոլ, այնքան տքնութիւն արար ի դրունս արքային և ժողութիւն արար, մեծ ստիպով խնդրեաց տեսանել զերեսս արքային, մինչ ծանուցին թագաւորն և նա կոչեաց առ ինքն և եհարց զվարդապետն. Զի՞նչ խնդրես... ասէ վարդապետն, եթէ գտի շնորհս առաջի քո, նա կամէ զշարդուկումի (Կարնոյ) տղայ ժողովելն ինձ օժիտ այնես և ի տեղի գին տղայոցն սակաւ հարկս զնես: Եւ հաճոյ թուեցաւ թագաւորին, հրամայեաց այնպես լինել, որ կուգայր տղայոց ժողովն մինչ ի Սեւաստ, և անգից դառնայր և ոչ զնայր ի մեզ,

¹ J. Hammer, Histoire de l'Empire ottoman, Paris, 1835, հատ. (էջ 120—121).

² Djevad bey, Etat militaire ottoman depuis la fondation de l'empire jusqu'à nos jours, Paris, 1882, էջ 82:

³ M. Hilmi, Kanuni Süleyman, in 1533—1535 Bag'dad seferi, İstanbul, 1933, էջ 14:

⁴ Մաղթիա արք. Օրմանյան, «Աղջապատում», հ. թ., Կաստանդնուպոլիս, 1934, էջ 2236:

⁵ Մ. Զամշյան, Պատմութիւն հայոց, հ. թ., Վենետիկ, 1786, էջ 513; պալիս, 1934, էջ 2236.

և գիտեմք, որ երեք տարին անգամ մի կուգայր հարկածանն տղայ, որ օղանչի ստակ ասէին»:¹

Սնողները ոչ միայն կամավոր իրենց երեխաներին չէին հանձնում թուրք դահճներին, այլ մանկահավաքը մի կատարյալ ողբերգություն էր նրանց համար: Ահա Թագեռու Սերաստացու կողմից նկարագրված մի այդպիսի ցնցող պատկեր:

Ողորմաղին դիմօք արտասուէին
Մնողն և զգականքն եղացրոք նորին
Մին զի զամենեսեան ի յողք շարժէին
Զոր ոչ կարէ պատմել ելզու մարդկալին:

Սեազգեստ լինէին քործ զգնուէին
Սոլիրաթաւալ անձամք աղաղակէին
Տարակուսեալ հոգով ի տուն նստէին
Հանգուցեալ մեռեցն երանի տային:

Ցորժամ բաժանեն զնոսա ի ծնողաց
Անդ եղն աղաղակ մեծ կոծումն և լաց
Որպէս որ բաժանեն, զգառն ի մաքեաց
Եւ եղն մեծ աղետ տարակուսանաց:²

Իրավազուրկ և ստրկական վիճակում էր գտնվում հայ ժողովուրդը Օսմանյան կայսրության մեջ: Եթե արդի թուրք պատմաբանները նկատի ունեն հայ վաճառականներին, ապա նրանք կազմում էին հայ հասարակության աննշան փոքրամասնությունը: Աղրյուրների վկայությամբ վաճառականներն էլ իրենց հանգիստ զգալ չէին կարող թուրքական բիրտ բանակազության պայմաններում: Վարշական մարմինների ներկայացուցիչները կենտրոնում թե նահանգներում դիմում էին բոլոր հնարավոր միջոցների կողոպտելու համար վաճառականներին: Միշել Ֆեբուրը գրում է, թե երբեմն փաշաները կտրել էին տալիս որևէ մի դիմակի գլուխը ու անձանաշելի վիճակում մարմինը նետում էին հարուստ վաճառականի դուն առաջ, որպեսզի որպես ենթադրյալ ոճրագործի կարողանալին կողոպտել նրան:³ Հայ վաճառականները, հաղթահարելով բազմաթիվ ու բազմապիսի դժվարություններ, շրջում էին ծվրոպայի ու Ասիայի վաճառաշահ կենտրոք, շրջում էին ծվրոպայի:

¹ Ժամանակագրության Գրիգոր վարդապետի դարանաղեցւոյ, Երևան, 1915, էջ 339—340:

² Ն. Ակինյան, Մալաթիա Դերշանցի, տաղասաց, շինարար և քարեգործ, «Հանուչու ամսօրեաւ», 1952, № 11—12, 593:

³ Մ. Febure, էջ 133:

րոնները ու կնքում մեծ առեւտրական գործարքներ: Սակայն այդ բոլորը կատարվում էր, կարելի է ասել, ոչ թե թուրքական կառավարության հովանավորության ու հոգատարության պայմաններում, այլ՝ ընդհակառակը: Սկզբնաղբյուրները վկայում են, որ թուրքիայում առեւտրական հարաբերությունների զարգացման համար մեծ խոշնդոտ է հանդիսացել քարավանային առեւտրի անապահով լինելը: XVII դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Տավերնիեն, խոսելով առեւտրական ուղիների վտանգավոր լինելու մասին, գրում էր, որ վաճառականներն ամենուրեք ենթարկվում էին ավագակների հարձակումներին: «Ամբողջ թուրքիան,— ասում է նա, — լի է ավագակներով, որոնք թափառում են մեծ խմբերով ու ճանապարհին սպասում վաճառականներին: Եթե նրանք հանդիպում են հարուստ վաճառականների, ապա կողոպտում են նրանց ու շատ հաճախ զրկում կյանքից»:¹

Նահանգների կուսակալները, փոխանակ առեւտրական քարավանների անվտանգությունն ապահովելու, հաճախ իրենք էին միանում ավագակներին, թույլ էին տալիս քարավաններ կողոպտել մեծ ճանապարհների վրա՝ ավարը կիսելու պայմանով:²

Բացի դրանից, բարեկեցիկ կյանք ապահոված հայ վաճառականությունն անգամ չէր կարող օգտվել բոլոր իրավունքներից, ինչպես դա կարող էր անել իր համերկրացի թուրքը: Տեղին է այստեղ բերել Կ. Մարփսի դիտողությունն այն մասին, որ միայն թուրքը պատկանում է իշխող ազգության ու կրոնին, միայն նա իրավունք ունի զենք կրել, և որ ամենաբարձր դիրք ունեցող քրիստոնյան ամենացածր աստիճանի կանքնած մուսուլմանին հանդիպելիս պիտի նրան իր ճանապարհը զիջի:³

Խսկ ինչ վերաբերում է հայ աշխատավորությանը, ապա նա զուրկ լինելով մարդկային ամենատարրական իրավունքներից, կրոնական կույր մոլեռունդության պայմաններում էր ամենաղաժան հալածանքների ու զրկանքների:

¹ Les six voyages de Jean Baptiste Tavernier, I, Paris, 1679; էջ 2:

² M. Febure, էջ 159—160:

³ К. Маркс, Национальности в Турции, К. Маркс, Ф. Энгельс, Т. XI, էջ 874:

XVII դարի սկզբին Արևմտյան Հայաստանի գավառներում ճանապարհորդած Սիմեոն Լեհացու վկայությամբ, թուրքերը ամեն կերպ աշխատել են վիրավորել Հապատակ քրիստոնյաների ինքնասիրությունը, ստորացնել նրանց:¹ Ահա իր ուղեգործության մեջ նա այսպես է նկարագրում հայ ժողովրդի տառապանքը. «Եւ յայնմ ամի (1613), յորում ես էի Թօխաթ, ել Հրաման շար, թէ եկեղեցիս և վանորայս մի վառեցեն մոմեղէն ճրագ, այլ եղէ, և թէ ուրեք գտանէին՝ տուգանէին: Եւ այսպիսի տառապանք և նեղութիւն էին ի ձեռս Տաճկաց, վասն որոյ յոյժ աղքատ և չքաւոր են, զի միշտ զրկին, զզվին, տուգանեն, զրպարտեն և առաւել հարկս պահանջեն. և թէ տուն որդի ունիցի ոք, ամենէն խարաճ առնուն. և թէ հեռանայ, դարձեալ առնուն: Եւ Ստամոլայ գաւառօք ծի, շորի հեծնուն. և անդի Սևաստ մինչ յԱմիթ էշ և ուղտ, իսկ Սևաստուին տան էշ ոչ տեկմա շերկի, ամենն եզ կու բանեցնեն, աղ և բեռն բառնան, այլև հեծնան»:²

Սիմեոն Լեհացին խոսում է նաև Հայաստանում ենիշերիների կատարած համատարած բռնությունների մասին. «Եւ այնպէս շար էին եանշարիքն, որ քրիստոնէից շի տային ծի հեծնալ, ոչ ջորի, ոչ լաւ շուխայ ագանիլ, ոչ այգի, ոչ տուն մեծ, այլ զամենայն յափշտակէին ի ձեռաց: Նաև առաջնորդաց շտային քննել հաս-շաս կամ օրէնք պահել. զի թէ ոք կամէր կին առնուկ և շասութք լինէր, շերթային առ հովին կամ առաջնորդ, այլ (երթային առ) ենշարի մի և տային կաշառ, և նա զայր երիցուն թօփուզով պսակ տայր առնել. և նա ակամայ պիտէր խօսիցն շելնէր, ապա թէ ոչ բազում շարիս անցուցանէր ի գլուխն և վնաս և տանջանք ձգէր թուրքաց աշխարհն ամենայն այդպես են»:³

Հայ և օտար աղբյուրների վկայությամբ ենիշերիների կողմից խաղաղ բնակչության նկատմամբ կատարված կամայականությունները շափ ու սահման շեն ունեցել: Եվ պատահական չէ, որ Գր. Դարանաղցին «ենիշերի» բառը թարգմանում է «նոր շարիք»:⁴

Թուրքական ղեկավարող շրջանները ցանկանում էին, որ

քրիստոնյա հպատակի արտաքինը արդեն խոսեր նրա ստորացուցիչ վիճակի մասին: Օրինակ՝ նրանց արգելված էր հանգնվել սև գույնի շալմա (գդակ), թանգագին կերպասեղենից զգեստների: Արևմտյան Հայաստանի քաղաքներում քրիստոնյաներին թույլ էր տրվում ապրել միայն հատուկ թաղամասերում: Քրիստոնյա-հպատակը իրավունք շուներ վկայելու դատարանում, ուր քննարկվում էր մուսուլմանի գործը: Իսկ դատարաններում էլ, երբ քննվում էր քրիստոնյայի գործը, դատավորները «...զիմում էին նրանց խոզ, շուն, գյավուր (անհավատ) բառերով»:⁵

Միշել Ֆեբրի վկայությամբ, քրիստոնյա հպատակների գախը բռնակալներից այնքան մեծ էր, որ ոչ չէր հանդգնում հարուստ երևալ կամ մի տուն կառուցելու:⁶

Եվ այս բոլորից հետո, թե ինչ արժեք ունեն արդի թուրք պատմագրության ներկայացուցիչների այն պնդումները, թե մինչև XVIII դարը քրիստոնյա հպատակների, որոնց թվում հայերի վիճակը խիստ բարվութ էր կայսրության մեջ, զգվարչէ դատել:

Զ. Օգկայան Թուրքիայի ներքին կյանքում ստեղծված ծանր կացության համար պատասխանատու է համարում ոչ թե օսմանյան բիրտ ավատատիրական կարգերը, այլ արտաքին ազդակները՝ թուրքիայի թշնամի երկրների վարած հարձակողական քաղաքականությունը: Իսկ Փ. Գյուրյունը ոչ մի խոսք շասելով XVIII դարում Օսմանյան կայսրության մեջ քրիստոնյա հպատակների վիճակի վատթարացման մասին, առաջ է քաշում մի «տեսություն», համաձայն որի հայերի մոտ առաջացած հակաթուրքական տրամադրություններն ու ազգային ազատագրական ձգտումների դրսերումը, հետեւանք էին միմիայն հայ եկեղեցու ղեկավար շրջանների գրգոիչ գործունեության ու նրա ունեցած դարավոր կապի ելքոպայի քրիստոնյա երկրների հետ: Ըստ որում Փ. Գյուրյունը փորձում է քննարկել հայ եկեղեցու ունեցած այդ «բացասական» դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում սկսած Վդարից:

Նախ լսենք Զ. Օգկայային: «Գերազանցապես եկեղեցու

¹ «Հանդէս ամսօրեալ», 1934, էջ 198:

² Նույն տեղում, էջ 159:

³ Նույն տեղում, էջ 158:

⁴ Գրիգոր Դարանաղցի, էջ 108:

⁵ Մանր ժամանակագրություններ, հ. Ա, էջ 422:

⁶ Michel Febure, նույն տեղում, էջ 173:

⁷ Նույն տեղում:

սպասավորների կողմից գրված և XVIII դարի Թուրքիայի ներքին կյանքի ստվերոտ կողմերի նկարագրությանը վերաբերող աշխատությունները իրական պատկերը չեն ներկայացնում,¹ հայտարարում է Հեղինակը, այլ կերպ ասած, Զ. Օզկայան փաստորեն պաշտպանության տակ է վերցնուածութական ավատական վերնախավի պարագիտիզմը։ XVIII դարում Թուրքիայի ներքին կյանքում տեղի ունեցած փոփոխության գլխավոր պատճառը, ինչպես նշեցինք, հեղինակը համարում է, մի կողմից, ավատական վերնախավի մոտ առաջացած միստիցիզմն ու ֆատալիզմը, մյուս կողմից՝ եվրոպական պետությունների բաժասական ներգործությունը թուրքիայի թշնամի եվրոպական պետությունների մեջ, պետություններ, որոնք Թուրքիայի անկման պատճառը դարձան, հեղինակը մասնավորապես առանձնացնում է Ռուսաստանը։ «Ճիշտ այս ժամանակ,— գրում է նա, — հյուսիսարևելքում հանդես եկավ մի ուրիշ թշնամի։ Դա Ռուսաստանն էր, որը միավորվելով Մոսկվայի իշխանների գերիշխանության տակ մի ազգային պետության շրջանակներում և ընդարձակելով իր տարածքը թաթարների և ուգրո-ֆիննական պետությունների հաշվին, իրեն հոչակեց Բյուզանդիայի ժառանգությունը, որից նա քրիստոնեություն էր ընդունելու։» («Թուրքիայի») այս բոլոր հարեան պետությունները՝ Ավստրիան, Վենետիկը, Ռուսաստանը, Լեհաստանը, որոնք քաշ գիտեին նրա (իմա՝ կայսրության— Մ. Զ.) թույլ ու ուժեղ կողմերը նրան երբեք հանգիստ չեն տալիս ու հարձակվում էին նրա վրա երբեմն անշատ ու շատ հաճախ երկուսը և երեքը միասին։² Թուրքիայի թշնամի պետությունների շարքը հեղինակը դասում է նաև իրանը. որը շշիկմը հոչակելով պետական կրոն, օգտվում էր այն դժվարություններից, որի մեջ գտնվում էր կայսրությունը... ու հաճախակի հարձակվում էր նրա տարածքի վրա։³

Մեծ մասամբ դժբախտ ելք ունեցած այս անվերջ պատերազմները, — այնուհետև կարդում ենք Զ. Օզկայայի մոտ, — քայլքայում էին (կայսրությունը) ու կազմալուծում նրա վար-

չությունը, Շատ նահանգներ մեկը մյուսի ետևից ասպատակվել էին թշնամու կողմից, ու նրեքին խռովությունները գալիս էին ավելի բարդացնելու վիճակը։ (Կայսրության) բոլոր բնակիչները ավելի կամ պակաս շափով տուժում էին այս դժբախտություններից, սակայն հատկապես մուսուլմանները, ու մասնավորապես, Թուրքերն էին դառնում դրանց իսկական զոհերը։

Իրենց յուրահատուկ հաստատություններն ունեցող՝ «Շմուսուլմանները, որոնց կրոնական ինքնավարությունը պահպանվում էր, ուղղակի չէին տուժում պետական անկարգություններից... սուլթաններից ոմանք, նկատի ունենալով, որ բնակչության մի մասի այսքան ընդարձակ արտօնություններից օգտվելը կարող է հետագայում վնասել կայսրարյանք, ցանկություն են հայտնել այդ իրավունքները սահմանափակել (ընդգծումը մերն է — Մ. Զ.):

Սակայն աստվածաբաններ ու իսլամական օրենքի մեկներ հանդիսացող ովեմանները ընդդիմացան դրան, ասելով, որ այդ արտօնությունները հոժարակամ տրված են եղել հին տիրակալների կողմից, և որ դրանք չեն հակասում շարիաթին, ուստի և դրանք չպիտի վերացնելու։

Կարելի՞ է արդյոք պատկերացնել պատմության այս աստիճան կեղծում։ Հեղինակի մատնանշած ժամանակում 1747 թ. Շեյխ-ով-Խոլամն Դիարբեքիրի կուսակալի հետ մի հանդիպման ժամանակ ասել է. «Աղջարին անհավատությունից բացի այլ հանցանելու ենքական անքանակ անքան ասել է. «Աղջարին անհավատությունից բացի այլ հանցանելու ենքական անքանակ անքան ասել է. Զ. Ռուզին շարություն է։ Հենց Զ. Օզկայայի մատնանշած ժամանակաշրջանում օսմանյան ղեկավարող շրջանների սանձազերծած հալածանքների պայմաններում թրացան, օրինակ, ակնեցի և համշենցի հայերի մի մասը։ Ակնի գավառում, — գրում է Զ. Խնճիճյանը, — Բնակիչք յազէն տաճկաց՝ զեթ ըստ մասին ի հայոց դարձան իժէ և ի ժը դարուն, ուստի և ի տեղիս տեղիս տունք նոցա կամ ազգատոհմք տակաւին պահեն գհայկական անոնս գաւառին և

¹ Cemal Özkeye, էջ 61.
² Նույն տեղում, էջ 62.

կոչին խաշուկիի, վարդանկիի, կնքահայրեկի և այլն»:¹ Իսկ ինչ վերաբերում է Համշենի հայության թրքացման դրդապատճառներին, ապա Զ. Խնձիճյանը տալիս է հետևյալ բացատրությունը. «Բնակիչք երկրին յառաջագույն հայք էին, այլ է յեւ ժէ դարուն և ի սկիզբն Ժ երրորդին առհասարակ հանդերձ ամենայն շրջակայ գիւղօրէիւք դարձան ի տաճկութիւն սակա բռնութեան հարկապահանջութեան (ընդգծումք մերն է—Մ. Զ.)»:²

Որ քրիստոնյա հպատակների դավանափոխության պատճառը ծանր հարկապահանջությունն էր, շեշտում է նաև XVIII դարում երկար ժամանակ Պոլսում ապրած ֆրանսիացի հեղինակ Մ. Մինյոն: «Քանի որ Մեծ Տիրակալն ունի մեծ թվով հպատակներ,— գրում է նա, — որոնք սերնդեսերունդ պահպանել են իրենց նախնիների դավանանքը, այդ պատճառով այս հարկը (զիգիեն—Մ. Զ.) մեծ եկամուտներ է ապահովում, սակայն և պակասում է օրավուր, քանզի, չնայած դուրանն արգելում է հալածել գյավուրներին ու ստիպում է իրենց վճարել գլխահարկ, այսուհանդերձ գերիշխող կրոնը իր մեջ է ընդգրկում շատ-շատերին մի երկրում, որտեղ ոչ մի պաշտոն չի կարելի ձեռք բերել կամ վստահության արժանանալ առանց մուտուման դառնալու»:³

Այնուհետև, Զ. Օգկայան պատմությունը կեղծելու իր ոգեգորության մեջ ավելի առաջ է գնում. «Կայսրության ներքին մասերում, ուազմի դաշտերից այս կամ այն շափով հեռու շրջաններում, գրում է նա, ոչ մուտումանները սովորանի, շարիաթի և իրենց սեփական համայնքների հովանու ներքո շարունակում էին ապրել ազատ, ինչպես կամենուց էին, գրաղվում էին արհեստներով և իրենց մասնագիտություններով»:⁴ Խոսքն այստեղ վերաբերում է Հայաստանին և Հայերին:

Երականության մեջ, սակայն, հայ և օտար աղբյուրների վկայությամբ, հայ ժողովուրդը XVIII դարում թուրքերի վարած պատերազմների ժամանակ շարաշար տուժում էր ու

միայն մասամբ այդ պատերազմների անմիջական հետևանքը հանդիսացող հարկերի ու տուրքերի շափի աննախընթաց քարձրացումով, այլև առավել, քան առաջ պետական պաշտոնյանների թույլ տված ամենակոպիտ կամայականություններով ու հալածանքով, թալանով ու կողոպւտով, հակակառավարական ապստամբների, տվյալ դեպքում՝ լեվենդներով գործադրած ամեն տեսակի ոճրագործություններով ու խժդություններով: Դիմենք մի քանի փաստերի:

Ի տարբերություն Զ. Օգկայայի, բուրժուական-օբյեկտիվիստական դիրքերի վրա կանգնած և միջազգային համբավ ունեցող ի. Հ. Աւունչարշըլըն, հիմնվելով սկզբնաղյուրների վրա, օրինակ, գրում է, որ 1788 թ. պատերազմի հետևանքով, կայսրությունը «...ոչ միայն տարածքային կորուստներ ունեցավ, այլև երկրի տարրեր մասերում ծայր առան ապրատամբություններ և Անատոլիան ու Թռամելին... ավերակի վերածվեցին (ընդգծումը մերն է—Մ. Զ.)»:⁵ Նույն ի. Հ. Աւունչարշըլըն մի այլ տեղ, դարձյալ անդրադառնալով հիշյալ պատերազմական տարիներին նահանգներում ստեղծված աղետալի վիճակին, գրում է. «...մինչ այդ նահանգներում տիրող անիշխանությունն ու ապօրինությունը վարչական կյանքում անասելի շափերի հասան, կարգ ու կանոնը առհասարակ վերացվեց: Յուրաքանչյուր վալի, քաջ իմանալով իր իշխանության ժամանակամիջոցի սահմանափակվածությունը (սովորաբար իշխանության գլուխ մնում էին ընդամենը մեկ-երկու տարի) ...սկսում էր դաժանորեն ճնշել ու կողոպտել գյուղացիական հոծ զանգվածներին»: «Այդ էր պատճառը, — եղարակացնում է նա, — որ նահանգներում ընկրնած նեշված ծողովուրդը հարբ-հարի վրա չէր դնում (ընդգծումը մերն է—Մ. Զ.)»:⁶

1770 թվականին, գեպերի ականատես Հակոբ Տիգրիկեցու բառերով ասած, «...խառնակում էր ամենայն տեղիս և առամելի մեր քաղաքն զի յոյժ նեղեին գերիստոնեայ ազգն, վասն ինչիք և այլ շար գործի համար (ընդգծումը մերն է—Մ. Զ.)»:⁷ Պատերազմի տարիներին ապստամբ լեվենդները «...անեկին

¹ Զ. Խնձիճյան, «աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհից», Վենետիկ, 1806 թ. էջ 362:

² M. Mignot, Histoire de l'empire ottoman, I, Paris, 1741, էջ 450:

³ Cemal Ozkaya, էջ 63:

¹ J. H. Uzunçarsili, Osmanli tarihi, XVIII yüzyıl, էջ 437:

² Նույն տեղում, էջ 438:

³ Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 456:

բազում գիտօրեայս»:¹ 1775 թ. պատրվակ բռնելով պատերազմական արտակարգ ծախսերը, անտանելի հարկատվության է ենթարկվում Տիվրիկի բնակչությունը, այնպես որ «...ումանք տուին 150 դուրուշ, ոմանք տուին 100 դուրուշ և ես տառապեալս տուի 70 դուրուշ, այսպես զամենեամ բընադատութեամբ պէս-պէս նեղութեամբ հատուցին զպարտ իւրեանց, ոմանք պարտական եղեալ զնացին աւտար երկիր, և ոմանք չտառեալ փախեան ի յօթեանէն իւրեանց (թերք-ծումբ մեր է— Մ. Զ.):²

Այսպես էր իրավիճակը ոչ միայն Դիվրիկում, այլ Արեմըտյան Հայաստանի բոլոր գավառներում՝ ինչպես պատերազմների տարիներին, այնպես էլ «խաղաղ» ժամանակաշրջանում։ 1758 և հետագա տարիներին լեզենդ ապստամբները տակնուվրա էին անում Սեբաստիան ու նրա շրջակայքը, իսկ բնակչության նկատմամբ, որը խիստ տուժել էր նախորդ տարիների սաստիկ սովից, կիրառում էին ամեն տեսակի բռնություններ։ 1758 թ. գրում է նա, — «...յայտնեցան բազում անդուռն լեզենտք, աելի քան զերկու հազարս ի կողման վիճակիս Սեբաստիոյ, որք ափոփեալք ի գիտօրեայս խոշտանգանօք կեղեքէին զիսդալիսն և անողորմարար տանչելով պահանջէին ի նոցանէ զինչու ի շկարելն զդեմ ունիլ բազմավիշտ տառապանացն, փախստական եղեն աստ և անդ, ի քաղաքն և ի մեծամեծ գիտօրէս՝ առ ի ապրեցուցանել գոնէ զանձինս իւրեանց ի բռնութենէ նոցա, զասն որոյ ուր ուրեք գտանիւր շինութիւն և այն քաղցեալ և ի յետին դառն աղքատութեան ժամանեալ»։³

XVIII դարի կեսերին Թուրքիա այցելած գերմանացի ճանապարհորդ՝ Մ. Օտտերը, որն իր ուղեգրության մեջ թրքասիրության որոշակի հակումներ է դրսուրում, ստիպված է արձանագրել հետևյալը. «Ենիշեյում (Փոքր Հայք— Մ. Զ.),— ասում է նա, — ես օթևանեցի մի հայի ընտանիքում, որն ինձ ասաց, թե բնակիչները անկարող լինելով վճարել սովորական հարկերը ու միաժամանակ արշավող (թուրքական) բանկին ձրիարար մատուցել պարենամթերք և այլ բաներ, մեծալ մասամբ լքել էին իրենց հողն ու տունը՝ քաղաքներում ողոր-

մություն խնդրելու համար»։⁴ Մի փոքր ներքն նույն հեղինակի մոտ կարդում ենք. «Թուրքերը մի առած ունեն, որն ասում է, թե որտեղից էլ անցնի Օսմանլին, այնտեղ բոլորովին խոտ վի բուսնի. Ուզում են ասել, որ (թուրքական) զորքերը ամայիցնում են այն վայրերը, որտեղ որ նրանք գտնվում են՝ լինի դա կայսրության ներսում, թե դրսում։ Այդ է պատճառը, թե ինչու իրենց տիրացած գեղեցիկ երկրամասերը մեծավ մասմբ ոչ բնակեցված են և ոչ էլ հողերը մշակված»։⁵

1758 թ. էրգորումի շրջակայրում ենիշերիների ու լեվենդ-ների կատարած խժդժությունների, բռնությունների ու կամայականությունների մասին մի սրտաձմլիկ հիշատակություն է թողել թաղդասար քահանա գրիլը։ Ահա այն. «...քաղաքին ինկիշարիքն ամենայնքն զոռպայք են դարձեր ամենայն օր կու արբենան, կու կողոպտեն զքաղաքիս խեղճ և ողորմելի զքրիստոնեայսն ոմանք ի (20) հոգով, ոմանք էլ (30) կամ և (40) հոգով կու զնան քրիստոնէից տունն կուտեն կուլմեն և վերջ փեշքաշ մի այլ կառնուն այն տանէն, ապա թե կելանեն ու զնան միւսին տունն, զոր խնդրեմք յԱստուծոյ որ ինքն այց արացէ»։⁶

Պոլսի անգլիական դեսպան՝ Հ. Գրենվիլը իր կառավարությանը հղած 1766 թ. հունիսի 12-ի զեկուցագրի մեջ, անդրադառնալով թուրքական կառավարության մեղքով Փոքր Ասիայի արևելյան նահանգների ամայացմանը, գրում է. «Մի բան թվում է իրական ու անվիճելի, դա այն է, որ թեև թուրքերը ահա երեսուն տարի վայելում են խաղաղությունը, բայց բնակչությունը փոխանակ աճելու, ճիշտ ընդհակառակ՝ նվազում է, թեպետ Կոստանդնուպոլսի արվարձանները շարունակ մեծանում են, սակայն գյուղը, բովանդակ կայսրության մեջ, մեր աշքի առաջ դառնում է անմարդաբնակ։ Ես ճանաշում էի երեկի մարդկանց, որոնք քառասուն տարվա ընթացքում առիթներ են ունեցել մշտապես ճանապարհորդելու այս կայսրության հեռավոր անկյունները։ Նրանք ինձ ասացին, որ այլև չեն գտել գեղեցիկ գյուղերի հետքերը, որոնք մի ժամանակ հանդիպել էին իրենց ուղևորության ընթացքում, ես արդեն վերելում խոսեցի փաշաների գիշատչու-

¹ Նույն տեղում։

² Նույն տեղում, էլ 456։

³ Ճապէ. Սեբաստիոն, էլ 91։

⁴ M. Otter, Voyages, II, էլ 320.

⁵ Նույն տեղում, էլ 321։

⁶ Մուրար, էլ 91—92։

թյան մասին, որանք կարող են իրենց պաշտոնում մնալ մի-
միայն կաշառքի ու ընծաների ուժով, արծաթի օգնությամբ
նրանք միշտ կարող են գնել իրենց ոճրագործությունները ու
անպատճիժ մնալ: Այդ նրանք են, որ ամենից շատ են պատ-
ճառ զանոնում այս գեղեցիկ երկրամասերի ամայացմանը:
Մրան պիտի ավելացնել նաև ներկայիս Մեծ Տիրակալի... Հը-
նարամտությունը՝ այնքան հաճախ են փոխում փաշաներին
նահանգներում, որ առիթ է ծառայել հանրահայտ թուրքա-
կան առածի, որ երբեք երկու տարվա խոտ չի բուսնի այն
վայրերում, որտեղից անցել է մի փաշա»:¹

XVIII դարի երկրորդ կեսին փաշաները իրենց պաշտոն-
ները երկրածգելու, ժողովրդական զանգվածներին ճնշելու
և կողոպտելու նպատակով ստեղծեցին հատուկ այսպես կոչ-
ված գելիքաշիների («գֆերի առաջնորդներ») հեծելազորը:
Թե նրանք ինչպիսի ահավոր շարագործություններ կարող էին
կատարել, արձանագրված են աղբյուրներում, որոնց վրա կանգ
առնելը մեզ շատ հեռու կտաներ: Բավարարվենք միայն XVIII
դարի 80-ական թվականներին թուրքիա այցելած ֆրանսիա-
ցի հեղինակ՝ Ժ. Օլիվիեի ուղեգրությունից մի քանի մեջբե-
րումներով. «Երբ որևէ մի փաշա որևէ պատրվակով,— կար-
դում ենք նրա մոտ,— պաշտոնագրկվում է, ապա այս գելիք-
րաշիները մնալով առանց ոռնիկի ու միջոցների, սկսում են
ամենասարսափելի ավագակությունները: Նրանք մտնում են
գյուղերն ու ավանները, նույնիսկ քաղաքները ու կողոպտում
առանց խտրության, ամեն ինչ հարկատվության են ներ-
կում, քարավանները կանգնեցնում ու կողոպտում»:² «Շատ
հաճախ փաշան,— այնուհետև կարդում ենք ֆրանսիացի հե-
ղինակի մոտ,— իր հեղինակությամբ, ուժով ու կաշառքով
լոեցնել է տալիս դատավորին ու վերահսկիչ մարմնին... և
սարսափ է պատճառում ենթակա ժողովրդին: Եվ նման դեպ-
քում բռնություններին ու անարդարություններին շափ ու սահ-
ման գոյություն շունեն և մանավանդ, եթե փաշան հովանա-
վորված է թ. Դուան կողմից և իր տրամադրության տակ ունի
մեծ թվով գելիքաշիներ, որոնք միշտ պատրաստ են կատարելու
իր հրամանները և նրան պաշտպանելու որևէ մի հարձակման

պարագային... Հատկապես քրիստոնյաներն են, որ միշտ ա-
մենից շատ են տուծում, որովհետև նրանք հովանավորված
չեն մուտքանեներից և նրանց համար շատ դժվար է մինչև
ուլքանական զահը հասցեն իրենց բողոքները (ընդգծումը
մերն է— Մ. Զ.): Նման պայմաններում «...գյուղացիները
ընկճված հարկերի տակ, ենթարկված մահվան սպառնալի-
քին, խելազարված՝ լքում են այլևս իրենց կերակրելու ան-
կարող հողակտորները: Նրանք մեկնում են խոշոր քաղաք-
ներ, իրենց օջախում կորցրած հանգիստը գտնելու հույսով...: Այսուհանդերձ փաշան պահանջում է տեղում մնացածներին
հարկեր վճարել փախստականների համար, որի հետեւանքով
ամբողջ գյուղի բնակիչները շուտով անհետանում են՝ ընդ-
միշտ թողնելով իրենց բնակավայրը»:³

Այսուհետև մանրամասն բացատրելուց հետո, քրիստոնյա
հպատակների վիճակը կայսրության մեջ XVIII դարի 70—80-
ական թվականներին, ֆրանսիացի հեղինակը եղակացնում
է. «Ողջ կայսրության մեջ այս դժբախտները (քրիստոնյա-
ները— Մ. Զ.) դարձել են մի տեսակ կովեր, որոնց մուտք-
մանները իրենց կարիքների բավարարման համար շտապում
են կթել ու կթելով»:⁴ Այս բոլորը հայ և օտար աղբյուրների
վկայություններ են, կասեն Զ. Օզկայան և այլոք: Արդյո՞ք
կհրաժարվեին թուրք հեղինակները հայերի XVIII դարում
միանգամայն բարվոք վիճակի մասին իրենց ստահոդ պըն-
դումներից, կարդալով իրենց իսկ հեղինակի՝ XVIII դարի
վերջի և XIX դարի սկզբի թուրք հայտնի պատմագիր՝ Ահմեդ
Զնդեթի հետեւյալ վկայությունը կայսրության քրիստոնյա
հպատակների իրական վիճակի մասին: «...Որոշ ժամանակից
ի վեր,— կարդում ենք նրա մոտ,— բռնությունների ու ան-
իրավությունների ամեն սահմանը անցել էր և Օսմանյան
կայսերական երկրում ուայաները մեծ թշվառության էին
ենթարկել, իրենց երկիրն ու հայրենիքը թողնելով՝ ցիր ու
ցան եղել: Դրանով երկիրն ավերվել՝ ազուաների ու բուժրի
բնի էր վերածվել... երկիրի այս աստիճան ավերվածության
պատճառը միայն պատերազմական գործողությունները չէին,
երկրի ավագանու, կադիների և այլ պաշտոնյա-

¹ H. Grenville, Observations sur l'état actuel de l'empire ottoman. Michigan press, 1971, էջ 71:

² G. Ollvier, Voyages, I, Paris, 1791, էջ 309—310:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 314:

ների կողմից իրենց օգտին, պատերազմական տուրքերից միքանի անգամ ավելի գումարներ աղքատների վրա բաժանելով, բռնությամբ և դաժանությամբ գանձումը և նման բըռնությունները թերևս ավելի մեծ տեղ էին բռնում...: Երկրի շինարարությունը կայ ուայաների բարօրությունը շմարերելով անգամ, նրանք (պետական բարձրաստիճան պաշտոնյաները— Մ. Զ.) իրենց ծախսերը հանելու և իրենց դրությունը բարելավելու համար աղքատների ձեռքերից խլում էին նրանց ունեցվածքը, վաճառել տալիս նրանց անասուններն ու կենդանիները, հովանավորում ու քաջալերում ավագանու բռնությունները, սրանք էլ յուս կողմից կողոպտառ էին աղքատներին:

Ավագանու բռնություններն ամեն սահման անցնում էին, իսկ ամրակուռ կրոնի սյունը հանդիսացող բարձր ուկեման (Հոգևորականությունը) էլ փոխանակ ժողովրդի մեջ արդարություն և իրավունքի հիման վրա դատ ու դատաստան անելու, նպաստում էր դրանք:¹

Բնական է, որ նման պայմաններում միշտ չէ, որ քրիստոնյա հպատակները տանում էին այդ շարաշահումներն ու ծայրահեղ հալածանքները: XVIII դարում հայ և օտար աղբյուրներում արձանագրված են ապստամբությունների միշտ փորձեր: Ուժերը, սակայն, անհավասար էին, և դարձյալ շատ բնական էր, որ հայ ժողովուրդը իր հայացքը սկսեր դիմի հյուսիս՝ Ռուսաստանը, որը հանդիս էր գալիս Թուրքիայի կողմից ընկճված, ստրկացված ժողովուրդների ազտարարի գերում: Սակայն ոչ, միշտապեք, պարզվում է, որ ըստ Զ. Օգկայայի ու այլոց, ոչ թե հայերը, վրացիներն էին դիմում ուսւական արքունիք, հայցելով օգնություն, այլ ուսսական գործակալները, օգտվելով կապիտուլացիաների ընձեռած հնարավորություններից, «...հաճախ վաճառականի, կղերականի, ուխտագնացի դիմակի տակ... ձգուում էին քրիստոնյա հպատակների մոտ ատելություն սերմանել դեպի թուրքերը, մղելով նրանց ապստամբության ու խոստանալով

նրանց ամեն տեսակի արտաքին աշակցություն»:² «Իրականության մեջ, — այնուհետև կարդում ենք Զ. Օգկայայի մոտ, — նեկատերինա II-ի ներկայացուցիչների գործունեության նըսպատակը ոչ քրիստոնեության և ոչ էլ քրիստոնյաների հովանավորումն էր, այլ պարզապես ու բացառապես Ռուսականի համար Թուրքիայի ներքին գործերին միջամտելու իրավունքի ձեռքբերումը...»

Թուրքիայի քրիստոնյաները շատ երկար տատանումներից հետո մեկը մյուսի հետևից, համոզված լինելով, որ կայսրությունը չի կարող ու շպիտի կարենա գոյատել, և որ իրենց անկախության ժամը շուտով պիտի հնչի, այդ ժամանակվանից սկսեցին ամեն տեսակի ստորության, դավաճանության և ապստամբության փորձեր կատարել:

Թուրքերը, որոնք իրենց հզորության ժամանակ ոչ մուսուլմանների նկատմամբ այդքան զիջող, այդքան ներողամիտ էին եղել, սկզբում չէին կարող հասկանալ այդ ապրատամբությունների իրական իմաստը և ընդունեցին դրանք որպես պատահական (ելույթներ) և առանձին պարագաներում դրանք հետագայում ճնշեցին:

Սակայն այս անբարյացակամ դեպքերի կրկնությունը չէր կարող (կառավարությանը) շտրամադրել քրիստոնյաների դեմ: Ուստի ատելությունը, դավաճանությունը, անվատահությունը, որպես հետևանք Մեծ պետությունների՝ կայսրության ներքին գործերին միջամտության, եկան փոխարինելու այն համերաշխությանը ու ներդաշնակությանը, որն առաջներում գոյություն ուներ երկրի բնակչության տարրեր ազգությունների մոտաւ:

Իրականության մեջ սակայն հայերի, վրացիների Ռուսաստանից օգնություն հայցելը բխում էր այդ ժողովուրդների ծանր կացությունից՝ օտարերկրյա դաժան տիրապետությունից: Հայ և վրացի հայրենասերները խորապես ըմբռնելով Ռուսաստանի հսկայական դերն ու նշանակությունը թուրքական պոթափելու ու իրենց վաղուց փայփայած քաղաքական երազանքները իրականացնելու գործում, և նկատենենալով Ռուսաստանի արևելքում վարած գործոն քաղաքականությունը՝ ուսւական պետությունը համարում էին ի-

¹ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյաս ժողովուրդների մասին թարգմանությունը Ա. Խ. Սաֆրաստյանի, «Հատ. ա., Երևան, 1963 թ., էջ 277—278».

² Cemal Özkaya, էջ 66.

բենց միակ ու ամենահուսալի Հովհանավորն իւ ազատարարին

Դեռևս XVII դարի սկզբում հայ ազատագրական պայքարի ուսահիրա՝ Խորայել Օրին մեր ժողովրդի փրկության հովարդում էր բացառապես Ռուսաստանի հետ և որ նրա պատագրական ծրագրության շոշափում էր, ինչպես արևելահայ, այնպես և արևմտահայ զանգվածների իղձերն ու շահագրդությունները։ Այդ մասին մենք Աշ. Հովհաննիսյանի մոտ կարդում ենք։ «Պատահական չէ, երբ, գծագրելով եվրոպական արշավի հեռանկարները՝ Օրին հաշվի էր առնում ոչ միայն թուրք առևտրական ճանապարհների հետ կապված իրանահայ վաճառականների, այլև Հայաստանի արևմտյան մասսաների տրամադրությունը, որը հայ երիտասարդությունը, նրա ասելով ոչինչ ավելի չի տենչում, քան «պատերազմ հավատքի համար»։ Հայաստանի արևմտյան հատվածի նկատմամբ ևս նշելով ազատագրական որոշ հեռանկար՝ Օրին ենում էր դարձյալ այն գիտակցությունից, որ Թուրքիայի լծի տակ գտնված հայ ժողովորդը սնում է իր կրծքի տակ քաղաքական-ազատագրական ձգտումներու։¹

Ռուսաստանից արևմտահայերի ակնկալած օգնության մասին խոսում է նաև լեհ կաթոլիկ միսիոներ Կրուշինսկին, որը բազմից եղել էր Թուրքիայում։ Նրա ասելով, «Թուրքերի ճնշումներին ենթարկված արևելյան քրիստոնյաները դիմում են ուս ցարին, որպես ապագայի համար կանխանշված իրենց իշխանութիւններին, նրանք մեծարում են ցարերին, հարգալից խոսում նրանց մասին և հիշատակում նրանց անուններն իրենց պատարագների մեջ»²։

Հայ ժողովրդի քաղաքական ակնկալությունները Ռուսաստանից դրսերվեցին դեռևս XVI—XVII դարերում։ Դրանք արտահայտվեցին մինչև իսկ գեղարվեստական գրականության ու ժողովրդական բանահյուսության մեջ։

1550 թ. Կարապետ Բաղդիշեցին, ակնարկելով հայոց քաղաքական ակնկալությունները Ռուսաստանից, իր շափած երգում դրում էր.

¹ Աշ. Հովհաննիսյան, «Դրվագներ հայ ազատագրական պայքարի պատություն», Գատ. թ., Երևան 1959, էջ 286—387։

² Նույն տեղում, էջ 512—513։

ի սպնամանիք հիւսիսն է Ոռոս ազգն բրնական Աշխարհն է նոցա Մոսկով Մինչ ծովն Կազմիական, ծւ ազգին նոցա գերի է Թաթարըն նետողական լայն և արծակ անկեալ է նա Որ հասնի մինչև ի Կաֆայն»։¹

Հայերի քաղաքական ակնկալությունները Ռուսաստանից մեծապես աճեցին XVIII դարում և հատկապես նրա երկրորդ կեսին, երբ ուսական դիվանագիտությունն ու ուսական հատուկ ուազմական զորամասերը եռանդում գործունեություն ծավալեցին Կովկասում։ Ռուսաստանի միշազգային դիրքը ավելի ամրապնդվեց, երբ Ուկրաինան վերամիավորվեց Ռուսաստանի հետ, որի հետեւանքով ուսական կայսրության սահմանները հասան ընդհուպ մինչև Սև ծովը, մի հանգամանք, որը նոր, միանգամայն իրական հույսեր ներշնչեց թուրքերի կողմից ստրկացված ժողովուրդներին։

XVII դարի 70-ական թվականներին օգնության ակնկալությամբ Ալեքսեյ Միխայլովիչ ցարին է դիմում էջմիածնի Հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցին։ 1699 թ. հունվարի 26-ին Կարլովիցում Թուրքիայի հետ «Սրբազն Լիգայի» պետությունների կնքած պայմանագրից հետո, հայերը իրենց ազատագրական հույսերը բացառապես կապեցին Ռուսաստանի հետ։ Աշ. Հովհաննիսյանի բառերով ասած, «սկսվում էր պատմական նոր մի շրջան, երբ Ռուսաստանը հանդիս էր գալիս որպես միակ այն երկիրը, որի հետ կարող էին ազատագրական ուեալ հեռանկարներ կապել ոչ միայն հայ իշխող հասարակ խավերը, այլև հայ ժողովրդական մասսաները»²։

Հայ ժողովրդի քաղաքական ակնկալությունները ավելի ուժեղացան, երբ XVIII դարի 60-ական թվականներին ուսական գահին բազմեց Եկատերինա II-ը, որը շարունակում ու զարգացնում էր Պետրոս I-ի արևելյան քաղաքականությունը։

Դեռևս 1760 թ. հունիսի 17-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Համախեցին հատուկ կոնդակ է հղում Ելիզավետա կայսրուհուն, խնդրելով ընդառաջել ուազմական ու տնտեսա-

¹ Աշ. Հովհաննիսյան, հայերի ուսական օրիենտացիայի նախապատությունից, ՊԲԸ, 1958, № 1, էջ 98։

² Նույն տեղում, էջ 107—108։

կան օգնություն հայցելու նպատակով Ռուսաստան մեջնած վրաց Թեյմուրազ թագավորին. «Եւ մի անտէս և անյոյք առնիցէք զմեծահաւատ Արքայդ այդ եկեալդ առ ոտո Զեր և զմեզ աստի ազաջօղս, այլ որպէս հոգայթ զՁեր օրհնեալ և բարգավաճեալ ազգդ, խնդրեմք նույնպէս զազս մեր ողորմելի և զազգն վրաց, վասն զի մեք ևս եմք հանապազ աղօրավէ սակա հաստատութեան բազաւրութեան Ձերոյ (ընդումը մերն է— Մ. Զ.)»:¹

Հակոբ Շամախեցու հաջորդ Սիմեոն Երեանցի կաթողիկոսի ժամանակ էջմիածնի և ոռուսական արքունիքի միջև հաստատվեցին էլ ավելի սերտ քաղաքական հարաբերությունները:

1773 թ. ոռուսածայ թեմի առաջնորդ է նշանակվում Հովսեփ Արդության արքեպիսկոպոսը (1743—1801), որը և դարձավ հայ ազատագրական շարժման ամենագործունյա ու ամենակարևորուն դեմքերից մեկը: 1783 թ. հունվարի 23-ին գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին գրած գեկուցագրի մեջ նա հույս էր հայտնում, որ ծրագրվող ոռուսական արշավանքի ընթացքում Պ. Ս. Պոտյոմկինը կհասնի մինչև Արարատ՝ Երեան և էջմիածին: Գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին գրած մի ուրիշ գեկուցագրում, Հովսեփ Արդությանը էլ ավելի բացահայտուեն խոսեց թուրքական Հայաստանի մասին, հատուկ նշելով «...այնտեղի հայերի քաջության և ոռուսակրության մասին»:²

Հովսեփ Արդությանը նման եղրակացությունները, անշուշտ, նախ և առաջ, անում էր հայ ազատագրական շարժման ռահվիրա՝ Հովսեփի էմինի Արևմտյան Հայաստանու ազատագրական շարժման առաջնորդների հետ դարի 60-ական թվականներին ունեցած բանավարությունների վրա:

1768 թ. նոյեմբերին սկսած ոռուս-թուրքական պատերազմը նոր թափ ու լիցքավորում է տալիս հայերի ազատագրական ակնկալություններին: Եկատերինա II-ի մանիքնեստը՝ ուղղված Բալկանյան Երկրների ստրկացված քրիստոնյա ժողովրդի լայն զանգվածների մեջ: Վրաստանի սահմանամերձ հայկական գավառների բնակիչները, իմանալով, որ Վրաստանի թագավոր Հերի սեղինակը, միանալով, որ Վրաստանի թագավոր Հե-

րակը Ա-ը պատերազմելու է թուրքերի դեմ, անցնում են Վերաստան, իսկ Վրաստանը համագործակցում էր Ռուսաստանի հետ:

XVIII դարի 70—80-ական թվականներին հայ ազատագրական միտքն առաջ քաշեց մի շարք ծրագրեր, որոնց հիմքում դարձյալ ընկած էր այն գաղափարը, որ հայ ժողովուրդը դարավոր օտար լծից կարող է ազատագրվել միայն և միայն Ռուսաստանի օգնությամբ:

Այսպիսով. Զ. Օգկայյալի ու այլոց առաջ քաշած այն թեզը, թե Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների մոտ ազատագրական շարժման սկզբավորումը բացառապես պայմանավորված է Ռուսաստանի զավթողական քաղաքականությամբ, գիտականորեն հիմնագուրգի է ու կոչված է արդարացնելու քրիստոնյա հպատակների ինքնարուս ազատագրական շարժումների դաժան ճնշումը թուրք ավատատերերի կողմից:

Նշեցինք, որ Գյամյուղան Գյուրյունը հայկական հարցի ծագումը, հեղինակի հասկացողությամբ հայերի ընդվզումք «բարեխնամ» օսմանյան տիրապետության դեմ վերագրում է ոչ թե այն դժոխային պայմաններին, որ իր հետ բերեց այդ գերիշխանությունը, այլ հայ եկեղեցու հայ համայնքի վրա ունեցած զրգությունը, բացասական ազդեցության ու նրա՝ Եվրոպայի քրիստոնյա աշխարհի հետ ունեցած դարավոր կապերին: Այս հարցի շուրջ հեղինակը մի ամբողջ գույս է նվիրին: Այս հարցի շուրջ հեղինակը մի ամբողջ գույս է նվիրին: «Հայկական հարցի արմատները» ընդհանուր վերնագրով:

Հեղինակը յուրովի փորձում է քննարկել հայ համայնքի վրա հայ եկեղեցու ունեցած դերը սկսած V դարից՝ Ավարայրի ճակատամարտից:¹ Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից:² Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից: Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից: Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից: Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից: Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից: Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից: Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից: Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից: Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից: Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից: Հենց սկզբից նշենք, որ հեղինակի գլխական ակատամարտից:

¹ «Դիման հայոց պատմութեան», համ. Պ., էջ 121:

² А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947, էջ 45:

1 Խառնարանը, էջ 40:

թօան գաղափարը»:¹ Հենց այս նույն գաղափարով տոգորված հայ եկեղեցու ներկայացուցիչները խզեցին իրենց կապերը հոմադավան եկեղեցու հետ՝ դառնալով հակաֆաղ-կեղոնականներ:² Եվ այս իր միտքը հաստատելու համար, հեղինակը մեշքերումներ է կատարում հայ հեղինակներից, որոնք նշել են հայ ժողովրդի ու հայ եկեղեցու պատմության փոխաղկապվածությունը: «Այս պատմաբանները գալիս են հաստատելու այն տեսակետը, որ մենք վերև շարադրեցինք», — գրում է նաև: «Ստացվում է, — այնուհետև շարունակում է մեր հեղինակը, — որ երբ վերլուծվում է հայկական հարցը, ապա անհրաժեշտ է հայացքը թեքել նրա ծագմանը, այսինքն՝ հայկական եկեղեցուն»:³

Հայ ժողովրդի նկատմամբ գերիշխանություն հաստատելու նկրտումով, «Հայ եկեղեցին իր ողջ պատմության ընթացքում անվերջ շանքեր թափեց բյուզանդական եկեղեցուց ու հոռմեական պապականության հսկողությունից խուսափելու համար... Շատ պարագաներում հայ եկեղեցու վարդապետը հայ համայնքի համար ունեցավ վնասակար հետեանքներ, հայ համայնք, որին նա գլխավորում էր: Եվ քանի որ կղերի շահերը գերադասվում էին ժողովրդի շահերից, ոչինչ շարվեց իրերի վիճակը փոփոխելու համար և հայկական եկեղեցին անընդհատ մտահոգված էր միայն իր գերիշխանության հաստատման համար»:⁴

Հաստատելով իր գերիշխանությունը, հայկական եկեղեցին, — ուզում է համոզել իր ընթերցողներին Քյամուրան Գյուրյունը, — ութի համեց համայնքին թուրքական տիրապետության դեմ:⁵ «Անչերքելի է, — կարդում ենք նրա մոտ, — որ կրոնական գործոնը միշտ էլ կարեռ դեր խաղաց թուրքերի ու քրիստոնյա ազգերի հարաբերություններում: Թուրքերը բոլոր դեպքերում թշնամաբար ընկալվեցին ոչ թե նրա համար, որ նրանք թուրքեր էին, այլ մուսուլմաններ»:⁶ Աֆա այս կանխակալ կարծիքի տարածողները ըստ հեղինակի ոչ այլ ոք

էին, քան կղերի ներկայացուցիչները: Այլ կերպ, ինչպես բացականշում է հեղինակը, օսմանյան կառավարության հայ եկեղեցու ու քրիստոնյա հպատակների նկատմամբ վարած հանդուրժողական քաղաքականության դեմ ընդվզելը: Եթե նկատի չունենանք «շիզիեն» (գլխարահարկը), որը հետագայում փոխարինվեց «Բեղել-ի ասկերիե»-ով, ուզում է Թուրքիայի պատմությունից անտեղյակ ընթերցողներին հավատացնել Ք. Գյուրյունը—որևէ տարրերություն գոյություն չուներ հարկերի գանձման համակարգի մեջ քրիստոնյաների ու մուսուլմանների միջև: «Համենայնդեպս, անհրաժեշտ է ընդգծել, — այնուհետև կարդում ենք նրա մոտ, — որ կրոնական այն հանդուրժողականությունը, որ ցուցաբերեցին թուրքերը, բոլորովին էլ օսմանյան պետության օգտին շեղավ: Եվ նախ և առաջ շգնահատվեց բոլոր նրանց կողմից, ովքեր օգտվում էին գրանցից: Որոշ հեղինակներ այնքան հեռու գնացին, որ մինչև իսկ պնդում են, թե ոչ մուսուլմանները առանձին համայնքի բաժանվեցին լոկ այն պատճառով, որ պեսզի նրանցից ավելի բարձր հարկեր գանձեին: Հիրավի, ոչ մուսուլմանները մասնավորապես հարկադրված էին բեղել կոչվող հարկով տասը ու երեքեմն տասներկու տարի տեսող կինվորական ծառայությունից ազատված լինել: Սակայն ոչ մի (պատմական) աշխատության մեջ նեղություն չի կրվում բացատրելու, որ ծառայությունից խուսափող մուսուլմանները նույնպես ենթարկվում էին այս օրենքին: Ինչ վերաբերում է մյուս հարկերին, ապա գնացեք փնտրելու ճշմարտությունը, թե ո՞րն էր տարրերությունը մուսուլմանի և ոչ մուսուլմանի միջև: Այս հարցը միշտ լուսպահ է մատնվել»:⁷

Օսմանյան կայսրության մեջ գոյություն ունեին երկու մեծ քրիստոնյա համայնքներ, այնուհետև կարդում ենք Քյամուրյան Գյուրյունի մոտ, — հույն ուղղափառները և հայ գրիգորյանները: Սրանք իսկական պետություններ էին պետության մեջ և բացի կրոնական ազատություններից, օգտըգում էին կարեռ մշակութային և իրավական առանձնաշնորհումներով... Եվ օգտվելով հենց այդ առանձնաշնորհումներից, օտարերկրյա պետությունները կարողացան, երբ կայսրությունը սկսեց թուրքիան նշաններ ցույց տալ, այս հարությունը

¹ Նույն տեղում, էջ 41:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 42:

⁴ Նույն տեղում, էջ 44:

⁵ Նույն տեղում:

մայնքները վերածել իրենց քաղաքականության գործիքի Ռուսաստանը հանդես եկավ ուղղափառների պաշտպանողների գերում, Ֆրանսիան իր հերթին հավակնեց պաշտպանել կաթոլիկներին»:¹

Դժվար չէ կռահել, որ Քյամյուրան Գյուրյունի հիմնական նպատակն է ցույց տալ, որ թուրքական դաժան տիրապետության դեմ հայ ժողովրդի պատագրական պայքարը դըրսից ներմուծված երեւյթ է և որ այս հարցում վճռական դեր է կատարել հայ եկեղեցին: XIX դարի հայ ժողովրդի պատմության հարցերի այս յուրօրինակ մեկնարանությունից միանգամայն ակներև է դառնում, որ հեղինակը միսիոներական գործունեության ժամանակը Հայաստանում դարձյալ հայ եկեղեցու, ինչպես ինքն է սիրում ասել՝ բացասական գործունեության արգասիք է:

Հարկ չկա այստեղ կանգ առնելու այն հարցի վրա, թե ձի՞շտ է արդյո՞ք այն, որ հայ ժողովրդի օտար տիրապետությունների դեմ մղած պայքարը դարերի ընթացքում գլխավորել է միայն հայ եկեղեցին: Հայ ժողովրդի պատմության հետ քիչ թե շատ ծանոթ որևէ մի անձնավորության համար ակներև է նման պնդումների հակագիտական բնույթը: Նույնիսկ սխալ կլիներ ասել, որ Ավարայրի ճակատամարտի գլխավորողները հոգևորականներ էին: Ինչ վերաբերում է հեղինակի մատնանշած օսմանյան տիրապետության ժամանակաշրջանին, ապա, անհրաժեշտ է, իրոք, ընդդեմ, որ հայ ժողովրդի պետականության վերացման պայմաններում, հայրենասիրաբար տրամադրված հոգևորականության որոշ ներկայացուցիչներ, նորաթուխ հայ առևտրական բուրժուազիայի, և նախ և առաջ հայ խոշայության ղեկավար շրջանների հետ միասին ուղիներ էին փնտրելու թոթափելու թուրքական ստրկությունը: Եվ մի՞թե դա բացասական դեր կարող էր կատարած լինել հայ ժողովրդի ազգային ճակատագրում: Ճիշտ հակառակը: Ցուրաքանչյուր ժողովրդի սրբազն իրավունքն է ապրել ազատության և անկախության մեջ:

Այստեղ անհրաժեշտ է, թեկուզ համառոտակի, կանգ առնել հեղինակի մյուս պնդման վրա, որ, իրոք, հարկերի ու տուրքերի գանձման հարցում Օսմանյան կայսրության մեջ

ոչ մուսուլման և մուսուլման բնակիչների միջև տարրերություն չի եղել: Նախորդ էջերում այս հարցի մասնակի պատասխանը արդեն տրված է: Այստեղ բերենք միայն մի քանի տվյալներ հայ և օտար, ներառյալ նաև թուրքական աղբյուրներից, որոնք ապացուցում են քրիստոնյա հպատակների անհամեմատ ավելի ծանր վիճակը:

XVI—XVII դարերում Օսմանյան կայսրության հարկերի ու գանձման շափի ու եղանակի մասին մենք հիմնական տեղեկությունները քաղում ենք այսպես կոչված կանունամեներից (օրինամատյաններից), որոնք կազմում էին գրանցման մատյանների՝ դաֆթարների ներածական մասը, սուլաբանական հորվարտակներից, վճիռներից և այլն: Նախ և առաջ աներածեցած է հատուկ ընդդեմ, որ այդ օրինամատյանները միշտ չեն, որ կիրավիլ են հայկական նախանգներում ու գավառներում, տիրապետող եղել են քուրք փաշաների ու բուրք բեկերի սանձարձակ կամայականությունները, և այնուհետև՝ այդ նույն օրինամատյաններում համարյա միշտ նշվում են հարկային համակարգի և հարլանուրյան ձևերի գրեթե համատարած և մշտական աղավաղումների, նորամուծությունների, այսպես կոչված բիդրների, դրանց նետ կապված՝ ապօրինությունների և բնուրյունների անարգիլ տարածման մասին: Նույն օրինամատյանների համարյա ամեն մի էջում հատուկ ընդդեմված է, որ միենույն հարկի շափի քրիստոնյայի համար՝ մուալմանների համեմատությամբ շատ ավելի բարձր է:

Օսմանյան հարկային համակարգը XVI—XVIII դարում երկրությունների ավելի ծանր իրավիճակի պայմաններում բավական փոփոխությունների ենթարկվեց: Տիրապետողը դարձավ պետական պաշտոնյաների ու ավատատերերի սանձարձակ կամայականությունը: Օրենքը փաստուեն կորցրել էր իր ուժը:

Քրիստոնյա հպատակները պետք է վճարեին ոչ միայն «շիզիեն» (գլխահարկը), որն ինքնին շատ ծանր էր ու տեղիք էր տալիս հազար ու մի շարաշահումների, այլև «իսպենջը», որը փաստորեն նույնպես դարձել էր մի գլխահարկ: Ընդ որում, ինչպես ասվեց, այս երկու հարկերի վճարումից մուսուլմաններն ազատ էին: «Զիզիեն» ծանր հարկ էր ոչ միայն այն պատճառով, որ գոյություն շռներ հաստատու

Հայտ կողոպտել ժողովրդին: «Ճիզիե» պահանջում էին ոչ միայն տեղի բնակիչներից, այլև տվյալ վայրից հեռացվածներից և, նույնիսկ մեռածների հաշվով, եթե նրանց անոնները դեռևս չէին հանվել հարկացուցակներից: «Ճիզիեն» գանձելու ժամանակ, հարկահավաքները դիմելով բռնության, տարբեր անուններով՝ «թահսիլդարիյե», «քեֆիլլեմե», «ղուկամ հակիր», «զիյադե-ի զյուլյուսի հյումայուն», «բեղել-ի համր» և այլն գանձում էին մի նոր գլխահարկ: Աղբյուրների վկայությամբ, միենույն տարում «Ճիզիե» էին գանձում երկու անգամ «ԻՄԻԱ (1772) մայիսի 15 Վանայ կողմն երկու խարաց արին հայոց— կէս զուրուց էլ խարամ խարաց»¹, — գրված է ժամանակագրության մեջ: 1694 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանում այսպես է նկարագրվում հարկահավաքի ժամանակ պետական պաշտոնյաների թույլ տված կամայականությունը. «Գրեցաւ ի թվին մերում ՌՃԽԿ (1692 թ.), ի դառն և ի նեղ ժամանակիս, որում նեղիմք ի հարկապահանցութենէ անօրինաց, զի ահա եկն հարկն ի վերայ Հիզանայ և կողոպտեցին զամենայն և արեցին զգեղօրայքն և զջաղացն և ամենայն... զորն գտին գրեցին, վասն ծովացեալ մեղաց մերոց»:²

Հ. Գրենվիլը, խոսելով «Ճիզիե»-յի գանձման ժամանակ թույլ տրված կամայականությունների մասին, գրում է, «Խարացի («Ճիզիեի») — Ս. Զ.) հարկահավաք պաշտոնյաները հարստանալու նպատակով. խարում են տիրակալին՝ կիսելով եկամուտը և տալով անդորրագիր երկրորդ կարգի³ այն մարդկանց, որոնք ենթակա էին առաջին կարգի անդորրագիր, և նույնպես՝ երկրորդ կարգի անդորրագիր են տալիս նրանց, ովքեր պետք է ստանային երկրորդը... Աղքատները, որոնք հնարավորությունից զուրկ են, միանվագ. վճարման հետաձգում են ստանում միայն նվերներ տալուց հետո, իսկ այնումետև նվերների ու վնարելիք խարացի շափք հանափս դառնում է կրկնակի (ընդգծումը մերն է— Ս. Զ.):»⁴

¹ «Մանր ժամանակագրություններ» հատ. 1, էջ 47:

² Մատենադարան, Մագիստրոսի թղթակ. № 64, էջ 8:

³ Զեկանորեն բնակչությանը հարկատվության հնթարկելիս բաժնեկում էր երեք խմբերի՝ հարուստների (ալա) միջակների (էվսատ) և աղքատների (էգեա), սակայն իրականության մեջ այդ կարգը համարյա միշտ խախտվում էր:

Նահանգներում մեծ շրջաններ ընդգրկող համաձարակը, գումարած խարացի գանձման ժամանակ թույլ տրված կամայականությունները, ստիպում են յուրաքանչյուր տարի մեծ թվով մարդկանց լքել իրենց հայրենիքը... Նահանգների փաշանները, երկրամասի անմարդաբնակ դառնալու պատճառը քողարկելու նպատակով, ստիպում են տեղում մնացած բնակիչներին՝ իրենց համար նախատեսված անդորրագրերից բարձրերը ստանալ, և այս ճանապարհով լրացնում են հեռացածների վճարելիք գումարը»:¹

«Ճիզիե»-յի գանձման բնագավառում թույլ տրված կամայականությունների մասին է խոսում նաև 1751 թ. սուլթան Մահմետ I-ի հրատարակած այսպես կոչված «Ազալիթնամեն» («Արդարություն հրովարտակ»), ուր սուլթանը ստիպված էր ամենախիստ ձևով զգուշացնել նահանգների պետական բարձրաստիճան պաշտոնյաներին «Ճիզիեի» գանձման ժամանակագրությունը. զիմմեր՝ գրիստոնյա հպատակներից լուրացածիլը, Սակայն այդ հրովարտակը ոչ մի արդյունք չունեցավ XVIII դարի գեպքերը արձանագրելիս: Պատմագիր Ա. Զեղեթը գրում էր, թե «Ճիզիեցիները, նվիրական շարիաթին հակառակ, ույաներից, մինչև անգամ օրորոցի երեխաններից շիզիե էին առնում և աղքատների վրա շատ մեծ բռնություններ էին գործ դնում»:²

Նշենք նաև, որ ապօրինություններ ու կոպիտ կամայականություններ հայ բնակչության նկատմամբ թույլ տրվում էր ոչ միայն «Ճիզիեի», այլ նաև այլ հարկերի գանձման ժամանակ: Ղ. Խինճիճյանը, խոսելով Վանի հայ բնակչությունից «հմգադ-ի հազարիե» և «հմգադ-ի սեֆերիյե» կոչվող հարկերի գանձման մասին, գրում է հետեւյալը. «Բայց տուրք (Վանայ) փաշային զոր առնու ի յիմտատիէ և ի յալըգ (ոռնիկ) վիշտ մեծ հասուցանդ մանաւանդ քրիստոնեից, զի ոչ պահանջէ յորոշեալ ժամանակին կամ ըստ որոշեալ հաշուին, որ է 100 զուռուց ամսոյ յամիս բնակչաց Վանայ բաղաքին, այլ զայլիսին, ողջոյն արաւյն միանգամայն պահանջ է հար-

¹ H. Grenville, էջ 37—38:

² Münir Aktepe, Patrona isyanı, (1730) Istanbul, 1958, էջ 17:

³ Թուրքական աղքատները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս քողովուրդների մասին, հատ. Ա, էջ 279:

կանելով և տանչելով, պատճառս բերեալ թէ փոխանակ սահման առաջաւ տալոյ, միանգամայն տայք և զերծանիք, իսկ յետ շորից կամ հնդից ամսոց դարձեալ տանչել սկսանի տալ զյտագայ տարւոյն տարւո, յետ քանի մը ամսոց՝ զմիս յետագա տարւոյն և այսպէս զօրինաւոր տուրսն առիր իւր առեալ, ժողովէ տուրս արտաքոյ օրինաց ի վեր քան զկարողութիւն բնակաց, մինչև անհնար լինել վնարել (ընդգծումը մերն է — Մ. Զ.):¹

Չշոշափելով այստեղ թուրքական հարկային համակարգն առհասարակ (դա մեզ կշեղեր բռն նյութի շարադրանքից) նշնք, որ այսօր թուրքական արլիմիներում, դատելով արդի թուրք պատմության ներկայացուցիչների առանձին աշխատություններում բերված կցկոտը տվյալներից, կան բազմաթիվ նման փաստաթղթեր, սակայն դրանք ոչ միայն առաջմ հազվադեպ են հրապարակվում, այլև միանգամայն կեղծվում է պատմագրությունը: Թուրք պատմաբանները ընթերցողներին ստիպում են հավատալ, թե սեր սպիտակ է, թե պատմական գրականությունը սկացնողները ոչ թուրք պատմաբաններն են: Արդի թուրք պատմագրության ներկայացուցիչները շեն ուզում հաշվի նստել նույնիսկ թուրքական աղբյուրների վկայությունների հետ: Նրանց նպատակը միայն մեկն է պատմությունը ժառայեցնել քաղաքականությանը:

* * *

Վերջին տասնամյակներում թուրքիայում լույս են տեսել օսմանյան կայսրության մեջ արհեստներին, արվեստի զանազան բնագավառներին նվիրված բազմաթիվ աշխատություններ,² որտեղ փորձեր են կատարվում օսմանյան տիրապետության ժամանակ ստեղծված արվեստի բնագավառի ամբողջ մշակույթը միայն և միայն թուրքերին վերագրել, «մոռան-

¹ Ղ. Խեմչյան, «Աշխարհագրություն», էջ 187:

² Նշեք նրանցից մի քանիսը՝

Arseven E., L'art turc, İstanbul, 1940, նույնի՝ Türk sanatı tarihi, İstanbul, 1950. Yetkin S. K., Islam-türk sanatı İstanbul, 1956 մարի անուններ, Osmanlı devri, İstanbul, 1946. Konyali I. H. Mimar Altunay A. R., Mimar Sinan, İstanbul, 1931 Çekintaş S., Türk mimarı Koca Sinan, İstanbul, 1948. Ozales G., Türk carşılıarı İstanbul, 1953, Refik H., Türk mimarları, İstanbul, 1936.

լով», որ «...Հարյուրամյակների ընթացքում օսմանյան պետության տերիտորիայի վրա ստեղծված հոյակապ հուշարձանները գնահատելիս ակնհայտ է դառնում, որ «թուրքական արվեստ» տերմինը պայմանական հասկացություն է: Բազմաթիվ գլուխգործոցների վրա ներդրված են ոչ միայն թուրքերի, այլև հույների, հայերի, սլավոնների, արաբների, պարսիկների և մյուս ժողովուրդների վարպետների աշխատանքը»:³

Թուրք պատմաբաններից ոմանք ոչ միայն փոքրասիական, այսպես կոչված սելջուկյան ճարտարապետությունը վերագրում են իրենց սելջուկ նախնիներին, այլև «թուրքական» արվեստի շատ բնագավառների սկիզբը նույնպես համարում են իկոնիայի սուլթանության ժամանակաշրջանը:⁴ Հայտնվում են նաև այս «տեսակետը» պաշտպանող արևմտաեվրոպացի առանձին պատմաբաններ, օրինակ, գերմանացի գիտնական Կուրտ էրդմանը:⁵ Այս հեղինակները «մոռանում են» մի պահ, որ XI—XII դարերի ընթացքում, երբ ստեղծվում էին «սելջուկյան» հորդորչված ճարտարապետության կոթողները և արհեստագործական արտադրանքները ու արվեստի հիանալի կոթողները, իրենք սելջուկները, աղբյուրների միաբերան վըկայությամբ, վարում էին քոչվորական կանք ու զբաղվում ազգավարով: Սելջուկները արհեստներով ու արվեստներով էին զբաղվում, ինչպես վկայում են այդ մասին: արաբական աղբյուրները, իրենց նախնական հայրենիքում՝ Միջին Ասիայում: Խսկ դրան հակառակ, նույն այդ արաբական աղբյուրները հաճախակի հիշատակում են Հայաստանում արվեստների զարգացման փաստը, մասնավորապես գորգագործությունը:⁶ XI—XVI դարերում Փոքր Ասիա ճանապարհուրդների մասին հայտնական հայրենիքը և ուրիշներ վկայում են, որ սելջուկները քոչվու-

¹ Ю. Миллер, Искусство Турции, М. 1965. էջ 6:

² See Oktag Aslanapa, Turkish arts, Ist. 1962.

³ See Kurt Erdman, The history of early turkish carpet, London, 1977:

⁴ Այդ մասին վերջերս շափականց հետաքրքր հոդված է գրել Հայեցարացի գիտնական Կարոյ Գոմբրչյանը: Հոդվածում ազրուրներից վկայակոչված փաստերը անառարկելիորեն ապացուցում են, որ թուրքերը ոչ մի առաջնահատություն չունեն «սելջուկյան» կոչված ճարտարապետական հուշարձանների, առավել ևս գորգագործության հետ (տե՛ս Կարօք Գօմբօս Մալօզինսկի կովը և համապատասխան մասին):

բական կյանք էին վարում, իսկ արհեստագործական արտադրությամբ զբաղվում էին հայերը, հույները, ասորիները և այլք: «Սեղուկյան արվեստ» հասկացությունը խոսում է միայն սեղուկյան տիրապետության իրավական իշխանության մասին:

Նվաճված երկրներում թուրքերի հպատակ ժողովուրդների նկատմամբ վարած բռնի մուսուլմանացման քաղաքականության հետևանքով, բարբարոսաբար ոչնչացվեցին անթիվ ու հոյակապ այսպես կոչված ուշ մուսուլմանական» հուշարձաններ և հարյուրավոր ու հազարավոր տաղանդավոր վարպետների համար ստեղծվեցին ծանր ու սահմանափակ պայմաններ:

Գործ երրեմն հասնում է այնտեղ, որ քրիստոնեական եկեղեցիներում անգամ վարագույրների ու այլ կերպասեղենի վրա եղած զարդարանքները համարվում են «թուրք» վարպետների աշխատանքները: Այո, հենց այսպես էլ բառացի նշում էր Թահսին Օզը թուրք պատմագրության կոնգրեսում իր «Օսմանցիների ժամանակ գունազարդ թուրք կերպասները» վերնագրված զեկուցման մեջ:¹ Եվ թող բոլորովին պատահական շթվա, որ արդի թուրք պատմագրության որոշ ներկայացուցիչներ ոտնաձգություններ են կատարում այժմ թուրքիայի սահմաններում մնացած հայկական պատմական հուշարձանների, ինչպես օրինակ՝ Անիի և Աղթամարի և շատ այլ հուշարձանների նկատմամբ: Մեր պատմաբանների ու արվեստագետների սրբազն պարտքն է հանդս գալ ու մերկացնել այս կեղծարարներին:

Առանձնապես վերջին տարիներին թուրքական պատմության ներկայացուցիչները իրենց նախնիներին են վերագրում Քյութահիայի հախճապակու արտադրությունը: Այդ հախճապակու նմուշներից կազմակերպում են բազմաթիվ արտասահմանյան ցուցահանդեսներ: Մեծ ոտնաձգություններ են կատարվում նաև Փոքր Ասիայի տեղաբնիկ ժողովուրդների՝ հայերի, հույների կողմից ստեղծված գորգագործության արտադրության վրա:

Պատմական անժխտելի փաստերը ցույց են տալիս, որ

¹ Tahsin Öz,Osmanlılar devrinde resimli Türk kumaşları Ankara, 1960, t2 442—452.

այսօր թուրքիայում պահպանված ճարտարապետության հետ արվեստի բազմաթիվ կոթողների հեղինակները հայերն ու հույներն են: Սեղուկյան ժամանակաշրջանին վերաբերող հուշարձանների՝ պալատական ու վարչական շենքերի, գերեզմանաքարերի, գմբեթների, մզկիթների, աղյուր-հուշարձանների մեծ մասի հեղինակները դարձյալ հայերն ու հույներն են:

XVI դարից սկսած Օսմանյան կայսրության ստեղծումով անհրաժեշտություն զգացվեց նախկին փոքր շինությունների փոխարեն ստեղծել սուլթանական պետության հզորությունը խորհրդանշող ճարտարապետական կոթողներ: Դրա համար նրանք իրենց աշխի առաջ պատրաստի ունեին ճարտարապետական մտքի թոփշը հանդիսացող այնպիսի մի կոթող, ինչպիսին էր Կոստանդնուպոլիսի սր. Սոֆիայի (Այա Սոֆիա) տաճարը: Այնուհետև օսմանյան ճարտարապետության հետագա զարգացումը կապված էր հանճարեղ ճարտարապետ Սինանի գործունեության հետ, որը ծագումով կեսարացի հայ էր:² Սինանի ժամանակակիցներից մեկը, գրի առնելով մեծ ճարտարապետի կենսագրությունը, բերում է նրա իսկ հետևյալ խոսքերը իր «գեշշիրմե» ծագման մասին: «Ես Արդուկմեննի որդի՝ սուլթան Սելիմ Ցավուփի պալատի գլխավոր ճարտարապետ գեշշիրմե ծագումով եկա Ստամբուլ և հանգուցյալ Սուլթան Սուլեյման խանի ժամանակ ենքշերի գարձաւ ու մասնակցեցի Կորֆուի, Բոլուի, Կարա Բոգդանի արշավանքներին և այդ նույն տարին նշանակվեցի պալատական գլխավոր ճարտարապետ և աստծո օգնությամբ շատ շենքեր կառուցեցի»:³

Սինանի գլուխ գործոցները՝ Շահ-զադե, Սուլեյմանին և Սելիմին մզկիթները կառուցվել են Այա Սոֆիայի տաճարի օրինակով:⁴

Սինանի ժամանակաշրջանը համարվում է օսմանյան ճարտարապետության «Ոսկե դարը»: Սինանի բազմաթիվ աշակերտները, որոնց մեջ դարձյալ զգալի թիվ էին կազմում գեղշիրմեն-ները, կառուցեցին բազմաթիվ հոյակապ մզկիթ-

¹ Տես Բ. Տուղլազու Հողվածը «Թուրքիա հանդեսում, 1983 թ. մայիս, էջ 10:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

ներ, բազարներ, շքնաղ պալատներ, մեդրեսեներ, որոնք աշքի են ընկնում Սինանյան ճարտարապետական դպրոցի գունդությամբ ու ներդաշնակությամբ: «XVIII դարու երկրորդ կեսուն,— կարդում ենք թ. Տուղաջու մոտ,— զինվորական և պալատական առաջին կարգի պետական շինարարությանց տումարների անվանացանկին մեջ կարելի է հանդիպել հայ վարպետներու: Անոնք ընդհանրապես Սինանի նման կեսարացի ըլլալով, կկրեն Սարգիս կամ Օհաննես խալֆա անունները»:¹

Ստամբուլի աշքի ընկնող ճարտարապետական հուշարձաններից մեկն է՝ Նուրու Օսմանիյե մզկիթը նույնպես կառուցված է հայ ճարտարապետ Սիմեոնի կողմից,² Հ. Մըրյանը առանց որևէ մի աղբյուր ցույց տալու այդ մզկիթի կառուցվածը վերագրել է ճարտարապետ Մակարին, որը սխալ է:³

Հայ արհեստավորության դերը մեծ էր Թուրքիայում հայնապակու, ճենապակու արտադրության զարգացման գործում: Այդ արտադրությունը XVI—XVII դարերի սկզբում կենտրոնացված էր Իզնիկում, իսկ այնուհետև՝ XVII դարում՝ Թյուրքահայում: XVI դարի թուրք տարեգիր Սաադ-էղ դին Խոչա Էֆենդին իր «Թաջուղ-Թևարիխ» («Պատմության թագ») աշշիատության մեջ նշում է, որ Իզնիկում հայնապակու արտադրությանը մեծապես նպաստեցին 1514 թ. Սելիմ 8ավոլի հրամանով Թավրիզից Պոլիս տեղափոխված արհեստավորները,⁴ որոնք հայկական աղբյուրների վկայությամբ գերազանցապես հայեր էին:

Իզնիկի անկումից հետո, ինչպես ասվեց, XVIII դարում նրա տեղը գրավեց Թյուրքահան, ուր այդ արհեստը, թուրք ճանապարհորդ Էվլիա Չելեբու վկայությամբ, դեռևս XVI դարի երկրորդ կեսից զարգացած էր: Արհեստավորների զգալի մասը կազմում էին հայերը. «Թյուրքահայում,— գրում է Էվլիա Չելեբին,— կան երեսուն շորս թաղամասեր, որոնց մեջ մեկը:

անհավատ բրուտագործներին է: Այնտեղ պատրաստվող աշմեն տեսակ ամանեղենը, բաժակները, տարրեր ձեր կժերն ու շները արտահանվում են նույնիսկ քաղաքից դուրս»:⁵

Որ արհեստավորների զգալի մասը կազմում էին հայերը, վկայում է նաև այն փաստը, որ արտադրվող հախճապակու վրա նկատվում էին աստվածաշնչի առասպեկները՝ Աբրահամ Մարգարեն, Միքայել Հրեշտակապետը, Սուրբ Գևորգը և այլն: Թյուրքահայում,— գրում է թուրքական արվեստի ուսումնասիրության նվիրված իր աշխատության մեջ Ցու. Միլերը,— «Վարպետների զգալի մասը կազմում էին հայերը, որոնք աշխատում էին նաև քրիստոնյաների պատվերներով»:⁶

Արհեստավործական արտադրության ամենախոշոր կենտրոնը Թուրքիայում XVI—XVII դարերում Ստամբուլն էր, ուր, աղբյուրների վկայությամբ, արհեստավորների զգալի մասը հայեր ու հույներ էին: Ստամբուլում բնակչության մնադի ու կենցաղային իրերի, ինչպես և արհեստավորների արտադրական գործիքների արտադրության համարյա բոլոր պահանջները բավարարվում էին տեղական արհեստավործական արտադրությամբ:

Հայ արհեստավորության դերը մեծ էր ոչ միայն մայրաքաղաքում, այլև արևմտահայ նահանգներում: Այդ մասին դարձյալ կարելի է բերել Էվլիա Չելեբու ճանապարհորդությունից մի շարք վկայություններ, ուր հեղինակը, որպես անմիջական ականատես գրում է. «(Վանում) շննքեր կառուցող այնպիսի վարպետ ճարտարապետներ կան, որոնց նմանը միայն Սակըզում (Հոռդոսում) կգտնվի. զերծակները հիանալի ֆիրմանքի (եվրոպական) հագուստներ են կարում»: Կամախի մասին նա հիշատակում է. «Այս քաղաքի հայտնի արտադրանքներից մեկն էլ այնտեղ պատրաստվող նուրբ, սակայն ամուր վրանի կտորն է, որի նմանը շի կարելի գտնել և ոչ մի երկրում... ժողովրդի բերանում ասացվածք է դարձել՝ կամախի կտորը, Երզնկայի ընկյուզը, Բայրութի աղջիկը»:⁷ «Աշխարհում Տրապիզոնի ոսկերիչների նման կատարելագործված վարպետներ չկան: Այնպիսի ձիասանձեր, բուրգառներ,

¹ Թ. Տուղաջի, նույն տեղում:

² Թ. Տուղաջի, նույն տեղում: Տե՛ս նաև Կ. Pamukçyan, Nuru Osmaniyye caminin mimarı Sinan, Kalfa hakkında Isı mimarlık fakültesi mimarlık tarihi ve restorasyon cuslikisi, Sayı. 13—14. nisan, 1981, էջ 21.

³ Հ. Մըրյան «Մասնավոր պատմություն հայ մեծատուններու», Պուլս, 1910, էջ 97.

⁴ C. E. Arseven, L'art turc, Istanbul, 1939, էջ 256.

⁵ Evliya Çelebi, seyâhetnamesi, Հատ. IX, էջ 25:

⁶ Ю. Миллер, էջ 99:

⁷ Evliya Çelebi Հատ. 2, էջ 345:

վարդաշրի ամաններ, սրեր, խոհանոցի դանակներ են պատրաստում, որոնց նմանը այլ երկրներում՝ չի ճարգում»¹ «Բիթլիսում պատրաստված «շեխանի», և «զիարդի» անունով հայտնի սրերը նմանը չունեն և ոչ մի երկրում: Դերձակները հիանալի վարպետներ են... Այստեղ (արտագրվող) կաշիները արտահանվում են մինչև Ֆրանկիստան (Եվրոպա—Մ. Զ.) ու այստեղ բարձր են գնահատվում»²:

Առանձնապես մեծ է հայերի գերը Թուրքիայում ոսկերչության զարգացման գործում: Ոսկերիչների արտադրանքի մասին հիացմունքի շատ խոսքեր է մեզ թողել Էվլիա Չելիքին: XVI դարում Պոլսում աշքի ընկնող ոսկերիչներ էին 1534 թ. սովորան Սովեյմանի կողմից Վանից Ստամբուլ ուղարկված թաքա Ծերուն Գազաղյանը և Գասպարը:³

Մեծ է նաև հայերի գերը տպագրական գործի զարգացման բնագավառում: Դեռ XVII դարում, ավելի շուտ, քան ծագումով հունգարացի հբրահիմ Մուտաֆերրիկան (1674—1747) առաջին անգամ հիմնադրում էր տպարան ու հրատարակում էր Քյաթիր Չելերու «Ճիշանումա»-ն (Աշխարհի հայելի): Հայերը 1565 թ. Աբգար Թոփիատեցու գլխավորությամբ Պոլսում հիմնադրում են տպարան և կրոնական գրքերի կողքին հրատարակում հայոց լեզվի «քերականություն»-ը (1567), Ագաթանգեղոսի (1703), Զենոն Գլակի (1719 թ.), Փակստոս Բյուզանդի (1730 թ.), Եղիշեի (1764) պատմական երկերը: 1762 թ. Իզմիրում նույնպես հիմնադրվում է Հայկական տրպարան: Այսպիսով,— գրում է Դ. Ֆելտյակովը,— XVIII դարի սկզբներին Օսմանյան կայսրության մեջ գոյություն ունեին մի քանի տասնյակ տպարաններ, որոնք հիմնադրված էին հրեական, հայ-լուսավորչական, հույն-ուղղափառ համայնքների ներկայացուցիչների կողմից: Այդ տպարանները տեխնիկապես բավական լավ հագեցված էին և ունեին փորձառու վարպետներ»:⁴

Մեծ էր նաև հայերի գերը արվեստի ու գիտության տարբեր ճյուղերի, հատկապես բժշկության զարգացման գործում:

¹ Նույն տեղում, էջ 91.

² I. R. Sark, էջ 11:

³ А. Д. Желтяков, Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729—1808) (1729—1908), Москва, 1972, էջ 15:

Սուլթանների մեծ մասի պալատական բժիշկներն ու նկարիչները սովորաբար եղել են հայերը. 1730—1774 թվականներին Մամանուղ Ի-ի, Օսման II-ի և Մուստաֆա III-ի պալատական նկարիչը եղել է նշանավոր հայազգի Ռաֆայելը, որին հաջորդել է իր որդի՝ Մինասը, որը XVIII դարի 80-ական թվականներին նկարել է Սուլթան Աբդուլ Համիդ I-ի մի շարք դիմանկարները:¹

Եթե մենք այստեղ կանգ առնեինք հայերի ունեցած հըսկայական դերին ու ծառայությանը Օսմանյան կայսրության մեջ XVI—XVII դարերում, դա մեզ հեռու կտաներ: Սադի Կոլաշի բառերով ամաժ, «(Օսմանյան) պետությանը ծառայություն մատուցած հայերի թիվը այնքան մեծ է, որ նրանց մասին ընդարձակ տեղեկություններ հաղորդելու համար անհրաժեշտ կլինի մի շարք հատորներ գրել»:²

* * *

Մենք աշխատեցինք պանթուրքիստ խոշորագույն պատմաբանների երկերի համառոտակի վերուժական քննել ու հերքել այն «տեսակետները», «տեսություններն» ու կարծիքները, որ ժամանակակից թուրք հետադեմ պատմաբանները զարգացնում ու պաշտպանում են հայ ժողովրդի հին և միջին դարերի պատմության հարցերը հետազոտելիս:

Եթե խնդիրը վերաբերվեր միայն մի երկու այնպիսի մասնագետների, որպիսիք են Ֆ. Կրգիօղլուն կամ Էսատ Ուրսար, գուցե և անհրաժեշտ լիներ հատուկ անդրադառնալ դրանց հերյուրանքներին. դրանք իրենք իրենց դիմակազերծ են անում: Յավն այն է, որ պանթուրքիզմի ալիքների վրա են օրորդում նաև մի շարք ուրիշ, հաճախ լուրջ ու հիմնավոր պատրաստություն ունեցող պատմաբաններ, որոնք այլև իննդիրներում տալով արժեքավոր ուսումնասիրություններ, իսկույն փոխում են իրենց գույնը լակմուսի թղթի նման, երբ գործը հասնում է թուրքերի պատմական ու աշխարհագրական ակնկալությունները «գիտականորեն» հիմնավորելու միտման փորձաքարին ու մասնավորապես՝ երբ խոսք է լինում հայերի ու Հայկական լեռնաշխարհի մասին:

¹ Ю. Миллер, էջ 98:

² Sadi Koças, էջ 93:

Սաղրանկարային այն «լրջությունը», որով պահպուրքիստ պատմաբանները հետազոտում են պատմության անդաստանը, ծիծաղաշրժ է փաստարկման ու տրամաբանության խորքերում: Նրանք թամբում են իրենց երևակայությունը և բաց թողնում ոգևորության երասանակները: Ոչ մի բան չի ուշաբերում նրանց՝ ոչ օբյեկտիվ փաստերի հզոր կանչը, ոչ պատմական ու նյութական հուշարձանների կենդանի կեցվածքից ցայտող ուժն ու դիմադարձ արձագանքները: Նրանց համար ոչ մի նշանակություն չունեն, թե ովքեր են իրոք նախաթուրքերը, արդյո՞ք նրանք գոյություն ունեցել են Հայկական բարձրավանդակում III կամ II հազարամյակում մ. թ. ա.: Պանթուրքիստ պատմաբանը գտնում է, որ թուրքն առաջին մարդն է, որ երևան է եկել երկրագնդի վրա, ուրեմն ինչպես կարող էին Հայկական բարձրավանդակում III կամ II հազարամյակում թուրքեր Ալիներ: Նրանց համար նշանակություն չունի ոչ նյութական մշակույթի, ոչ մարդաբանության գիտական տվյալները, ոչ էլայու կամ այն ցեղի, ցեղային միավորման կամ ժողովրդի որոշակի լեզվախմբի պատկանելու փաստը: Այդ բոլորը նրանց համար նշանակություն ունեն այն շափով միայն, ինչ շափով «Հարմարեցնում են» պատմությունը պանթուրքիստական նկրտումներին:

Այդ գործելակերպը պանթուրքիստական քաղաքականության շարունակությունն է գիտության մեջ: Այս մտայնությամբ սնվել են ոչ միայն Արին Էնդիներն ու Ֆահրեդդին Կրզիօղուները, այլև նորաթուխ հեղինակներ՝ Զեմալ Օզկայան, Քյամուրան Գյուրյունն ու շատ ուրիշները: Հայ ժողովրդի պատմության հարցերի շարադրման յուրովի պահտական տեսք տալու փորձերը չեն կարող թաքցնել նրանց պանթուրքիստական նկրտումները:

ա) Արյուներ բարքերի
Ahmet Cevdet (Paşa), Tarih-i Cevdet. c. I-XII, Bas. 2, Istanbul, Matbaa-i Osmaniyye, 1309 (1893).
(Ahmet Vasis), Mehasin el asar ve hakayik-il-ahbar, c. I-II. Misir Bulak, 1246 (1830—1831).
Asim Küçükpaşazade, Ismail, Tarih-i Çelebzade. Istanbul, 1153 (1740—1741).

Աշկիպաշազադե Die altosmanische chronik des Aşkıpaszade, auf grund neuerer neuendeckter Handschriften von neuea Leiprig 1925.
Ayni Ali, Kavanin al-i Osman ve hulasa-i mezamin-i defter-i divan, Istanbul 1280 (1863).
Barkan Ömer Lutfi, XI ve XVI inci asırlarda Osmanlı Imperatorlug'un da ziral ekonominin hukuki ve mali esasları cilti, Kanun. lar. Istanbul, 1945.

«Օսմանյան օրինքները Արևմտյան Հայաստանում (XVI—XVIII դդ. կանոնական մշակություններ, առաջարանը և ծանրագործյունները Ա. և. Սաֆրաստյանի և Ս. Կ. Զուզալյանի, Երևան, 1964:»

Izzi Süleyman, Tarih-i Izzi, c. I—II, Istanbul, 1199 (1783).
Kâtip Çelebi Fezleke-i tarih. c. I—II, Istanbul, 1286—1287 (1869—1870).

(Koçibey), Risale-i Koçibey, Istanbul, 1297 (1860).
(Evliya Çelebi), Evliya Çelebi, seyahetnâmesi c. IX, Istanbul, 1896—1938.

(Hammer J.), Narrative of travels in Europe, Asia and Africa in the seventeenth century, by Evliya Efendy. Translated from the Turkish by the ritter Joseph von Hammer, vol. I—II, London 1834—1850.

(I. Peçevi), Tarih-i Peçevi, Istanbul, 1263 (1868).
(M. Selânikî), Mustafa Selânikî, Tarih-i Selânikî, Istanbul. 1281 (1865).

Précis historique de la guerre des Turcs contre les Russes...
yar Vassif-effendi: Traduit par P. A. Coussin de Perceval. Paris, 1820.

բ) Արյուներ եվրոպական լեզուներ
Albert Vandal, Une ambassade française en Orient sous Louis XV. La mission du marquis de Villeneuve, 1728—1741, Paris 1887.

(Bonneval), Mémoires du conte de Bonneval, vol. II, Paris. 1808.
Chardin Jean de, Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, t. I—IX. Paris, 1811—1820.

(De la Croix), Etat général de l'empire ottoman par une solitaire turc. Trad. par M. de la Croix, vol. I—III, Paris. 1695.

Della Vallé, Voyages, t. I—IV. Rouen. 1645.
